

0000000000

Բազմ

2/ՉԱՐՈՒՆ 1996

Մ
Բ
Ե
Ն
Ե
Մ
Ե
Մ
Ե
Մ

● Կը յայտարարենք պաշտամունք
եւ արտայայտութիւն Հայ
Հոգուն. որովհետեւ Հայ Հոգին
գոյ է, բայց դուն ուրեք կը
յայտնուի: Պէտք է բեկանել
դատակնիքը, որ Ջայն
լռութեան դատապարտած է:

Մ Ե Ը Ե Ա Ն

● Կը հատանք. Հայ Հոգին՝ Լոյսն
է, Ուժն է, Կեանքն է,
մարմնաւորուած անդրիական
շքեղութեանը մէջ արիական
ցեղին, որուն կը պատկանինք:

Մ Ե Ը Ե Ա Ն

● Կ'ըսենք. առանց Հայ Հոգուն,
չկայ հայ գրականութիւն եւ հայ
արուեստ: Ամէն ճշմարիտ
արուեստագէտ՝ իր ցեղին հոգին
միայն կ'արտայայտէ:

Մ Ե Ը Ե Ա Ն

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|-----------------------|--|
| 1.-ԱՐՄԱՆՏ | Բանաստեղծութիւններ |
| 3.-Վ. ՕՇԱԿԱՆ | Նոր արմատ |
| 35.-ՄԱՐՈՒՇ | Բանաստեղծութիւններ |
| 42.-Վ. ՇՈՒՇԱՆՆԵԱՆ | Քրոնիկոն քնարական |
| 60.-Բ. ԹՕՓԱԼԵԱՆ | Բանաստեղծութիւններ |
| 64.- * * * | «Խարուած ըլլալ՝ կ'ընդունէր, խարտդ՝ ոչ» |
| 67.-Զ. ՊԱՀՐԻ | Կեանքիս վէպը |
| 81.-Փ. ՃԵՐԱՆՆԵԱՆ | Բանաստեղծութիւններ |
| 82.-Թ. ԶԻՏԼԵԱՆ | Գաշտապտոյտ մը... |
| 89.- * * * | «Մեհեան» |
| 91.-Պ.Ս. | Իրենց կարօտներում կարօտով |
| 95.- * * * | Վկայութիւններ |
| 96.- * * * | Վերստին յանդուած |
| 97.-ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ | Նախատօնակ 1700ամեակի |
| 101.-Վ. ՄԱՏԹԵՆՍԵԱՆ | Իսահակեանի անյայտ բարեկամը |
| 110.- * * * | «Միը Պահատուր Ալի»ի հետքերով |
| 112.-Կ. ԹԵՐԶԵԱՆ | Ովքեր էին Թեյիլիբանի կողքին |
| 118.-Լ. ՇԱՌՈՅԵԱՆ | Անգլիերէն հատորներ Հայաստանի եւ հայութեան մասին |
| 123.- * * * | «Հոգին եղբայրները» եւ իր յանքաժառանգ պատգամը |
| 131.- * * * | «Հողի եղբայրներ»ուն դողանքները |
| 132.-Ա. ՏԱԽՐԻ | Արիւնը ճերմակ չէ՛ |
| 140.-Վ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ | Խորհրդանկար |
| 141.-Ի. ԱԼ-ՆԱԼԻԼ | Գոհար կամ ճանապարհ դէպի Ուրֆա |
| 150.-Մ. ԱԼԻ ՍԱՅԻՏ | Գանիէլ վարուժան |
| 151.- » » | Սիւնանթօ |
| 152.-Վ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ | Խորհրդանկար |
| 153.-Ն. ՍԻՐԷՍ | Հիւսիսի հովերը-1917 |
| 159.-Մ. ՍՈՒԼԷՅՄԱՆ | Արեան ցայտադրիւրները |
| 162.-ՇԱՐՓ | Խորհրդանկար |
| 163.-Տ. ԽՈՒՐՈՒՇ | Գիշերուան եւ յամիկին բերքերը |
| 174.-Ա. ՍԱԼԱՄ ՀԱԼԼՈՒՄ | Աշուններ |

Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԵ. ՏԱՐԻ ԹԻԻ 2 ԳԱՐՈՒՆ 1996 ՊԼԵՅՐՈՒԹ

ԱՐՄԱՆՏ

ՄԻ ՄԱՏՆԱԶԱՓ ԹՈՂՈՒՆ

Ինչպե՞ս չխանդեմ այն երկնուղեղ դարսուր կաղնուն,
 Որ լուսինը ուսին, գիշերուայ լուսեփեան մէջ,
 Աստղափոշոտ մատերին քառած՝
 Երգում է սոխակը մինչեւ լոյս:
 Իրենց շունչը պահած, լսում են ծաղիկները լուս-
 ծօղիկը կախում է նրանց աչքերից,
 Դողում է, ընկնում ցած:
 —Ո՞ւր է՞ք երաժիշտներ Քնած,
 Համնարեղ երգահաններ.
 Մատնաչափ այդ թռչունը, կէս ժամում,
 Արդէն երգեց քան բերան,
 Անմահն դալալներով...
 Արթնացէ՛ք, հիացէ՛ք, Աստուծոյ սիրոյն,
 Աստուծոյ հրաշքի վրայ:
 Մի ջարդէ՛ք ձեր ջութակները,
 Դաշնամուրները ձեր փողակրեայ.
 Լսեցէ՛ք միայն:
 Դողում է վարդենին, բուրում շոայլօրէն,
 Օրորում են կակաչները վայրի,
 Լռել է լուսփունը խօսում՝
 Ականջալուր հարիւրերորդ դալալին՝
 Ինքնատիպ, ինքնուրոյն, ինքնագոյն...
 —Մի մատնաչափ թռչուն...

ՀԱՅԿՈՒՆԵՐ

Փռչունի են երկար թարթիչներդ,
Երկար էր նամբան ու սոթ.
Վարձդ կատար:

Առուն բերում է գոյնզգոյն
տերեւներ,
Դողում է մի անտուն շուն:
Ծիծեռնակները չուշի են:

Մերուխի է բոյրդ սենեակի
պատերին,
Անկողինը յորանջում է:
Արեւի շուշանը բացում է քիչ-քիչ:

Արցունքներ, արցունքներ.
Թախծանքի կապոյտ լին,
Լեռնի՝ փայլիլուն մի նաւակ:

Դիմացը՝ փոթորկաշունչ ծով,
Թիկունքում՝ սառնամանիք:
Բոցավառ օջախի կարօտ...

Սոխակը երգեց սաղ գիշեր.
Հսկումից գունատուեց
գիշերը:
Դու՝ քնած ես դեռ խոր աւ
խաղաղ:

Գրգռեմ. մօր կաթի հոտ,
Մանկան մշմշոց.
Դրախտն ինձ հետ է:

Ննձորենիմ տնքում է իր բեռան
տակ.
Կարմրել են այտերդ.
Աստուծոյ սիրոյն,
չգունատուե՛ս...

Ձեան փաթիլներով, իջնում
է լուսիւնը,
Հեռում հաջում է ջազը.
Թախծում է Կոմիտասը:

Արեւի մեղրը փայլում
է շուրթերիդ:
Մաղկել է քաղնին.
Մեղուններ, մեղուններ...

Ճախել են նունքը խանդից,
Դողում է սիրտս.
Մի՛ ուշանայ...

Շատախօսում են ծիտերը
ծառին,
Կամայք բամբասում են:
Սուրճի գաւաթներ:

Լուսինը բառել է կատարին
ծառի,
Շունը հաջում է:
Լուռ, անցնում եմ խաշամի
վրայով:

Ընկել եմ նամբայ՝ բռնած
ձեռքը թոյսի:
Դոպում է ձիս, դոպում.
Վտանգի հոտ է գալիս...



Բոստոն

194-2001 ԱՐՄԱՆՏ

20555-16.R.R.@
digitized by A.R.R.@

Վ. ՕՇԱԿԱՆ

ՆՈՐ ԱՐՄԱՏ

(Թատերախաղ 32 տեսարանով)

ՆԱԽԱԲԱՆ

Այս թատերախաղը փորձ մըն է «Ամբողջական թատրոն» ըլլալու: Այսինքն՝ գրուած է թէ՛ կարգացուելու եւ թէ՛ ներկայացուելու համար, կը գրադի թէ՛ ամէնօրեայ կեանքի դէպքերով եւ թէ՛ ալ զուտ երեւակայածին, գերբնական իրականութեամբ: Ասկէ զատ, խաղը իբր գրական թեքնիք ամէն վայրկեան կը յորդի բեմէն ու իր մէջ կ'առնէ հանդիսականները, բեմադրին ու հեղինակը, տեղի տալով բեմական կամ «արուեստական» եւ իրական կեանքի միջեւ սահմաններու քննարկում: Նոյն ատեն կը փորձուի արթնցնել մարդիկ կախարդանքէն, որուն մէջ կ'ապրին, ըլլալ բեմին վրայ, ըլլալ վարը, բազմութեան մէջ: Այս բոլոր ընդլայնումները կը ձգտին թատերախաղին տալու մարդկային ապրումին առաւելագոյն ընդգրկումը:

Եւ վերջապէս, այս խաղը կը փորձէ լուսաւորել հայ ժողովուրդին «արմատի» ըմբռնումը, յանգելու համար «պատգամի» յըղացքին: Սակայն պատգամի հարցը կը մնայ առկախ եւ հարցական, գլխաւորաբար որովհետեւ ժամանակավրէպ է ան շատերուն համար, եւ նաեւ որովհետեւ չկայ լուծում այդ բնագոյնական հարցին: Ո՞վ պիտի համարձակէր գրագէտի լրջութեան իր վարկը խնդրոյ առարկայ դարձնել այդպիսի խնդրով մը:

«Ամբողջական թատրոն»ը սակայն մարտահրաւէր մըն է, որմէ փախուստ չկայ: Յաջող թէ՛ անյաջող՝ գրագէտին միտքը պիտի նետուի անոր վրայ, քիչ մը տոնքիտոնեան խանդով եւ ջանայ նուաճել անոր անմատչելի գագաթները: Ճակատագիր մըն է ատիկա:

«Նոր արմատ» թատերախաղի 24 տեսարանները երկու մասի բաժնուած են: Մինչեւ տեսարան 17, ամէն ինչ կը զարգանայ բնականոն ձեւով, յոյս ու յանցանք, սէր ու լաց իրարու խառնուած: Ասկէ ետք սակայն երկու զաւթիմափ կը տեսնուի, դէպի անխուսափելի պատիժ, որ կը նշանակէ մահ: Այսինքն՝ կը բեմադրուին կամ 18րդ, 19րդ, 20րդ եւ 21րդ տեսարանները, որոնք կը հետեւին մար-

դոց աստիճանական ֆայթայումին, կամ ալ՝ 22րդ, 23րդ եւ 24րդ տեսարանները, ուր տեղի կ'ունենայ մահապատիժի անողոք գործողութիւնը:

Ընտրութեան այս կարեւորութիւնը կը շնորհուի Մարդ արարածին՝ առ ի գնահատութիւն իր ոգեկան էութեան: Դերակատարներու եւ հանդիսականներու ազատ որոշումէն կախում ունի ուրեմն, թէ որ մէկ արահետին պիտի հետեւի թատերախաղը:

Քանի մը խօսք խաղին հերոսներուն մասին:

Բուն դերակատարները թիւով հինգ են՝ Կարապետ Տէրունեան, տղան՝ Նշան Տէրունեան, կինը՝ Մանուշակ, եւ աղջիկը՝ Շաղիկ, ու վերջապէս, կին մը՝ Արմինէ (այս վերջին երեքին մականունները բընաւ կարեւոր չեն):

Կարապետ Տէրունեան, պանքայի տնօրէն, 50ի մէջ, ամէնուն յարգանքը կը վայելէ ու խօսքը կը քալեցնէ ազգին գործերուն մէջ, շնորհիւ իր դրամին եւ առատաձեռնութեան: Զօրեղ, ինքնավստահ ու զգայուն մարդ մը:

Մանուշակ, Կարապետին երեսունհինգ տարուայ կինը, միջին դասակարգի, միջին տարիքի եւ առաջաստները ծալած հայ կնոջ դասական տիպարն է: Ինչպէս միշտ, ինքն է բնութագրին սիւնը:

Նշան Տէրունեան, երեսունի մէջ, տակաւին ամուրի, համակարգի մասնագէտ, ինքնակամ, անկուսակցական եւ ազատագրւած արդի սփիւռքահայն է:

Արմինէ Պէյրութէն Լոս Անճելըս նոր գաղթած է: Դեռ երիտասարդ, ներկայանալի, բարի աղջիկ մըն է, որ Պր. Տէրունեանին ձեռքին տակ կ'աշխատի:

Շաղիկ, տունի աղջիկ՝ նոր համայնարան մտած է: Ասոնցմէ զատ, կան չորս այլ անձեր:

Առաջինը «Մարդ» անունով կը ճանչցուի: Ժողովուրդին մէջ նստած է, նախընտրաբար առաջին շարքերուն, տպաւորիչ՝ արտաքինով ու ներքինով, եւ թաւ, խորունկ ձայն մը ունի: Կը ներկայանայ իբրեւ հանրութեան պատգամաբօսն ու հարցադրիչը:

Երկրորդը՝ Բեմադրիչը, որ հաւատարիմ իր տիպարին՝ Ղլուտ, ջղային ու անհամբեր, թէ՛ խաղին իմաստին մեկնիչն է եւ թէ՛ բեմին գործողութեան ղեկավարը: Մանրանկար աստուած մը:

Երրորդը՝ Հեղինակն է, ամէնէն անորոշ տիպարը խաղին: Թէ՛ անոր ստեղծողն է, թէ՛ ալ չէ, ինքն ալ յստակ չի գիտեր: Աս ալ ժողովուրդին մէջ կը նստի, ուր որ ուզէ: Կրնայ դիմակ մը կրել, եթէ ուզէ:

Կայ նաեւ բօխիկ մը, Տօթթ. Սիմոն Յովնանեան: Աս ալ դասական տիպարն է, ողջմիտ, ազնիւ մարդ մը, ինչպէս կ'ըլլային բօխիկ-

ները ասկէ յետև տարի առաջ:

Վերջապէս, կան նաեւ Փարիզի համալսարանի երեք ուսանողները — Պոլաէն՝ Հայկ Սարաֆեան, բժշկական ուսանող, երկրորդ տարի կայ պէլրոլոցի Տիգրանը, որ հոգեբանութիւն կ'ուսանի, վերջին քննութիւնն է պիտի անցընէ, եւ կայ Սիրանը, պարսկահայ ուսանողուհի մը:

Կայ ոստիկան մը եւ կայարանի պաշտօնեայ մը, ուրիշ աշխարհի մը մէջ: Եւ՝ սրահի մարդիկը, որոնք պիտի բողոքեն, կասակեն եւ աղմուկ հանեն:

Գործողութիւնը տեղի կ'ունենայ Լոս Անճելըս-Սան Տիեկօ-Փարիզ-Արցախ-Անդենական առանցքին շուրջ: Ու քիչ մը ամէն տեղ, աշխարհի վրայ:

ՏԵՍԱՐԱՆ 1

Երկուշաբթի, 10 Հոկտեմբեր 1994

Վարագոյրը բացուելուն՝ բնմը մտիք է: Կամաց-կամաց բեմին ծայրերուն կ'որոտագծուին երկու խցիկներ, որոնց մէջ կան հեռաձայնի երկու գործիքներ: Տակաւ լուսարձակները կը յստակացնեն տեսարանը: Բեմին մէջտեղը միշտ մտիք կը մնայ:

Աջէն՝ երիտասարդ մը կ'երեւի հեռաձայնին քով: Փոքր տետրակի մը մէջ կը նայի, յետոյ թիւ մը կը կազմէ գործիքին վրայ ու կը կոթնի խցիկին՝ սպասելով:

Զախէն՝ նոյն վայրկեանին հեռաձայնին զանգը կը զարնէ: Երրորդ զարկին երիտասարդ կնկայ մը կերպարանքը կը մօտենայ, զգուշութեամբ կը վերցնէ ընկալուչը, կը տանի սկանջիմ:

ԱՐՄ.— Հէջօ:

ՆԾԱՆ.— Արմինէ՞, դո՞ւն ես:

ԱՐՄ.— Հա, ես եմ: Նշա՞ն, ո՞ւր ես, ուրկէ՞ կը խօսիս կոր:

ՆԾԱՆ.— Ուաշինկթընէն, պանդոկին մէջէն: Ինտո՞ր ես:

ԱՐՄ.— Լաւ եմ: Քանի՞ է ժամը հոն հիմա:

ՆԾԱՆ.— Ժամը (ծամացոյցին կը նայի) վեցը քառորդ կ'անցնի:

ԱՐՄ.— Հոս երեքը քառորդ կ'անցնի: Հա, ի՞նչ է, Նշան:

ՆԾԱՆ.— Մարդ կա՞յ քովդ:

ԱՐՄ.— Չէ, առանձին եմ, օֆիսին մէջ: Մէնէնըըը ներսն է: Դուն առանձին ես:

ՆՇԱՆ.—*Ես ալ (Ռորս կը նայի, սրահին կողմը): Անշուշտ այս ժողովուրդը կայ:*

ԱՐՄ.—*(Իրար անցած յանկարծ).—Ո՛ր ժողովուրդը:*

ՆՇԱՆ.—*(ձեռքով ցոյց կու տայ սրահին բազմութիւնը).—Սա, ճանը՛մ, եկեր մտիկ կ'ընեն մեր խօսակցութիւնը, սրահին բազմութիւնը:*

ԱՐՄ.—*Օհ, Նշան, ի՞նչ պիտի ընենք հիմա, ամէն ըսածնիս պիտի լսեն, ամէն մարդ պիտի գիտնայ գաղտնիքս:*

ՆՇԱՆ.—*Արժէք մի տար անոնց, աղջիկ, գիտես մեր հայերը, սքանչելի մարդիկ են, բայց ոչխարի հօտի պէս հոս կ'երթան, հոն կ'երթան՝ առանց շատ բան հասկնալու: Մի վախնար:*

ԱՐՄ.—*Ձէ, չէ, եկուր քիչ հտը բաց թէլէֆոնը, հիմա չխօսինք:*

ՆՇԱՆ.—*Փախուստ չկայ անոնցմէ: Արմինէ, անոնք միշտ հոն պիտի ըլլան, հազար աչք-ականջ կտրած...*

ԱՐՄ.—*Ձեմ ուզեր: Պիտի գոցեմ:*

ՆՇԱՆ.—*Ատանկ բան չընես... ինձի նայէ... աշխարհը, կեանքը բեմ մըն է, չէ՞, դերասաններ ենք, չէ՞... անանկ որ, դերասանութիւնն է կեանքը, այս է մեր միակ իրականութիւնը, դերասանութիւնն ըսածը գոյութիւն չունի, ինչ որ խաղանք՝ ա՛յդ է մեր ճշմարտութիւնը: Ամէն ինչ կեղծ է եւ ամէն ինչ իրական է նոյն ատեն: Փախուստ չկայ, թակարդը ինկած ենք: Հասկցա՛ր:*

ԱՐՄ.—*Մէ, բան մըն ալ չհասկցայ:*

ՆՇԱՆ.—*Հաւատա՛ խօսքիս, այս մարդիկը (ձեռքի շարժումը կը տարածուի բազմութեան վրայ) բողկի զլուխներ են ու չեն հասկընար թակարդին մէջն են: Անանկ որ, վտանգ չկայ անոնցմէ: Հիմա շարունակենք մեր խօսակցութիւնը:*

Յանկարծ հանրութեան մէջէն մէկը ոտքի կը կայնի ու դառնալով շուրջի մարդոց, բարձրաձայն կ'աղաղակէ:

ՆՇԱՆ.—*Ես չեմ հանդուրժեր, որ մեզ նախատէք, Պարոն Դերասան կամ Պարոն Հեղինակ կամ Պարոն ով որ էք բուն կեանքի մէջ: Եթէ նախատական մէկ բառ եւս լսեմ՝ պիտի ձգեմ-երթամ, զգուանքով:*

Քար լուծիւն: Մարդը ոտքի է: Մէկը մութին մէջէն՝ «Իրատուք ունի» կը պոռայ, «այո» կ'արձագանգեն որիշներ: Մարդը կը նստի: Ամէն աչք ետ դարձած է քեմին:

ՆՇԱՆ.—*Արմինէ, վայրկեան մը կը սպասե՛ս, մի գոցեր: (Նշան դանդաղօրէն բեմին առաջը կու գայ: Կը նայի շուրջը, աչքերը քթեւով: Ու կը խօսի Մարդուն): Պարոն:*

Ճիշդ այդ վայրկեանիմ Բենադրիչը բեմ կու գայ, կը սօտեմայ բազմութեամ:

ԲԵՄ (կը դառնայ Նշանիմ).—Ներողութիւն, Նշան, վայրկեան մը: (Կը դառնայ սրահին ու մարդուն, որ դէռ կայնած է): *Սա Բեմադրիչն էմ, Սարգիս Սեմերճեան:* (Լուռ է): *Ներողութեալ պատճառ չունիք, այս տեղը բեմ է՝ եթէ ուզէք, բեմ չէ՝ եթէ չէք ուզեր:* (Լուռ է Գործն): *Բայց բացատրեմ խաղին օրէնքները: Առաջինը այն է, որ բոլորս կախարդանքի մը մէջ ենք — գրութեան կախարդանքը: Գիտցէք ուրեմն, սեւէ մէկը կրնայ բեմ գալ ու փոխել գրութիւնը, բայց չի կրնար դուրս գալ, ազատագրուիլ գրութենէն, չի կրնար խանգարել խաղը: Երկրորդը այն է, թէ հեղինակ ըսուածը, բոլորիս նման, հեթաթ մըն է, որ իր թատերախաղերով կ'ուզէ ազատուիլ խաղէն, կ'ուզէ ճշմարտութիւն դառնալ: Հոս ամէն մէկը ազատ է նոյնը փորձելու: Իմ կեանքս հեթաթ մըն է, որուն հերոսը ես եմ եւ զոր կը պատմեմ երեխային, որուն ձեռքէն բռնած կը քայլեմ: Այդ երեխան, անշուշտ, ես եմ, նորէն... Դուք ալ այնպէս կը զգա՞ք, չեմ գիտեր: (Կը խոնարհի բազմութեան ու կ'անցնի վարագոյրիմ ետիմ):*

Նշան ետ իր տեղը կ'երթայ, կը վերցնէ ընկալուչը:

- ՆՇԱՆ.**—Արմինէ՞, հո՞ն ես:
- ԱՐՄ.**—Այո, ի՞նչ էր ատիկա:
- ՆՇԱՆ.**—Ներողամիտ եղի՛ր, բայց կարեւոր էր ու չէր: Անցնինք մեր գործին: Մայքըլը տեսա՞ր:
- ԱՐՄ.**—Նշան, ես...
- ՆՇԱՆ** (անհամբերութեամբ).—Արմինէ, պատասխանէ հարցումիս — Մայքըլը տեսա՞ր թէ ոչ:
- ԱՐՄ.**—Այո, տեսայ:
- ՆՇԱՆ.**—է, ի՞նչ ըսաւ:
- ԱՐՄ.**—Նշան, պէ՛տք է որ աս բաները հիմա բոլորին առջեւ ըսեմ:
- ՆՇԱՆ.**—Համբերութիւնս կը հատնի կոր, գիտցի՛ր: Ի՞նչ ըսաւ:
- ԱՐՄ.** (լուռ է կարճ պահ մը, զլուխը կախ: Յետոյ ցած, վախկոտ ձայնով կը խօսի).—Կ'ըսէ կոր որ... մարմինս առողջ է, կը սանի... բայց երկու ամիսը պէտք չէ անցնի, ատկէ ետք կը դժուարանայ...
- ՆՇԱՆ.**—Դրամի խօսք ըրա՞ւ:
- ԱՐՄ.**—Այո... երկու հազար կ'ուզէ, «քէչ», սկիզբէն:
- ՆՇԱՆ.**—Հազար հինգ հարիւր համաձայնած էին... լակոտը, եահուտի է՝ ի՞նչ պիտի ըլլայ:

Կարճ լռութիւմ մը:

ԱՐՄ.—Նշա՞ն:

ՆՇԱՆ.—Ի՞նչ:

ԱՐՄ.—Այդ մարդը չեմ ուզեր անգամ մըն ալ տեսնել:

ՆՇԱՆ.—Ինչո՞ւ համար, ի՞նչ եղաւ որ:

ԱՐՄ. (լուռ է, կը վարանի խօսելու, ձայնը ցած՝ կը խօսի).—Ուրիշ բան
ալ ուզեց:

ՆՇԱՆ.—Ի՞նչ:

ԱՐՄ.—Գիտես ինչ...

ՆՇԱՆ (կարճ վայրկեան մը լուռ է: Յետոյ, գրեթէ պոռալով).—Ի՞նչ... այ-
սինքն... չեմ հաւատար: (Արմինէ լուռ է): Վայ սրիկայ լակոտ...
ես քու մարդ... ծօ...:

Երկար լռութիւն:

ԱՐՄ.—Նշա՞ն:

ՆՇԱՆ.—Լաւ, նայէ, ես Երկուշաբթի հոն եմ, անմիջապէս ուրիշ
մէկը կը գտնեմ, աս գործը ժամ առաջ լմնցնելու է: Մի վախ-
նար, Արմինէ:

ԱՐՄ.—Նշան, ես ոչ թէ չեմ վախնար, ես չեմ ուզեր կորսնցնել գա-
ւակս:

ՆՇԱՆ.—Արմինէ, այդ խնդիրը լուծած էինք, հիմա ծայրէն չսկսինք:

ԱՐՄ.—Բան մը չէինք լուծած, դուն որոշեր էիր մինակդ: Ես դէմ
էի:

ՆՇԱՆ.—Այսինքն ի՞նչ:

ԱՐՄ.—Դեռ չեմ ուզեր, բայց հիմա, հայրս-մայրս Պէյրուսի իմանան,
թէ ես... չեմ գիտեր հիմա, կաթուած կ'իջնայ հօրս գլխուն:

ՆՇԱՆ.—Արմինէ, եթէ միտքդ ամուսնութիւն է...

ԱՐՄ.—Ձէ, բնաւ: Ատիկա զօրովէն չըլլար:

ՆՇԱՆ.—Ուրե՞մն:

Լռութիւն: Արմինէ շատ մեղմօրէն կը թեկեկայ...

ԱՐՄ.—Ի՞նչ պիտի ընեմ...

ՆՇԱՆ.—Բան մը կ'ընենք, մէյ մը գամ... մի լար, աղջիկ, քաջ եղիր:
Քեզի համար կ'ընեմ կոր ասիկա, գիտցած եղիր: Ես մէկ դը-
րուշ չեմ տար ինչ կը խորհին հայ պառաւները, աղաները,
կաթողիկոսէն մինչեւ Մարիամ տուտուն: Ճիւերուս պէս Լոս
Անճելըսի հայութիւնը:

ԱՐՄ.—Գիտեմ, գիտեմ... ըսի քեզի, հայրս, մայրս. մեծ եղբայրս
մարտական է, գիտնայ նէ՛ կը սպաննէ զիս, ազգականները
կան...

ՆՇԱՆ.—Լաւ: Գամ նէ՛ կը խօսինք: Պայ-պայ:

ԱՐՄ. (լուռ է կարճ պահ մը).—*Շուտ եկուր, Նշան: Պայ-պայ:*

Լուսարձակները մարելու վրայ են՝ երբ յանկարծ Մարդը նորէն ոտքի կ'ելլէ:

ՄԱՐԳ.—*Վայրկեան մը: Մի երթաք:*

Բազմութեան մէջէն դժգոհանքի ձայներ «նորէ՞ն մը» կը լսուի, «նըստե՛, հաօ», կը պոռայ մէկը, «ձգեցէք թող խօսի մարդը» կ'ըսէ կին մը, «կարծի կապէ՛» կը լսուի: Արմենուհի եւ Նշան անշարժացած են, երկուքն ալ քայլ մը դուրս կ'ելլեն խցիկներէն, կը սպասեն:

ՆՇԱՆ.—*Այո՞:*

ՄԱՐԳ.—*Դուք գիտէ՞ք ինչպէ՛ս կը վերջանայ աս խաղը:*

ՆՇԱՆ.—*Կարծես թէ՛:*

ՄԱՐԳ.—*Ձեզաւ:*

ՆՇԱՆ.—*Ինչպէ՞ս թէ՛ չեղաւ:*

ՄԱՐԳ.—*Թատրոնը կեանքն է, եւ կեանքը՝ անկարելի է գիտնալ վերջաւորութիւնը:*

Լռութիւն: «Այո, իրատունք ունի», կ'ըսէ մէկը: Այդ վայրկեանին բեմ կ'ելլէ Բեմադրիչը, լուսարձակը կը վառի վրան: Ջղային վիճակ մը ունի: Կը դառնայ Մարդուն կողմը:

ԲԵՄ.—*Ես բեմադրիչն եմ այս թատերախաղին: Ներողութիւն, բայց ասիկա քիչ մը շատ երկարեցաւ — նախ՝ նախատինքի պատմութիւն մը, հիմակ ալ սա... սա... իմաստակին, գիտեմճիին խօսքերը: Առաջինը արտօնեցի՝ հետաքրքրական էր ձեզի համար: Բայց ասիկա՝ չ'ըլլար:*

ՄԱՐԳ.—*Եւ ինչո՞ւ:*

ԲԵՄ.—*Պարոն, ո՛վ որ էք նէ՛ եթէ բան մը կը հասկնաք թատրոնէն, ելէք դուք հատ մը գրեցէք, եւ ես կը բեմադրեմ:*

Յանկարծ, սրահին հետաւոր անկիւնէն ձայն մը կը լսուի: Միջանասակ մարդ մը կայներ շուրջիներուն հետ բարձրաձայն կը խօսի՞, կը վիզի՞, շատ յստակ չէ:

ԲԵՄ.—*Ա՛ն ով է հիմա, ա՛լ կը բաւէ, ճանըմ:*

Խօսակցութեան աղմուկը կը շարունակուի: Ի վերջոյ մէկը կը պոռայ՝ «Ես կ'ուզեմ խօսիլ»:

ԲԵՄ.—*Դո՞ւք ով էք, ի՞նչ կ'ուզէք:*

ՀԵՂ.—*Ես հեղինակն եմ:*

ՄԱՐԿ.—*Հա, ճանչցայ, բայց դուք բնաւ կարեւոր չէք այս խնդրին մէջ:*

Ամէն կողմէ խնդրք ու նոյն ատեն ձայներ՝ «նստէ» ... «ձգեցէք թող խօսի մարդը» ... «խօսէ, Պարոն, խօսէ՛ ծօ...»...

ԲԵՄ.—*Ինձի նայեցէք:* (Ծափ կը զարնէ: Լոռութիւնը կը տիրէ սրահին: Բոլոր գլուխները բեմ դարձած են): *Այս առաջին տեսարանը 14 վայրկեանը պէտք չէ անցնի եւ արդէն* (կը նայի ժամացոյցին) *20 վայրկեան առաւ: Այլ հերիք է:* (Կը դառնայ Նշանին ու Արմի-նէին): *Ետ քուլիս:*

ՀԵՂ.—*(Կը պոռայ ձիւնա)*.—*Ես գրած եմ այս խաղը, այս խօսքերը չը-կան մէջը, իրաւունք չունիք...*

ՆՅԱՆ.—*Հարկաւ թէ ունինք: Միայլ գրուած է:*

ՀԵՂ.—*Ինչպէ՞ս թէ սխալ:*

ԱՐՄ.—*Այո, իրաւունք ունի Նշանը:*

ՀԵՂ.—*Դուն մի՛ խառնուիր:*

ԱՐՄ.—*(քայլ մը կ'ատնէ դէպի բեմին կեդրոնը, լուսարձակը կ'ընկերանայ իրեն: Կ'անջարժանայ ու զուսպ ձայնով կ'ըսէ).*—*Ձաւակ վիժելը ո՞ճիր է եւ ոեւէ կին կամ մայր, որ կ'արտօնէ ատկա՞ կը դադրի մարդ ըլլալէ, կը վերածուի կեանքէ պարպուած դերասանի:*

Լոռութիւն: Ամէն աչք Արմինէէն հեղինակին կ'երթայ:

ՀԵՂ.—*Ես քեզի այդքան հասուն խառնուածք չեմ տուած խաղին մէջ:*

ԱՐՄ.—*Գիտեմ, ամբողջ խելքը ու նկարագիրը կարապետին եւ Նշանին տուած ես: Ձիս լաւ չես ճանչնար:*

ԲԵՄ.—*(ձայնը բարձրացուցած ու ընդհանուր շուարումին մէջ կը խօսի բոլորին).*—*Լմեցաւ այս տեսարանը, կը հասկնա՞ք, լմեցաւ: (Կը դառնայ Նշանին եւ Արմինէին): Դուք ետ քուլիս գացէք: (Կը պոռայ դէպի բեմին ետեւը): Մարտիրո՞ս, քաջէ՛ վարագոյրը:*

ՄԱՐԿ.—*Ես պատասխան չառի:*

ԲԵՄ.—*Հիմա, հիմա, հէլէ գոցենք սա վարագոյրը* (Վարագոյրը գոցելու վրայ է: Բեմադրիչը առաջ կ'անցնի: Ետին վարագոյրը կը գոցի: Հիմա, բեմին կեդրոնը կայնած՝ կը փնտռէ Մարդը: Լոյսերը միշտ մարած են: Քայլ մըն ալ կը մօտենայ բեմին եզերքին): *Բարեկամ, անկարելի բան է ուզածդ:*

ՄԱՐԿ.—*Նախ հասկնամ՝ ինչու գիտ չիմաստակ եւ գիտեմճի՞ կոչեցիք:*

ԲԵՄ. (լուռ է վայրկեան մը)։—Ատանկ ըսի... ներողամիտ եղէք, Պարոն, տարուեք եմ վայրկեան մը: Կը պատահի:

ՄԱՐԳ. (քանի մը երկվայրկեան կը տատամսի)։—Օքէյ:

ԲԵՄ.—Շնորհակալութիւն: Պարզ խաղին: Ես կ'ընդունիմ, թէ բեմն ու հանրութիւնը իրար կը սկսին ու իրար կը շարունակեն, տարբերութիւնը շինծու է, նոյն մարդն է ամէն տեղ: Բայց ճիշդ այդ վիճակն է, որ կը մերժէ թատրոնը, տարբերութիւն մը կը դնէ, ձեռ կը հագցնէ կեանքին, անոր մերկութիւնը կը փորձէ ծածկել: Իրաւունք ունի Արմինէն, երբ ամօթ կը զգայ: (Լուռ է, շուրջը կը քննէ):

ՄԱՐԳ.—Աս կախարդանքը... գիտէ՞ք թէ մահացու է: Մնայ՝ մահացու է, քանդուի՞ մահացու է: Վտանգաւոր խաղ է ըրածնիդ:

ԲԵՄ. (վայրկեան մը կը վարանի)։—Ճիշդ է, սակայն բան մը պիտի ընենք, չէ՞... հաց մը պիտի հանենք տեղէ մը, խերն անիծածս: (Լուռ է, կը դառնայ Մարդուն): Շիտակը, պարզ յիշեցում մըն է ձեզի, որ չտարուիք, թէ՛ խաղէն, թէ՛ ալ կեանքէն: Եւ թէ՛ ալ բառերէն: Այսքան կրնամ ըսել:

Մարդը կը նստի, քիչ մը շուարած: Բեմադրիչը ետին կը դառնայ ու վարագոյրէն ներս կ'անցնի:

ՏԵՍԱՐԱՆ 2

Չորեքշաբթի, 12 Հոկտեմբեր 1994, Կէլէնտէյլ

Հանրային պարտէզի մը մաշած անտարանը: Երեկոյ է: Համր մը կը վստի նստարանին քով:

Կին մը նստեր է մինակ: Երեսունհինգնոց, ճաշակով հագուած, միջին կազմով, հայկական ադուրդով մը ունի: Թեւերը ծալած է ու հեռուն կը նայի: Բայց հասարակ, ժողովրդային բան մը կայ վրան:

Մարդիկ, կիներ կ'անցնին առջեւէն, սակայն չի նայիր անոնց:

Կը մօտենայ մարդ մը, յիսուննոց, միջահասակ, ակնոցաւոր, լաւ հագուած: Ինքզինքը շիտակ բռնած, հրաման տուող, ուժեղ նկարագրի տպաւորութիւն գործող մարդ մըն է: Ծուրջը կը քննէ, կը նստի կնկան մօտը:

ԿԱՐ. (ցած, բայց շեշտ ձայնով)։—Արմինէ:

ԱՐՄ. (ճոր կ'անդրադառնայ, թէ քովը մէկը նստած է, կը ցնցուի ու անոր կը դառնայ)։—Օ՛հ, կարապետ (կը փաթթուի իրարու, բայց չեն

- համբուրուի, յետոյ կը քակուի՞), վախցուցիր զիս: Ե՞րբ եկար Հայաստանէն, մի, որքան կարօտցեր եմ...
- ԿԱՐ. (ինքզինքը գտնած է).—Առջի օր, ես ալ քեզի կարօտցեր եմ... ինչպէ՞ս ես... այն միւս հարցը...
- ԱՐՄ. (կը կախէ գլուխը).—Ինչպէ՞ս պիտի ըլլամ... յայտնի է:
- ԿԱՐ.—Ձէ, ճանրմ. Արմինէ, քեզի հազար անգամ ըսեր եմ, որ պանքա թէլէֆոն չընես:
- ԱՐՄ.—Հապա տո՛ւնը ընէի... Նոր քարտուղարդ ձայնս չի ճանչնար, հոգ չէ: (Լուռ է, գետնին կը նայի): Կարապետ, շատ մտահոգ եմ, օրերը, շաբաթները կ'անցնին կոր, ի՞նչ պիտի ըլլայ վիճակըս, ասանկ երթայ նէ...
- ԿԱՐ.—Նշանէ՞ն ինչ լուր:
- ԱՐՄ.—Ուշիկներն է, երկու շաբաթ է ի վեր, Երկուշաբթի կէսօրին կը վերադառնայ, հեռավայր ըրաւ երէկ:
- ԿԱՐ.—Ի՞նչ է նպատակը:
- ԱՐՄ.—Ձգացած՝ բարեկամ բժիշկ մը գտեր էր, կարծես բժշկական ուսանող է, որ վիժու՞մը պիտի ընէր: Նշան ուրիշ բարեկամ մը ունի, որ Պիկ Պէր լճին քով անձնական տուն մը ունի... հոն պիտի երթանք:
- ԿԱՐ. (լուռ է Կարապետ, միտքն ու աչքը հեռուները).—Անշուշտ...
- ԱՐՄ. (Արմինէ, որ միշտ անոր դարձած է՝ մեղմ ձայնով կ'ընդհատէ անոր խօսքը).—Երեսու նայած չունիս. գալէդ ի վեր, անուշ խօսք մը չըրիր...
- ԿԱՐ. (կը դառնայ անոր կողմը, քիչ մը ջղային).—Ձրի՞ր բարեւ:
- ԱՐՄ.—Ձէ, չըսիր:
- ԿԱՐ.—Նայէ, Արմինէ, ասանկ ատենները պզտիկ բաներով չեն զբաղիր, ես...
- ԱՐՄ. (ճորձ կ'ընդհատէ).—Բարեւը պզտիկ բան չէ ինծի համար: (Կարապետ կը փորձէ անոր ձեռքը բռնել, թայց Արմինէ ետ կը քաշէ): Ձորովէն բան չեմ ուզեր: Ինծի հետ անկեղծ պիտի ըլլաս հա, մաքուր, պարկեշտ, առաջին օրերուն պէս:
- ԿԱՐ.—Ձե՞մ:
- ԱՐՄ.—Ձե՞մ գիտեր... (Կը լուռ Արմինէ: Կ'անցնի վայրկեան մը):
- ԿԱՐ. (զսպելով ջղայնութիւնը).—Հիմա ատոր ատենը չէ, Արմինէ:
- ԱՐՄ.—Միշտ ատոր ատենն է: Այդ առաջին օրերը միտքէս չեն ելլիր... մեր մտերմութիւնը այնքան տաք էր, որ վստահ էի, թէ կը սիրէիր զիս:
- ԿԱՐ.—Ճիշդ է ատիկա, քեզ կը սիրէի, հիմա ալ կը սիրեմ... քեզի ըսեր եմ, որ սրտի մաքուր սէր է ատիկա:
- ԱՐՄ.—Ոչ, ոչ, աւելի էր, շատ աւելի էր այն ատեն... կին մը կը հասկնայ, պէտք չունիս հետս պառկելու որ սիրես զիս:

Կարապետ ոտքի կ'ելլէ:

Ա.ՐՄ. (մեղմ ձայնով).—Նստէ, *Կարապետ*:

Կարապետ կը վարանի պահ մը, յետոյ կը նստի:

ԿԱՐ.—*Քաջ եղբր, Արմինէ:*

Ա.ՐՄ. (մարմինը կը շարժէ անոր կողմը: Յուզումը զգալի է ձայնէն).—*Քեզի պիտի չտեսնե՞մ եօթը ամիս:*

ԿԱՐ. (զգացականութեան արտասովոր յայտնումով մը կը բռնէ Արմինէին ուսերէն, իրեն կը դարձնէ մարմինը ու յուզում կ'ըսէ).—*Ես կարեւոր չեմ, Արմինէ, ոչ ալ դուն կամ Նշանը... ան միայն, թողնիկս: Անոր հայրը զաւակս է, այո, բայց բուն հայրը, ան՝ որ պատասխանատու է թէ՛ այդ զաւակին համար եւ թէ՛ հօր համար՝ ես եմ:*

Ա.ՐՄ.—*Բայց դուն չե՞ս գիտեր ինչ ըսել է կինը, ես կին եմ, սիրոյ խօսքերուն, ձայնին պէտք ունիմ... կինը պիտի սիրէ, որ ապրի... Ինչպէ՞ս...*

ԿԱՐ. (ընդմիջելով ու ձեռքերը քաշելով անոր ուսերէն).—*Ատ ուրիշ բան է, հիմա մենք...*

Ա.ՐՄ. (ընդմիջելով իր կարգին).—*Ինչպէ՞ս ատանկ բան կ'ըսես, Կարապետ, դուն հէ՞չ սիրտ չունիս մը:*

ԿԱՐ. (կարճ երկվայրկեան մը կը լռէ, ստուած: Ձայնը յանկարծ կարծր քան մը ունի).—*Ատանկ ատենները՝ ո՛չ, չունիմ: Բայց գիտես, որ ունիմ, Արմինէ: (Կարապետ ձեռքը կամաց մը կ'անկախ ձեռքը կ'առնէ, բայց առանց անոր դատնալու): Պէտք եղած տեղը ունիմ, միայն սիրտ ունիմ քեզի համար, գիտես ասիկա: Մոռցա՞ր: (Կը խնդայ Կարապետ, առաջին անգամ ըլլալով):*

Ա.ՐՄ. (ուրախ ձայնով մը).—*Չէ, չեմ մոռցած: Կեանքիս մէջ միայն դուն զիս սիրած ես, այո... ո՛չ Սերոբը, ոչ ալ Նոյնիսկ Նշանը:*

Արմինէի աչքերուն մէջ լոյս մը կու գայ յանկարծ: Կարապետին ձեռքը շրթունքներուն կը տանի ու կը թամբորէ: Ուրախութեան փայլ մը կ'անցնի Կարապետին երեսէն:

Ա.ՐՄ. (ոգելորդութամբ ու արագ կը խօսի հիմա).—*Պիտե՞ս, միշտ ուզած եմ հարցնել, քեզի պէս մեծ, կարեւոր մէկը, պանքայի մէնէն-ըր, խելացի եւ հարուստ, ի՞նչ կը գտնես իմ մէջն: Ես պարզ, պուրճ համուտցի աղքատ վաճառականի աղջիկ եմ, հազիւ դպրոց տեսած եմ, ինծի գործ տուիր պանքան, երթալով բարձրը պաշտօն... ըսիր, թէ կը սիրես ինծի, հիմա ալ ատանկ կ'օգնես... ես ի՞նչ եմ որ քու քովդ... ինչո՞ւ ինծի կը սիրես:*

ԿԱՐ. (պզտիկ խնդուք մկ ունի, յետոյ կ'ըսէ).—*Դուն գիտն՞ա ինչ ըրիր ինձի:*

ԱՐՄ.—*Ի՞նչ, ըսէ:*

ԿԱՐ.—*Ամբողջ երիտասարդութիւնս տուիր ինձի, ա՛ն՝ որ ես չկրցայ ազրիլ ժամանակին... ինձի քսանհինգ տարեկան երիտասարդ ըրիր, քու սէրդ տուիր եւ իմ սէրս ընդունեցիր... նոր կեանք տուիր ինձի...*

ԱՐՄ.—*Բայց ժարմինս չտուի:*

ԿԱՐ.—*Ես ալ չպահանջեցի: Ասանկ աւելի լաւ է:*

Լուռ են: Կարապետ ակնոցները կը հանէ, կը փշէ ապակիին, կը սկսի մաքրել թաշկիմակով, հոգեկան խռովքը ծածկելու համար: Արմինէին գըլուխը կախ է:

ԱՐՄ.—*Ձեմ գիտեր...:* (Յետոյ մեղմ ձայնով, գետին նայելով կը հասցընէ): *Պիտի գա՛ս Սան Տիեկօ:*

ԿԱՐ.—*Այո, կու գամ, դուն միայն հանգիստ եղիր, առանց փորձանքի զաւակդ բեր, ուրիշ բան չեմ ուզեր:*

ԱՐՄ.—*Յետո՛յ:*

ԿԱՐ. (լուռ կը մտածէ).—*Կը նայինք, Աստուած մեծ է, ձեւ մը կը գտնենք: Բայց մի մոռնար, Նշանը բնաւ բան մը պէտք չէ գիտնայ, ոչինչ: Աւելի ուշ, կը նայինք...*

ԱՐՄ.—*Լաւ:*

Ոտքի կ'ելլեն դանդաղօրէն, իրարու կը դառնան ու լուռ, երկար իրարու կը նային:

Վարագոյրը կը գոցուի:

ՆՇԱՆ (տեղէն կը ցատկէ).—*Կեցիր նայիմ... անաստուածը կ'ընդունիմ, բայց միւսնե՛րը, ուրկէ՞ ելան, հէ՞... ես առ խօսքդ:*

ՇԱՂ.—*Ձեմ առներ... դուն չե՞ս ըսողը, թէ բարոյական անձնական խղճի հարց է, հէ՞... անանկ է նէ՛՛ երբ Աստուծոյ ալ չես հաւատար, ի՞նչը կը դառնայ հասարակ խաղալիքը կիրքին:*

ՄԱՐ.—*Ա՛յլ հերիք կուսիք:*

ՆՇԱՆ.—*Ես Շաղիկին հետ խնդիր չունիմ, պապային աղջիկն է... իմ տարտոս այն է, որ գոնէ մեր տան մէջ անկեղծ ըլլանք իրարու հանդէպ, ճշմարտութիւնը ըսելու եւ լսելու քաջութիւնը ունենանք:*

ՄԱՐ.—Մի պոռար, Նշան:

ՆՇԱՆ.—Չեմ պոռար կոր: Կ'ուզեմ հպարտ ըլլալ Տէրունեան անու-
նովս:

ԿԱՐ.—Ինչու, հպարտ չե՞ս:

Առանց միւսներէն տեսնուելու, Կարապետ եկած-կայնած բաց դրան
մէջ: Իր մութ-գոյն շրջագգեստը փաթած է մարմնիճ շուրջ: Մազերը խա-
որն ի խտուն, ակնոցը աչքին, կուզը տնկած:

Բոլորը իր կողմ կը դառնան: Նշան յանկարծակիի եկած է, բայց կը
պահէ իր զգաստութիւնը: Ու հանդարտ ձայնով կը պատասխանէ հորը:

ՆՇԱՆ.—Ո՛հ, հպարտ չեմ:

ՄԱՐ.—Նշան, մի՛ մոռնար, պապադ է:

ԿԱՐ.—Շու ինչո՞ւ:

Նշան կը նայի մօրը, քրոջը, յետոյ նայուածքը կը կենայ հօր անշարժ
կերպարանքին վրայ:

ՆՇԱՆ.—Որովհետեւ սուտ է մէջինը — ո՛չ յարգանքը, որ կ'ըլլայ
այդ անուին, ոչ ալ բարիքը, որ կ'ըլլայ անոր կողմէ... այդ
ամբողջ կոնդակները, յոգուածները, պատիւները կեղծ են, կը
ստորնացնեն, կ'ապականեն մարդիկը: Թէ՛ տուողը եւ թէ՛ ըս-
տացողը, տեղ մը, ձեւով մը մարդկային հպարտութիւնը վերա-
ւորուած է:

Կարապետ սենեակ կը մտնէ, բազմոցին կը նստի, բայց մարմինը կը
շարունակէ մանր, ջղային շարժումները: Ծաղիկ եւ Նշան ոտքի կը մնան:
Բոլոր աչքերը Կարապետին վրայ են — կը ծալէ թեւերը, վեր՝ տղուն կը յա-
ռէ նայուածքը, կ'անշարժանայ (քիչ մը դերասանական այս շարժումները
չեն վրիպիր Նշանի աչքէն):

ԿԱՐ.—Հաւ, սեպենք թէ այդպէս է կացութեան տինամիքը, սակայն
այդ մարդիկը երջանիկ են, տղաս, գիտեն թէ վերը մէկը կայ,
որ կը մտածէ ու կը գործէ իրենց տեղ, հայութիւնը անգլուխ
չէ... քեզի ծանօթ է Սփիւռքի վիճակը... գիտեն թէ դրամին
ետին խելք մը կայ, ա՛լ ինչերո՞ւն պէտք, թէ այդ գլուխը
սիրտ ալ ունի՞ թէ ոչ:

ՆՇԱՆ.—Ա՛յս է ուզած հայութիւնդ:

ԿԱՐ.—Ուզածս չէ, բայց կարելի հայութիւնն է, միակ կարելին, այս
պայմաններուն տակ:

ՆՇԱՆ.—Գործիդ կու գայ, բարով վայելես:

ԿԱՐ. (յանկարծ ջղայնութիւնը գլխուն կը զարնէ, ձայնը կը քարձրա-
նայ).—Ի՞նչ կայ այսինքն, կա՛մ մարդիկ կը ձգես երեսի վրայ

ու քէֆիդ կը նայիս միայն, կամ ալ տէր կը կանգնիս: Բայց չես կրնար փոխել, մարդիկ չեն փոխուիր:

ՆՇԱՆ (կը մօտենայ խորը).—Բայց դուն փոխեցիր, պապա, փոխեցիր, մարդիկ գէշցան քու օրինակէդ:

ԿԱՐ. (գրեթէ ոտքի ելած).—Ի՞նչ ընէի, չօգնէի՞ մարդոց, դպրոց չէինէի, եկեղեցի, ակումբ...: Ղարաբաղին միլիոնը չտայի՞, հէ՞, ի՞նչ է ուզածդ:

ՆՇԱՆ.—Ես չալըմին դէմ եմ, էլ լալլա՛հին դէմ եմ, քծնելուն... դուն չե՛ս ամենար ինքզինքէդ, պապա, երբ մարդիկ քեզի կը գովեն, երկինքները կը հանեն:

ԿԱՐ.—Բայց ի՞նչ կրնամ ընել, թուա՞ք բան ես, տղա՛յ, չե՛ս հասկընար թէ աս ազգը պիտի ապրի, պիտի կրթուի ու մէկը պէտք է որ ձեռքերը ազտին մէջ խոթէ ատոր համար, չէ նէ՛ գացած ենք. Հայաստանէն արդէն խեր չկայ, մենք մեր գլխուն ենք հոս: (Լուռ է Կարապետ): Իմին ալ գործիս չի գար մարդիկը խաբելը, բայց ի՞նչ ընեմ, հէ՞: (Նորէն լուռ կը մտածէ): Լաւ, դո՛ւն ինչ կը մտածես, եթէ աս սուտն է, սխալն է, ո՞րն է ճիշդը, ըսէ՛:

ՆՇԱՆ (յանկարծ կը նստի ու ձայնը հանդարտ է).—Մենք չորսս շատ լաւ գիտենք, պապա, ինչն է ճիշդը, մաքուրը... գոնէ մենք ընդունենք:

ԿԱՐ. (առաջ ծռելով դէպի տղան).—Նորէն կը հարցնեմ, ինչն է ճիշդը:

ՆՇԱՆ (շուրջը կը պտտցնէ աչքը, վարանելով: Մայրն ու քոյրը իրեն կը նային).—Ճշմարտաբար այն է, թէ դուն մարդիկ դրամովդ կը գնես, ամէն մարդ քեզի համար իր գինը ունի... եւ դուն սուտ ես այդ գինը կամ ոսկիով, կամ շոյելով, կամ կեղծիքով, կամ ալ պարզ խօսքով... մարդոց հաւատարմութիւնը գնած ես, սէրը, յարգանքը գնած ես: (Լուռ է, կը մտածէ ծանր բան մը ըսել): Ամէն ինչ հոսկէ, տունէն կը սկսի:

ԿԱՐ.—Ի՞նչ ըսել կ'ուզես:

ՆՇԱՆ.—Ինչպէ՛ս ըսեմ... աս տունը ամէն ինչը քու հրահանգովդ կը շարժի, միայն դուն կ'որոշես, կարծես թէ բոլորս ծախուած ենք քեզի...

ԾԱՂ. (յանկարծ պոռալով).—Նշան:

ԿԱՐ.—Ա՛ս ինչ խօսք է, տղա՛յ... աս տունը միշտ ալ սիրով եղած ենք, իրար յարգած ենք, գիրար սիրած ենք... չեմ հասկնար...

ՆՇԱՆ.—Կարեւոր է սէրը քեզի համար, դուն ուժը, իշխանութիւնը սիրած ես միշտ, քու կռիւդ, քու յաղթանակդ: (Լուռ է, մօրը կը նայի. ան՝ գլուխը աջ ու ձախ կ'երեւցնէ): Ինծի հետ մէկ լուրջ խօսակցութիւն չես ունեցած ամբողջ պատանութեանս ատեն, չեմ յիշեր, որ որեւէ խրատ տուած ըլլաս կեանքի գաղտնիքի մը մասին, բան մը՝ որ գիտ հասունցնէր, մեծցնէր ներսէն... հայրը ինչ է՝ ես չեմ գիտցած երբեք:

144-2001



ՄԱՆ.—*Ինչե՛ր կ'ըսես կոր, տղաս, հայրդ եւ ես...*

ՆԾԱՆ (ընդմիջելով ու յանկարծ դառնալով մօր կողմը).—*Գիտեմ, մամա, գիտեմ... այդ չէ հարցը: (Ձեռքերը շարժելով կը խօսի հիմա): Հարցը այն է, որ իմ եւ ձեր միջեւ լուռօ՞րէն պատ մը կար... գիտե՞ս, մամա, պատանի տարիներուս դրախտի պատկերս ինչ եղած է... չե՞ս գիտեր, հիմա ըսեմ քեզի... ձեր ննջասենեակը, գիշերը, դուռը դոց ու ներսէն ձեր շշուկը, կտոր-կտոր, խեղ-դուկ բառերը, լուռօ՞րէնները... Ատ էր դրախտը ինձի համար, դոց, հեռու:*

Լուրջիւ: Ծաղիկ աջի դուռնէն կ'ելլէ խոհանոց կ'երթայ, Կարապետ գլուխը ձեռքերուն մէջ առած՝ գետնին կը նայի: Մանուշակ շուտաւ՝ տղուն բերնէն կախուած է: Կ'անցնի վայրկեաններ:

ԿԱՐ. (կը վերցնէ գլուխը).—*Շաղիկ, ջուր մը բեր ինձի:*

Ծաղիկ անշուշտ ներս կը մտնայ գաւաթով, կու տայ ձորը, քովը կը կե-
նայ մինչեւ խմելը:

ՆԾԱՆ (ոտքի կ'ելլէ).—*Երթամ պառկիմ:*

ԿԱՐ.—*Ո՞րք ալ իմ ձեռքէս բռնած առաջնորդած է, ես գէրոյէն ճամբայ ելած եմ, մարդ չէ օգնած ինձի:*

ՆԾԱՆ.—*Ես քեզմէ օգնութիւն չէ որ սպասած եմ:*

ԿԱՐ.—*Հապա՛:*

ՆԾԱՆ.—*Օրինակ մը, թէ ինչ է հայր ըսուածը, թէ ուրիշ՝ կու գամ ես, որ գաւակդ եմ, ի՛նչ ըսել է գաւակ ըլլալ:*

ԿԱՐ.—*Ձեռքէս եկածը ըրի, տղաս: Եւ դեռ պատրաստ եմ սորվելու:*

ՆԾԱՆ.—*Քիչ մը ուշ է, չե՞ս կարծեր:*

ԿԱՐ.—*Թողնիկիս համար, երբ դայ... Շաղիկ, գաւաթ մըն ալ կը բերե՛ս:*

Դուրս կ'ելլէ Ծաղիկ: Կարապետ կը դառնայ Նշանին:

ՆԾԱՆ.—*Ես գացի: (Կը վերցնէ պայուսակը, կը պատրաստուի իր սե-
նակը երթալու):*

ԿԱՐ. (ձեռքը առաջ կ'երկարէ).—*Կեցիր վայրկեան մը: (Նշան կը կայ-
նի, Կարապետ կը շտկուի նստած տեղը): Մէկ կողմէն, ուրախ եմ
աս ըսածներունդ համար, խոհալիս հոգի մը ունիս, իմ երի-
տասարդութիւնս կը յիշեցնես... ես ալ քեզի պէս անկարելիին
սիրահարուած էի, ատեն մը նոյնիսկ խորհեցայ դաշնակցական
ըլլալ եւ զոհուիլ խոհալի մը համար, բայց յետոյ, համարաբար-
նէն ետք, փոխուեցաւ, ուժի փառասիրութիւնը մտաւ մէջս,
բան մը՝ որ դուն հէջ չունիս:*

ՆԾԱՆ.—*Ես մարդիկ չեմ գործածեր նպատակներու համար:*

Ծաղիկ ջուրը կը բերէ: Կարապետ կը վերցնէ գաւաթը, աղջկան կը նայի:

ԿԱՐ.—*Շաղիկ, դուն քննութիւն չունի՞ս վաղը:*

ՇԱՂ.—*Հա, ունիմ:*

ԿԱՐ.—*Գնա՛, աղջիկս, գնա՛ դասերդ ըրէ, ամէն ինչ իր ժամանակը ունի, հիմա սորվելու ատենդ է:*

ՇԱՂ.—*Կ'երթամ, պապա, քիչ վերջը:*

Կարապետ կը խմէ ջուրը, ոտքի կը կայնի, տղուն ճիշդ դիմացը: Հիմա կը դառնայ անոր:

ԿԱՐ.—*Ամէն մարդ ինքը պիտի սորվի կեանքի օրէնքները: Եւ պէտք է որ սխալներ ընէ, որ սորվի:*

ՆԾԱՆ.—*Այո, բայց սորվելէն առաջ սիրելի մը կայ կեանքի մէջ:*

ԿԱՐ.—*Ատիկա մամայիդ թագաւորութիւնն է, ես պապադ եմ: Հայր բերուա սէրը ուրիշ է, մանաւանդ հայերու մօտ: Օր մը հայր ըլլաս նէ՛ կը հասկնաս, Աստուած տալ: (Լուռ է պահ մը, մտածումները կը ճաւաքէ): Չէ, Նշան, սխալ ես, վատահ եմ շատ մը մարդիկ զիս կը յարգեն, անկեղծօրէն: (Նորէն կը թոփ սուգոյի ինքնիւր մէջ, լետոյ կը դառնայ տղուն) Վստահ եմ դուն ալ օր մը զիս պիտի յարգես, հիմա դեռեւս ոչ՛ բայց աւելի ուշ, երբ փորձառու ըլլաս, ընտանիք կազմես...*

Կարապետ կ'ուղղուի դէպի դուռ:

ՄԱՆ.—*Ո՛ւր, Կարապետ:*

ԿԱՐ.—*Երթամ պառկիմ: Ժամը 11 եղեր է: Առտուն գործի եմ: (Կը դառնայ տղուն ու կ'ընկնուի): Գիշեր բարի: Մի ուշանար, Մանուշակ:*

ՄԱՆ.—*Չէ, հիմա կու գամ:*

ՇԱՂ.—*Գիշեր բարի, պապա:*

ՆԾԱՆ.—*Գիշեր բարի:*

Կարապետ կը մեկնի աջի դուռէն: Մինակ մնացած, երեքը լուռ են կարճ պահ մը: Նշան պայուսակը վար կը դնէ, կը պրկուի, կը նստի բազկաթոռին, կը տարածէ ոտքերը: Մանուշակին աչքերը կը գոցուին արդէն, կը սպասէ որ մէկը խօսի:

- ԾԱՂ.—Պապան երբեք այսքան... այսքան... բառը չեմ գտնի կոր:
- ՆԾԱՆ.—Հաղորդական:
- ԾԱՂ.—Աւելի քան հաղորդական... զինաթափ, պաշտպանողական... դիւրահաճ է բառը:
- ՆԾԱՆ.—Ատանկ բառ մը... (Կը խնդայ): Հայաստանի ազդեցութիւնը ըլլալու է:
- ԾԱՂ.—Օ՛, Նշան, տեսնելու էիր պապային եղած պատիւները... դուն պիտի կատարէիր, գիտեմ... ընկեր Տէրունեան վեր, ընկեր Տէրունեան վար, բայց...
- ՆԾԱՆ (ընդմիջելով).—Ատ պիտի ըսէի, պապան, պիտի զարմանաս, Նշան, պապան ոչ մէկ վայրկեան քծնի՛լ, պատի՛ւ փնտռել, ինքզինքը սուղի՞ ծախել, հէ՛չ... Նշան, հաւատա՛ խօսքիս, Հայաստանը զինքը իր մանկութեան տարած էր, համեստ, բարի երեխայ մը... փողոցի մարդոց բարեւ կու տար, անցնողին կը խօսէր... երեխայի պէս կ'ուրախանար իր հայրենիքին մէջ ըլլալուն... աչքս արցունք բերաւ...
- ՄԱՆ.—Բայց լսելու էիր ինչ ըսաւ տնտեսական էր, թէ ներքին նախարարին, մարդուն օֆիսը գացեր ենք, առօք-փառօք բազմեր, սուրճ-մուրճ, ինչ գիտնամ...
- ԾԱՂ.—Քոնիաք...
- ՄԱՆ.—Քոնիաք, հա, եւ պապադ, որ բերանը կաթիլ մը խմիչք չի դնիր... զառաւ-փախաներու բոյն դարձուցեր էք Հայաստանը՝ չքով մարդուն...
- ԾԱՂ.—Վալլահ, գետնին տակը մտայ ես:
- ՆԾԱՆ.—Պրաւ՛, ծօ... իր բոլոր մեղքերով, հայրենասէր, կտրիճ մարդ է, պէտք է ընդունիմ:
- ԾԱՂ.—Այո... եւ Հայաստանը կարծես թէ աւելի քաջսիրտ ըրած է զինքը, չէ՞:
- ՆԾԱՆ.—Կրնայ ըլլայ... այդ էր որ աւելի բացսիրտ էր այս գիշեր, զարմանալի բան էր: Ես ալ կը խորհէի, թէ ծերութիւնը կոխած է վրան արդէն:
- ԾԱՂ.—Յիսունհինգ տարեկան է դեռ պապադ, ի՞նչ ծերութիւն՝ ի՞նչ բան:
- ՄԱՆ.—Եւ դուն, որ պատրաստ էիր կռուելու հետը, ատոր համար ներս մտար, առաջին հարցումէդ հասկցայ:
- ՆԾԱՆ (լուռ է պահ մը).—Յոգնած ըլլալու է ճամբորդութենէն:
- ՄԱՆ.—Ձէ, չէ, յոգնութիւն չէր... Հայաստան մէ՛կ կտոր արմատներու, նոր արմատներու մասին կը խօսէր: Ուրիշ բան մը ըլլալու է, ներքին կռիւ մը ունի:
- ՆԾԱՆ.—Դուն գիտնալու ես, մամա:
- ՄԱՆ.—Ուրկէ՞ գիտնամ, տղաս, դոց մարդ է պապադ:
- ՆԾԱՆ.—Իրմէ՞ զօրաւոր արմատ մը գտաւ, աւելի մեծ ուժ մը, մըրքակից մը իր հեղինակութեան... Հիմա չի գիտեր ինչպէս պիտի

ապրի Սփիւռքի մէջ:
ՄԱՆ.—*Կրնայ ըլլալ...*
ԾԱԿ.—*Ես գացի Դեռ ահագին դաս ունիմ ընելիք: Գիշեր բարի:*
 (Շաղիկ կը մեկնի: Նշան կը ծոխ կը վերցնէ պայտասկը):
ՄԱՆ. (կը շտկոյի բազմոցին մէջ, կը դառնայ Նշանին: Դեմքին նրտայայտութիւնը յանկարծ պարզ ու մաքուր է).—*Նշան, քեզի բան մը պիտի ըսեմ, կեցիր քիչ մը:*
ՆԾԱՆ (պայտասկը վերցուցած է).—*Ի՞նչ է:*
ՄԱՆ.—*Նշան, վա՛յ որ պապադ ցաւցնես, ինծի հետ գործ պիտի ունենաս, գիտցած եղիր:*
ՆԾԱՆ (զուսպ, պիրկ է ձայնը).—*Ի՞նչ ըսել կ'ուզես:*
ՄԱՆ. (ձայնին շեշտը սուր, վճռական գիծ մը ունի).—*Դու շատ լաւ հասկցար: Պապայիդ հետ մի չափուիր, գիտեմ թէ կը փրկուիրուիս կոր, բայց գիտցիր, քու կարծածէդ հազար անգամ աւելի անգուլթ է եւ աւելի բարի: Պապադ պիտի յարգես:*

Լուսնիւնը կը տեղադրուի սրտերէն ներս: Նշան կը սպասէ, սիրտը տրոփում: Աչքը կը քանդիւի մօր անշեղ նայումքին:

ՄԱՆ.—*Վա՛յ որ չյարգես, վա՛յ որ բան մը պատահի անոր՝ քեզի կ'անխեմ միջեւ գերեզման եւ անդին, գիտցած եղիր:*

Մանուշակ կամաց մը ոտքի կ'ելլէ, «գիշեր բարի» կ'ըսէ մեղմ ձայնով ու ձախ դուռէն կ'անհետանայ: Լոյսը տակաւ կը մարի մինչ

Վարագոյրը կը գոցուի

ՏԵՍԱՐԱՆ 8

Երկուշաբթի, 17 Հոկտեմբեր 1994

Տեսարանը կը ներկայացնէ շատ զուսպ, քայց ճաշակատր, մութ-գոյնի կահադրամով սենեակ մը, Պր. Կարապետ Տէրունեանի խառնուածքի կնիքին տակ: Բաւական խոշոր գրադարան մը, պզտիկ պատկերասփիւռ մը, ծանր բազմոց մը, ցած սեղան, վրան՝ հետամայն: Պատերուն երկու նրկար միայն: Որքան քիչ ըլլան կարասիները, այնքան տան բնակիչները կը գրաւեն ուշադրութիւնը այցելուներուն եւ այս պարագայի՞ն՝ հանդիսատես-

ներում նաեւ: Սակայն զգալի է հարուստի տուն ըլլալը: Գետինը՝ գորգ ու կենդանիի մը յախճապակիէ անճաշակ խոշոր արձանը:

Վարագոյրը բացուելուն, սենեակը պարապ է: Տկար լոյս մը կը ծածկէ ամէն ինչ: Հեռաձայնը կը զարնէ յանկարծ: Երկրորդ, երրորդ անգամ:

ԿՆԿԱՅ ԶԱՅՆ ԿԸ ՆԵՐՍԷՆ ԿԸ ՊՈՌԱՅ.—«Մէկերնիդ առէք սա հեռաձայնը»:

Չորրորդ անգամ կը զարնէ:

ԿՆԿԱՅ ԶԱՅՆԸ.—«Շաղիկ, չե՞ս լսեր կոր»:

Հինգերորդ անգամ կը զարնէ:

ՇԱՂԻԿ (աջէն).—«Ես դաս կ'ընեմ կոր, դուն առ, մամա՛:
Վեցերորդ անգամ կը զարնէ:

ԿՆԿԱՅ ԶԱՅՆԸ.—«Շաղի՛կ...»:
ՇԱՂԻԿ.—Ղաւ, լաւ, եկայ:

Աջէն՝ վազելով ներս կը մտնէ 20 տարեկան Գորգ ու Գիհար, երկար մազերով, բաց-գոյն շրջագգեստ մը հագած աղջիկ մը:

ՇԱՂԻԿ.—Այո, ո՛վ է... Ի՞նչ... հա, դո՛ւք էք, Տիկին Մկրտիչեան... (Շաղիկ մտիկ կ'ընէ մօտ կէս վայրկեան, խոր կնդրոնացումով լնտոյ կը խօսի հանդարտ ու ձեռքի շարժումներով): Տիկին, դուք հօրս հետ պէտք է խօսիք... Ի՞նչ... այո, Պարոն Տէրունեանին ազջիկըն եմ, կը յիշէ՞ք ամիս մը առաջ... բայց ես բան չեմ գիտեր այս խնդրին մասին... Տիկին, խնդրեմ հասկցէք... այո, հայրս տունն է, սակայն հիմա ուշ է, չ'ուզեր խանդարուիլ... այո, վերադարձած ենք Հայաստանէն, երէկ առտու... այո, շատ սիրեցինք, բայց հիմա յոգնած է հայրս... չէ, ձեզմէ փախած չունի, Տիկին, հաւատացէք խօսքիս... այո, կ'ըսեմ, անպայման կ'ըսեմ իրեն, որ հեռաձայնեցիք, ձեր ամուսինը Պարոն Համբարձումն է, դպրոցին դռնապանը, այո, կը ճանչնամ... լաւ, Տիկին, մի մտահոգուիք, հայրս շատ արդար մարդ է, լաւ հայ է, Տիկին... շնորհակալութիւն, Տիկին Մկրտիչեան, այո, դուք ալ... ցտեսութիւն:

Վար կը դնէ մեղմօրէն գործիքը, քիչ մը տրտում: Տիկին Մանուշակ ներս մտած է: 50ի վրայ, լեցունկեկ, խոշոր աչքերով, սեւ, երկար մազերով կին մըն է: Թերթը կը բանայ, որ կարդայ, բազմոցին նստած:

ՇԱՂ.—Ձէ, չէ եղած:

ՄԱՆ.—Տես՞ր ես պապադ պանքային մէջ, ժողովներու ատեն, սըր-բազաններուն հետ, տես՞ր ես ինչպէս ժողով կը վարէ:

ՇԱՂ.—Մամա, գիտես որ չեմ տեսած, ես ատանկ տեղեր չեմ երթար:

ՄԱՆ.—Գիտեմ, աղջիկս:

ՇԱՂ.—Պապան չէ ուզած որ երթամ: (Ոտքի կ'ելլէ, կը դառնայ սենեակին մէջ, ետ հին տեղը կը նստի):

ՄԱՆ. (Ծաղիկին ձեռքը ակիւն մէջը կ'առնէ).—Պապադ, աղջիկս, քու ամբողջ կեանքդ ծրագրած է մինչեւ ամուսնութիւն... ինչ դպրոց պիտի երթաս, ով պիտի տեսնես, ինչ պիտի ընես համալսարանը...

ՇԱՂ.—Ի՞նչ:

ՄԱՆ.—Բժիշկ պիտի ըլլաս:

ՇԱՂ.—Բժի՞շկ:

ՄԱՆ.—Այո:

ՇԱՂ. (յանկարծակիի եկած՝ մօրը կը նայի, առանց խօսելու: Յետոյ կանայ մը կը հարցնէ).—Իսկ եթէ չուզե՞մ:

ՄԱՆ.—Հէ՛յ, չես ուզեր՝ չես ուզեր: Պապայիդ սիրտը կը կոտորի, բայց քեզի ազատ ձգած է:

ՇԱՂ. (յուր կարծ պահ մը).—Ինչո՞ւ ասիկա մինչեւ հիմա ինծի չէք ըսած:

ՄԱՆ.—Պապադ ուզած էր որ ըսուի՝ երբ հարցնես: Հիմա որ կը հարցնես՝ կ'ըսեմ կոր քեզի: Իրար անցնելիք բան չկայ:

ՇԱՂ. (յուր է).—Նշա՞նք:

ՄԱՆ.—Ան ալ, բայց աղբարդ գրուի բռնող է, պապային քաշած է, յամառ եւ կարծր, թէրս գիծ մը ունի:

ՇԱՂ.—Գիտեմ: (Կը խնդայ մեղմօրէն): Մամա՞:

ՄԱՆ.—Ի՞նչ է:

ՇԱՂ.—Դուն պապային սիրահարուեցար:

ՄԱՆ. (կը խնդայ...).—Եւ ինչպէ՞ս: Քսան տարեկան աղջիկ էի, անփորձ, միամիտ, քեզի պէս բան մը...: Կարոն այն ատեն երիտասարդ տնօրէն էր էլրէֆիէյի ազգային վարժարանին, տաքարիւն, գրաւիչ մտաւորականը: (Մանուշակի մէջ յուշերը կրակ բերած են երեսից ու ձայնից): Տեսնելու էիր այն ատեն ի՞նչ վարչախ տղայ էր...

ՇԱՂ.—Է, ինչպէ՞ս եղաւ որ սիրահարուեցար:

ՄԱՆ.—Իր մէկ դասախօսութեան գացեր էի, հոն իրար ճանչցանք, հոն ալ թակարդը ինկայ... է՛, Շաղիկ, ա՛յ կը բաւէ...

ՇԱՂ.—Ձէ, չէ, մամա, խօսէ քիչ մը պապային մասին, հէ՛յ չես խօսիր...

ՄԱՆ.—Այո, գիտեմ:

ՇԱՂ.—Առ սա Հայաստանի խնդիրը, ինչ ուզես ըսէ իրեն՝ Հայաս-

*տանի կառավարութիւնը եւ նախագահը զէրօ են իր աչքին,
 «աւազակներու բոյն» է երկիրը: Ատանկ չըսա՞ւ նախարարին:
 ՄԱՆ.—Գետնին տակը մտայ ես այդ վայրկեանին:
 ՇԱՂ.—Ես ալ... աղէկ որ Նշանը հոն չէր:*

Դուրսի սենեակէն ոտքի աղմուկ մը կը հասնի:

ՄԱՆ.—Շունը յիշէ՛ փայտը քաշէ:

Ներս կը մտնէ Նշան, քարձրահասակ, լեցուն, լաւ կազմուած մարմնով, պլու ճիւղ հագած, երեսուն տարեկան, լուրջ երիտասարդ մըն է: Վար կը դնէ ձեռքի միջակ պայտասակը, վեր կը կայնի, կը բանայ թեւերը:

ՇԱՂ. (վրան վազելով).—Հէ՛յ, Նշան, բարի եկար:

Կը նետուի եղբոր թեւերուն մէջ, կը փաթթուի իրարու, կը համբուրուին:

ՆՇԱՆ (վար դնելով քոյրը).—*Բարի տեսանք, քոյրիկ:*

ՄԱՆ.—*Բարի եկար, Նշան, ինչպէ՞ս էր Ուաշինկթընը, եկուր համբուրեմ քեզ: (Նշան մօր քով կ'երթայ, կը գրկէ զայն ու կը համբուրուին):*

ՆՇԱՆ.—*Բարի տեսանք, մամա: Ուաշինկթըն՝ն, կ'ուզե՞ս գիտնալ կարծիքս:*

ՄԱՆ.—*Գիտեմ որ չես սիրեր:*
ՆՇԱՆ.—*Ամերիկայի ամէնէն տղեղ, կոշտ ու սեւով լեցուն քաղաքը: Ո՛ւր է պապան:*

ՄԱՆ.—*Պառկեր է, քիչ մը յոգնած կը զգար կոր:*
ՆՇԱՆ.—*Ա՛յս ժամուն... բան մը չունի՞, վերջերս շատ շուտ կը յոգնի կոր:*

ՇԱՂ.—*Ձէ, չէ, լաւ է, բան մը չունի: Գործերդ լաւ անցան:*

ՆՇԱՆ.—*Գէշ չէր: (Լուռ է): Կարելի է գործով հոն փոխադրուիմ, ընկերութիւնը մասնաճիւղ կը բանայ կոր:*

ՇԱՂ. (կը փաթթուի եղբոր).—*Ձէ, չէ, Նշան, մի երթար, հոս կեցիր, տունը կը պարպուի դուն երթաս նէ:*

ՆՇԱՆ.—*Վստա՛հ ես...: (Վար կ'առնէ քրոջ թեւերը): Պապան չի՞ բաւեր տունը լեցնելու, պետութեան մը չափ ուժ է ան: Գործադիր, օրէնսդիր եւ դատական, բոլորը մէկ անձի մէջ, հէ՞ (կը խնդայ Նշան):*

ՄԱՆ.—*Ի՞նչ ունիս հօրդ դէմ, աղաս:*
ՆՇԱՆ.—*Հէ՛յ, ի՞նչ պիտի ունենամ...: Ես եւ ինքը տարբեր արմատներէ բուսած պարզապէս, բոլորովին տարբեր մարդիկ ենք:*

ՄԱՆ.—*Ի՞նչ ըսել կ'ուզես, Նշան, եկուր նստիր մէյ մը:*

ՆՇԱՆ (յանկարծ տաքցած).—Աս է իշատէ... եկուր նստիր... ա՛յ նստիլ չկայ, մամա... նստիր, մի շարժիր, մի շարժեր աշխարհը, ուշադրութիւն չգրաւենք, յանցաւոր մարդիկ ենք, չէ՞, աս չէ՞ պապայի՛ն ալ, քու ալ մտածումը... խնդիր չհանել, նստիլ, պառկիլ, չշարժիլ, սուտ-մեռել ձեռացնել որ չսպաննեն մեզ...

ՇԱՂ.—Ի՞նչ ունիս այսօր, Նշան:

ՆՇԱՆ (առանց անոր մտիկ ընելու).—Իսկ առնէն ներս, դադութէն ներս՝ ահաւոր բռնապետութիւն հարուստներուն, քանի մը ջոջերու: Օրինակ՝ պապան:

ՇԱՂ. (եղբոր քովը կ'ընթաց, ձեռքը անոր թնիմ վրայ կը դնէ).—Հանդարտէ, Նշան, cool it.

ՆՇԱՆ (քրոջ վրայ դառնալով).—Աղջիկ, կո՞յր ես՝ ինչ ես, չե՞ս տեսներ ինչպէս մէկ հոգի, պապադ, ամբողջ ազգը ծունկի բերած է իր առջեւ, որովհետեւ պանքայի տնօրէն է, դրամ ունի... եւ ինքզինքին հովեր ալ կու տայ... առաջնորդէն մինչեւ յետին վարժապետը պատրաստ են ձեռքերը լիզելու՝ իր դրամին համար... Գաննիք բան է... ամօթ է, ամօթ, բողոքիւն է ասիկա: (Թանկարծ կը լռէ, վալելիլով իր բառերը, լետոյ ծաղրական շեշտով)՝ Ազգային բարերա՛ր: (Նորէն լուռ է): Ես երբեմն կ'ամբողջամ Տէրուսեան ըլլալուս:

ՄԱՆ.—Շատ առաջ կ'երթաս կոր, Նշան, պապադ այսօր յարգուած մարդ է ամբողջ լոս Անճելլոսի մէջ:

ՇԱՂ.—Ձգէ, մամա, Նշանը միշտ ասանկ եղած է, մարդ չի հաւնիր, չի յարգեր, ինքզինքէն զատ, մանաւանդ հարուստները... Շատ պիտի ուզէի որ աղքատին մէկը ըլլայիր, այն ատեն կը տեսնէի հալը, ջալըմը...

ՆՇԱՆ.—Պարապ խօսքեր մի ըներ, դուն շատ լաւ գիտես պապան ինչու այդ դրամները կու տայ կոր ազգին, ինչ հաշիւ կայ տակը:

ՇԱՂ.—Եթէ պապայիդ ըրածին քառորդը ընես կեանքիդ մէջ՝ դուն քեզի երջանիկ համարելու ես, կը հասկնաս:

ՄԱՆ.—Մի կռուիք, քոյր-եղբայր էք, հիմա պապան կ'արժնցնէք:

ՇԱՂ.—Բայց կը լսե՞ս ինչեր կ'ըսէ կոր իր հօր մասին...: Ես հայրս կը սիրեմ ու կը յարգեմ ինչ ալ ըլլայ ան, սրտիս մէջն է ան, յաւիտեան... չեմ արտօներ քեզի...

ՆՇԱՆ (ձայնը յանկարծ քարծրացած է ու հեզակալան: Գլուխը կը մօտեցնէ քրոջ դէմքին).—Պրաւօ, քոյրիկ, երանի քեզի... եւ դուն քեզ արդիական աղջիկ կը նկատես, հա՞, դուն համալսարան կ'երթաս, վաղը միւս օր քաղաքական գիտութիւններու վկայական պիտի առնես, շուկայ իջնաս կեանքդ շահիս... եւ դեռ երեխայ ես, աղջիկ, ո՛չ ընտանիքդ կը ճանչնաս, ո՛չ ազգդ, ո՛չ մարդիկ եւ ո՛չ ալ դուն քեզի... պրաւօ:

ՅԱՂ.—*Իմ գիտցածս ինձի կը բաւէ՝ մարդավայել կեանք մը ապրելու համար... Ես քեզի պէս ո՛չ անաստուած եմ, ո՛չ անբարոյական, ոչ ալ ապերախս:*

ՏԵՍԱՐԱՆ 4

Երեքշաբթի, 18 Հոկտեմբեր 1994

Նոյն սենեակն է: Կարապետ Տէրուեան բազմած է սեղանին ետին, կեղրոնը: Նոյն զգեստը հագած է: Պատի ժամացոյցը ժամը 5 ցոյց կու տայ: Կարապետ դաստակի ժամացոյցին կը նայի:

Ինուը կը զարնուի երկու անգամ ու կը քացոյի:

Ներս կը մտնէ երեսուննոց, միջառասակ երիտասարդ մը: Համդարտ, գոց՝ բայց արթուն արտայայտութիւն մը ունի: Կարճ եւ մազերը, պլու ճինգ ու պարզ շապիկ մը հագած է: Ափերը գոց, քաւասարակշռուած քայլածք մը ունի:

ՊԱՐ.—*Բարեւ. (Սեղանին առջեւէն ձեռքը կ'երկարէ Կարապետին: Կը թօթուէ անոր ձեռքը ու կը մնայ անշարժ):*

ԿԱՐ.—*Բարեւ, Պարոն Տնօրէն: Ճիշդ ժամանակին եկաք: Ես կը սիրեմ ժամադրութիւն յարգողները: (Պարգեւ չի պատասխաներ ու կը կայնի եղած տեղը, անստոյգ): Հրամայեցէք նստեցէք, հոս: (Կարապետ իր աջի աթոռը ցոյց կու տայ, սակայն Պարգեւ կը շարժի դէպի ձախ ու սեղանին ծայրը կը նստի): Հոս եկէք, ինչո՞ւ հոն հեռու գացիք:*

ՊԱՐ.—*Հոս լաւ է: Ձիւ տեսնե՞լ ուզեր էք:*

ԿԱՐ. (տակաւին աթոռի մասին մտածելով).—*Ինչպէս որ կ'ուզէք: Այո: Ես Կարապետ Տէրունեանն եմ, մեր դպրոցի հոգաբարձութեան նախագահը: Ձեր անունը, Պարոն Տնօրէն:*

ՊԱՐ. (երկվայրկեան մը լուռ, ապշած անոր կը նայի).—*Ըսել կ'ուզէք թէ... չէ՞ք գիտեր ձեր տնօրէնին անունը տակաւին, այդքա՞ն անկարեւոր է ձեզի համար իմ անունս:*

ԿԱՐ. (պիտկուցցուած).—*Հարցերը այդպէս մի առնէք: Պարզապէս առիթը չէ եղած ճանչնալու, այդքան:*

Լռութիւն:

- ՊԱՐ.—Ես ձերը գիտէի (Լուսթիւն): Ուզած էք զի՞ս տեսնել:
- ԿԱՐ.—Այո, դպրոցին հետ կապուած խնդիրներ կան, որոնք...
- ՊԱՐ. (ընդմիջելով).—Վայրկեան մը, Պարոն Տէրունեան, նայա՞ծ էք իմ թղթածրարին, գիտէ՞ք ինչ եմ ես, ուրկէ կու գամ...
- ԿԱՐ. (նեղուած թոյն մը ունի հիմա).—Շիտակը ըսելու համար՝ ոչ: Բոլոր Փայլերը քարտուղարին քովն են, եւ ան ալ իր առաջին թոռնիկով տարուած...
- ՊԱՐ.—Լաւ, ի՞նչ կ'ուզէք ինձմէ:
- ԿԱՐ.—Պարոն...: (Կը կմկմայ, երեսը կը նայի հարցական):
- ՊԱՐ.—Պարզեւ Արսէնեան: (Պզտիկ խնդուք մը: Կարապետն ալ կը խնդայ...):
- ԿԱՐ.—Պարոն Արսէնեան, մենք, հոգաբարձութիւնս, ձեր գործէն գո՞հ ենք, իբրեւ կրթական հաստատութեան վարիչ: Ուսանողներն ալ գո՞հ են, ուսուցիչներն ալ, ծնողներն ալ: (Ետ կը կտրուի, կը սպասէ: Պարզեւ սեղանին կը նայի):
- ՊԱՐ. (գլուխը կը բարձրացնէ, շիտակ անոր աչքերուն կը նայի).—Դուք հարցուցե՞ր էք, թէ՛ ես գո՞հ եմ այդ բոլորէն: Բայց ատկէ առաջ, կրնամ գիտնալ, թէ՛ ի՞նչ տեղեկութիւն ունիք իմ մասին, ուրկէ՞ գիտէք, թէ՛ լաւ կ'ընեմ գործս... մէկ անգամ ձեզմէ ռեւէ մէկը եկա՞ծ է դասարան կամ գրասենեակս, վեց ամիս կ'ընէ...
- ԿԱՐ. (ձայնը բարձրացնելով).—Օ՛, բայց մենք կը լսենք աշակերտներէն, ուսուցիչներէն, ծնողներէն ալ...
- ՊԱՐ.—Մէկ վայրկեան, Պարոն Տէրունեան, այդ անձերը ի՞նչ կը հասկնան կրթութենէն, դպրոց դարձնելէն:
- ԿԱՐ.—Որքան որ կը հասկնան, ճանրմ, երկար ըրիք...
- ՊԱՐ.—Այսինքն ոչինչ:
- ԿԱՐ. (նեղուած թոյնով).—Ի՞նչ ըսել կ'ուզէք կոր, պարոն:
- ՊԱՐ.—Դուք ալ, Պարոն Նախագահ, դուք եւ ամբողջ ձեր հոգաբարձութիւնը, մէջն ըլլալով Առաջնորդը, Կուսակցութեան հերթապահը, Ուսումնական խորհուրդը... ձեր մէջ մէկը չկայ, որ կրթական հարցերէն բան մը հասկնայ:
- ԿԱՐ.—Շատ առաջ գացիք, հա՛, ադ ի՞նչ տեսակ խօսքեր են, չեն վայելեր տնօրէնի մը...: Ի՞նչ է, դուք հոս կուտելու եկեր էք:

Լոռութիւն: Իրարու չեմ նայիր: Կարապետին շնչառութիւնը ծանր է: Մարմինը ետ հրած է, ափերը գոցած:

- ՊԱՐ. (հանդարտ ձայնով).—Քաւ լիցի, եկեր եմ ձեզի մտիկ ընելու:
- ԿԱՐ.—Անանկ է նէ՛ մտիկ ըրէք: (Ձայնը բարձրացած է նորէն): Մարդիկ դժգոհ են ձեզմէ, կ'ըսեն կոր, թէ չատ թէրս էք, ծնողները չէք յարգեր, ձեզի խրատ կու տամ գաղութին մէջ մարդիկ կան, ընտանիքներ կան, որոնց խաթրը պէտք է նայիք:

կը հասկնամք: Մարդիկ կը գանգատին կոր, որ Պարոն Տնօրէնը կոչտ է, մեզի քիթին չի դնել, ես, պանքայի մէջնէնըրի հարովս, անոնց խաթըր կը նայիմ... որովհետեւ հարուստ են ու դպրոցին սիւներն են, կը հասկնամ, Պարոն Տնօրէն:

ՊԱՐ. (Անյն գրգռուած թոնով).—Կը հասկնամ, Պարոն Մէջնէնըր բայց ես ալ իմ արժանապատուութիւնս ունիմ: Դուք ինծի դպրոց մը յանձնեցիք, ըսիք հրարձուր աս դպրոցը: Ես ալ ադ կ'ընեմ կոր: Ալ ի՞նչ եկեր կը խառնութե ներքին գործերուն: Ի՞նչ է ձեր շուկայի բարոյականն ու հաշիւները դպրոցէն ներս կը բերէք: Ես ձեզի կ'ըսեմ ինչպէս պիտի դարձնէք ձեր պանքան:

(Պարգև քիչ մը տեղէն ելած է, Ասյուածքը կրակոտ, ձայնը խիստ ուզուսպ):

ԿԱՐ. (փրփրած, բայց ինքզինքը զայտելով).—Դուն մեր պաշտօնեան ես, ինչքան ալ տնօրէն ըլլաս, մենք կը վճարենք քու ամսականգ ալ, դպրոցին ամբողջ ծախսն ալ: Իմ պարտականութիւնս է ձեզի յիշեցնել ասիկա: Մենք դպրոցին ամէն ինչին խառնուելու իրաւունք ունինք եւ ձեզմէ չէ որ հրաման պիտի առնենք:

ՊԱՐ.—Պարոն Տէրունեան, կը կրկնեմ, մեծ սխալ կ'ընէք կրթական աշխարհը եւ շուկայի աշխարհը իրար խառնելով: Դպրոցը եկեղեցիին նման բան մըն է ինծի համար, սակարկութիւն չ'ըլլար սկզբունքներուն հետ:

ԿԱՐ.—Ինծի դաս մի տաք, խնդրեմ, Պարոն Տնօրէն: Տասը տարի է աս դպրոցը բացառիկ դպրոց մը եղած է Լոս Անճելըսի մէջ եւ մարդ չէ գանգատած: Վեց ամիս է դուք անոր գլուխն էք ու մէկ կտոր դժգոհանք կը լսեմ: Ի՞նչ անցաւ-դարձաւ:

ՊԱՐ.—Որովհետեւ ամէն հարուստի լակոտ...

ԿԱՐ. (տեղէն ոտքի կայմելով).—Կ'արգիլեմ որ ատանկ խօսիք:

ՊԱՐ. (յանկարծ Ասյուածքին հետեւ կ'ելլի ընդմիջուած՝ վայրկեան մը կը լուէ, յետոյ՝ թոնը իջեցնելով կը շարունակէ, Ռանդարտօրէն).—Իրականութեան մէջ, ամէն աշակերտ իրաւունք ստացած է ուսուցչին ու տնօրէնին կոնսակէն դառնալով ձեզի գալ ու գանգատիլ: Օրէնք-մօրէնք ոտնակոխ ընել: Ինչո՞ւ, որովհետեւ ամէն կողմ հիսթերիաներ կան, «փիլիսոփաներ, «ուսանողներ կը բանին: Դուք ալ այդ «սիսթեմ»ին մաս կը կազմէք, ազատ մարդ չէք:

ԿԱՐ.—Հո՞ս նայեցէք, ձեզի չ'իյնա՛ր ա՞յ ու ձախ մարդ քննադատել: Ձէք հաւնիր մեր «սիսթեմ»ը, ինչպէս կը կոչէք՝ գլուխնիդ կ'առնէք-կ'երթաք, բայց որքան ատեն որ մեր պաշտօնեան էք, մէկ օրէնք կայ հոս: Մենք ենք իշխանութիւնը, ձեր կարծիքը կ'առնենք՝ բայց մենք կ'որոշենք: Դասազի՞րք է, տօն ու

հանդէ՛ս է, ուսուցիչը վարձել կամ հանձնել է, պիտո՞՛ն է կամ
ամսակա՛ն է, ասոնք մեր գործն են: Դուք, Պարոն Տնօրէն,
այս բաները չէ՛րք գիտեր, չըսի՛ն ձեզի երբ վարձուեցաք:

Լուս է Պարգու: Տճգուճած է: Վեր մարդուց կը նայի:

ՊԱՐ.—Դուք ասանկ կը դարձնէք ձեր պանքան:

ԿԱՐ.—Ատ ի՛նչ ըսել է:

ՊԱՐ.—Երկու չափ երկու կշիռ — ադ ըսել է: Ձեր պանքային մէջ
վստահ եմ շատ հնազանդ, օրինապահ մէկն էք, բայց ասկէ
դուրս, հայուժեան մէջ՝ ամէն օրէնք կը խախտէք, ձեր քէֆին
կը յարմարցնէք, մարդիկ կը դնէք—կը ծախէք, դուք կ'որոշէք
անոնց գինը: Ամբողջ դասակարգ մըն էք, չէ՛, ազգ մըն էք,
ազգ մը, ցեղախումբ մը, մաֆիա մը...: Դուք ո՛ր դարուն
մէջ կ'ապրիք կոր, Պարոն Տէրունեան, Ձ՞րդ, թէ՞ Ի՞նչ:

ԿԱՐ. (կատարելապէս տէր ինքզինքին ու կացութեան, հանդարտ ձայնով
կը խօսի).—Ես ձեր տեղը ըլլամ՝ վայրկեան մը չեմ մնար այդ
գործին գլուխը: Դուք ո՛չ ուսուցիչ էք, ոչ ալ տնօրէն, դուք
յեղափոխական էք, տէրորիսթ էք պարզապէս: Մենք հազար
ծիգ թափենք սերունդներու կապերը պահելու, եկեղեցիին եւ
ազգին շահերը հաշտեցնելու, դպրոց շինելու է, որ երիտա-
սարգները ազգին մէջ մնան, ակումբ կը բանանք, որ հայերը
իրարու մօտենան... եւ մէկէն դուք կու գաք ու ամէն ինչ
կը քանդէք: Իմ տղաս ալ ասանկ ապերախտին մէկն է, իրա-
րու շատ լաւ բարեկամ կ'ըլլաք դուք, պէտք է ծանօթացնեմ
ձեր երկուքը...: Մօտերն աշխարհի հերոսներ էք, յարգանք ըս-
լած բանը չունիք, աւանդութիւն կամ սրբութիւն պարսպ
խօսքեր են իմ Նշանիս համար, վստահ եմ դուն ալ նոյնն ես:
Ես ձեր սերունդը լաւ կը ճանչնամ...

ՊԱՐ.—Ի՛նչ պիտի ըսէիք ինձի, Պարոն Տէրունեան, ինչո՞ւ կանչե-
ցիք:

ԿԱՐ.—Քորքին մէջ ձեզ ճանչնալու համար էր:

ՊԱՐ.—Ճանչցա՞ք:

ԿԱՐ.—Եւ ինչպէ՛ս:

ՊԱՐ.—Ուրի՛շ:

ԿԱՐ.—Որ դուք ալ գիտ ճանչնաք (Խնդալով)՝ ես շատ կարեւոր
մարդ եմ, գիտէ՛ք, Նշանին համաձայն՝ ամբողջ հայութիւնը
գրպանս դրած եմ, դրամիս շնորհիւ:

ՊԱՐ.—Ես հարուստները ո՛չ կը սիրեմ, ոչ ալ կը յարգեմ: Բայց ձեր
դրամը չէ ձեր յատկանիշը, այլ՝ ձեր հակայ ետը, մարդոց վրայ
իշխելու ահաւոր արորժակը: Ատիկա՛ կը յարգեմ:

ԿԱՐ.—Ես ատիկա հայութեան համար կ'ընեմ միայն: Ետն մը չունիմ
մէջը:

ՊԱՐ.—Ձեր հայութիւնը սակայն մեռած է, Պարոն Հոգարարձու, այդ տեսակ հայ չի դիմանար Ձեր գարուն, հինգ տարիէն հոն ենք: Բայց իմս կը դիմանայ, ես նոր, անկախ, միջազգային հայը կը պատրաստեմ դպրոցին մէջ:

ԿԱՐ.—Համայնավար ես՝ ինչ ես...: Տէր պիտի կանգնիս սերունդներուն, ո՛չ միայն ողջերուն, այլև մեռածներուն, յիշատակներուն լեռներուն, որ դիզուած են մեր շուրջը, Սփիւռքը կայ տակաւին, հէ՛յ, երեք միլիոն հայութիւնը, անգլուխ եւ անկմայք...: Ես ձեզ պէտները լաւ կը ճանչնամ, մոտերնիդմի պզտիկ հով մը փչէ երեսնուդ՝ կը կարծէք թէ կրնաք անցեալը մոռնալ, նետաւի արդի դարուն անինքնութիւն՝ բայց գրաւիչ, ըլլացուցիչ առօրեային գիրկը, նորութեան հոտը առնէք՝ կը գինովնաք, ծեր կիները, մեծ մայրիկները, իմաստուն հին մարդիկը կ'արհամարհէք...: Միջազգային հայը, հէ՛, հիւանդանոցի կերակուր, հանրային պէտքարանի հսկիչ, սոցոմանած զովագդ, խնկանոցի պարիսպի կրաֆիթի...: Դուք ձեր հայրերէն կ'ամչնաք, գիտեմ, որովհետեւ օտարի աքսանով կը խօսի...

(Պարզեւ ճառը մտիկ ըրած էր կէս-ականջով, բայց գիտէր այդ մարդոց ամաւոր մախանձը: Ոտքի էլլաւ, սեղանին շուրջը դարձաւ, եկաւ ճիշդ Կարապետին դիմացը նստաւ):

ՊԱՐ.—Մենք է որ առաջին անգամ ըլլալով Սասունցի Դաւիթէն ի վեր աշխարհին կեղտին ու միւռոնին խառնուած հայեր պիտի ստեղծենք... ոչ թէ ձեզ պէս մարդիկ... դուք քանի՞ անգամ կուտած էք, ո՛վ ձեր վրայ հայտնած է, խուճապի բռնուած էք, հրդեհէ փախած էք, մէկը ապտակած է ձեզի, կին բռնաբարած էք, կեղծ դրամ գարկած էք, ի՛նչ գիտնամ՝ բնական մարդերու ե՛րբ նմանած էք:

Կը խնդայ Կարապետ, առաջին անգամ ըլլալով: Ոտքի կ'ելլէ:

ԿԱՐ.—Ձէ, բարեկամ, դուն դպրոցի տնօրէնցու չես: Դուն մարդարէ պէտք էր որ ըլլայիր, ազգային հերոս, բախտազուլակ, կէլէ կէլէճի, իւրեքաթճի կամ ալ տալովէրածի...

Պարզեւն ալ կը խնդայ ճիմաւ:

ՊԱՐ.—Դուք գացէք մեռելաթաղի ընկերութիւն մը բացէք ու մինչեւ ձեր մահը անդադրում գործ կ'ունենաք հայոց հետ: Այդ չէ՞ ձեր ուզածը:

ԿԱՐ.—Ես գացի: Մնաք բարով: (Կը ձեռնուի ու կը մեկնի, միաւրի):

ՏԵՍԱՐԱՆ 5

Երեքշաբթի, 25 Հոկտեմբեր 1994

Հեռաձայնին և նոյն խցիկները, բեմին ծայրերը, և որքան մէջտեղը կ'ելին: Աջին՝ Կարապետ Տէրունեանն է: Կը առուզէ թիւը պզտիկ տեսրակի մը մէջէն ու կը կազմէ թիւը: Նոյն վայրկեանին, ձախի հեռաձայնի գործիքը կը զարնէ: Քարտուղարուհիի պուպրիկի և մասն կոկիկ, անանձնական ու սահուն դէմքով աղջիկ մը կը մտնէ ու կը վերցնէ ընկալուչը:

Ա.Ղ.Ջ.—Dr. Hovnarian's clinic, may I help you?
ԿԱՐ.—Is the doctor there?
Ա.Ղ.Ջ.—May I ask who is calling please?
ԿԱՐ.—Tell the doctor it's Mr. Derounian, it's urgent and it's personal.
Ա.Ղ.Ջ.—Just one moment please.

Աղջիկը կ'անհետանայ: Քանի մը երկրվայրկեան կ'անցնի ու Տոքթ. Յովնանեան ձեռքը կ'առնէ գործիքը:

ՍԻՄ.—Պարոն Տէրունեան:
ԿԱՐ.—Տոքթոր, ես եմ:
ՍԻՄ.—Այո, խէր ըլլայ, ի՞նչ է, ի՞նչ կայ:
ԿԱՐ.—Տոքթոր, կը ներես որ քիչ մը ստիպողական ձեռն առաւ ասիկա, սակայն չեմ գիտեր, սիրտս վախ մը ինկած է: Կիրակի, Պաղտատարեանի թաղումին ատեն էր... Այդ քանոցը ահաւոր բան է, չորս ամիսէն առաւ-տարաւ այդ ցուլի պէս մարդը: (Լուռ է):
ՍԻՄ.—Պարոն Տէրունեան, մասնաւոր բան մը կը զգա՞ք կոր:
ԿԱՐ.—Այո եւ ոչ, Տոքթոր: Կոկորդի չոր հազ մը կայ վրաս քանի մը ամիսէ ի վեր, չ'անցնիր կոր, յոգնածութիւն, թուլութիւն կը զգամ երբեմն առանց պատճառի, երէկ բժշկական գիրք մը գնեցի՝ սկսայ կարդալ, բայց...
ՍԻՄ. (լուռ է պահ մը).—Պարոն Տէրունեան, մտիկ ըրէ՞ք, երեք խրատ ունիմ տալիք: Մտիկ կ'ընէ՞ք կոր:
ԿԱՐ.—Այո, այո:
ՍԻՄ.—Լաւ: Նախ՝ չ'ըլլայ որ բժշկական գիրք բանաք: Կէս-բժիշկը էն վտանգաւոր մարդն է: Երկրորդ՝ իրար մի անցնիք, դեռ բան մըն ալ չ'ենք գիտեր: Մի մտածէք այդ մասին: Եւ վերջին խրատ՝ քովս եկէ՞ք վաղը ժամը հինգէն ետք, քիչ մը խօսինք, նայինք ինչ ունիք: Կ'ըլլայ:
ԿԱՐ.—Կ'ըլլայ, հարկաւ, դուք ազատ էք այդ ատեն:
ՍԻՄ.—Կ'ըլլամ, դուք միայն քլինիքս եկէ՞ք: Նորէն կ'ըսեմ... տարտ

մի ընկեր:

ԿԱՐ. (խնդրալով).--Լաւ, լաւ:

ՍԻՄ.--Հա, չմոռցած, ի՞նչ եղաւ ձեր հանդիպումը մեր տնօրէնին՝ Պարոն Պարգեւին հետ, կրցա՞ք տեսնուիլ:

ԿԱՐ.--Այո, ժամ մը միասին էինք: Հոյակապ մարդ է, Տոքթոր, պարզապէս բացառիկ մէկն է: Իր մասին ըսուածները ըսուին ալ շիտակ են, կարծր, թէրս, բայց իմ սիրած թիփս է: Պայքարող, գործին փարած, ինքնավստահ, նոյնիսկ ամբարտաւան: Մէկ ժամ կուսեցանք իրարու հետ, բայց մարդը տոկուն սկզբունքներ ունի, Տոքթոր, սկզբո՛ւնք, կատակ չէ աս, սիրտ ալ ունի, խելք ալ ունի: Կատաղի հին հայ եւ կատաղի նոր հայ: Ձեռք միջազգային հայր պիտի պատրաստեմ՝ կ'ըսէր--կը կենար: Բունկած մարդ տեսե՛ր ես դուն, ճիշդ իմ սիրած թիփս է -- պայքարող, ինքնավստահ, թէրս, ամբարտաւան: Հայ օղու հայ, ամէն մեղքիս վրայ քեանայցի ալ է: Ձէ, ես աս տղան պիտի պահեմ մեր տնօրէնը, զինք սիրելով եւ ատելով:

ՍԻՄ. (շուարած բան մը ձայնիմ մէջ).--Է... խնդիր չունենանք վերջը Ուսումնականին հետ:

ԿԱՐ.--Ճիւերուս պէս: (Կը խնդայ: Յետոյ մէկէն կը լրջանայ): Ձէ, չէ, մի վախնար, Տոքթոր: Ես գիտեմ ըրածս: Աս սերունդը, ուրիշ հայեր են, մեզի չափ հայրենասէր եւ անհատապաշտ, այո, բայց լաւ հայեր են: Անշուշտ ազգին գլուխը պիտի ուտեն, բայց ոչինչ կրնանք ընել, ապագան անոնցն է, չեն փոխուիր, չեն շտկուիր: Աս է Սփիւռքը, Տոքթոր, պէտք է իրարու հետ լեզու գտնենք:

ՍԻՄ.--Բայց ինչպէ՞ս, Պարոն Տէրունեան:

ԿԱՐ.--Աստուած վկայ, ես ալ չեմ գիտեր:

Կը խնդան երկուքնալ:

ՍԻՄ.--Է, ուրախ եմ որ լաւ վերջացաւ այդ հարցը:

ԿԱՐ.--Ես ալ: Լաւ, Տոքթոր, ժամանակդ շառնեմ: Վաղը հինգին, քլինիքդ:

ՍԻՄ.--Եղաւ: Մնաք բարով:

ԿԱՐ.--Մնաք բարով:

Խցիկներուն լույսերը դեռ չմարած ու վարագոյնը շքաշուած՝ ժողովուրդիմ մէջէն ոտքի կ'ելլէ Մարդը:

ՄԱՐԳ.--Կեցէք, մի գոցէք վարագոյնը: Ըսելիք ունիմ: (Կը պոռայ): Պարոն Բեմադրի՛չ:

ԲԵՄ (վազելով բեմ կու գայ քուայիսէն).--Ի՞նչ կայ նորէն:

ՄԱՐԳ.--Միայն բան մը կայ հոս:

ԲԵՄ.—*Իրա՞ւ, ո՞րն է:*

Սիմոն եւ Կարապետ կամաց մը դուրս կ'ելլեն խցիկներէն, անորոշ կը կայնին, եւ ուշադիր՝ կը ձեռնեին եղելութեանց:

ՄԱՐԳ. (կը դառնայ ժողովուրդին)։—*Դուք չեսցի՞ք, բայց կրնաք երեւակայել այդ երկու պարոններուն՝ Պարոն Կարապետի եւ Պարոն Պարզեւի խօսակցութիւնը: Ձեզի հարց կու տամ՝ ասանկ մարդիկ են մեր ազգին ղեկավարները: Առաջինը կ'աշխատի իր անձնական փառքին համար, երկրորդը՝ խննթ ու խելառ միջազգային հայութեան մը համար: Եւ մենք՝ հասարակ ժողովուրդն է, որ կը վճարենք ասոր գինը:*

ՁԱՅՆՄԸ.—*Այո, իրաւունք ունի, ազգը կը վճարէ:*

ԲԵՄ (կը փնտռէ Մարդուն տեղը, յետոյ խօսքը ուղղելով անոր)։—*Ի՞նչ է ձեր ուզածը, պարոն:*

ՄԱՐԳ.—*Սխալ գրուած է, ազգին ապագան անոնք չեն որոշեր:*

ԲԵՄ.—*Մ'վ ուրեմն:*

ՄԱՐԳ.—*Հապա կուսակցութիւնները, եկեղեցի՞ն, հապա Հայաստանը, այո, մեր անկախ Հայաստանը:*

ՁԱՅՆԵՐ.—*Իրաւունք ունի... Հայաստանը... Հայաստանի կառավարութիւնը:*

ՄԱՐԳ.—*Մ'ւր է հեղինակը: Ան է յանցաւորը:*

ԲԵՄ.—*Վաղ անցէք անկէ: Իմ ձեռքս է ամէն ինչ: Ան բանէ խպար չէ:*

ՁԱՅՆԵՐ.—*Հեղինակը... այո... հեղինակը ո՞ւր է:*

ՀԵՂ. (ուտքի կը ցատկէ իր սին տեղէն)։—*Կը բողոքեմ այս եղանակին դէմ: Ես գրեցի այս խաղը: Ձէք հասկնա՞ր՝ ի՞նչ կրնամ ընել: Ես տուն գացէք, թիվիին առջեւ քնացէք:*

ՁԱՅՆԵՐ.—*Դրամ տուած ենք... 20 տոլար նստաւ ինծի... ամօթ է, ծօ': (Յիրուցան խնդր):*

ՄԱՐԳ.—*Պարոն Հեղինակ, երկու վայրկեան միայն, բեմ կը հրամամէ՞ք:*

ՀԵՂ.—*Հաւ:*

Հեղինակը դժուարութեամբ դուրս կ'ելլէ իր տեղէն, կը քալէ, գլուխը կախ՝ դէպի բեմ: Հասած հոն, վեր կ'ելլէ, կը շտկէ գլուխը:

ՁԱՅՆԵՐ.—*Դուն հեղինակը չես... Սէրգոն է, «Արարատ» կառափին մէջ չե՞ս աշխատիր... Հա, ան է... ծօ', դերասան է, մարդ չէ... Հոն նստեր է, որ հեղինակին դերը խաղայ... Սէրգօ:*

ԲԵՄ.—*է հա, մեր կառափսթ Սերգոն է... ի՞նչ տարբերութիւն կ'ընէ:*

ՄԱՐԳ.—*Այդ ի՞նչ խօսք է, բուն հեղինակը ո՞ւր է, հո՞ս է նէ՛ թող:*

ան բեմ գայ, ոչ թէ սա մարդը:
ԲԵՄ.—«Բուն»-մուն չկայ, ոչ մէկ բանին «բունը» կայ, «բուն» դե-
 րասան ալ չկայ, «բուն» մարդ ալ չկայ:
ՄԱՐԴ.—Ի՞նչ կայ...
ԲԵՄ.—Հիմա իմ ատենս եկա՛ւ խօսելու:
ՋԱՅՆԵՐ.—Հա, հա, խօսէ... կարճի կապէ ամժա...
ՀԵՂ.—Ազգին ղեկավարութիւնը, սիրելի հայրենակիցներ, ազգին ա-
 պագան... չեմ գիտեր ով կ'որոշէ, սակայն իմ գործս չէ ասի-
 կա... ես միայն մէկ բան կը փորձեմ — ճշմարտութեան հա-
 յելի մը շինել, ով որ մէջը նայի՝ իր ինքնութիւնը ճանչնայ:
ԲԵՄ.—Մեծ-մեծ խօսքեր... ա՛լ կը բաւէ... ինչ որ գրուած է...
ՄԱՐԴ. (ընդմիջելով).—Ես կորսուեցայ... բուն մարդ չկայ, բուն գը-
 րութիւն չկայ, բուն հեղինակ չկայ, հերոս չկայ, դերասան չը-
 կայ... ի՞նչ կայ:

Խնդրքի ձայներ, յետոյ՝ լռութիւն: Ամէն աչք բեմադրիչին վրայ է:

ԲԵՄ. (կը դառնայ Կարապետին եւ Սիմոնին, յետոյ՝ Ռեդիակիին, յետոյ՝
 Մարդուն վրայ կեդրոնացնելով նայուածքը՝ ճանդարտօրէն կ'ը-
 սէ).—*Կեանքը կեանքը կայ:*

Վարագոյրը կը գոցուի

(Շար. 1)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

ՄԱՐՈՒԾ

ԲԱՌԷ ԿԱՄՈՒՐՉՆԵՐ

Since nothing assures language
I will regard it
As the sole and final assurance

ROLAND BARTHES

Սկիզբ

Կարենայի ես եթէ
խօսքէն տարբեր միջոցով հաղորդակցիլ ջեզի հետ
միջոցներուն լաւագոյնովն անկասկած
պիտի գայի ջեզ գտնել
սակայն խօսքերէն տարբեր միջոց չեմ գտներ
ուրեմն
բառերս եւ էութիւնս կը լարեն
կամրջովի կը փորձեն

ա - Ինչպէ՞ս երթալ կամուրջներով բառեղէն
կղզիները մարդերու մերկ եւ միակ
որունք իրենց մոլօ խորշերուն մէջ պահուած
առանձնութեան տառապանքը կը փսխեն

- չկայ ուրիշ շաղախ կամուրջ կապելու -

բառը բառին
խօսքը խօսքին կամուրջ կապել
թէ պէտք եղաւ
միտերը իրար կը հիանն
տառապանքի կեռերով դէմի ափը
խարսխել

բ - ջեզի գալու եզրը գտնել
կամուրջ նետել
բայց չկենալ անոր պորտին
երկու այծերուն նման
ու սէր կարդալ

- չէ՞ որ սէրը
ատելութիւնն առկայսելու միջոց է -

բայց կամորջը՝
բառ ու խօսքի ճարտարութիւն
կ'արձագանգէ ներբաններու մէջ մի դողին
ու կ'օրօրովի անշտապ

վարը վիհն է առանձնութեան
վարը գետն է փոփրադէզ
ինչպէ՞ս գամ քեզ

բայց պիտի գամ
մոռցած քեզի ըլլաով քեզ
ինձմէ՛ ինձի գալու պէս

պիտի գամ ես
մոռցած բոլոր միւսները
որոնք ինձմէ՛ ու բառերէս
իրենց հասար նոր կամորջներ
կը սարքեն
կամ իմ խօսքով
կամորջներս կը քանդեն

գ - ինչպէ՞ս իրարու այք նայինք
ինչպէ՞ս գիրար հասկնանք
թէ այդ մազէ կամորջն ալ բառ
փորձընենք
յետոյ մնանք օղէն կախուած
պալոններու պէս անօգուտ երազներէ
ու հովերէ քշուելով

առատութիւն

այնքան շատ բառ կայ շուրջդ
որ կը կարծես ի՞նչ դիպին է
կամորջ կապել
վիհեր կտրել

այնքան շատ բառ կայ թափած
որ կը թոփ
եթէ ձեռքդ երկարես

առնես կապես
կրնաս ոչ թէ մէկ այլ քանի
կամորջ կապել

բայց երբ ձեռքդ կ'երկարես
բարակիրան սնամէջ ու գեղեցիկ
եղէգներ լուկ կը գտնես

կամորջներ ինչպէ՞ս կապես

Ծանուցում

տիկնայք պարոնայք
դուք բարի եկաք
կրկէսը մեր անպատ անծածք եւ անսահման
չենք խոստանար նորութիւններ
բայց կրնանք տրամադրել նոր ակնոցներ
իրաքանչիւրը ձեր քսակին համեմատ
- շահը անշուշտ պիտի երթայ դատերուն -

բառախաղաց մը ունինք
ձեզի ծանօթ բոլոր լարախաղացներուն պէս
հմուտ եւ շատ հաճելի - թէ՛ն երբեմն
սրտի կշռոյթը արող հոգ մի ընէք
կրնանք դեղեր հրամցնել -

աստուած բառով կը սկսի
կը նետէ վեր կ'առնէ վար
յետոյ այնքան շուտ կու տայ
որ ի վերջոյ զայն կը տեսնէք
պարոյկներու գունդ մը լուկ
եւ կամ կլոր դեղին փայլուն
կամ ալ բնաւ չէք տեսներ

յետոյ կու գան բառանները
- պարան քսի ուշք տուէք -
որոնց վրայ այնպէս հանգիստ կ'երթեւեկէ
վարպետը
կամ կ'արտօնէ որ անոնք իր վրայէն
սահին անցնին
կը թելադրենք այս խաղին
վահաններով պաշտպանով

որովհետեւ ամէն պարագաներուն տակ ալ
դուք էք որ պիտի արինիք
- անվահան գլուխներուն պատասխանատուն մենք չենք -

տակաւին կամ սուփներով խաղերը
երբ դուք բառ մը կը նետէք
բառախաղացին վրայ
ան կը բռնէ եւ յետոյ
ձեր քիթերը կ'արինին
- քլինէքսը ձրի է -

աճաբար մըն ալ ունինք
որ կրնայ մեծ զուարճութիւն պատճառել
մանուկներէն կը շինէ զէնք զէնքէն հտափտ
ու հտափտին թեւերէն աղանիներ կը թռցնէ
կրակով երբ ինքզինք այրել կը փորձէ
ձեր սորթն է որ կը հալի

կան տակաւին ձիերը եւ շուներով խաղերը
պիտի տեսնէք թէ ի՞նչ կիրքով
ձին շուներ կը կերակրէ
իբ միսերէն մկաններէն պատառներով
եւ արինով կը սնէ

այստեղ այս կողմ հրամնեցէք
մուտք ելք չկայ տոմսակ չկայ
ներկայութիւն պէտք է լուկ
փորձարկումի համար պատրաստ գլուխներ
զարմանազան զուարճութիւն կը խոստանանք
գինը պարզ է
փորձարկումի համար պատրաստ գլուխներ
հրամնեցէք այս կողմ
այստեղ համեցէք

պորտապար

արեւելեան քաղաքէ մը եւ կու գամ
ժամանակը կը քանանայ
պատի մը խիղճին տրուած
ու երբեմն արեւին տակ երբ միափէն կ'արթննայ
կամացով մը մերկ ուսերէն փռչները կը թօթուէ
յոյլ նայուածքով մարդոց դէմքին կը նայի
ու վտահ որ նոյնն են միշտ

Ետ մրափի կը տրուի

արեւելեան քաղաքէ մը ես կու գամ
այստեղ բառերն իրենց ամբողջ
պերճանքը կը ցուցադրեն
ի՞նչ հաճոյքով զայն կ'ապրին
ու կը տրուին այդ խրախին

մարդ կը կարծէ թէ այդ ի՞նքն է կը բարբառի
չ'աննորադառնար
թէ բառերն են որ զինք կ'ապրին
ու բառերը
հին կնճռոտած ու խորամանկ ծերունիներ
մարդոց ամբողջ կեանքը կ'ապրին

արեւելեան քաղաքէ մը ես կու գամ
կը մտածեմ միշտ բառերու էութեան
երբեմն զանոնք մերկացնել կը փորձեմ
ու շատ յաճախ կը զարմանամ
ձորձոյին տակ երբ անաղարտ
ճառագայթող միս գտնեմ

այստեղ բառն է ամենազօր
այստեղ բառն է ամենատէր
տապը էճընք թերեւս նաեւ
ինչպէ՞ս հատալ ու վտտահիլ
այդքան առատ
այդքան փայլուն ու շողշողուն բառերուն

արեւելեան քաղաքէ մը ես կու գամ
ուր բառերը մարդոց միջեւ
ի՞նչ պորտապար կը պարեն
վկտիաբար ցանկայարոյց ու խենէշ
իրենք զիրենք կը զուգադրեն
ու յետոյ
գրկիդ մէջ քեզ կը սպաննեն

արեւելեան քաղաքէ մը ես կու գամ

Կէտ ու զիծ
բառերը սուրհանդակներ
ծածկագիրի սեպեճգիրի կամ շորթ հէնտի

զգեստներով
 արաբական հնադրեան գիրերուն պէս
 անգիծ անկէտ
 - իշխաններէն մին սուրհանդակ ուղարկէր է
 թագաւորին
 գովեստ գիրով եւ պաշտօնի տիրանալու
 թաքուն իղձով
 թագաւորը անգիծ անկէտ բառերուն իր
 գիծ կէտերը դնելէ ետք
 այդ իշխանին... գլխատեր է -

մենք ալ այդպէս
 ու մեր միջեւ
 անգիծ անկէտ բառերու առեղծոսածներ

գիծն ու կէտը ուրկէ՞ գտնել
 ինչպէ՞ս դնել

հասր ու խուլի զանջտներ կը բեմադրենք
 եթէ յանկարծ սխալ պահու
 լուսարձակները վառեն
 կ'անդարադառնանք՝ ինչ որ թելեր
 մեզ կը շարժեն
 բայց չտեսած չհասկցած
 լոյսերը ետ կը մարեն
 զանջտը կը շարունակեն

դեռ կէտ ու գիծ կը փնտռենք

բառ

ծովեզերքէն
 խիճ մը կ'առնես
 արեփն դէմ կը բռնես
 ու կը սպասես հրաշքի

շատ կը սպասես
 ոչինչ միայն կը պատահի
 յոգնած խիճը ետ իր տեղը
 կը դնես

ու հրաշք կը պատահի

ճիշդ այդ խիճին կարօտով
 խեղճ ալիք մը գլխակոտոյս մոլորած
 որ չէր գիտեր ո՞ր երթալ
 տիեզերքին մէջ իր տեղը կը գտնէ

ծովեզերքը եթէ չըլլար
 իր աւազով խիճերով
 ալիքները ո՞ր կ'երթային

լուսցք

ի՞նչ հաճոյքով բառէ շղարշ հիստեցինք
 մեծ-մայրերուն մաքուր ծունկերը գրկած
 հին ու մանուած թելաբառով
 մինչ ան յուշերն իր կը պատմէր
 եւ կուտ կ'ուտէր

ու մենք տարրած
 իրիկնային երջանկութեան այս պատկերով
 չանդրադարձանք որ շղարշը
 ցանց դարձեր էր

մեծ-մայրերը արդէն չկան
 հին բակերը ամայի են
 ու հոն արդէն
 բառ ցանցերը կը տարածուին

ցանցին մէջ ենք
 խճողումին մէջ բառերուն
 որ լռութիւնը կ'ուռճանայ
 կը պրկէ մեզ
 ու սարապիով թոչուններու երամի պէս
 շատ անելի բառ կը թափենք
 բառ բառ բառ բառ
 ու կը կախուինք մտերմութեան եւ կարօտի չուաններէն

անապատի արեւը մեզ կը չորցնէ

(Հակեպ)

ՄԱՐՈՒԾ

Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՔՐՈՆԻԿՈՆ ՔՆԱՐԱԿԱՆ

ՀԻՆ ՅՈՒՇԱՅՏՏԻՒՄ

Ինչ որ երկու-երեք տարի է ի մեր կեանքիս վրայ կը տատանի՝ կեանքի բուռն ծարաւէ մը զատ ու դուցէ աւելի, — մահուան հետ քաղցր հաշտութիւն մըն է: Անզգալիորէն, անաղմուկ՝ կը պատրաստուիմ գերագոյն վախճանին, կարծես նախազգարով զայն:

Հետզհետէ կը զգամ արդարեւ, թէ մահուան հետ հաշտութիւնը անկեղծ է ու հոգիս իրապէս մեծ բան մը չի յուսար կեանքէն: Այլեւս շատ երիտասարդ ալ չեմ՝ երազներով ու պատրանքներով սնանելու համար: Կրնա՞յ ըլլալ միթէ, որ ապագան ուրիշ ճակատագիր մը վերապահած ըլլայ ինձ: Անտարակոյս խանդավառութիւնս արթուն ու էութիւնս յաղթանակի ընդունակ են դեռ, — այլ ժամանակաշրջանը յուսալքի է բոլորիս համար: Փակ են ապագային ոսկեղէն դռները: Պանդխտութիւնը դառն է ու աղքատութիւնը այլեւս տաժանելի:

Կարեւորը խաղաղութեամբ ապրելու համար զոհանայն է մատչելի հաճոյքներով, զորս կեանքը դեռ կրնայ պարգեւել, — ընթերցում, կարճ պտոյտներ, աշխատանք ու քուն:

Սէրը այլեւս շատ երիտասարդներուն ու երջանկութիւնը՝ անոնց, որ դեռ բաւական անմեղ են զուարթութեամբ ընդունելու համար զայն դրամը՝ պատեհապաշտներուն ու բոլոր դիրքերը բոլոր ճարտարներուն: Ինձ նման մէկուն ինչ որ կը վայելէ այժմ՝ հանդարտ, ծանրաբարոյ աշխատանքն է ու յետոյ մահը:

Յուսահատութիւնը սակայն բարոյական չէ բնաւ ու մահն իսկ կարելի է դիմաւորել զուարթ քաջութեամբ մը:



Գիշերային պտոյտ քաղաքին ամալի փողոցներուն մէջ: Քաղաքը ննջած էր արդէն: Տուներու պատուհանները կոյր ակնարկներով

կը նայէին ինձ: Գիշերը ցուրտ ու անհարմարեղէն էր: Երկարօրէն դիտեցի գետը, կռթնած կամուրջին, նայելով մութ ջրերուն՝ որ սեւ գեղեցկութեամբ մը կը ցոլային ու մթին ծարաւ մը համակեց զիս: Ըսի՝ մահը քաղցր է, երբ մարդ այլեւս ոչինչ կը սպասէ կեանքէն, բացի անբուժելի վէրքերէ: Մահը քաղցր է, երբ մարդ այլեւս յոյս չունի իրագործուելու:

Այսուհանդերձ ո՛չ ոք կ'ուզէ մեկնիլ: Հանապազօրեայ դաժան կեանքին հետ գիրկընդխառն, դառնարեկ ու վշտակոծ՝ ինչ անբացատրելի, ինչ մուսլ ուժ է, որ թոյլ չի տար ինձ ի կատար ածել միակ կարեւոր արարքը: Մահը քաղցր է, բայց, խածնելով շրթունքս ու գուցէ աւելի քաջութիւն անհրաժեշտ է առանց գեղեցկութեան սպրեւու համար, փոխանակ պարզութեամբ մեկնելու: Քիչ են միթէ անոնք, որ ինձ նման գուրգուրանքով կը սնուցանեն վաճուան այս դաժան, այլ անուշ ծարաւը: Անտարակոյս կարծուածէն աւելի մեծ է մեր թիւը, — անիծեալներու: Թէեւ կը շարունակենք մեր ներկայութեամբ խճողել երկիրը: Ու ընդունակ ենք նոյնիսկ վերջին պահուն փորձել վերջին սակարկութիւն մը: Այսքան վատ ենք միթէ:



Կը թղթատեմ այս հին էջերը, — տարօրինակ: Տարօրինակ է կեանքը, ֆանի մը օրէն գիշերուան մը համար Փարիզ պիտի երթամ ու աճալ բազմաթիւ յուզումներ կը գարթնուն մարմնիս մէջ: Այն գաղափարը, թէ երեկոյ մը, շոգեկառք նստելու համար կայարան պիտի երթամ — ազատ, ինքնիշխան, տէր բոլոր արարքներուս — կը բաւէ տանելի դարձնելու համար բոլոր օրերը, որ առանց գորովի կը մթնին, գիշերները առանց քունի, ու աւազանները՝ առանց զուարթութեան:

Յետոյ պիտի վերսկսի նոյն շարաշուք պատմութիւնը, — անմկալի սպասումը անհնարին հրաշքին:



Երիտասարդութեան է՛ն վաւերական յատկանիշներէն մէկը՝ վախին հանդէպ ցոյց տրուած արհամարհանքն է: Յաճախ սակայն ամօթապարտ երկիւղն է, որ կը հրամայէ մեր արարքներուն, նենգօրէն կ'առաջնորդէ մեզ, — վախ՝ հանրային կարծիքէն ու խուժանէն, վախ՝ օրէնքէն ու օրէնքին դրանիկներէն, վախ՝ անծանօթէն: Թշնամին յաճախ մեր մէջ իսկ է, ներքին ուստիկանը, — կեղծաւոր ու անդրդուելի բարոյախօս, անսրբազրեղի պատեհապաշտ, կեղծ բարեմիտ: Մեր անհատականութիւնը պաշտպանել կարելի է միայն կոխկրտելով այս գարշահոտ դիակը: Վասնզի անհրաժեշտ է, որ

մեր առօրեայ կեանքը գէթ մասամբ համաձայնի մեր գաղափարական ապրումներուն հետ: Հարկ է որ չընդունին եղկեթորէն ընթացիկ բարոյականը:

Աւելի երիտասարդ՝ հաւատարմութեամբ կը սիրէի առանձնութիւնը, վասնզի մարդիկը գձուձ կը թուէին, անփափկանկատ, չարակամ: Միայնութիւնը սակայն լոկ վտանգաւոր ապաւէն մըն է: Մեր վէրքերը սպի կապածին պէս, հարկ է վերսկսիլ պայքարը ու գուցէ նոր վէրքեր ստանայ:

Կեանքի փոքր ու անդորր հանգիստները ծերերուն համար են լոկ: Տան մը ներքին խաղաղութիւնը, արեւոտոգ պարտէզ մը, ծաղիկներ, արուարձաններու լոին, մթին փողոցները, երկարատեւ խաղաղաւէտ ճաշերը, գրքերը, որ մարդ կը կարդայ անփութօրէն, այս բոլորը վերադարձի ճամբու վրայ եղող մարդոց համար են: Օ, հարկ է որ վէրքը շատ խորունկ ըլլայ՝ կեանքը կարենայ արհամարհելու համար:

Ներքին վերքերով արիւնեցայ,—
 Բապ արիւնոտ շատծուն պէս
 Հին տեղեր լակնցին արիւնս,
 Կեանքին ափուքներուն վրայ սեւ
 Մէկը մորթեց մանկութիւնս՝
 Դպրարագեղ՝ ույի մը պէս:
 Զգաններուս, նեարդներուս մէջ խոնջէնքը ծեր
 Կը բանի բանութի մը պէս թիւնդ,—
 Խորունկներէն կ'ելլէ գոռ աղաղակներով
 Տաժանելի անօթութիւն մը:

Կ'ուզէի, որ բանային դռները թիւրընկալ
 Տուններուն, ամարանոցներուն հետստր,—
 Մոլորշագոյն իրիկուններ ծաղկէին
 Ռսիս վրայ, Ռուք գրկեր գիս,—
 Երկարաւիզ ու քնքուշ բարակներ շրջագայէին՝
 Պարտէզներու մէջ թրթուս, սարմանդներու վրայ,—
 Համակ կապոյտ հագած, նրբիւրան ու թեթեւամատն
 Աղջիկ մը երգեթուն նուագէր ճերմակ սրահի մը խորը,—
 Գիշերը մեղծօրէն բանար իր թեւերը,
 Իջնար վրաս որպէս քուն ու խաղաղութիւն:

Ո՛ր, ազատեցէ՛ք զիս այս արիւնէն թունատր,
 Երագներէն այս թեղգ, որոնց հորին մէջ կը խեղդուի
 Մանուկ աստուածը զուարթ,
 Իր ոսկեղէն նետին հետ:

Գոռ աղմուկով մը ելի՛ր,
 Յնցուէ՛ ուժգնօրէն, զօրութեամբ ու խանդավառութեամբ
 Կանգնէ՛ ոտքի, զիշերային մահիճէդ ու մաքուր ամէն արատէ,
 Ո՛ր, երիտասարդութիւն:
 Խնդա՛, ասպատակէ՛ ջրերուն թեւ շառաչուն, կամըրջընկէց,
 Հեղեղներուն թեւ, որ ժայռերը կը ծեծեն,—
 Ներքին վէրքերով արիւնլուայ,
 Կորովագուրկ եղայ անձարկի երկշոտութիւններով,
 Ծոպլեցի ներքին զարուն, դալարիք առ դալարիք,
 Փողոցներու մէջ գէջ, պատերու վրայ վաղեմի, կիսակործան,—
 Ո՛ր, առաջին դող, սարսուռ առաջին,
 Առաջին երգ շրթանցըս ամշկոտ,
 Գուրգուրանք առաջին նորագարթ արուի ձեռքերու վրայ,
 Միրոյ վանկ, գորովի բարբառ առաջին,—
 Ծոպլեցի ներքին զարուն, շաքիլ առ շաքիլ,— զարուն
 կորուսեալ,—
 Ներքին ամառս, պտուղ առ պտուղ, Քասկ առ Քասկ,—
 Լոյսը աչքերու հրաշայի, ցօղաթաթախ ձգեցի
 Իրերու վրայ անարժան:

Ներքին վէրքերով արիւնեցայ
 Ու արիւնաճոռումը զիս ձգեց անուժ, անառաչ,—
 Դիւային Քաճուքով մը սաստիկ
 Միրեցի այս վէրքերը, որ օրըստօրէ
 Կը խորունկնան, կը թիւնան,—
 Ջեռքերս արիւնլուայ կը պարզեմ առաւօտեան,—
 Կեցած եմ ծածկուած սպիներով, վէրքերով նոր,
 Մերկ սիրով, դաժանօրէն անկարեկիր,—
 Խուլ ծիծաղ մը կը պատռէ կոկորդս,—
 Կեցած եմ երեկոյեան դէմ շիկահեր՝
 Ափերս անյագ, մարմինս տենչավառ ու մուրիկ հպարտ:

Ծոպլեցի ներքին զարուն սպառնալու,—
 Էջերու վրայ անաւարտ՝ առաջին շողը աչացս,—
 Երգս քաղցր իսկ չէր, ո՛չ ալ ի գօրու
 Ողբելու տրտմութիւնս ծննդական:
 Ո՛ր, արձակեցէ՛ք զիս այս նկուղէն, այս աղքատութենէն
 Նուաստացուցիչ ու ելլե՛մ բարձունքները, Արեւը համբուրեմ...

Ո՛ր, պիտի ելլեմ վերստին այս փլատակներէն՝
 Արարչօրէն, աստուածօրէն երիտասարդ,—
 Պիտի բարձրանամ ծառի մը պէս հերարձակ՝
 Արշալուսային թեւանկարներու դիմաց,

Պիտի էլլեմ մեծ գոչիւններով,
 Նորոգ արդարութիւնս պիտի աղաղակեմ,—
 Շարժումներով սաստիկ պիտի գոռամ՝
 Վերածնունդը երկրին, առողջ ջերմութիւնը արեանս
 Եւ ուսիս վրայ մարտական
 Պիտի պարզեմ դրօշակը յաղթութեան:

Ներքին վերքերով արիւնեցայ,
 Շուայեցի գարունս ներքին.—
 Բայց ազնիւ գազան մը անյաղթելի
 Կը գոռայ մարմնիս գառազեղին մէջ բանտարկեալ,—
 Պիտի արձակեմ զայն, խորտակեմ պիտի երկաթեայ ցանկորմը,
 Պիտի նետեմ զայն բազմութեան խորը,—
 Վասնզի առաօտ է վերստին
 Ծիրանեփայլ, վերածաղկեալ, այլ վաղնջական:

ԸՆԿԵՐՈՋ ԱՐ ԳՐՔԻՆ ԱՌԹԻԻ

Կը յիշե՞ս քաղաքին խորունկ գիշերները: Երբեմն անձրեւը կը
 թրջէր մեզ, սակաւիկ մը կը թրջէր լոյսերը: Երբ մը շրթունքիդ
 կը քաշէիր,— նոյն հին երգը, որ քաղցը էր հաւատարմութեան
 պէս, այդ սալաքատակներուն վրայ: Կը քաշէր ծամելով երգդ, մտիկ
 ընելով զիս ու ես մոռնելով կը խօսէի, բանաձեւելով զայրոյթս,
 որ մեծ էր, որ առասպելական բոցի մը պէս կը լափէր արիւնս:

Ու ինչ որ կ'որոնէինք, դուն՝ թուփս տղու լրջութեամբդ, որ
 պատրաստ էր ընդունիլ երկրին յետին շշուկը ու ես՝ մեծաճայն
 դժգոհութեամբս կեանքին աղքատութեան դէմ, մեր կեանքին աղքատ-
 ութեան,— բանաստեղծութիւնն էր անշուշտ մարդոց մօտ, ճառագայ-
 թում մը, որ կը լուսաւորէ մեր մթին մարմինները, որ իրերուն
 ու էականներուն կը պարզեւէ միակ գեղեցկութիւնը, որ անբանաձե-
 ւելի է ու կրնայ անկորնչելի ըլլալ:

Երբեմն մեր ուտերուն վրայ կը կրէինք անցեալին ողջ բեռը,
 առանց սակայն կորսնցնելու մեր մարդկայնութիւնը: Եւ արդէն
 ո՛վ ինչ կրնայ լրիւ կորսնցնել: Ձէ՞ որ ոչինչ անէութենէն կը սկսի:

Առանց սուտ ամօթի, որ կրնայ աղարտել է՛ն յաղթական ե-
 ըրտասարդութիւնն իսկ, կը մրմնջէր այդ հին երգը, որ առաւօտ-
 եան զանգակի մը պէս կը ղօղանջէր, կը կարկայէր հոգւոյս խո-
 րը,— Տէ՛ր, կեցո՛ր դու զիս: Ու այդ երգը կարծես գիշերային առ-
 կախ ու ծաղկեալ կամուրջ մըն էր խռովեալ ներկային՝ զոր բա-
 նաստեղծութեամբ ու մարդկայնութեամբ բարախուն կ'ուզէինք ու

տրտում, արիւնաթաթաւ անցելոյն միջեւ, որմէ չէինք ուզեր ամոլ-
նալ, վասնզի ան մերն էր, ինչպէս մենք մեր մայրերունն էինք,
մեր ամբողջ ողբերգութեամբ:



Կը յիշե՞ս երբեմն քաղաքին այդ գիշերները, երբ այն բարակ
ու ամալի ճամբէն, որ քեզ արուարձանի կայարանէն տուն կը
տանի, գլխահակ կ'անցնէիս, ետեւդ ձգելով քաղաքը, որ գլուխը իր
քարափներուն վրայ դրած կը յամառի չննջել, վասնզի գերզգայուն
ու արթուն է իր հոգին: Կը յիշե՞ս այդ ցայգային պտոյտները,
որ մեզ խոնջ կը ձգէին գաղափարի մը եզերքը: Ինձ կը թուէր,
թէ յայնժամ երգերդ պահ առ պահ կը հասուննային, հաճելի տե-
ղով մը ծեծելով արիւնդ, ինչպէս յաւիտենական ու լուսակարկաչ
առաւօտը, որով յի է գիշերը: Այդ պատճառաւ է անշուշտ, որ
այժմ քաղցր ընտանութեամբ մը կ'ողջունեմ զանոնք, մանուկներու
պէս՝ որոնց աչքերուն խորունկը ու նորածագ դէմքերուն վրայ
իրենց հօրը ժպտն ու ինքնատպուծութիւնը կը ճանչնայ մարդ:

Հետեւաբար ի՞նչ որ յուզումով մը, որ հարկ չի տեսնի ինք-
զինքը արդարացնել, կ'ուզեմ ողջունել նախ՝ անոնց ստորգ մարդ-
կայնութիւնն է: Կը թուի, թէ մեր պղտոր ժամանակին խօսքի
համբաւաւոր լարախաղացները կը խորշին այդ բառէն, արուեստին
վերազրելով ցրտին օտարութիւն մը կեանքէն, բայց դուն գիտես,
թէ բանաստեղծութիւնը տառապանք է միշտ, ստեղծագործական
անճառ հրճուանք մը ըլլալէ առաջ: Քաղքենի ու ոստանիկ պարոն-
ներու ճիւղերը յոյզերէն ու զգայնիկ տխրութիւններէն անդին, որ
յամառութեամբ կը քերեն մեր ականջները, մեր արիւնը ցաւագին
խայտանքով մը կը զգայ կեանքին որոտընդոտ բարախիւնը:

Գիտեմ թէ հոպիտներու քապոթէններ կան ասդին-անդին, որ
արարչական անհատին ներքին ազնիւ գազանը կ'ուզեն տան կա-
տուի մը պէս ընտելացնել: Կեանքը սակայն ամէն օր կը հերքէ
զիրենք՝ ցոյց տալով իր վշտէ ցաւագնորէն ծամածուռ ու մորմո-
քալի դէմքը: Եւ ուրիշներ, որ տարիներէ ի վեր, միակ զսպանակէ
մը շարժող զօրանոցի խրատիլակներու պէս՝ յաղթանակի աղմկալի,
պարագայական ու խուժանային երգ մը տարօրինակ գունայով
մը կը փչեն, ջանալով պատել մեր անհանգստութիւնը: Ի՞նչ որ
անձկալի հաճոյքով մը կը զգամ երգերուդ մէջ՝ մեր հոգիներուն
ցուցադրած մերժումն է ու ժխտումը ասոնց ու անոնց եւ որ չի
տկարանար, որ ամէն տողի մէջ կը յայտնէ ինքզինքը:

Վասնզի դիւրին չէ կեանքը: Ո՛չ իրական պայքարներէն ա-
ռաջ յաղթանակի շեփոր հնչեցնողները, ոչ ալ անոնք, որ չնչին
ու ծաղրանկարային Յիսուսներու պէս, բառերուն նուրբ կ'որոնեն,
իրենց մօրերուն բարակ սարսուռները գաղտնի շուտութեամբ մը

ըսելու համար, կրնան հասկնալ քեզ, Բայց պէտք ունի՞ս միթէ դասական գրադատականներուն, որ կը նմանին քաղքենի դազադնե-րու վրայ ձգուած սուտ ծաղիկներու, խորին պարկեշտութեամբ մը:— ու ինձ կը թուի, որ մեզ խեղդող կեղծարարութեան ցեխին մէջ, այս բառը վերստին կը տիրանայ իր յեղափոխական ներուժու-թեան ու հոգւոյդ անձկութիւնը ըսելէ յետոյ, տառապելով որոնելէ յետոյ հոգւոյդ ու մեր հոգիներուն անօթութեանը համար՝ բանաս-տեղծութեան արիւնհամ նաչի՛նը, ներքին ակնյայտնի հրկիզումով մը վառելէ յետոյ, ինչպէս մորենիները կը բռնկին առանց սպա-ռելու:— պէտք ունի՞ս միթէ մեր բուսիկ կամ մեծամտութենէ հի-ւանդ քննադատներու պայմանադրական տարազներուն: Ո՛չ բնաւ:



Կը լիչեմ՝ այդ գիշերներէն մէկը վերստին, քաղաքին հիւսի-սային թաղերէն մէկուն մէջ: Տպաւորապաշտ նկարչի մը վրձինէն ելած պաստառի մը պէս՝ պողոտան մոլորագոյն ու անորոշ յոյսի մը մէջ կը ծփար: Անօրինակ ու ողբերգական կենդանութիւն մը մեծապէս զգայուն գործիքներու վերածած էր մեզ: Լուռութեամբ կը ճեղքէինք այդ գիշերը, որ զարմանալի էր բոլոր միւսներուն նման՝ մեր պանդխտութեանը, մեր կորուսեալ ու ամէն ժամ վերադարձող հայրենիքին պատճառաւ, որ երբեմն մենիկ երգ մըն էր՝ վիրաւոր ու շատ տրտում, վիրաւոր ու քիչ մը շատ սրտամտիկ եւ գոր չուրանալուդ համար հարկ է սիրել քեզ, վասնզի դժուար է, այս բարոյական նեխութեան մէջ, մեր սիրականը բառով մ'իսկ չվիրա-ւորել:

Յայնժամ խզեցիր լուռութիւնը ու խորին ձայնով մը, ուր հը-պարտ մէկը ազնուական տխրութեամբ մը կը հեծկտար, արտասա-նեցիր մէկը այն երգերէդ, որ այժմ դժուար է մոռնալ, պարագա-ներուն բերումով: Մարդ մը անցաւ, — կ'ըսէիր: Չէիր ըսեր, թէ ինչ-պէ՞ս անցաւ, չէիր ըսեր, թէ ո՞վ էր այդ մարդը: Ստու՛մբ մըն էր արդեօք, որ սահեցաւ կեանքի մառախուղին մէջէն, ընկճուած իր ճակատագրին բռնան տակ ու կը հեկեկա՛ր, կը խնդա՛ր...

Կը հեկեկա՛ր, կը խնդա՛ր: Մենք չէինք միթէ այդ մարդը, որ կը յուար Արեւազայը, որ պանդուխտ կը թուէր երկրին վրայ ու իր յետին բլիթներուն ու նեարդներուն մէջ զգալով սակայն ժամանակին զարկը, զգալով, թէ այսուհանդերձ հարկ է հաւատալ կեանքին, քանի որ երկիրը կը բարախէ բանաստեղծութեամբ: Ու հոս կ'ուզեմ ողջունել ինչ որ խորապէս համերաշխ կը թուի Սօրո՛ղ՝ իր ժանգոտ շրթներուն մէջ տուայտող, այլ յառաջընթաց, այլ մա-կընթաց մարդկութեան հետ: Յաճախ յետադիմութիւնը ծերութիւնն է՞ միթէ, ինչպէս ուրացումը: Ու մարդկութիւնը մեռել մը չէ՞ միթէ առանց բանաստեղծութեան, որ ազատութիւն պէտք է ըլլայ:

Կրնայ ըլլալ, որ ուրիշները չնկատեն հոգւոյդ գծած սլաքը, ժամանակի գիշերուան մէջ, քանի որ ծածուկ գիրք մըն է քուկինդ: Մեզմէ շատերը փակ պատուհաններ են՝ զիրենք չըմպատողներուն համար խկ: Ո՛վ պիտի կտրէ երբեքից հոգւոյդ ճամբան՝ Բնրիոյ տօթաճար իրիկուցներէն միջեւ Պապապէքի Ռնամեայ գիշերները: Ո՛վ երբեքից պիտի նստի հետդ, հոգւոյդ իւրաքանչիւր հանգրուանին, մեծաշնորհ աւերակներու դարաւոր շուքին տակ կամ արեւմտեան գիտուն ու թաքթաքուր բանաստեղծութեան մը եզերքը, ճանչնալու համար մարդը իր արտաքին կեղեւին տակ, — մարդը, որ ամէն օր մասամբ մը կը մեռնի ու ուրիշ մասով մը յարուստի կ'առնէ: Ո՛վ երբեքից քեզի հետ պիտի ճամբորդէ խնկարոյր շարականի մը թեւերուն վրայ, երկիւղածութեամբ պիտի հեզէ բեկոր մը մեր հին երաժշտութենէն, յեղակարծ կերպով ինչպիսի համար Մաթիսի կամ Փիքասոյի մէկ նկարին առջեւ, ու երգերդ յաճախ պատասխաններ չե՛ն միթէ անձկայի ու եղբրական հարցումներու, որոնց անդունդին եզերքը, երբեմն մարդ իր սպրեւու ուրախութիւնը կը կորսնցնէ:

Ո՛վ որ «ծաղիկներու գաղջ շուքին տակ», իր ճողորմելի պատմութիւնները կ'որոճայ, առանց որեւէ հարցումէ վրդովելու, կրնայ չզգալ կրակը, որ կը վառէ քեզ: Եւ սակայն հետեւած ըլլալով քայլերուդ, եղբայրական սիրով մը կ'ողջունեմ բացայայտ վերելքդ: Մէկ գրքէդ միւսը ինձ կը թուի, թէ կտրած ես միւս տառապանքիմ ճամբան, որ մարդկութեանն է եւ որ մեզ կը բաժնէ ծոյլերէն ու սրիկաներէն, — անոնցմէ, որ իրենց նեղ ու ետական հանգիստին համար, կ'ընդունին իրենց հոգիներուն ստրկութիւնը, որ կը քնանան անտարբերութեան մահիճներուն վրայ սուրբ ճանճորոյթով մը թօթափելով երկրի յոգնութենէն իրենց խնամեալ ու հեղզ մարմինները:

Ու անտարակոյս աժան յաղթութիւններու եւ դիւրին նուաճումներու անօգուտ աղմուկը չէ քուկինդ, որ արեւելեան պոռոտախօս թմբուկներու վրայ կը յարուցեն այլուր, — այլ անհանգիստ ու սրտագրաւ որոնումը, որ կը ջանայ նորոգ գեղեցկութիւնը կապտել, որ կը ջանայ ծայրագոյն սիրով մը համբուրել երկիրը, մեզ արժանի ընծայելուն համար աւելի մարդկային ու աւելի ազատ կենցաղի մը, առաւել բարօրութեան ու զօնարաւ չահուած սիրոյ:

Հետեւաբար կ'ողջունեմ նաեւ ուրիշներու հեշտին հանդարտութեան, այլուր՝ մեր տարեկիցներուն ցոյց տուած ծոյլ հասունութեան,

թեան դիմաց, քու բերած անձկայի անհանգստութիւնդ: Ո՛չ ոմանց հեղգ ու մեղսակից անտարբերութիւնը, ոչ ալ միւսներուն վերացական խրտուիլակներու դէմ յայտնաբերած մեքենական ու մեծաշրուինդ ըմբոստութիւնը կրցած են խաղաղեցնել հողուրջ ստոյգ անձկութիւնը, վասնզի այլուր է մարդուն արժանաւորութիւնը: Արդարեւ, արուեստագէտը կրնա՞յ առանց ինքզինքը զեղչելու երբեւեցէ ընդունիլ որեւէ իրաւակարգի մը պաշտօնական մականը, կրնա՞յ միթէ անզիջ ու անապաշաւ բարձրանալ դպրութեան ու հաւատարիմ զրչութեան աստիճանին, ձգտելու համար կասկածելի ու աշխարհիկ պատրիարքութեան մը: Անոր օրէնքը խոյանքն է եւ չարաչուք ու անանացնող կարգապահութեան ու հլու հպատակութեան միջև որեւէ օրէնքի՝ տարածութիւն մը կայ, որ երկրորդ հայրենիքը պէտք է ըլլայ արուեստագէտին, որ չուզեր հրաժարիլ իր առաքելութենէն:

Որովհետեւ ապալիւր ճամբաներէ մագլցելով ու վերաւորուելով է յաճախ, որ կարելի է վաշտկեան մը ողջունել յախտնական առաւօտեան ծագումը, — առաւօտեան, զոր դուն Արնուազալ կ'անուանես: Հարկ է արժանի ըլլալ գեղեցկութեան ու ո՛չ թէ ստանալ զայն բարեկամ ձեռքերէ: Ու մարդը անդունդ մըն է յաճախ, վերածել զայն միաւորի մը, որ կը կշտանայ, կը յազենայ, կը գոհանայ պաշտօնական ճշմարտութեամբ՝ ո՛չ միայն կը նշանակէ գեղչել զինքը, այլեւ խլել անկէ իր ստեղծագործական կիրքը: Ու ո՞վ է, որ վեր պիտի բարձրացնէ միշտ նոր յաղթութեանց ջահը, նոր ըմբոստութիւններու ծիրանփայլ դրօշակը, բացի բանաստեղծէն: Անոր օրէնքը անանձնական ու ազնուական դժգոհութիւնն է ու ո՛չ թէ բարեացակամ համամտութիւնը:

Արդարեւ, ո՛չ մէկ իրաւակարգ կրնայ յանդգնիլ յաղթել մարդուն երազի հրաշալի ու եզակի կարողութեան: Ո՛չ մէկ իրաւակարգ կրնայ խլել մեզմէ մեր առաջին արժանաւորութիւնը, — այն է՝ տիրանալ անընդատ աւելի ազատութեան՝ աւելի գեղեցկութիւն մտցնելու համար կեանքին մէջ: Ուրիշ ինչպէ՞ս բացատրել քու նաւարեկեալ մարդուդ արձակած գերագոյն աղաղակը, իր տառապանքին սեւ ավերէն, — ուրիշ ինչպէ՞ս բացատրել Մալումէզ ու գեղեցկութեան խուսափուկ ձեւերու յուզիչ որոնումը, որ քեզ կը տանի նկարչութեան խուփեալ ուրուագծերու մէջ ցոյց տալով անձկութեանդ մէկ ուրիշ երեսը: Այս անհանգստութեան մէջ է իր փրկութիւնը ու այս անձկութիւնն է, որ մեզ պիտի բարձրացնէ բոլոր ճահճներէն վեր, ցոյց պիտի տայ մեզի արուեստի դժուարին ճամբան:

Վասնզի ամէն ապաւէն դասալքութիւն է միայն, ամէն վստահութիւն, որ կը յապաղի ծուլութեան մահիճ, ամէն դափնի՝ յուսալքելի դադար: Հանգրուանները ծերերուն համար են ու ամուլ խաղաղութիւնը՝ հողուով տկարներուն: Աւելի բարձր ու արժանավայել

ճակատագիր կարելի է միթէ ցանկալ մարդուն՝ բացի արարչական պայքարէն, իր ներքին կարողութիւններուն հետ, տարերքին թշնամութեան դէմ, ի խնդիր մեծվայելուչ ստեղծագործութեան ու լուսաթաթախ գեղեցկութեան: Ու ո՛չ մէկ գեղեցկութիւն մարդուն մօտ կը մնայ իր առաջին շնորհովը՝ առանց կատարելագործումի անհրաժեշտ ու աստուածային ճիգին:

Ուրեմն թո՛ղ ծայրագոյն խանդավառութեամբ մը պրկուի բանաստեղծը, հասնելու համար իր հրճուանքի կատարներուն, թող ընտրէ՛ նեղ ճամբան, թո՛ղ նախընտրէ՛ նեղ դուռը յանգելու համար իր տառապանքին մթին ակունքներէն իր ինքնատիպ ուրախութեան, իր եզակի էութեան:

Ուրիշ խաղաղութիւն պէտք չէ մաղթել արուեստագէտին ու քեզի, որ կ'ուզես դիմաւորել ծագող առաւօտը յանձին անպաշտ մարդուն, — բացի անկէ, որ մահէն կու գայ: Ու թո՛ղ վերջին պահուն, վերջին անգամ մը եւս ողջունելէ յետոյ երկիրը՝ ան կարենայ բարձրացնել իր ալեկոծ գլուխը, խորունկ յուզումով մը գոռալու համար, դէմ-յանդիման Արեւազային, — «Սո նմ ահա, դուռը բաց...»: Թո՛ղ վերջին պահուն, վերջին անգամ մը եւս ողջունելէ յետոյ, մարդը, որ կը տառապի, — իր եղբայրն ու իր հաւասարը, — կարենայ դիմաւորել մահը որպէս առաւօտ ու որպէս յաղթանակ, տարերային երիտասարդութեամբ մը գոչելով —

—Արթնցէ՛ք, փառքե՛ր, արթնցէ՛ք...



Հնոուն էր ու դանդաղագնաց գետը թէն
 Ու իր երթը մեռելային,
 Ու հողմը դաժան, անձրեւախառն
 Ոչինչ ունէր հովուերգական, —
 Բայց կ'երեսակայէք զայն ջինջ, ոսկեկարկառ, —
 Որեւէ արուարձանի մը մանիշակ արեւուն վրայ՝
 Գարնան կը ծաղկէիմ փրփուր առ փրփուր,
 փաթիլ առ փաթիլ
 Նշենհներդ, ո՛վ վաղնիս երկիր հիւսիսային ծովաճեններու,
 Վիքիկներու շիկաճեր, —
 Խարտեաշ կիներդ ճոխ ու ճերմակ ծիծերով
 Հակած մոլար, արծաթածափ ջրերդ ի վար՝
 Ծաղիպարիւնէն լուսք կ'ընէիմ:

Օ՛ր, մեռելը այս գուժկան, մառախլապատ օրումն,
 Որ կը յամենար եկեղեցիներու գանգուածել՝

Հնամենի, Քաստախարիսյա պատերուն շուրջ,—
 Լոյսը մեռեալ ու գորշ
 Կիներու ծերունի մագաղաթային
 Դէմքերուն վրայ կնճիտ առ կնճիտ սեթեւեթեալ,—
 Կը քալէի ծծելով անձրեւիդ խոնաութիւնը
 Ու ամէն երգի յիշատակ կը կորսուէր ինձմէ:

Ո՛ր, այս պատերդ թին, քարերդ նրբատաշ,
 Հաւատարիմ փլատակներու պէս անկորնչելի՝
 Դարերուն մագիլները վրան, որպէս զինանշան,—
 օ՛ր, եկեղեցիներդ մոայլ,

Որ մեր մայրը Մարիամ կը բարեփոխէ
 Դանիոյ, Նորվելիոյ, Ֆիլանտայի արբեցեալ նաւագներուն հետ
 Հինգ դրամի փոխան տրուող աղջիկներուդ համար,
 Որ պոռնիկ իսկ չեն, որ կու գան մթին թիւերէ
 Խաղը իրենց ծիծերուն մէջ, խոստովանանքը շրթանցը վրայ,—
 Որ օր մը կը վերադառնան գիւղ, երեկոյեան կրվը կը կթեն
 Ու գիշերը կը մասնակցին կրօնական թափօրներու:

Սիրեցի մատուներդ կորուսեալ,
 Որ Աստուած խստաբարոյ է ու լուսկեաց,
 Ու չի ներեր բնա հարուստ երաստաններով
 քաղցնճոխներուդ
 Մեղանշումը դիրիւն ու ներ, շնչափեղծ, կարծես ստորերկրեալ
 Փողոցներուդ մէջ խորունկ,
 Որ գիշերը կը յառաջանայ գողի պէս
 Անշունչ գրպանի լամբարին շատախող ձգելով
 Մառախուղէ սեցած ապակիներուդ վրայ,—
 Սիրեցի բանուորներդ ծանրամարմին, դանդաղաշարժ:

Հակառակ պարարտ դալարներուդ, մարգագետիններուդ
 ցօղաթորմ
 Որ կը դիեցնեն զաւակներդ բախտաւոր, ուսանիկներդ՝
 Կաթնային քաղցրութեամբ մը, կարագով դեղին,—
 Քաղաքին նկուղային գոխներուն մէջ՝
 Թշուառութիւնը կը կաղկանձէ ու ո՛չ մէկ մանկան դէմքին
 վրայ
 Կը ցոլայ լոյսը առաւօտեան,— ո՛ր, այս ճակատները մանուկի
 Մոայլ, գունատ, դալուկ՝
 Իրենց թիւանդագին շողունովը, շրթունքները այս անարիւն,—

Անգամ մը կ'անցնէի որոճալէն,
 Գեղօն մը ոսկեբառ՝ փողոցէ մը դարեւոր,—

Կը քալէի միշտ յօժարակամ տրտմութեամբ,
 Կքած եկեղեցիներու մոայլ գեղեցկութեանը տակ՝
 Մտածելով աւատական աւապատակներու,
 Արիւնին որ թափած էին զաւակներդ զուրկ՝
 Այս քիչ մը ազատութեան համար,— եղկելին, խեղճը,—
 Ազատութեան րոունցք ցցելու, արձակելու
 Հայրոյանք մը շէն՝ ընտրական հաւաքոյթներու մէջ,
 Վեղարարներու, սրիկաներու եւ բոլոր՝ մնացեալներուն դէմ,
 Որ չեն ուզեր ըմբռնել ծարաւդ արեւի:

Ե՞րբ պիտի շտապաձայն աղմուկներով կործանին
 Այս նկուղները, այս մեռելական խուցերը, պատերը մզլած,—
 Այս հիւծախտը ե՞րբ պիտի
 Հաւաքէ իր մանրէները շարագոյն,— ե՞րբ ծովը պիտի գայ
 Իր ալիքներով ճերմակ, իր աղմուկով անուշ
 Ու մաքրէ մեզ այս աղտերէն, որ խառ առ խառ
 Կը դիզուին այս խոնջ մարմիններուն վրայ,—
 Կ'անցնէի գլխամակ ու երանքներու մէջ
 Ողջ քաղաքին զայրոյթը կը մամլէր, կը հինգնայի,
 Կը ծամէի սեւ ձիւթի պէս դառն
 Դառնութիւնը այս փլատակ ու չարաշուք օրումն:

Ո՛ր, խարտեաշ երկիր, ելի՛ր հարս ճերմակ ժանեակներով,
 Ծաքիլներով, ծիւերով, կոծիկներով գարնայնի,—
 Վերածաղկէ վերստին ինչպէս երգդ քաղցր,—
 Ո՛ր, գետ պարարտ, հոսէ՛ զուարթութեամբ,
 Ո՛ր, գարուն շէն ու դալարալեղց, կործանէ ծարիկներուդ
 բեռան տակ

Այս նկուղները հնամեայ:

Ելայ, գացի՛ շնչելու համար գիշերը մաքուր
 Պարտէզը աշնանային մոռնալու համար այս
 պատմութիւնները,—
 Կը քալէի երգելով տրտմութիւնս՝
 Անմտօրէն զգայուն մարդու,
 Որ մանրամասնութեանց շուրջ կը լամենար՝
 Մտաւորականի հիւանդ զգայալարութեամբ,— մինչ գոռ է
 ժամանակը,
 Մինչ վիթխարի ուժեր կը բախին իրարու,
 Կրկեսին վրայ կենաց:

Անձրեւը կը թռչէր գիս, կը լուար ուներս
 Մոլար անցորդի վաստակաբեկ ու քաղաքը կը ննջէր

Հեշտի պլուստ իր անցելոյն:
 Լոկ իմաստուն Քայրոյանքը Տրուպերի
 Արթուն էր ու հմայաթափ, — ո՛ր, այդ արձանը գիշերուան մէջ, —
 «Քաղաքենի է այն, որուն ստոր է մտածումը», —
 Զուարթ քաջութեամբ մը ցցեցի գլուխս,
 Մագլցեցայ զատիվերը հանապազօրեայ, եկայ խցիկս մոնազնի, —
 Ու հոգիս ուրախ էր, իր մաքրութեանը,
 Իր սկզբնական արդարութեանը պատճառաւ, —
 Զուարթ էր մտածումս վասնզի
 Ո՛չ մէկ ցածութիւն չէր եղծած իր ցայտերը ջիւնջ:

Գարունը պիտի գայ կ'ըսէի վարդերով շառագոյն,
 ելակներով, —
 Գարունը պիտի գայ քաղցր պայծիւններով, —
 Հողը պիտի արգասաորոտի ու երկիրը մեծ գոշիւններով
 Պիտի ելլէ տօնելու համար իր վերածնունդը, —
 Մանուկները պիտի վազեն պարտէզներու մէջ կեանքը պիտի
 ըլլայ դաշն
 Ու ախտերը յամառ նիւթ թանգարանի:

Ո՛չ որ կրնայ այլեւ խափանել մեր մակընթաց երթը՝
 Վասնզի մենք ազատութիւնն ենք հրաշալի
 Ու յաղթանակը արդար...

Ցայնժամ քունը մեղմօրէն դեզերեցաւ մարմնիս շուրջ,
 Խրամ առ խրամ գրաւեց զիս
 Եկաւ վրաս թիւ սիրականի մը պէս:

Ծրթներուս վրայ զգացի նաշիհը անուշահամ՝
 Դժուարաւ շահուած խաղաղութեան:



*Նախապաշարուածներէ՛ ձերբազատուած մարդն իսկ յաճախ
 կ'ընդգրկէ կարգ մը պայմանադրական կեցուածքներ, երբ որեւէ
 դժուարութեան կը հանդիպի Արդ՝ պայմանադրական գաղափար
 մըն է կարծել, թէ սէրն ու բարեկամութիւնը ճշդորոշուած, յստակ
 սահմաններ ունին: Պարզ կարծուած մարդկային զգացում մը յա-
 ճախ արդիւնքն է քանի մը տարբեր տարբերու, նաեւ այս պատ-
 ճառաւ է, որ մարդիկ այնքան դժուարութեամբ ու խրամ առ
 խրամ անձնատուր կ'ըլլան սիրոյ: Սէրը յաճախ երկար համբերու-
 թիւն մըն է:*

Ոչ ոք ճշգրտիւ կրնայ ըսել, թէ ո՛ւր կը սկսի սէրը եւ ո՛ւր կը վերջանայ բարեկամութիւնը: Կամայականօրէն բաժնեկով զանոնք կը յանգինք սխալ եզրակացութեանց, քանի որ մարդկային զգացումները երբեք յստակ ու ճշգրտաշուած չեն բոլորովին: Մարդը յաճախ քառս մըն է, վի՛հ մը:

Մարդուն ցանկութիւնն ու կնո՛ղ հաճոյքը հազուադէպօրէն կը հանդիպին իրարու, սիրոյ ժամուն, նոյն վայրկեանին: Հոսկէ անխուսափելի խզումը, տաժանելի այլ բնական:

Կը վի՛նս այդ լայն ու հանգստաւէտ անկողինը: Ուսերէդ գրկած էի քեզ ու երկարօրէն կը նայէի աչքերուդ, երբ ինքնաբերաբար խոստացար ինձ, յառաջիկայ հանդիպման համար, շրթունքներդ անաղարտ ամէն ուրիշ հպումէ: Իրաւունք չունէի ատիկա յուսալու քեզմէ, վասնզի ոչինչ կը պարտիս ինձ, վասնզի ազատ աղջիկ մըն ես ու կը սիրես հաճոյքը: Ինչպէ՞ս կրցար ուրեմն ընդունիլ այդ յանձնառութիւնը, որովհետեւ ողջ էութիւնդ ու մարմինդ զիս կը սիրէին այդ ժամուն:

Բայց ուրիշ սխալ մըն ալ ապագան յանձնառութեան տակ դնելն է:



Կրնաս ըսել վերստին, թէ ինքզինքիս կը վնասեմ՝ ողջ օրը ապրելով մեռելներու հետ: Ձեր երկրին մէջ, որ շատ ժպտուն է՝ հաճելի ըլլալու համար ինձ, մարդ պարտաւոր կը թուի չափի զգացումը հովանոցի մը պէս հետը պտտցնել: Ժամեր կան սակայն, երբ տրամաբանութիւնը տաժանելի է, նեղացուցիչ:

Ո՛, գիտեմ, իմացականութիւնը երկնաուպ ու անփոխարինելի նուէր մըն է մարդուն տրուած, բայց ես միշտ նախընտրած եմ ջերմօրէն խանդավառ ու զգայուն մտքերը: Իմաստութեան աղբիւրը, կարկաչը մտածման՝ կ'ուզեմ որ մեր հոգւոյն խորէն բխի: Կ'ուզեմ որ ան ստեղծագործ ըլլայ ու տենդահար, հետեւաբար ընկերացած երեւակայութեան:

Որքան յաճախ կ'ընդվզիմ բնութեան դէմ՝ այսքան յորդ երեւակայութիւն մը շնորհած ըլլալուն համար՝ ապաշնորհ մարմնի մը ու գեղեցկութեան գրեթէ անտազին ծարաւ մը, զգայնութիւն մը որ կը գրկէ է՛ն նուրբ իրերը: Ու կը լռեմ, վասնզի գորովի, սիրոյ, խանդավառութեան բառերը, որ կրնամ դողահար շրթներով արտասանել, չեն համապատասխաներ երկրային անձիս: Ինչ որ ինձ կը վայելէ պարարտ ու անասնական հաճոյք մըն է, գէր ուրախութիւն մը:

Ու այս բոլոր պատճառներով յաճախ երկիրը տրտում կը թուի ինձ:



Երբ շատ երիտասարդ էի, ինքնավստահ ու ինքնաբաւ,—
 պէտքը չէի զգար մարդոց բարեկամութեան: Երիտասարդութիւնս,
 որ յաղթական էր ու ապերասան, ո՛չ մէկ կարօտ ունէր նեցուկի:
 Ինձ կը թուէր, թէ բարեկամութեան ծարաւը, որ այժմ կը համա-
 կէ զիս՝ վաղահաս ծերութեան յայտարար նշաններէն մէկն է: Կը
 նշանակէ, թէ առանձնութիւնը արդէն երկիւղ սկսած է պատճա-
 ռել ինձ:

Երէկ գիշեր կը մտածէի ազգականներու վրայ: Անոնց ցուրտ
 անտարբերութիւնը այսուհանդերձ սկսած է ապշեցնել զիս: Իրա-
 պէս կը կրճն միթէ մօրս արիւնը իրենց երակներուն մէջ: Ինչ-
 պէ՞ս կրնայ ըլլալ, որ այդ հակները այբբան ցուրտ են ու գորշ,
 մինչ մայրս կը բաբախէր գորովով ու անհանգստութեամբ: Կարելի
 չէ սակայն գիրենք մոռնալ, մինչ իրենք չեն գիտեր իսկ, թէ ո՛ր
 կ'ապրիմ:

ՀԻՆ ՅՈՒՇԱՍԵՏՐԷ ՄԸ

Թանկագին ոչինչ կայ կեանքիս մէջ, որ ի սպառ կորուած
 չըլլայ: Եթէ առողջութիւնս խախտած ու երիտասարդութիւնս
 հանգչած չըլլար, մեռեալ կրակի մը պէս՝ կրնայի գուցէ վերսկսիլ
 կեանքս, աւելի՛ ամուր ու աւելի՛ տրամաբանական հիմերու վրայ,
 բայց այժմ ուշ է այ տեւէ անձնական խաղաղութիւն կերտելու
 համար: Լոկ հանրային ծառայութեան ասպարէզը բաց է՝ զոհելու
 համար ինչ որ կը մնայ զուր չվատնելու համար ինչ որ տաժան-
 քով յաջողած եմ ձեռք ձգել:

Ինչ որ կ'ուզեմ յուսալ կեանքէն՝ քանի մը տարիներ են,
 քանի մը տարիներ միայն ու խաղաղ աշխատանքի հնարաւորու-
 թիւն:

Յօժար ու արթուն է հոգիս, նոյնիսկ գիշերուան մէջ,— մար-
 մինս է որ չի կրնար տանիլ կեանքի բեռը:



Այն բոլոր աղջիկները, զորս քիչ-չատ սիրեցի, այս տարիներու
 ընթացքին, մէկիկ-մէկիկ մեկնեցան ու անկիւն մը, շինեցին իրենց
 բոյնը: Ամէ՛ն ոք գտաւ իր խաղաղութիւնն ու հունը: Լոկ ես եմ,
 որ անտուն հոգւով կը թափառիմ, սպասելով չեմ գիտեր ո՛ր յայտ-
 նութեան, ո՛ր անկարելի հրաշքին:

Ո՛ր, այդ բեռնաւոր անցեալով աղջիկները, որ գուցէ դեռ եր-
 կար ատեն պիտի չիչեն, ինձ նման, ինչ որ ի սպառ կորուսեալ
 է երիտասարդութեան կրակն ու թանկագին ազատութիւնը:

Առաջին օրն է վերստին նոր գարնան մը ու առաւօտը կը ճառագայթէ: Անկողնէս ելայ ժամը չորսին, մութը խորունկ էր դեռ, բայց տակաւ առ տակաւ արշալոյսը կը բացուէր: Բակին ծառերուն վրայ քանի մը թռչուններ երկչոտօրէն կը ճռռողէին: Կռթնեցայ պատին՝ ունկնդրելու համար քաղաքին զարթօնքի աղմուկը: Պատուհանները մեղմօրէն կը բացուէին: Հեռուէն աղօթօրէն բանուորներու հաստ կօշիկները կը հնչէին սալալատակներուն վրայ: Յետոյ դանդաղօրէն արեւը ելաւ: Դանդաղօրէն արեւը ելաւ: Կ'ուզէի մեծ ու հնչիւն բառերով ողջունել օրուան ծագումը, բարձրաձայն գովել աստուածային եղանակը, որ կը ծնէր.— բայց հոգիս տրտում էր ու անձկալի: Ի՞նչ ըրի մանկութեան ուրախութիւնս յորդազեղ: Սպասուպուռ վատնեցի յաղթական ու քաղցր երիտասարդութիւնս ու այժմ ծերութեան դրան առջեւ, երկմիտ կը սպասեմ երկրորդ ու տարակուսելի գարնան մը:

Աշխատանքի ընթացիկ օրը սկսաւ ժամը վեցուկէսին ու գարունը վերջնացաւ կարծես: Հայելիին մէջ դիտեցի հմայաթափ մարդու դիմակս ու սարսափեցայ: Անձկութիւնը, տրտմութիւնը, սպառնիչ ծարաւները ե՛րբ վախճան մը պիտի ունենան:

Ու որքան խոնջ ու տրտում եմ այսօր:

Կարծես ժամանակն ու տարածութիւնը այլեւս սահմանափակւած են դիմակս: Անորոշ երկիւղ մը կայ վրաս, չարաշուք նախագագացում մը:

ԴԷՊՔԵՐՈՒ ԼՈՒՄԱՆՏՔԻՆ ՎՐԱՅ

Ամէն արդար ի վերջոյ կը յանգի իր լոյսին:

Ու մարդոց է՛ն հանճարեղն իսկ, տարիներ դէպքերէն դուրս ու դէպքերէն վեր, որոնելէ յետոյ իր գեղեցկութիւնը, կը վերադառնայ երկրին ու իր նմաններուն:

Արդ՝ Անտրէ Ժիտ, Երկրայից սնունդներու, Դրամանեցեացներու, Ննդ դուրի հռչակաւոր ու գեղագէտ հեղինակը, որ Փրանսերէն լեզուն է՛ն անթերի գեղեցկութեամբ գրող քիչերէն մէկն է, վերջնաւ յարեցաւ յեղափոխութեան՝ յարուցանելով անօրինակ հետաքրքրութիւն մը: Անոնք, որ կը հետեւին լրջօրէն Փրանսական գրականութեան, գիտեն ժիտի գրաւած եզակի դիրքը ու հետեւարար հասուն տարիքի այս որոշման մեծ կարեւորութիւնը:

Արդարեւ, մեր ժամանակը յատկանշող երեւոյթներուն մէջ՝ բացառիկ նշանակութիւն ունի ժիտի պէս իրական արուեստագէտի մը տարածամու յարումը վարդապետութեան մը, որուն դէմ բարբարոս ոխակալութեամբ մը նիզակ կը ճօճեն գրեթէ բոլոր ա-

ընկերության պետությունները: Քաղաքների թերթերն ու յետադիմական գրիչները,— սկսելով կիսապաշտօն ու կեղծապարիշտ Թուսնէն,— ամիսներէ ի վեր, մերթ զաւրոյթով ու մերթ քրտութեամբ Խաչ Բաւ զղա կը պոռան ու կը ջանան վարկաբեկել Վաստիկանի մատաններու մեծ արուեստագէտը, կ'ապշին տեսնելով, որ մինչ այդ ազնուական բարքերով ապրած ու բազմութիւններէ խրտոյղ այս մեծ մարդը՝ բանուորական հաւաքոյթներու մէջ, բունցքը բարձրացուցած կ'ողջունէ վաղուան մարդկութիւնը, որ քաղաքներու միջին ընդերքներուն մէջ գրկանքէ կը գալարի այսօր:

Ժխտի յեղաշրջութիւնը սակայն բնական ու տրամաբանական կը թուի մեզի: Ժխտ ծագումով Հիւկրնօ մըն է, զաւակը հարաւային Փրանսայի բողոքական ընտանիքի մը ու միշտ մնայուն դժգոհութեան, տաժանելի մտքի ապստամբութեան վիճակի մը մէջ ապրած է, մերժելով քաղաքների բարոյականն ու ընտանիքը: Ո՛չ ոք գուցէ, ապրող գրագէտներէն այդքան տառապանքով որոնած է գեղեցկութիւնն ու անհատին ազատագրութիւնը: Տէր ըլլալով զմայլի, բազմակողմանի ընդհանուր զարգացման մը՝ քառասուն տարիներէ ի վեր այս մարդը կը մագլցի դերբուկ ճամբաներէ, արիւնքով կը կերտէ իր ճշմարտութիւնը ու կը ջանայ խորտակել իր կապանքները: Իր բոլոր երկերուն մէջ մարդ կը հանդիպի ճշմարտութեան նո՛յն անյաղթելի ծարաւին, նո՛յն գրեթէ հերոսական պրոկուսին ի խնդիր տառապանքով շահուած ազատութեան:

Ու դժման կարգապահութիւնն իսկ, երկրի հանգքներէն հրաժարումն իսկ՝ որոնց ծանր բեռան տակ կը կքի Ննդ դուռի հերոսուհին,— բարձունքներու լոյսին համար է ու բեղուն խաղաղութեան, դժուար է աւելի՛ յուզիչ դարձի մը հանդիպիլ ու կը բաւէ ժխտի եւ Ռոմէն Ռոյանի պէս արուեստագէտներու, Լանժըվէնի եւ Այնշթայնի նման գիտուններու անվերապահ դատապարտութիւնը՝ որպէսզի մահացուօրէն խոցուած զգայ ինքզինքը դրամատիրական կարգուսարքը: Ու ժխտ առանձին չէ՛ այժմ: Տասնեակներով տաղանդաւոր նորեր կու գան պատնէչին այս կողմը: Ու իրենց յարումը արտակարգ արժէք մը կը ստանայ այս ճգնաժամային օրերուն, երբ նոր սպանդներ տենդով կը հասունանան մութին մէջ:

Ժխտ իր խեղդուած անհատականութեան ազատութիւնը կ'որոնէ յեղափոխութեան յաղթանակին մէջ, է՛ն մեծերն իսկ կը զգան թէ է՛ն արարչական մարդն անգամ մէկ օղակն է միայն մարդկութեան ծանր շղթային: Լուկ հայ երիտասարդ գրողներն են, որ կը շարունակեն յորանջել իրենց գձուձ ճշմարտութեանց թշուառ խշտիներուն վրայ:

(Շար. 2)

ՎԱՋԳԷՆ ԾՈՒՊԱՆԵԱՆ



Բ. ԹՕՓԱԼԵԱՆ



«Բագին»ի ներկայ համարին մէջ տրուած Վազգէն Եոզանեանի «Քրոնիկոն քնարական»ի «Ընկերոջ մը գրքին առթիւ» անուն հատուածին ընկերը բանաստեղծ Բիզանդ Թօփալեանն է:

Անտարկիէի է սոյն հաստատումը, ա՛յն տոեայներուն ճիմամբ, որ բանաստեղծին «Արեւազայ» հատորին յիշատակութեան հետ՝ կան որոշակի ակնարկութիւններ Թօփալեան կարգ մը բանաստեղծութիւններուն, որոնցմէ մէկը «Մարդ

մը անցաւ շուքի պէս»ն է, միւսը ճակատագրին ուղղուած մարտահրաւիրը՝ «Ըսեմ անա, դուռդ բաց», եւ երրորդը՝ «Պատկաւէք»:

Տարակոյս չկայ, որ ընթերցողը պիտի ուզէ անգամ մը աչքէ անցընել գոնէ՛ տուեալ կտորները, եւ որպէսզի արագ գոհացում տրուի անոր հետաքրքրութեան ու մաւր թարմանայ բանաստեղծին յիշատակը, որոշուեցաւ հետագայ էջերուն արտագրել նրեքն ալ, որոնց վրայ, ի՛նչ խօսք, կ'երկարին մաւր Եոզանեանի համարումին լոյսերը...

Սփիւռքի գրականութեան եօթը հատոր բանաստեղծութիւն, զեղանկարչական բազմաթիւ կտաւներ ու տասնութ հատոր «Անդաւաւտան» անուն պարբերագիրք կտակած դէմք էր Բիզանդ Թօփալեան, որ ծնած էր Այնթապ՝ 1902ին: Մեռաւ Փարիզ, 1970ին:

ՄԱՐԴ ՄԸ

Մարդ մը.
Անցաւ շուքի պէս, շուքերու մէջ ու անձայն:
Կը հեկեկա՞ր. կը խնդա՞ր...

Հո՛վն է. վայրի: Երկար սոյլ մթութեան ասղնտում:

Հեկեկումներ վիրաւոր կը ծակեն սիրտն այս մութին:
Հոգիներու ու մտքի գիտակցութեան մէջ դարձող
Խռչոր ժեստեր, մարմիններ կը թաւալին... դէպի ո՞ւր...

Ստուերամարդն հեռացաւ — ցնորակոծ, հերարձակ...
Պիտի կրնա՞յ գտնել շունչ մ'իր տեղազաւառ հոգիին
Ու վերադարձ մը, որ տայ խաղաղութիւն իր մամբուն:

Մոլորակէ մոլորակ արձագանգող ձայնի պէս
Միմչելու որ ա՛լ գտնէ ինքնակատգիրն իր կեանքին,
Միմչելու որ դուռն անծանօթ երանութեան քացուի ա՛լ...

Կը հաւատամ, որ անոր հոգին ըլլայ անսահման
Ճառագայթի եւ համուր ձայներու օրգ մը հսկայ,
Երջանկանա՛յ շունչն անոր խաղաղ պարին մէջ մահուան:

ԵՍ ԵՄ ԱՆՍԱ ԴՈՒՌԴ ԲԱՑ

Նուագներէն, ձայներէն խորածրծե՛լ տնդն հիմա...
Ու րազմութեանց մարդկային զգալ սարսուռն արնաճամբ —
Մտերմանալ սա վայրագ աչքերու սեղմ ցասումին,
Միջոցին մէջ արձակե՛լ հոգիիդ թափն անոպայ...

Հսկայական թաթն արդէն նակատագրին վնասկան
Կըրանիթեայ ամբարտակն իր կը ցրցէ դէմ առ դէմ
Հոգիներուն մեր ամբողջ, օրերուն մեր հեւքին վրայ...

* * *

Երակներու արնախայտ պրկումի նիւն է հիմա...
Բազմահագար գարկերու դորդումներ միակամ,
Բազմահագար բունքներ ապառաժիմ կողմ անհաս
Կտոր-կտոր կը նետեն անըրպետի մթութեան...

Հարուածներու համահունչ արշուն հոգիս կ'ողողէ
Դիւցագնական բրտութեամբ.
Միլիոններու նիւն հիմա գարկերակիս մէջն է գոռ:

Ճակատաքաց ծառանա՛լ գանգուածիդ դէմ փշրուած
Վստահութեամբ ձայնարկե՛լ, ձայներու հետ քիւրաւոր.
—Ճակատագի՛ր, ե՛ս եմ, արդ՛ յաղթահարեալ դուռդ քա՛ց...

ՊԱՍԼ ՊԵՔ

Արեւածոր մարմարներու մէջ ահա—
ուր աստուածներ լուսածին
իշխանութիւն տարածեցին լիարուսն—

Բարձրը, բա՛րձրը ու դէպի վեր
 հսկայական պարիմ վրայ քարերուն
 Մենք — խելայեղ
 հերարձակ...

վեր

դէպի

ու

բարձրը

Այստեղ—

այն լայնամիտ խորիսխներէն
 ու սլացող խոյակներէն այս սիւներուն

դարերը լուռ,
 դարերն անչափ
 հեռագրական հեւքով ծածուկ
 բոցավառում, յո՛յս կը բաշխեն...

Բաց երկն քի պայծառութեամ մէջ փարած
 քեւակարկառ սիւներու
 հսկայական խորհուրդին
 քանդակուող...

Մենք

պատմութեան տեսիլներով ու տենդով
 այս հովերուն մէջ կը գգանք

Օրերու ճայնն

ու ամենուրի

ու քաւաղող տիեզերքի հաղորդութիւնն...

Այստեղ—

դեռ գոյմեր

փլատակներու հոգիին վրայ
 դողացող ժեսքեր,
 բառեր հրագեղ,
 անծանօթ նուագ
 ու քափահարող քոչունի ստուեր...

Հո՛յ, վարերէն

բարդիներ

իրենց սկիհն երկարած վեր

պարիսպներէն,
 քառերուն պէս Նարեկացւոյն
 հոգիներուն կը մատուցեն
 տարօրինակ հաղորդութի՛ւն
 դանդաղութեամբ,

սարսըռալէն:

.....

Ու մտածումիս էլեկտրական
պարփակումիմ մէջ
հեռաւոր բոցեր...

Ու հորիզոնի փոշիին վրայ
ինքնաշարժերու անհանդարտ ու գոռ
երկաթէ՛ հոգին
կը թափահարէ տեղը մերկայի
խելագարութեմ...

Եւ աշխարհի ուղիներէն,
ժամանակի անպարագիր բարձրութեմէն
ու հեռաւոր հոգիներու կայաններէն
ուղիօ-ճայներ
կու գան այստեղ՝ կազմելու մեծ
Համադրութիւն-

.....

Մեր շուրջ սհա
Քարերու մէջ բուսնող խոտին
նորաբողբոջ—
հագարամեայ մարմարին,—
նառագայթին արեւափառ,
մշտանորոգ այս կեանքին
պիրկ, անբաժան նակատագրով համադրական
ես կը ճայնեմ սստուածներուն
(որ կը տեսնեմ այս մեծութեան մէջ ապառաժ,
սուրիական այս բոցավառ դաշտերուն
այս սահմանին բարձրութեան
ու քարացած առիւծներու թաթերուն
վրայ այսօր, մերկայի հետ
բարձրադադակ
ես կը ճայնեմ—
Ողջո՛յն, ողջո՛յն...

ԲԻԻԶԱՆԴԻ ԹՕՓԱԼԵԱՆ

«Խաբուած ըլլալ՝ կ'ընդունէր, խաբող՝ ոչ»



...Hier, c'était un Malraux tout à fait procommuniste. Je me demande encore comment, en allant si souvent à Moscou, il a pu ne pas voir ce que Gide a vu en trois semaines.

JEAN PLUMYENE

"Magazine Littéraire" 1977,
No 114, page 45

*
* *

Նոր թիւրիմացութիւններու առիթ չըտալու եւ հին թիւրիմացութիւնները չափով մը փարատելու համար, անպատեհ չէ կը կարծենք քանի մը տողով անդրադառնալ կանխորդ էջերուն տրուած Վալզէն Շուշանեանի «Քրոնիկոն»ի մէկ միւս հատուածին, որ կը կրէ «Դէպքերու լուսանցքին վրայ» ենթախորագիրը, էջ 19:

Խնդիրը բացառաբար կը վերաբերի ֆրանսացի հռչակաւոր գըրագէտ Անտրէ ժիտի ազատութեան որոնումին եւ տարածման, այսինքն՝ հասուն տարիքի մը յեղափոխութեան յարումին, որ համայնավարութիւն կը նշանակէ հոս:

Վալզէն Շուշանեան, որ 1935ին գրի առած է «Քրոնիկոն քընարական»ը, հաշուի առած է անշուշտ նոյն թուականին կամ անկէ հապի մէկ-երկու տարի առաջ հրապարակ իջած Անտրէ ժիտը եւ ոչ թէ յետ 1935 թուականներու ժիտը, որ գաղափարական աշխարհով բողոքովին տարբեր ոլորտի մը մէջ սկսաւ շնչել ու գործել:

Ինչպէս ծանօթ է ֆրանսական գրականութեան քիչ-շատ հետեւած մարդոց, շարք մը մտաւորականներու հետ Անտրէ ժիտ 17 Յունիս 1936ին Սովետ կառավարութեան կողմէ հրաւիրուեցաւ Խորհրդային Միութիւն, ուր մնաց մինչեւ 20 Օգոստոս:

Մոսկուա հասնելէն երեք օր ետք, Մաքսիմ Կորքիի մահուան առիթով, Կարմիր հրապարակին վրայ ճառ մը խօսեցաւ ան, իսկ

հրաւիրեալ իր ընկերներէն Էօժէն Տապիի խորհրդաւոր պայմաններու տակ Սեբաստափոլի մէջ մեռնելէն ետք, յանկարծօրէն որոշեց վերադառնալ Ֆրանսա ու գրեց *«Վերադարձ Խորհրդային Միութենէն»* անուն հատորը, որ, ինչպէս կ'ըսէ *«Մակագին Լիթերէր»*ի յօդուածագիրներէն Ֆիլիպ Նաթօ, *«Ռուսի մը ազդեցութիւնը գործեց համայն աշխարհի մէջ»*, մասնաւորաբար համայնավար ու համայնավար բարոյչութեամբ տարուած շրջանակներուն մէջ:

Յիշեցնել պէտք է, որ Անտրէ Ժիտի եւ իրեն տարեկից ֆրանսացի մտաւորականներուն պէս Վալզէն Շուշանեան ինք եւս ունեցաւ աշխարհի այն կողմը պայթած յեղափոխութեան հանդէպ տարտամ համարում մը, որ ըստ ինքեան ներշնչող ուժ մը ըլլալէ աւելի՝ կու գար դրամատիքական կարգուսարքին նկատմամբ իր ունեցած արմատական նողկանքէն: Շուշանեան նոյնիսկ գովքը ածեց «Մեր երկրի յեղափոխական վարթօնքին» եւ տարուեցաւ ներգաղթել, նամակներ գրեց առ այդ, բարեբախտաբար, սակայն, «վարթուցեալները» վստահելի ուժ մը չտեսան իր խառնուածքին մէջ ու ճամբայ չբացին իրեն, գուցէ վզացին իր անձին սպառնացող հաւանական վտանգը ու լռելեան մթազնեցին այդ իղձը իր մէջ, մինչեւ որ Մոսկուայի մեծ դատավարութիւններուն ու Հայաստանի մեծ ձերբակալութիւններուն ի լուր ի'նք պզգաց շատ մը ժողովուրդներ ու մտաւորականներ մղորանքի մատնած արիւնոտ այդ սակաւապետութեան էութիւնը ու բարձրացուց իր ձայնը ի խնդիր Չարենցի, Բակունցի, Տիկին Եսայեանի եւ միւսներուն ապատ արձակման:

Չենք գիտեր, Վալզէն Շուշանեան երբեւիցէ առիթ ունեցա՞ւ 1936 թուականներուն ու յաջորդ տարիներուն պարզած Անտրէ Ժիտի գաղափարական շրջափոխութեան անդրադառնալու, թէ ոչ, բայց ըստ բնականին գիտենք, որ *«Վերադարձ Խորհրդային Միութենէն»* անուն գործին մէջ դրուագրուած Ժիտի պատրանաթափութիւններուն ու յուսաբեկումներուն մինչեւ այսօր կ'անդարադառնան ֆրանսացի մտաւորականները, հոչակաւոր գրագէտին «մեծապայծառ» թափանցամտութեան հակադրաբար նիւթ դարձնելով *Խորհրդային բռնատիրութեան հանդէպ այլոց ցուցաբերած կուրաթիւնը կամ հաշուենկատ լուրթիւնները:*

«Երէկ, — կ'ըսէ վերը մէջբերուած ֆրանսերէնին թարգմանութիւնը, — Մայրոն էր, ամբողջովին համայնավարամիտ: Դեռեւս կը հարցնեմ ինքզինքիս, թէ այնքան յաճախ Մոսկուա երթալով ան ինչպէ՞ս չկրցաւ տեսնել ա՛յն՝ որ Ժիտ տեսաւ երեք շաբաթներու ընթացքին»:

Զարմանալին այն է, որ համայնավար փտախտը տեսնել չկըրնալու մալրոյական կուրութիւնը ֆրանսացի մտաւորականներու մօտ առեն մը հասարակաց երեւոյթ եղաւ եւ իր «այծմէութիւնը» կրօնեցուց շատ ուշ միայն, եւ աստիճանաբար, առաջին հերթին՝ Ատալիիի պսակապերծման օրօք, երկրորդ անգամ՝ կարմիր հրասայլերու տակ

Հունգարիոյ շուրջ երկու հարիւր հազար ավատատենչներուն ոչընչացման ի լուր, եւ երրորդ անգամ՝ մարդկային դիմագիծով ընկերվարութիւն մը պահանջող Տիպչեքեան Չեխոսլովաքիոյ արդարութիւնը առաթուր խորտակած բրեժնեւեան պինեալ ձեռնարկներուն վաղորդայնին:

Կարմիր փորձանքին այս յաջորդական մերկացումներուն առիթով Ֆրանսացի մտաւորականներուն թօթափած թմբիրին դիմաց անըմբռնելի էր ու անըմբռնելի մնաց ճորտային հոգեբանութիւնը մեր հին գվարդականներուն եւ կարմիր առօտներուն մէջ նոր ճարակ գտած նորընծայ հացկատակներուն, որոնք հաւատարիմ մնացին մարդ էակը հարստահարող ահարկու իրականութեան քովն ի վեր աչք գոցելու իրենց վարժութեան, ներքողական ցնծութեամբ շարունակելով քնարերգել իրենց հաշուական համարումները, առանց անդրադառնալու, որ վարձատրութեան մղումներով խմբագրուած շոշորդութիւններով խորապէս կը վիրաւորեն բռնութեան տակ հեծող իրենց դժբախտ եղբայրները:

«Նաբուած ըլլալ՝ կ'ընդունէր, խաբող՝ ոչ»: Այս էր «Վերագարձ Նորհրդային Միութենէն» անուն Անտրէ Ժիտի գործին առանցքը: Փաստօրէն, նման սկզբունքները որեւէ նշանակութիւն չունեցան «Նորհրդային Միութենէն» վերադարձած մեր երբեմնի հերոսներուն համար, անոնց հետապնդածը, երեւի, ուրիշ բան էր, ուրիշ բաներ էին, ու բաներէն մէկը՝ սովահարութեան մը յագուրդ տալու մղումը, միւսը՝ փառքի սովը, երրորդը՝ դատարկութիւն մը աղմուկով լեցնելու պապակը, եւայլն:

Օր մը մարդիկ պիտի կարդան հաւանաբար այն գիրքը, որ պիտի գրուի ավատ աշխարհի ստրկամիտներուն կողմէ երջանիկ հրուշակուած անապատ մարդոց խոստովանութիւններուն լոյսին տակ եւ լուսաւորէ յայտնիս խմբագրուած ստութեանց ողջ սեւութիւնը...

Զ. ՊԱՀՐԻ



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Հօրեղբորս դժբախտութենէն մինչեւ դէպի Արեւելք մեր ճամբորդութիւնը անցնող երկու տարիներու ընթացքին իմացուեցաւ, որ Դպրոցատէր Տիկնանց ընկերութիւնը, որ 8-10 տարի առաջ կազմուած էր Օրթագիւղի մէջ, կը խորհէր իր վարժարանը Գոմ-Գափու փոխադրել եւ զարկ տալ անոր՝ այդ բազմաթիւ թաղին մէջ:

Նորութիւն մը ըսած չեմ ըլլար՝ յիշելով, թէ 1880ական թուականներուն գրական վերելք մը սկսած էր թրքահայութեան մէջ: Ներսէս պատրիարքի օրով, Կեդրոնական վարժարանը բացուելէ ետք, Ազգային Միացեալ ընկերութիւնները կազմուած էին՝ հայկական գաւառներու մէջ դպրոցներ բանալով, կրթական գործին զարկ տալու համար: Անոնց կողքին կազմուեցան, գրեթէ միաժամանակ, երկու կանացի ընկերութիւններ, Դպրոցատէր Տիկնանց եւ Ազգանուէր Հայրմեացը, առաջինը՝ վարժուհիներ հասցնելու, երկրորդը՝ գաւառներուն մէջ աղջկանց դպրոցներ բանալու համար:

Իրենց բնոյթովն ու նպատակովը իրար ամբողջացնելու սահմանուած այս երկու ընկերութիւնները, փոխանակ հաշտ ու համերաշխ կերպով ընթանալու, առաջին օրէն դարձան մրցակից հակամարտ կազմակերպութիւններ: Պոլսոյ հայ իգական սեռին հագիւ մատի վրայ համբողջ զարգացած ներկայացուցիչները բաժնուեցան երկուքի, Ազգանուէրներն ու Դպրոցատէրներն, ճշմարիտ հակառակորդներ իրարու, որ առիթ չէին փախցներ, առնուազն խօսքի հարուածներով, իրար վարկաբեկելու:

Ինչո՞ւ: Վերագնահատումի փորձին ենթարկելով անցած-գացած օրերու այդ դրուագները, ուրիշ պատճառ չեմ գտներ, եթէ ոչ՝ մեր ցեղային յատկանշական թերութիւնը կազմող ընկերական ոգիի պակասը, զօրաւոր անհատականութեան մը դէմ: Ամէն մէկ հայ, առանձին, ընդունակ է լնուներ տեղափոխելու, մէկ քանիներ, իրարու եկած, անընդունակ կը դառնան որեւէ յաջողութեան, իմա՝ յառաջդիմութեան:

Երկու ընկերութիւններու մասին ճիշդ խօսած ատենա՝ ընկերային պակասին մասին արտայայտուիլ՝ անհասկնալի պիտի ըլլար թերեւս, եթէ չաւելցնէի, որ այդ երկու միութիւնները վերին հսկողութեանն ու վարչութեանը տակ էին երկու առաջին կին գրողներու՝ Սրբուհի Տիւսաբի եւ Սիւսիի, առաջինը արդէն իր վերջալոյսի հանգրուանին, մինչ երկրորդին աստղը կը սկսէր բարձրանալ հայ գրական երկնակամարին վրայ:

Սրբուհի Տիւսաբ հասանէր էր իր հովանաւորութիւնը տալ օրթագիւղցի օրիորդներու խմբակի մը, որոնք ժամանակակից, ծանօթ իրարու, դասակից եղած էին. Թագուհի Պաթազար, Նուրիկ Միտոնեան, Սաթենիկ Մալեգեան (յետոյ՝ Տիկ. Մօրեան), Արմաւենի Սահակեան (յետոյ՝ Տիկ. Մինասեան): Տիկին Սիւսի, այն ատեն դեռ Օր. Զապէլ Խանճեան, ինքն էր, որ նախածնունդը եղած էր Ազգանուէրին, եւ անմիջապէս երկու խումբերը արդէն դիրք բռնած էին իրարու դէմ: Մէկուն անդամակցողը՝ արդէն ոսոխ կը դառնար երկրորդին, իրարու հանդիպած ատեննին կը ստիպէին ինքզինքնին՝ չխօսելու իրենց պնդան գովելի գործերուն մասին, փոխադարձաբար վստահալով ընդհարումէ կարծես:

Մայրս Գարոցասէրներու անդամ արձանագրուած է առաջին օրէն: Իրարու յաջորդող երեխաներու ծնունդը պատճառ եղած է, որ տեսակա-նապէս չկարենայ իր գործօն աշխատակցութիւնը բերել այդ օրիորդներու գործին:

Արդէն 8-10 տարուան գոյութենէ մը ետքն է, որ հիմնադիրները կը խորհին իրենց վարժարանին զարկ տալ, թաղը փոխելով: Աւելի հայաշատ թաղ մը փոխադրուելով, աշակերտութիւններուն թիւն աւելցնելով, ձրիա-վարժներուն հետ, եթէ կարելի ըլլար, թոշակատր սաներ ալ ընդունելով:

Կէտիկ Փաշա եւ Գուժ-Գափու թաղերը իրարու կից են, ինչպէս Պուօնենն ու Պէլանքուրը, առաջինը՝ անելի բարձր եւ օդաւէտ, բնակա-վայր՝ բարեկեցիկ ընտանիքներու: Գուժ-Գափուն, հակառակ Ազգ. Պատ-րիարքարանը եւ Մայր եկեղեցին պարսիակելուն՝ իր ծոցին մէջ, հոծ հա-յութիւն մը ունէր՝ արհեստատրներէ եւ ձկնորսներէ բաղկացած: Վարժուհի հասցնող վարժարանի մը գոյութիւնը այդ թաղին մէջ՝ օրհնութիւն մը կըր-նար ըլլալ այն բոլոր հայուհիներուն, որոնք աշխատելու հարկադրուած ա-տենին կա՛մ տիւալ (ոսկեթել ասեղնագործութիւն) պէտք է բանէին, կա՛մ տունները երթալով՝ սպասուհի ըլլային:

Հայրս իր սգաւորի պատենանէն դուրս եկաւ, այդ անգամ իր հեղի-նակաւոր թաղեցիի ձայնը աւելցնելու Գուժ-Գափուի ի նպաստ, վիճաբա-նութիւններու նժարին մէջ: Կը յիշեմ, կարծեմ, թէ՛ «ձերեռէի Շարգիէ»ի հպատատ-թրքերէն թերթին մէջ, որ հայերէն էջ մըն ալ ունէր (համեմա-

տել «Այսօր»ին ֆրանսերէն էջին եւ Ամերիկայի հայ-անգլ. թերթերուն հետ), բաց նամակ մը հրատարակեց, խոստանալով իր երկու աղջիկները Դպրոցասէր դրկել, եւ հրաւիրելով իր թաղեցի բարեկամները՝ նոյնը ընելու:

Դպրոցը բացուեցաւ: Ատրիճէ քոյրս ու եւ հոն դրկուեցանք: 9 եւ 8 տարեկան էինք: Առաջին տարուան ընթացքը բոլորուելուն՝ որոշուեցաւ մեր ճամբորդութիւնը դէպի արեւելք, դէպի Դամասկոս:

Հոն անցուած տարուան ընթացքին՝ իրաւ է, որ Dome de sionի մայրապետներուն մօտ գացինք, նորէն իրաւ է, որ տեղացի արարներուն տարազը հագած Յակոբ վարդապետ մը կու գար շաբաթը երկու անգամ հայերէնի եւ *Նամակազրուիլեան* դասեր տալու մեզի, սակայն մենք ինքզինքնիս յետամնաց կը նկատէինք՝ մեր ընկերութիւններուն մօտ, եւ չէինք ուզեր Դպրոցասէր վերադառնալ: Մինչեւ որ տնօրէնութի Օր. Արմաեհի Սահակեանը, գիտակից իր պաշտօնին, եկաւ պցելութիւն մը տալու մօրս, լսեց մեր բաղձանքները եւ խոստացաւ մեզ դնել համապատասխան դասարանը, մեր նախկին դասակիցներուն հետ. «Ես վստահութիւն ունիմ իմ աղջիկներուն վրայ, — ըսաւ ան, — վստահ եմ, որ Ատրիճէն ու Ջարուհին շուտով կը հասնին իրենց ընկերութիւններուն»:

Ամբողջ տարեշրջանէ մը զատ, երկրորդին ալ առաջին եռամսեան անցած էր, ուրեմն Ծնունդէն ետքը դպրոց գացինք: Եռամսեայ քննութիւնը րած էին եւ արդիւնքին կը սպասէին:

Հակառակ ատոր, յաջորդ եռամսեային կը իվէի առաջնութիւնը, զոր պահեցի չորս-հինգ տարի ամբողջ, մինչեւ ասարտելս, թէեւ տարիքով ամենէն պզտիկն էի դասարանին: Քոյրս՝ Ատրիճէն, երբեմն ինքն ալ առաջին, ընդհանրապէս՝ երկրորդ կ'ըլլար: Ա՛յնքան՝ որ անգամ մը Թորայեան Յովհաննէս Էֆենտի, պետական բարձր պաշտօնատար, կրթասէր ազնիւ հայը, դպրոցին խնամակալ եւ հօրս բարեկամ, իրիկուն մը այցելեց մեզի եւ կատակելով, ըսաւ հօրս. «Վարժարանին աշակերտութեան կողմէ բողոքելու կու գամ, պատուոյ տախտակին վրայ բոլոր տեղերը բռնուած են ձեր աղջիկներուն կողմէ, միւսներուն տեղ չկայ»:

Վարժարանին կազմակերպութիւնը, կրթական թէ վարչական տեսակէտով, գմայլելի էր: Անկէ ի վեր անցնող կէս դարու շրջանին զաւակներուն եւ թոռնիկներուն պատճառով գործ ունեցայ երոպական մեծագոյն ազգերու լաւագոյն վարժարաններուն հետ եւ հաճոյքով հաստատելու առիթ ունեցայ, որ մեր այն ատենուան վարիչները յաջողած էին հետեւիլ ժամանակին լաւագոյն դրութիւններուն: Տնօրէնութի Օր. Սահակեանը իսկական իմաստով կը տնօրինէր, հեղինակութիւն մը ունէր սանտիֆիկներուն վրայ, որ յետագարձ քննական ակնարկով մը նոյնքան սիրելի կը դարձնէր իր անձը ինծի, որքան առաջին օրերը: Ոչ մէկ խտրութիւն թոշակատր թէ ձրիավարժ աշակերտներու միջեւ, եթէ խտրութիւն մը ըլլար, անիկա միշտ ձրիավարժին ի նպաստ կ'ըլլար, որովհետեւ անոնք էին ապագայ վարժութիւնները՝ վարժարանին գոյութեան նպատակակէտերը:

Խնամակալութիւնները կը հասարակէին շաբաթը մէկ անգամ, Երեք-

շարքի օրերը: Յնծութեան օրեր էին անոնք ինծի համար, որովհետև իրենց ամէն մէկուն առանձին գորգորանքին առարկան էի:

Ուսուցչական մատչելի կազմ մը ունէի, որ սակայն յաճախ կը փոխուէին: Աշակերտած եմ յաջորդաբար Միհրան Ասքանազի, Միհրան Յովհաննէսեանի, Գրիգոր Մարգարեանի, բայց անոնք, որ իրենց հզօր շունչին ներգոր ազդեցութիւնն ունեցած են, եղած են Յակոբ Գորգէն, Յ. Թ. Հինդլեան, Նշան Սիմոնեան, Գարեգին Գալաֆեան, պատուական, սիրելի ուսուցիչներս: Ի՞նչ խնկելի յիշատակ պահած եմ իրենցմէ, իրենց սահմանափակ պատրաստութեան հակառակ՝ ի՞նչ կարողութիւններ ձեռք բերած էին իրենց մասնագիտութիւններուն քով: Եւ իրենց վարուելակերպը, մեզմէ, սանուրիներու իրաքանչիւրին հետ ծածկել ջանալով իրենց ներդրութիւնը՝ շարունակական ձախողներուն հանդէպ, եւ իրենց համակրութիւնը՝ յաջողակներուն եւ ընդունակներուն համար:

Կը յիշեմ, թուարանութեան դասերուն, երբեմն *theorem* մը բացատրութեան պահուն, երբ կ'ըսէի Գալաֆեանին, որ չէի հասկցած, կը վերսկսէր բացատրելու: Երկու վայրկեան ետքը՝ հասկցած էի, կը խընդրէի, որ չշարունակէր: Քանի՞—քանի՞ անգամներ պատասխանած է ինծի. «Ջարտիհ, եթէ դուն մէկ կէտ մը չհասկցար, միւսները բնաւ չեն հասկըցած: Ջգէ, որ բացատրեմ անոնց համար»:

Այսքան յաջողութիւն, իմա՛ գնահատութիւն դպրոցին մէջ, գոհ չէր ձգէր մայրս, որ յաճախ կ'ըսէր. «Պատուական զաւակս կը շփացնեն, կ'արեւն կոր նկարագիրը»: Իրա՛ւ կ'արուէի: Չեմ կարծեր, որովհետև ընկերութիւններս հոգի կու տային ինծի, ու ո՛չ միայն դասակիցներս, այլեւ՝ յաջորդաբար բոլոր պզտիկ դասարաններու աշակերտութիւնները:

Նախանձը ծայր տուաւ մեծերէն:

Արդարեւ, կեանքիս առաջին խաբկանքը եկաւ վերջին, աւարտական դասարանէն, Ակիւլինէ Ելչալեանէն (հիմա Տիկ. Մորատ Պօյաճեան): Հինգշաբթի օրերը Հինդլեանը այդ տարին ամբողջ օրը դպրոցը կը մնար, յաջորդական մեծ ու պզտիկ դասարաններուն գիտութեան ու ֆրանսերէնի դասեր աւանդելով: Յետմիջօրէի առաջին պահը՝ մեր փոքրագոյն դասարանի գիտութեան ժամն էր: Օր. Ելչալեան եկաւ զիս գտաւ զքօսանքի պահուն եւ խնդրեց, որ դասի ատեն հարցնեմ, թէ *զէվզէվին* ֆրանսերէնը ի՞նչ է: «Քիթին պիտի խնդանք, գիտե՛ս», ըսաւ ինծի չարանճին: Այդ դասարանի մեծերուն *օրհորդ* կ'ըսէինք, որովհետև մեզի՝ պզտիկներուս, զանազան դասեր կու տային, իրենց ապագայ կոչումին պատրաստուելու համար: «Յաջորդ ժամուն ալ միւս դասարանէն աղջիկ մը պիտի հարցընէ, վերջին ժամուն ալ՝ ես», յարեց միշտ չարանճի:

Մեծերու կողմէ սարքուած խաղին մասնակցելու այս պատիւին հրապիրտած ըլլալու միշտ հպարտ, դասարան մտնելէս հազիւ պահ մը ետքը մատս վեր կ'առնեմ խօսք ուզելու հասկցնելու համար, եւ կը հարցնեմ. «Միւսի, զէվզէվ բառին ֆանսերէնը ի՞նչ է»: Չհասկցայ, թէ ինչո՞ւ մինչեւ ճակատը կաս-կարմիր եղաւ Հինդլեան, ինծի պատասխանելու համար: «*Petit maître*» է, ըսաւ ու յարեց. «Այդ հարցումը քեզմէ չէի սպասեր,

Ջարուհի»։ Կարմրելու, շիկնելու, խոտվելու կարգը իմս էր։ Այդչափով վերջացաւ սակայն։ Ա՛լ մինչեւ ժամուն վերջը ակնարկութիւն չեղաւ։ Չհասկըցայ (մինչեւ հիմա ալ չեմ հասկցած), թէ այդ միջադէպը նախընթաց մը ունեցա՞ծ էր։ Կարճ դադարի ատեն միայն վազեցի Ակիւլիճէին մօտ, յաղթական, աւետելու իրեն քաջագործութիւնս։ Ծատ զո՞հ մնաց, մա՛նաւանդ՝ երբ հաղորդեցի Հինդլեանին նեղացած ըլլալը։ «Էյ, հիմա այս ժամուն դո՞ւն պիտի հարցնես» ըսի միամիտ։ «Բնաւ,— ըսաւ՝ քահ-քահ խնդալով,— ա՛լ պիտի չհարցուի։ Քեզի խաղի բերելու համար ըրի»,— աւելցուց, զիս՝ խեղճ փոքրիկս, ափ ի բերան ձգելով։

Առաջին դասս աներ էի։ Անկէ ետքը տարիներով, կեանք մը ամբողջ, կասկածամիտ եղայ իրեն հանդէպ։ Ու օր մը, մետասաներորդ ժամուն կեանքիս, աղէկ ընել կարծելով, անգամ մը ես զո՞հ գացի իր սաղարանքներուն։

Իրենց աւարտած տարին հրաժարեցաւ Օր. Ա. Սահակեան վարժարանին տնօրէնութենէն, չեմ գիտեր ի՞նչ պատճառով, քանի որ ինքը վարժարանին հիմնադիրներէն մէկն էր, ու անմիջապէս ալ Ջմիւռնիա գընաց, Հոփսիսիմեան վարժարանին տնօրէնութեան։ Իրեն յաջորդ նշանակեցաւ Օր. Մելիքեանի ընկերութիւններէն Օր. Ջապէլ Երամեան յաջողակ աշակերտութիւն։ Պէտք է ըսել, որ այդ դասարանին օրհորդները բաւական հասուն էին տարիքով, խնամակալական այդ որոշումը արդարացնելու համար։ Միայն թէ՛ Ջապէլ Երամեան իր դասարանին առաջինը եղած եւ գովեստներ ստանալու վարժուած, չէր հանդուրժեր, որ ուսուցչական կարգը գնահատանքի արտայայտութիւններ ընէր մնացեալ աշակերտութիւններուն։ Առաջնութեան պատիւը իրեն վերապահուած իրաւունք մը կը նկատէր, եւ նախանձ, չար, անիրաւ կ'ըլլար բոլոր անոնց համար, որ իրենց կարգին իր դիրքը կը գրաւէին։ Երկար կ'ըլլար թուել պատեղ այն բոլոր նեղութիւններն ու տառապանքը, որ պարտադրեց այդ նորարոյս տնօրէնութիւն՝ այս տողերը գրողին, մինչեւ որ շրջանաւարտ եղաւ ան։

*
* *

Այդ 1893-94-95 տարիներուն ազգային կեանքը հետզհետէ մտայն կերպարանք մը կը ստանար։ Օրաթերթ «Հայրենիք»ը, Յովհաննէս Ծախնազարի խմբագրապետութեամբ եւ օրուան լաւագոյն ու նորագոյն գրողներուն աշխատակցութեամբ, ամենափայլուն շրջանը կը բոլորէր հայ լեռնագրութեան։ Աշխարհաբարը կոկոնելու, յղկուելու, նրբանալու վրայ էր՝ Արփիարեանի, Ջօհրապի, Սիպիլի, Հրանտ Ասատուրի պէս գրողներու գրչին տակ։ Հակառակ ամէն օր խատացող գրաքննութեան, տակաւին ազգային զգացումը կը ջանար արտայայտուիլ ամէն կարելի ձեւերով։ Անվերհատ կարդացող, ո՛չ միայն ժամանակ կը գտնէի դասերէս դուրս լափելու Վիքթոր Հիւկոյի եւ Ալեքսանդր Տիւմայի մա՛նաւանդ պատմական վէպերը, այլեւ ամէն առաւօտ, նախաճաշիս հետ հասնող «Հայրենիք»ը

կարդալէ ետքը միայն կ'երթայի վարժարան: Եւ արդէն թերթը բերող պատանին կէտիկ Փաշան բնորոշող գաղիվայրէն վազքով իջած ատեն, ծրարը թելին տակ, ամբողջ հոգիով կ'աղաղակէր. «Հայրենի՞ք... Հայրենիքէն թարս լուրեր կը բերեմ...»: Կարելի՞ էր դիմանալ այդ կոչին, հոգ չէ թէ ոչ մէկ հայրենական լուր պարունակէր թերթը: Դուռ, պատուհան կը բացուէին՝ ձեռքէ ձեռք խլուելու համար օրուան լուրերը:

Իզմիրեան Ս. պատրիարք էր, եւ թուրք կառավարութեան աչքին կասկածելի: Հայոց պատմութեան դասագիրքերը կը գործածէինք զաղտագողի: Մէկ քանի շաբաթն անգամ մը ոստիկանական քննիչ մը կու գար վարժարան: Տնօրէնուհին կը յաջողէր սիկարէթով մը կամ սուրճով՝ քանի մը վայրկեան զբաղեցնել զայն իր գրասենեակին մէջ: Ու կայծակի արագութիւնով դասագիրքերը կը փախցնէինք վար, մկուղի ածխանոցին մէջ, ուր մասնաւոր թաքստոց պատրաստուած էր անոնց համար:

*

* *

1894ին վերջըներ տարուան քննութեան օրերուն էր, որ պատահեցաւ՝ դարերու ընթացքին շտեմուած աղէտը, — Դոլտոյ մեծ երկրաշարժը:

Ֆրանսերէնի քննութիւն կ'անցընէինք միանգամայն Հինդլեանի եւ Ն. Սիմոնեանի: Ցաջողութեամբ ատարած, քննիչներուն շնորհաւորութիւնները ընդունելով, տեղս դառնալու վրայ էի, երբ ատաջին ցնցումը զգացուեցաւ: Հազիւ 1-2 երկվայրկեան տեւող այդ ցնցումին արաստիւն ազատած, նոր եւ անլի ուժգին ցունց մը մեզ ամէնքս ոտքի հանեց: Բընագղական ի՞նչ զգացում էր, որ երկրաշարժի մը վտանգներուն գիտակցութիւնը չունեցող, չպատրաստուած այդ աղջիկները, որ էինք, մղեց մեզ ձեռք ձեռքի փախչիլ խուճապահար: Ծէնքը կը ցնցուէր անհաստանի կերպով: Երկրագունդի կեդրոնին մէջ հասարած սաղայելական ուժեր, կարծես, հսկայ մարի մը մէջ լեցուցած, կը մաղէին աշխարհի իր բոլոր շէնքերով, իր բոլոր բնակչութիւնով: Չէինք հասկնար, անկարելի էր հասկնալ, թէ սանդուխներէ՞ն կ'իջնէինք, թէ կը նետուէինք վար: Փողոցը, երկու վայրկեան դադարէ ետք՝ նոր ցնցում: Այս անգամ հողն էր, որ կը շարժէր մեր ոտքերուն տակ, հաստատուն գետինը, որուն վրայ մարդիկ վարժուած են ապահով մկատել իրենք զիրենք: Աշխարհի փուլը՝ մեզ էր արդեօք, արեւին խաւարո՞ւմը, դժոխքին սանդարամետները, երկրագունդին դէկը ձեռք ատած, կը սարսէին զայն ուժգին...

Դրացի տուններէն դուրս թափող ժողովուրդին հետ աշակերտութիւն, քննիչ, ուսուցչութիւն, տնօրէնութիւն, պաշտօնէութիւն, ամէն մարդ խելակորոյս կը վազէր, անխորհուրդ, սակայն բնագոյարար լայնեզր միջոց փնտռելով, ուր գոնէ ապահով ըլլար, թէ քանդուող տուններու փլատակներուն տակ մնալու վտանգէն զերծ պիտի ըլլային:

Այդպէս էր, որ հազարաւոր ժողովուրդի խուճերամ բազմութիւն մը հասաւ Մարմարայի եզերքը, Ընմեն Մէլտանը ըսուած հրապարակը, ուր

մեր մանկության տարիներուն կ'երթայինք մեր տատաներուն հետ՝ անվերջ ամէն գարնան գնում գառնուկը արածելու, գառնուկ, որ մեր խանդադատանքին առարկայ ըլլալէ ետքը երեք ամիս շարունակ, կ'երթար իր կեանքը վերջացնել Ազգային Ռիանդանոցին իբր նուէր:

Յնցումները պահ մը դադրած էին: Հեռուներէն եկողներ կամաց-կամաց վերադարձի վրայ կը խորհէին: Շրջիկ վաճառորդներ, չես գիտեր ուրկէ յայտնուած, ինչպէս ամէն նմանօրինակ պարագայի, ուտեստեղէն կը ծախէին՝ ցերեկուան տարին՝ անօթութենէ եւ ծարաւ տառապող այդ քաղմութեան:

Աշակերտութեան ծնողները ինչպէ՞ս, ի՞նչ միջոցներով հասան, եկան, իրենց աղջնակներուն տէր դառնալու: Արդէն խորհրդակցութիւններ կ'ունենային իրիկուան ու գիշերուան համար ձեռք առնուելիք միջոցներուն վրայ, երբ երկու-երեք նոր ցնցումներ՝ զգաստութեան հրաւիրեցին զիրենք: Չէ, կարելի չէր այդ պայմաններուն մէջ գիշերել տունը, քարուկիր գեղեցիկ այն շէնքերուն մէջ, որոնք սակայն այն ատեն ետոտով շինուած չըլլալուն, անկարող էին դիմադրելու երկրաշարժի այդ զօրատր ցնցումներուն:

Ուրեմն, որոշուեցաւ այդ գիշերը բացօթեայ անցընել այդ արօտա-վայրիին վրայ: Տղոց համար, անշուշտ, խանդավառ երեկոյ մը եղաւ աստիկա: Մեծերը կը հսկէին: Գիշերուան ընթացքին մէկ քանի պարբերական ցնցումներ՝ վտանգին հետացած չըլլալը կը յիշեցնէին: Գիտակիցներ, լաւատեսներ, կ'ապահովեցնէին, որ երկրաշարժը իր ուժգնութիւնը կորսցուցած էր, ցերեկուան առաջին բուն ցնցումներէն ետքը, որ Պոլսոյ Մեծ Շուկան եւ յարակից խաները, կարգ մը մզկիթներ, եւայլն քարոքանդ ըրած էր:

Թէն յաջորդ օրը պիտի տեսնուէր, թէ այդ լաւատես գուշակութիւնները արդարացի պիտի ըլլային, այնուամենայնիւ՝ որոշուեցաւ Մաքրիգիւղ, փայտաշէն պանդոկ մը երթալ, անցընել արձակուրդի երկու ամիսները, վտանգէ գերծ կարենալ ապրելու համար:

Այդպէս վերջացաւ կեանքիս գարնան այդ մէկ սարսափեցնող դըր-ւագը, որ Բիզանդիոնի հին եւ նոր տարագրութիւններուն մէջ կարեւոր տեղ մը պիտի բռնէր, եւ որ՝ հին շուկային կործանելովը՝ Իսթանպուլի առևտուրը մութ կամարներէն դուրս հանելով, պիտի փոխադրէր Սիրբէճի, նորակառոյց վաճառատուներու եւ խաներու մէջ (building), եւրոպական առևտուրի գոյն տալով անոր:

*
* *

Այդ 1894 տարին՝ մեր ազգային կեանքի պատմութեան մէջ եղբրական շրջանի մը սկզբնաւորութիւնը պիտի ըլլար: Սասունի ջարդը, դարձ-ցական վերամուտին, արդէն հոգիները խաւարել կու տար: Տակաւին «Հալլենիք»ը գոցուած չէր, քայց արդէն անոր աշխատակիցներուն զմայ-

լելի հոյլը տրոհել կը սկսէր, կամաց-կամաց կը ցողներուն հետեւանայ, արտասահման անցնելովը: Կաղանդի մօտ, պատրիարքական շրջափերականով, թաղերուն մէջ օգնութեան մարմիններ կազմուեցան, դրամ, հանդերձեղէն, եւայլն հաւաքելով՝ յանձնելու համար գաւառի աղէտահար ժողովուրդին: Որովհետեւ Սասունի ջարդին յաջորդէր էին նաեւ մասնակի խրոտվութիւններ ու սպանդներ՝ քիչ մը ամէն կողմ, բայց եւ՝ մա՛նասնդ՝ Ջէլթունի մէջ:

Մեր թաղին մէջ, Կէտիկ Փաշա, ուր բարեկեցիկ հայութիւն մը կար, մայրս՝ Նոյեմի՝ Ն. Ծահպագ, ատենապետութի ընտրուեցաւ, ատենադպիր ունենալով Օր. Զապէլ Վարդանեան, բողոքական, բժիշկ Վարդանեանի աղջիկը (հետագային Ամերիկա հաստատուած Տիկին Նահիկեան): Գանձապետութի ընտրուած էր, եթէ չիշողութիւնս զիս չի խաբէր, Տիկին Կիւպէնկեան մը: Այդ յանձնախումբը ամբողջ Դեկտեմբեր ամիսը օրինակելի գործունէութիւն մը ունեցաւ, տունէ տուն, դունէ դուն պտտելով եւ հաւաքելով ճերմակեղէն, զգեստեղէն, կօշիկ եւ հանգանակելով կարելոր գումար, հայ կնոջ այն զմայլելի իրերօգնութեան ոգիով, որ կը յայտնուէր այն ատեն ալ, ինչպէս հիմա, անմիջապէս որ պէտքը ներկայանայ: Կաղանդին ամէն մարդ համաձայն եղաւ տօնածառ չիմել, տղայոց նուէր չտալ, պըզտիկներն ալ վարժեցնելու համար իրերօգնութեան գաղափարին, այլ բացառիկ նուիրահաւաքութիւն մը ընել՝ *փոխան Կաղանդի Նուէրի* անունով:

Միաձայն համերաշխութեամբ յայտարարուած այս ձեռնարկն ալ մեծ յաջողութիւն ունեցաւ եւ արժանացաւ Իզմիրեան Ս. պատրիարքին մասնաւոր գնահատութեան:

Կը ցաւիմ, որ չեմ յիշեր, թէ այդ առթիւ դիմումա՞ծ է հօրեղբօս, իրմէն ալ ստացումա՞ծ է կարելոր գումար մը՝ գաւառի մեր կարօտեալ եղբայրներուն օգնութեան համար: Չեմ կարծեր: Թերեւս անոր համար, որ անոր դիրքը միշտ երկդիմի մնացած էր, կը խորհիմ՝ մեր տունին համար, հակառակ անոր, որ ինքը՝ պետական խորհուրդի, թէ՛ դատական բարձր խորհուրդի մէջ, ուր կ'ուզեն եղեր յանցանքի վրայ բռնուած երեք հայեր մահուան դատապարտել՝ սպաննուած մէկ թուրքի փոխարէն, ոճրադատ օրէնքի տրամադրութիւններէն փաստեր բերելով, ապացուցած էր, որ մէկ սպաննուածի դէմ կարելի չէ երեք հոգի մահուան դատապարտել: Իր փաստերը ջախջախիչ եղած են, վճիռը՝ ի նպաստ հայերուն եղած է, սակայն իր պաշտօնակից թղոր այդ թուրք դատաւորները Ալի Ծահպագի այդ արարքին մէջ գտած են ապացոյց մը, որ անիկա հակառակ իր դատաւարութեան, մնացած է իսկական հայ, այսինքն՝ կեանքով: Եւ այն օրէն սկսած՝ անոր պաշտօնը փոխուած է, եւ Եղեռնադատ Ատենան էն փոխադրուած Առեւտրական Ատենան:

1895ի ամառը կ'աւարտուէինք, Ատրիճէ քոյրս ու ես, Դպրոցասէր Տիկնանց վարժարանը: Մեր ջանքերն այնքան գնահատուած էին վարժարանին ինքնակալութենէն եւ ուսուցչութենէն, որ ամէնքը համաձայն ե-

դան, որ պէտք էր ամէն գնով Եւրոպա երթայինք երկուքս ալ՝ բարձրագոյն ուսման հետեւելու: Կարծեմ ըսած եմ ուրիշ տեղ, որ իմ միտքն աւելի գիտական, կը ձգտէր մա՛նսանդ բժշկութեան, որ, այն ատենի իմ ըմբռնումովս, ամէնէն գործնական ձեւն էր՝ գիտական իմ ծանօթութիւններս օգտագործելու: Biochimieի աշխատանոցներու մէջ rechercheներ ընել կամ ընողներուն օգնել, իմ հասողութենէս դուրս գործեր էին, եթէ նոյնիսկ արդէն գոյութիւն ունէին: Գիտութեան ուսուցիչս՝ Յ. Թ. Հինդլեան, ուժ կու տար իմ բաղձանքիս: Աւելցնեմ, որ բնականէն յարմարութիւն ունէի Ռիւանդ խնամելու, տառապողներով հետաքրքրուելու, բաներ, որոնք կը կարծեմ, որ կրնային օգնել ինծի արժանատի բժիշկ մը ըլլալու: Նոյն թուականին «Հայրենիք» օրաթերթը նուիրաբաժնուած սիւնակ մը բացած էր, մէկ-երկու հայ օրիորդներ՝ Նանսի դրկելով՝ մանկավարժութիւն ուսուցանել տալու: Վարժարանին խնամակալութիւնը պաշտօնապէս դիմեց Ռոբըս, առաջարկելով, որ Ատրիեն քոյրս ու ես, մէկը խնամակալութեան ծախքով, միւսը՝ «Հայրենիք» թերթին միջոցով Եւրոպա դրկուէինք: Գիտեմ, թէ այդ պարագային հօրեղբօս կարծիքը առնուեցաւ: Ընտանեկան ժողով մը գումարուեցաւ, որուն մէջ Փարիզ ուսած այդ հօրեղբայրս, Պերպէրեան եւ Քաղաքային բարձրագոյն վարժարաններ ասարտած երեց եղբայրս՝ Լեւոնը եւ հայրս, ամէնքն ալ համաձայն գտնուած էին, որ *Ֆէմի-Նիզմը* մէկ քանի կասկածելի բարքերով սնած կիներու գործ է, որ աղջիկ մը ամուսնանալու եւ զաւակներ ունենալու սահմանուած է, իմաստ չունէր, որ բարձրագոյն ուսման հետեւէր:

Մանկավարժութիւնը, ո՛չ մանկատնօթիւնը, զոր շատ սիրած եմ, ինչպէս բոլոր տղաքը, զոր չեմ դատրիր սիրելէ, զիս չէր խանդավառեր: Ու ինծի միշտ թուացած է, որ կրնայի իրապէս նուիրուած բժիշկ մը ըլլալ, թէն ինծի հակառակ խօսողներուն մէջ տարակուսողներ եղած ըլլան: Եւրիտասարդներ, իմ այդ փասիաքս իմանալով, կը կատակէին, աւելի ճիշդ՝ կը հեզնէին զիս, ըսելով, թէ՛ եթէ ես բժիշկ ըլլայի, իրենք ալ ամէն օր Ռիւանդ կ'ըլլային, իմ խնամքս ստանալու համար, կատակներ, զորս շատ հաճոյքով չէի լսեր: Ատրիանոս կայսեր յուշերուն մէջ, զորս վերջերս կարդացի, ըսուած է. *«Տիրիչներէն առաջ իրաւունք ունենալը՝ անիրաւ ըլլալու հաւասար է»*: Կ'երեւի թէ իմ այդ մտածումովս, այսինքն՝ բժիշկ ըլլալու բաղձանքովս, ժամանակակիցներս կանխած եմ, որ այնքան անհեթեթ գտած են իմ այդ բաղձանքս: Անկէ ետքը ասորած տարիներուս ընթացքին քանի՞-քանի՞ կին բժիշկներու հանդիպած եմ, որոնք իրենց բացատրիկ կարողութիւններով ուշագրաւ եղած են եւ տեղ մը բռնած գիտական աշխարհին մէջ: Առանց խօսքը ընելու Տիկին Մարի Քիրիին, որ բժիշկ չէ եղած, այլ՝ աշխարհաճոյնակ գիտուն, ճանչցած եմ Ռումանիա Տիկին Տոքթոր Թրանքու-Ռայները, հայազգի եւ Պուքրէշի բժշկական համալսարանի ռէքթօրին հետ ամուսնացած, որ Ռումանիոյ Մարի թագուհին անձնական բժիշկը եղած է եւ ամբողջ հատորներ գրած է բժշկութեան ու վիրաբուժութեան մասին: Հոս, Ֆրանսայի մէջ դերասան Մաքսուտեանի կինը, զոր չեմ ճանչցած, շատ կարող բժշկուհի մըն է, կ'ը-

սեն, եւ դեռ նոր-նոր ինծի կը հասաստէին, որ Փարիզի ամենէն կարող ակնաբոյժը կին սըն է:

Անշուշտ անարժաններուն հետ ոչ-արժանաւորներն ալ կան, սակայն մի՞թէ բոլոր այր բժիշկները հասաստապէս կարող են: Առանց կարեւորագոյններէն ըլլալու յատկանշեան, որչափ ալ անցեալին պատկանի, չեն կրնար արգելիլ ինքզինքս խորհել, թէ *J'ai rêvé ma carrière*: Եւ այս համոզումս այնքան զօրաւոր է, որ երբեք նոյն կամ պակաս ուժգնութեամբ չեմ խորհած ուրիշ որեւէ ասպարէզի մասին: Օրինակ, երբ վերջերս Արգէնու (այսինքն՝ Ենուք Արմէն) «Այսօր»-ի մէջ իր երգիծական մէկ էջին մէջ գրած էր, թէ ֆրանսահայ երիտասարդները, իր մէկ հարցումին պատասխանելով, ըսած էին, որ Զարուհի Պահրի *vedette de cinéma* էր, խնդացի այնքան կուշտ ու կուտ, որքան խնդացած չէի՝ գաւալս կորսնցընել ի վեր:

Այդ 1895 տարին Իզմիրեան Ա. պատրիարքի փոթորկալից պատրիարքութեան վերջին տարին պիտի ըլլար: Դեռ վարժարանը եղած ատեննիս արդէն, հակառակ գրաքննութեան խստութեանը, ըսած եմ, որ պատմութեան դասագիրքերը ձեռքէ ձեռք կ'անցընէինք եւ ածխանոցին մէջ կը պահէինք, երբ անախորժ այցելութիւն մը ընդունէր հաստատութիւնը: Ազգային տօնի, օրինակ՝ Վարդանանցի օրեր, երբ հանդիսատար պատարագ կ'ըլլար Մայր եկեղեցիին մէջ, «Կեցցէ Հայաստան» աղաղակներ օղը կը թնդացնէին այնքան, որ անոնց արձագանգը կը հասնէր մեզի, մինչեւ վարժարան, որ սակայն մէկ-երկու փողոց անդին էր Ազգային Պատրիարքարանէն ու Մայր եկեղեցիէն: Ինչո՞ւ մեր ազգային իշխանութիւնները կը թոյլատրէին այդ անխոհեմ քայլերը: Թերեւս անո՞ր համար, որ բոլոր կուսակցութիւնները համաձայն էին, որ պէտք էր արթնցնել պոլսաբանութիւնը իր քնացող թմբիւրէն, պէտք էր ստեղծել այն հոգեկան վիճակը, որ կը դարձնէ ժողովուրդներուն մէջ յեղափոխական շարժումը: Եւ ինչո՞ւ թուրքը կը թոյլատրէր այդ բոլորը: Արդեօ՞ք անոր համար, որ, ինչպէս կ'ըսէ իրենց առածը, *Թուրքը սայլով կ'որսայ նապաստակը*, այսինքն՝ խմբովին կը բռնէ, ոչ թէ՛ հատ-հատ:

Իրաւ, նրբամիտ թուրքը սպասեց այնքան ատեն, մինչեւ որ կարգը եկած նկատեց միջամտելու:

Եւ այդ առիթը տուին նորէն հայերը, երբ 1895 Սեպտեմբերին Խաչի տօնին Երկուշաբթի օրը ծայր տուտ Պոլսոյ ազատագրական շարժումին առաջին ցոյցը, առաջին դէպքը, ինչպէս կ'ըսէին այն ատեն: Խումբ մը հայ յեղափոխական երիտասարդներ, դիրք բռնած Բարձրագոյն Դուռ (Պապը Այի) տանող պողոտային վրայ, կը սպասէն Մեծ Եպարքոսին (*président du conseil*) կառքին հասնելուն, անկէ խնդրելու համար, որ իրագործուին Արեւելեան գաւառներու բարեկարգութեան համար ծրագրուած որոշումները: Անմիջապէս ոստիկանական նախարարութեան լուր կը տրուի եւ ջոկատ մը ոստիկաններ կը հասնին՝ ի հարկին գէնքի ուժով ցրուելու ցուցարարները: Ձերբակալուողները, անշուշտ, կը բանտարկուին: Խուսափողները, ստուար մեծամասնութիւն, կը յաջողին, դէպի ծովեզր

տանող զանիվայրէն իջնելով, հասնի Ազգային Պատրիարքարան ու Մայր եկեղեցի, ուր, հաւանաբար, կանխա եղած կարգադրութեան համաձայն, դիրք կը բռնեն, Տաճարին արտաքին դռները ամրապէս փակել տալէ ետքը: Այս մասին գրած էմ «Փէրրզ պէյ», վէպիս առաջին գլուխին մէջ, ուր դիմել կարելի է, առանց որ հոս կրկնեմ («Տաճարն Փէրրզ պէյ», վէպ, Զ. Պահրի, Փարիզ):

Թէեւ հայրս, հակառակ քաշուած ապրելուն, գաղտնաբար կը ստանար ու կը կարդար եւ կ'արտօնէր, որ մենք ալ կարդայինք հնչակ, Մ. Չեքրազի «Արմենիա»ն, զոր կը բերէր իրեն, չեմ գիտեր որու կողմէն, դպրոցական տղայ մը, հազիւ 12-13 տարեկան, ինձամբով պահելով այդ թերթերը կօշիկներուն ներքաններուն վրայ (այս մասին գրած էմ «Ամպրոպ»իս մէջ), սակայն ոչ մէկ տեղեկութիւն ունէր այդ օրուան կատարուելիք այդ ցոյցին մասին, եւ երբ իրիկունը արդէն իմացուեցաւ թաղին մէջ, իբրեւ յաղթական քաջագործութիւն մը, որմէ մեծ արդիւնք կը սպասէր հայ Ազատագրութեան դասը, պզտիկ յուսախաբութիւն մը ունեցաւ հայրս այդ յանդուգն միջոցին հետեւանքներուն մասին խորհելով, իբր լուրջ եւ հետաւտես աճն:

Իրաւ է, որ աւելի առաջ, 1860ական թուականներուն, կարծեմ Սուլթան Մէճիտի օրով, Փարիզէն ուսանելէ վերադարձած հայ երիտասարդութիւն մը, Օտեան, Ռուսիներան, հօրեղբայրս՝ Կարապետ Շահպազ, այդ միեւնոյն բանը ըրած էն, Մեծ Եպարքոսին կտօքին ձիերուն երասանակները բռնելով՝ խնդրել- կ'ուզէք պահանջեալ, Մեծ Եպարքոսէն, որ տրուի, վերջապէս, հայ ժողովուրդին խստացուած Ազգային Սահմանադրութիւնը, եւ այդ քաջարի երիտասարդները անպատիժ մնացած էին, սակայն անկէ մինչեւ 1895 թ. պայմանները փոխուած, Սուլթան Մէճիտի պէս լուսամիտ եւ Սուլթան Ազիզի պէս բարի կայսրերու յաջորդած էր նենգամիտ բռնակալի մը բոլոր նախանշաններով օժտուած Սուլթան Համիտ մը: Պալքանեան նորակազմ պետութիւններուն հետզհետէ աւելցող յաւակնութիւնները աչքը բացած էին չարակամ այդ վեհապետին, եւ երոպական դիւանագիտութեան իրարու ներհակ ուղղութիւնները օգտագործելու փափաքն ու կարելիութիւնը տեսած անոր մէջ, մա՛նաւանդ Պերլինի չարաղէտ դաշնագիրէն ետքը (այդ մասին ալ խօսած էմ «Տագրը»իս մէջ):

Որեմն, Պապը Ալիի դէպք անունը կրող այս անարին դէպքը, անարին, որովհետեւ մարդու քիթ չէր արիւնած, ինչպէս կ'ըսեն, ազրանշանը եղաւ համատարած կոտորածի մը՝ արեւելեան գաւառներուն մէջ, ուր 300.000 հայեր սպանուեցան, խողխողուեցան, թալանուեցան, իրենց ստացուածքները հրոյ ճարակ եղան, երիտասարդ կիներ ու աղջիկներ բռնաբարուեցան, այն պատուական «Հայրենիք»ը, որ առաօտ կանուխ արթնցող ընթերցողին վայելքն էր, իր աշխատակիցներու զմայլելի յօդուածներուն պէս պիտութիւնովը, փակուեցաւ, եւ խմբագիրներուն մեծ մասը ըստիպուեցաւ արտասահման անցնիլ:

Առաջին ամիսներու սահմուկած շրջանէն ետքը, հաւանաբար վեց մեծ պետութիւններու (Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Գերմանիա, Աւստրո-

Հունգարիա, Իտալիա) դեսպաններուն նենգ միջամտութիւնով, ջանք տարուեցաւ առերեւոյթ դարձանել եղած արհաւիրքները, պոլսահայերուն կերպով մը պարտադրուեցաւ դադրեցնել իրենց սգաւորի դիրքը, օգնութեան մարմիններ կազմուեցան, մինչեւ անգամ գահաժառանգ իշխան Եուսուֆ Իզզէտտին էֆենտիի նախագահութեան տակ, Ազգ. Հիւանդանոցին ի նպաստ պարահանդէս կամ նուագահանդէս տրուեցաւ: Հրահանգը մէկ էր. երեսութապէս կարգադրուած նկատել ամէն բան, եւ կարգախօսն էր՝ *Սայէի շահանէտէ առայիչ պէրֆէմալ տըր*, այսինքն՝ Ծնորհի կալսեր, հանդարտութիւնը կատարեալ է: Ո՞վ հեզնանք...

*
* *

Հակառակ այդ բոլոր պարտադրուած հանդարտութեան, հայերուն հոգին անհանդարտ էր, խռոված: Վարժարաններուն մեծ մասը փակուած կը մնային: Ազգային Կեդրոնական վարժարանը փակուած, ուսուցիչներուն ցրուելովը, կամ աւելի ճիշդ՝ որովհետեւ կառավարութեան աչքին անհկա լուսադրութեան կասկածելի վատարան մըն էր: Ազգային ու քաղաքական ժողովները դադրած, Միացեալ ընկերութիւններու վարժարանները փակուած, անոնց տնօրէնները ամէն տեղ բանտարկուած:

Պոլսոյ թաղերուն մէջ բնակիչը փտանգաւոր դառնալ սկսած էր, մա՛նաւանդ երիտասարդութիւն եղած տուններուն մէջ: Կամաց-կամաց, լռելեայն, թաղերը կը պարպուէին, հալ ընտանիքներ կը նախընտրէին անցնիլ Գատըզիւղ կամ Բերա, աւելի երոպականացած թաղեր, ուր բնակչութիւնը խառն էր՝ յոյներու եւ երոպացիներու հետ: Հայրս ալ որոշեց վարձու տալ Կէտիկ Փաշայի իր պալատանման հոյակապ տունը եւ փոխադրուիլ Բերա-Շիշլի, որ նոր կը սկսէր կազմակերպուիլ:

*
* *

Ուրեմն այդ 1896ի ամառը փոխադրուեցանք Շիշլի-Բանկայթի: Մեր այդ նոր բնակարանին մէջ մեր առաջին ու հաճելի անակնկալը եղաւ վա՛րձել դրացնութիւնը Ստեփան փաշա Ասլանեանի խորթ աղջկան, Օր. Մաթիտ Ֆերուխանի, որ դաստիարակուած, երաժիշտ, աշխարհիկ կրթութիւն ստացած պատուական կին, ստանձնեց իսկոյն քրոջս՝ Ատրիենէին ու իմ, վարժարանին խնամակալութեան՝ հօրմէն ստացած մերժողական պատասխանէն նտքը, ազգային քաղաքական դէպքերու հետեւանքով չկրցած շարունակած զարգացումը ապահովել մեզի: Ամբողջ օրեր կ'անցընէինք իրեն հետ, եւ իր մայրութենէ զրկուած հոգին բաարարութիւն կը գտնէր, կարծես, իր ամբարած ծանօթութիւններէն բաժին հանելով այս ուշիմ, պատրաստուած դեռահաս երկու աղջիկներուն, որոնց փափաքն էր սորվիլ, միշտ աւելի սորվիլ: Ֆրանսերէն լեզու, ֆրանսական գրականութիւն,

երաժշտություն եւ երաժշտական պատմություն, ամէն ինչ կարգով կ'անցընէինք:

Վժռախտաբար, այդ երջանիկ տրամադրութիւնը պիտի չշարունակէր, եթէ պիտի տեսնէին դասերը: Երկու ամառոր պատահարներ տակնուվրայ պիտի ընէին մեր կեանքը: Եւ թոյլ պիտի տամ ինքզինքս պատմել մանրամասնութիւն մը, որ ամբողջ կեանքիս համար անելորդապաշտ դարձուց զիս այդ ուղղութեամբ:

Այդ նոր փոխադրուած մեր տունին մէջ, օր մը, յանկարծ, առանց որեւէ պատճառի, Ռիբասարահին պատին հաստատուած խոշոր հայելին, կարծես ելաւ տեղէն, գետին ինկաւ մեծ աղմուկով եւ փշուր-փշուր եղաւ: Մեծ իրարանցում, անշուշտ, տունին մէջ. յուզում, ցաւ, պատճառներ փնտռել. «Գէ՛շ տեղադրուած էր, արդեօք», եւայլն, երբ սպասուհին վրայ կը հասնի, աւաղելով. «Վո՛ւյ, քոռանամ ես, Աստուած բարին կատարէ: Երբ հայելի կոտրի տան մէջ, անպատճառ մահ կը պատահի»:

Ժատ օրեր չէին անցած անկէ, երբ Օգոստոս 18ին, այս անգամ Աստուածածնի տօնին Երկուշաբթին, հայ յեղափոխականներ Օսմանեան պանքան կոխեցին: Կը կարծեմ յիշել, որ անոնք մէկ-քանի ժամ տէր կ'ըլլան կացութեան, պատուհաններէն վար կրակելով՝ շէնքը պաշարող զինւորական ուժերուն դէմ: Իրիկունը ուշ ատեն ռուս դեսպանատան թարգմանին միջամտութիւնով, անոնք դուրս կը հանուին դրամատունէն, կը տարուին օտար դրօշ պարզող շրգենա մը, արտասահման անցնելու համար անվտանգ:

Նոյն ժամերուն Պոլսոյ ամէնէն հայ թաղերէն մէկուն՝ Սամաթիայի մէջ, Արմէն Գնուհի՝ իր ընկերներով, իր տունին մէջ ամրացած, կրակ կը տեղար, յետոյ իմացանք՝ իր տունը պաշարող ռուսական զինուորներուն վրայ, իրենց տեսակէտով՝ օգնելու համար Օսմանեան պանքը կոխող իրենց ընկերներուն, «Երկուքի բաժնելու համար թուրք ուժերը»: Իրիկունը անոնք նուազ բախտաւոր, քան իրենց Ղալաթիոյ ընկերները, դեսպանատան թարգմանի մը պաշտպանութիւնը չվալելով, դիտապաստ ինկեր էին ամէնքն ալ, Ազատագրութեան երազին ճամբուն վրայ:

Ու հող չվերջացաւ խնդիրը: Ղալաթիոյ պողոտաներուն, Ատամկոյի բոլոր անցուղարձ փողոցներուն վրայ անակնկալի եկած բոլոր հայերը թուպամահ եղան՝ նոյն օրն իսկ: Ռակեղչիրին մէջ՝ Խասգիւղը, բոլորովին ջարդուեցաւ եւ կողոպտուեցաւ: Գալֆայեան որքանոցը միայն ազատուեցաւ, կարծեմ, չեմ գիտեր ինչ հրաշալի ձեռով մը: Խաներու, մեծ շէնքերու բոլոր դռնապանները հայ էին մինչեւ այն ատեն, իբր ամէնէն վստահելիները, թաղերու պահապանները՝ նոյնպէս: Անոնք ամէնքն ալ փոխուեցան, տեղերը թուրքեր դրուեցան, եւ հայերն ալ՝ իրենց հայրենիքը դրկուելու պատրուակով՝ նաեղը լեցուեցան, Սարայ Պրունույի բացերը՝ ծովը նետուելու համար խժոժօրէն...

Այդ նոյն իրիկունը զինուած թուրքերու վտմակ մը մեր նոր բնակարանին մօտերը հայաբնակ տան մը վրայ յարձակեցաւ: Ապակիներ փշրուելու ձայն, լաց ու կոծ, սարսափ սփռելով մեր ամէնուս վրայ, որ լոյսերը

մարած, սիրուններուն եզերքէն անդրհանգրով կը դիտէինք այդ մարդերը, որ լուսնի լոյսին, թռպները ձեռքերնին, մեր տունին առջեւէն կը փախչէին՝ ուտիկանական միջամտութեան վրայ:

Յաջորդ օրը պիտի իմանայինք, որ նոյն ընտանիքէն երկու անձեր սպաննուեր էին նոյն իրիկունը, *անձնական վրէժի մը հետեւանքով*, որովհետեւ կատարութիւնը խստիւ արգիլած է եղեր Բերայի մէջ սպանութիւն, եւրոպական դեպքանատուներուն ուշադրութիւնը չգրաւելու համար:

Բաժակը լորդած էր: Ա՛լ իրաւ Պոլիս մնալ կարելի չէր: Իզմիրիւն սրբազանը պաշտօնէ կախակալուած, Երուսաղէմ աքսորուեցաւ: Հազարներով կը հաշուէին Պոլսէն մեկնող հայերը: Եւ ինչո՞ւ մնալ:

Հայրս ալ որոշեց մեզ ամենքս հաւաքել ու մեկնիլ Պոլսէն, երթալ հաստատուիլ Ֆրանսա, Մարսէյ, որուն հետ ժամանակին իր ըրած առեւտուրէն լուսադոյն յիշատակը պահած էր:

Անցագիրները պատրաստուեցան: Կարգադրուած էր, որ մենք շոգենաւ արձեւինք Պոլսէն, որ երբ 24 ժամ ետքը Չմիւնիս հանդիպէր, երէց եղբայրս՝ Լեւոնը, այն ատեն դէտ տնօրէն այդ քաղաքին *Մեքթէպը Խտարէին* (Լիսէ), պիտի գար մեզի միանար:

Մեկնումնիս կանխող վերջին օրերն էին, երբ հետագիր մը կու գայ բօթաբեր. «Ջաւակնիդ հիւանդ է, շուտ եկէք»: Լիսէին տնօրէնն էր, որ կը հետագրէր հօրս: Անցագրերը պատրաստ, նոյն օրն իսկ կը մեկնին հայրս ու մայրս: Ուրբաթ օր մըն էր, կը յիշեմ: Երկուշաբթին պատուհանին առջեւ էինք, երբ տեսանք զիրենք, որ ետ կու գային: Մայրս սեւերու մէջ, հայրս՝ գլխկոր, քայլելու անկարող: Չմիւնիս հասնելուն արդէն եղբայրս մահացած ու թաղուած գտնր էին: Այդպէս որոշած է եղեր տնօրէնութիւնը, կատարութեան հրահանգով, դիւզմանութեան կարելիութեան առաջքը առնելու համար, որովհետեւ հաւատացած էին ամբողջ Չմիւնիսցիք, որ քանի՞—քանի՞ անգամներ պատրաստուած, քաղաքակիրթ ընտանիքի գաւակը, որուն համար ըսուած էր, թէ ծաղկախտէ մեռած է, իրականին մէջ թունաորուած էր վարժարանին ստորադաս պաշտօնէութեան կողմէ, վրէժ լուծելու համար հայերէն:

Կտորած հայելիին աւանդութիւնը իրականութիւն կը դառնար:

(Ծար. 2)

ԶԱՐՈՒՀԻ ՊԱՀՐԻ

ՄԱՆՕՔԱԳՐՈՒԹԻՒՆ

- 1) Այս հոգեվիճակը բացատրելի ջանացած եմ «Փառածնայի» մէջ:
- 2) Թերեւս ատկէ ծնաւ մէջս անգործարեւի մնացած փափաքս՝ այսօրուան «դպրոցաներները» դնելու ժամանակակից համապատասխան բարձրութեան վրայ:
- 3) Թոպամաղ ընել — քիթով սպաննել: Այս նոյն մեթոտը գործադրուեցաւ Սումկայիթի մէջ՝ յատկապէս Գախօրօք երկաթեայ, ծայրը սուր ու կեռ հարիւրաւոր քիթերը պատրաստուած էին: Նոյն ցեղն է, մարդասպանութեան նոյն մեթոտը:

ՀՊԱՆՑԻԿ ՊԱՆԵՐ

Ուշ մնացած ժամացոյցիս սլաքին հետ,
այնտեղ՝ արեւաքարն է կանգնած
ու բառերուդ մշուշին ընդմէջէն,
կ'արտաշնչէ բոյրը ծաղկող տարնջենիներու:

այքերուդ տամուկ շախդներուն մէջ,
ջերմութիւնը կայ
արտերուս վրայ կաթող անձրեփին:

Դռանս անաղմուկ կրկնաձախն արդեօք,
թէ շնչահաստ մոմերու պարը վերջնաբեր՝
հայեացքիդ մէջ չարտաբերուած եղանակ
մը կը յուշէ:

Թախծագին գիշեր
գիս մի լքեր
անքեակ տան տխրութեամբ...

Իրիկնայոյզ լիճերու մէջ,
ծառեր ծփուն,
կիսամերկ ուսերիդ սահող
շափի մը մթութեամբ կ'անհետանան:

Օրը կ'անցնի
ծիծաղի մը առթած
արձագանգէն ալ առաջ:

29 Մարտ 1996



ԻՆՔՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Քեզ կը փնտռեմ
աչեկոծ սրտի ինքնախօսութեամբ.
ինչպէս խոհերուս սիրատենչ քամին՝
ծալ-ծալ քղանցքիդ կտոջած թուփին:

Ես քեզ կը գտնեմ
ետուզեղին մէջ մթագնող պահու.
ինչպէս հայեացքը յետադարձ դէմքի՝
վաղը վերստին կորսուածներու...

Ես քեզ կը պահեմ
երազող դէմքի կիսատուներին գաղջ.
ինչպէս մարմանդի բարձունքը կանաչ՝
ափերը ձիւնուս անայքներու մէջ:

Ես կ'անխնամ
շորթերուդ վրայ,
ինչպէս այն բառը
գոր կը փնտռէիր:

29 Մարտ 1996

*
**

Հեռաւոր երգի արձագանգներով,
լճակները որո՞ւ համար
այքերուդ մէջ կը ծփան:

Անձրեփ յետին կաթիլին յառած՝
մենաւոր խոտի արգաստաներո՞վ,
կանաչ երկնքներն ի վեր թեւելու:

Կանխահաս սուփի մատներով գծուած,
շորթերուդ վրայ՝ ո՞վ կ'աչեկոծ
վերջին բաժանը գինեպոյր ծաղկանց...

20 Յունիս 1995

ՓԱՆՈՍ ԾԵՐԱՆԵԱՆ

Թ. ԶԻՖԼԵԱՆ

ԳՄԵՏԱԳՏՈՅՑ ՄԸ...

Այս անունը, Թորոս Զիֆլեան, առաջին անգամ է, որ կ'երևի «Թագիճ»-ի էջերում: Առաջին պատմումները, «Կաշկարայր ճր», տմրաներ առաջ դրվում են մեզի, բայց պատմելու եւ տիպարներ շարժման մեջ հնկաւ արժանիքներ կատարած ըլլալով հանդերձ էջերուն մեջ, վերագահութեանք ժտեցած էինք անոր: Ինչպէս սովորութիւն եղած է նման պարագաներու, անմիջապէս կապի մեջ ճտանք Զիֆլեանի հետ, հաղորդելով իրեն մեր այն ուղբունքը, ըստ որում մէկ-երկու գրութիւն միայն տողազարած նոր անուններուն կը գգուշանանք տեղ տալ: Իրրեւ պատասխան – խոստմնակից նշան – տալանք երեսը նոր պատմումներնք: Մտորել կը ներկայացնենք առաջինը, միւսները իրենց հերթին:

Անցեալ շարքս, Ռաուֆ պէյ՝ մեր վարժարանի թուրքաց պատմութեան ուսուցիչը, կը մտնեայ Խնչոյիւն...

–Տղաս, ինձ հետ եկուր վայրկեան մը...

Կ'ըսէ ու կը տամի գիմֆ տասներորդ դասարանին առջեւ ու խուլ ձայնով մը կը փսփսայ իր ակամջինն.

–Խնչո, տղաս, ըսէ տեսնեմ, այդ գրատախտակին վրայ ի՞նչ է գրուած:

Երկմտութեամբ, Խնչոն ներս կը դնէ գլուխը դասարանին դուռնէն, ուշադրութեամբ կը դիտէ ու կը կարդայ. –«Ո՛վ որ բառ մը թրքերէն խօսի, քսանհինգ զրուշ տուգանք կը վճարէ»:

Դող մը կ'անցնի վրայէն: Պահ մը գլուխը դուռնէն ներս, բառացած-գամուած կը մնայ տեղը:

«Ես իմ ընկերներս չեմ մատներ», կը կրկնէ ինքն, «կ'երդնում մօրս վրայ, որ ես իմ ընկերներս չեմ մատներ...»:

Պատանիին միւսմիտ աչքերը կը դաշին ուսուցիչին շանթոյ հայհացքին ու չես գիտեր ինչն՞, ալիք-ալիք շերմութիւն մը կը բարձրանայ, բրթն ու ակամջները կը սկսին կարմրիլ Խնչոյիւն, եւ չես գիտեր ինչն՞... լեզուն ու խելքը իրարու կը խառնուին ու մէկէն կը մոռնայ իր խոստումները...

–Ռաուֆ պէյ... ըրր... գրատախտակին վրայ... ըրր... կ'ըսէ թէ. –Ո՛վ որ բառ մը թրքերէն խօսի, քսանհինգ զրուշ տուգանք կը վճարէ»:

–Վա՛ւայ: Մէկ թրքերէն բառ էսանհինգ զրուշ, հա՞: Մօ՛, օր-ցերեկով այս ի՞նչ համարձակութիւն...

Եւ յուրը այրուածքի հոտի նման դպրոցէն ներս տարածուեցաւ:
 -Քննիչ պիտի գայ եղեր:
 -Ռաուֆ պէյ դպրոցը պիտի վակել տայ եղեր...
 -Մէկ քառ հայերէն խօսիլ, մէկ տառ հայերէն գրել պիտի արգիլուի եղեր...

Յաջորդ առաւօտ, Պոլսոյ Կեդրոնական վարժարանին բարձրահասակ, միհարակազմ, եօթանասունի մօտ պեհեր տնօրէնը՝ Պարոն Անդըր-էասեան, արծուափիթ, յօնքերը իրարու գարկած, լուռ ու մունջ մեր դասարանէն ներս մտաւ:

Ինքը ներս մտաւ ու բոլորս ոտքի վրայ կծկուեցանք խիունջի մըման:

-Նստեցէ՛ք,- ըսաւ ան, հրամայական շեշտով մը:
 Բոլորս նստեցանք առանց ձայնի:
 Տնօրէնը մտածի՞ց՝ մախ ակնոցը հանեց ու արտակարգ թճախնդրութեամբ մը սկսաւ մախրել: Յետոյ՝ դէմքին վրայ պինդ ու վնասական մայրածով մը մախրած ակնոցին մէջէն սկսաւ դասարանին չորս անկիւնը դիտել այնպէս՝ ինչպէս կատու մը կը դիտէր մուկը: Վերջապէս չոր ու կտրուկ շեշտով մը հարցուց.
 -Երէկուան այդ մախադասութիւնը գրողը թոյ մէջտեղ ելլէ տեսնեմ...

Ձայն-ձիւն չելաւ:
 Ակնոցը հանդարտօրէն ետ գետեղեց քիթին վրայ: Յետոյ՝ համբերութեամբ, անզամ մը եւս կրկնեց.
 -Թող մէջտեղ ելլէ ա՛ն՝ որ այդ մախադասութիւնը գրտախտակին վրայ գրած էր:
 Սենեակէն ներս նոյնիսկ նաննի բզզումը կ'իմացուէր:
 Ձայն-ձիւն չէր ելլեր, որովհետեւ իր աչքերուն խորքը կը նկատէ ինք գուրգուրանքի մը ճշոյլը, որ բարկութենէ ու մեղադրանքէ շա՛տ հեռու էր: Եւ մեկէ չէին խաբուեր.
 -Պեպօ՛, - որոտած Պարոն Անդրէասեան ցուցամատն ու աչքերը գամելով իմ վրաս,- դո՛ւն, Յարութը, Գամբը, Արսէն եւ Գիւրնը, ժամը մի՛շտ չորսին բոլորդ սենեակս կ'ըլլա՛ն, առանց բացառութեան,- ու դասարանէն դուրս ելաւ հանդարտաբար:
 Ջրօսանքին բոլորս մէկտեղ հաւաքուեցանք:
 -Հասցը կլիցի՞նք,- ըսաւ Արսէն մտահոգութեամբ:
 -Ձէ, *օղլու՛մ*, չարչարուելու բան չկայ,- ըսաւ Յարութը ինքնավրտահոգութեամբ,- երածը բան մը չէ, մէջէն կ'իլլենք...
 Ժամը չորսուկէս է: Օրիորդ Ջապէլ՝ մեր տնօրէնին բարտուղարուհին, մեզ կ'առաջնորդէ դէպի տնօրէնին գրասենեակը, մինչ այդ կը գանգատի զգուած ու ձանձրացած շեշտով մը.
 -Աստուած իմ, դու՛ք ե՞րբ մարդ պիտի ըլլա՛ն... ըսէ՛ք տեսնեմ...
 Ե՞րբ մարդ պիտի ըլլա՛ն... այս ի՞նչ խայտառակութիւն է այսպէս... շաբաթը անզամ մը հոս է՛ք...

—Օօօ... սիրելի Օրիորդ Ջապել... չե՞ս գիտեր որքան կը կարու-
նանք քեզի,— պատասխանեց Յարութ լրջօրէն, առանց իր կողմը դառ-
նալու:

Օրիորդ Ջապել կոտրուելով մօտեցաւ Յարութին ու աչքերուն
մէջ կանացի ժպիտով մը ապտակեց գայն: Ապտակ էր, թէ փայփա-
յանք... քիչ մը դժուար էր գանգամել:

Ներս մտանք: Այս սենեակը իր մոխրագոյն պատերով խորրհրդաւոր
մթնոլորտ մը ունէր: Մեմք այս խուցէն ներս շա՛տ ենք եղբի եւ ընդհան-
րապէս գիտեմք, թէ ի՞նչ է մեր հանդիպման տխուր վախճանը:

Սակայն... գարմանալի... այսօր սպառնացող մթնոլորտ մը չեմք
նկատեր հոն: Պարոն Անդրէասեան գրասեղանին առջեւ գլուխը կախ
նստած նամակագրութեամբ մը կը գրադէր:

Բաւական մը սպասելէ ետք, տնօրէնը գլուխը կամաց մը վերցուց
ու հարցական նայուածք մը նետեց բոլորիս վրայ: —«Իմաստ չկայ պնդե-
լու», մտածեց ինքն իրեն. «Ատմէ գիրար չեն մատներ»:

Իսկ մեմք ուշադրութեամբ կը հետեւէինք իր բոլոր շարժումներուն:
Նախօրօք որշած էինք: Ջիրար չեմք մատներ: Մեր մէջ փոխըմբռնումը
յստակ էր:

—Գիտե՞ք թէ ինչու համար հոս էք,— հարցուց Պարոն Անդրէասեան
զուսպ ու հարցական նայուածք մը նետելով մեր վրայ:

Ձայն չելաւ:

—Դուն, Պեպօ... դուն, Արա՛ն... իսկ դուն, Գի՛ր: Ի՞նչ է հրեշտա-
կի պէս առջեւս է՛ք կեցեր՝ դուք ձեզ ապուշ կը ձեւացնէ՛ք ու կարծես
բանէ տեղեակ չէ՛ք: Ըսելի՛ք քնաւ քան մը չունի՛ք...

Ձայն չելաւ:

Կեցուածքն ու շեշտը փոխեց: Կզակին վրայ թեթեւ ժպիտ մը պար-
գելով՝ փորձեց մտերմիկ մթնոլորտ մը ստեղծել: Անմիջապէս մեր կեղ-
րոնացումն ու ուշադրութիւնը կրկնապատկեցինք, որովհետեւ տնօրէ-
նին դէմքին վրայ իր ամենավտանգաւոր արտայայտութիւնը երեւան ե-
լած էր:

—Ջգո՛ւշ, տղա՛ք, շատ լուրջ կացութեան մը առջեւ կը գտնուիմ,—
շարունակեց Պարոն Անդրէասեան,— Ռաուֆ պէյ մեզ կ'ամբաստանէ թրքե-
րէն լեզուի հանդէպ թշնամական ու արհամարհական կեցուածքով...

—Բայց մեմք սխալ բան մը ըրած չենք, պարոն տնօրէն,— պատաս-
խանեց Գի՛րը համարձակ,— մեր հայերէնի ուսուցիչը՝ Պարոն Հայկազուն
Գալուստեան մեզի յանձնարարած է թրքերէնի պահերէն դուրս թրքերէն
չխօսել:

—Բայց այդ բոլորը գրատախտակի վրայէն յայտարարելու պէտք
չունի՛մք,— պոռթկաց Պարոն Անդրէասեան աչքերը բոցավառ, բռունցքի
ուժգին հարուած մը իջեցնելով սեղանին վրայ: Ջղայնութենէն բոլոր
մարմինը սկսեց եր դողալ: Յետոյ ինքզինքը քիչ մը հաւաքեց: Ոտքի ե-
լաւ: Սենեակին պատուհանը բացա՞ր ու, գլուխը դուրս հանելով՝ սկսաւ
խորունկ շունչ առնել: Հոն քանի մը վայրկեան մնաց այդպէս, առանց

շարժելու: Վերջը կամացուկ մը մտնեցաւ ու իր մեղրագոյն՝ խորաթափանց աչքերը մեր վրայ յառնելով փսփսաց.

-Տղա՛ք, ի՞նչ որ կ'ընէ՛ք, ծածո՛ւկ ըրէ՛ք:

Սենեակէն ներս ննչիչ ու կաշկանդող լուսիւն մը կը տիրէր:

-Պարոն տնօրէն, կ'իմանանք, թէ կրթական մախարարութիւնը մեր դպրոցը փակել կ'ուզէ եղբոր, մի՞շտ է,- հարցուց Արսէն հետախոյզ մայրաձայնով մը,- կրնա՞ն այդպէս բան մը ընել...

Պարոն Անդրէասեան պահ մը անձայն, դիտեց մեզ բոլորս: Իր դէմքին վրայ արտակարգ փայլ մը՝ հայեացքին ներքեւ կարծես, գոհունակութեան ժպիտ մը կը պահուրտէր:

-Մեր տեսակցութիւնը հոս կը վերջանայ,- պատասխանեց ան՝ առանց մեզի նայելու ու լռեց:

Սենեակէն դուրս ելանք՝ անձայն ու մտաբափ:

Տնօրէնին վերջին խօսքերը արդէն մեր մէջ սկսեցին տրամաբանօրէն ընկալուիլ. «Ի՞նչ որ կ'ընէ՛ք, ծածո՛ւկ ըրէ՛ք»: Այդպէ՛ս, հա՛:

Բայց Պարոն Անդրէասեան շատ լաւ գիտէր, որ մեմք չէինք սորված ծածուկ գործել: Սա մեր սովորութիւնը չէր:

Եւ չե՛նք գործեր:

Յաջորդ օրը, գրասենյակի ընթացքին, անկիւն մը յանգնեցին թնայն:

-Մօ տղայ... դուն հէ՛ջ մը խելք չունիս, ինչո՞ւ մեր գաղտնիքը

դուրս կու տաս:

-Վախցայ,- ըսաւ թնայն հեծկտալով:

-Մօ... ինչէ՛ն վախցար... վախմալիկ ի՞նչ կար:

-Ձեմ գիտեր...

-Մօ... բան մը ու յստիքի՛չ ընէիր, ըսէիր... հէ՛ջ, ուրիշ բան չեկա՞ւ միտքդ:

-Ձեկա՛ւ... ինչ ըսես չգիտցայ... շուտըցայ:

Մեր փոքրիկ վերջաւորութեան կէս փլատակ տախտակէ դռնակ մը կար, ուր տարիներէ ի վեր մարդ չէր բնակած: Մեր «արագիլի» բոյնն էր հոն: Իրիկուայ դէմ, սեղանի շուրջը թէյ մը խմելու համար, բոլորս հոն հաւաքուեցանք:

-Վա՛յ «ճանճիկ», վա՛յ,- բացազանչեց Գամեր՝ դէմքին բնորոշ ժպիտով մը,- հէ՛լէ կեցիր նայիմք Ռաուֆ պէյ, տակաւին հախ-հաշիւ ունիս տալիք. մեմք բեզի պէս դարձուկ մարդոց ետիւ բերել գիտեմք: Հէ՛լէ քիչ մը համրերէ...

-Վա՛յ Ռաուֆ պէյ, վա՛յ... օր-ցերեկով ես էու պապիչ ու էու գերդաստանիդ մեզարը,- պոռթկաց Արսէն,- ուշտե՛ս ես էշուն ըրածը ա՛յ կլիլիք բան չէ պէ: Չարխա՛լին նայէ հէ՛լէ: ...Ամէն բան չափ ու սահման ունի, հա՛: ...Մեր համոզմուն մէջ ինք մեզի մէջտան կը կարդայ... ո՛ւյ: Հէ՛լէ կեցիր նայիմք, քէ՛լէջ մարդ... բեզի պէս քանի մը հատին ջուրի կը տանի՛ք՝ ու ծարաւ կը բերեմք հա՛: Ալլախ բեզի...

Սենեակէն ներս կապարէ լուսիւն մը կը տիրէր: -Եֆֆ'էրիմ Յաննիկ,- մրթմրթաց Յարութ քիթին տակէն՝ գլուխը աջ ու ձախ ճօճելով,-

Ոննգութիւն կ'ուզես տեսնել... սեա' օրինակ մը աչքերուդ առջեւ... հէջ հետու մի քրթար:

-Շուն-շան-որդին հայու արժանապատուութեան դայած էր:

-Է՛լէ՛լէ՛... քո' հախէք կու գամք:

Կեդրոնական վարժարանին տասներորդ դասարանի *փ/ճ*երը որոշեր էին Ռաուֆ պէյին հաշիւը մաքրել:

Այն օրը Ռաուֆ պէյը մկրտեցինք «ճաննիկ»: Դպրոցէն լուր կը հաւաքես ու տեղ կը հասկցնես, հա՞: Դաւանան ճաննիկ:

Եւ վա՛յ այն ուսուցիչին, որ մեր կողմէ ածականի մը արժանա- մար: Իրեն համար մախընտրելի էր ինքզինքն առնէր ու Լալաթիոյ աշտա- րակէն վար մետէր, քան մեր քերանը իյնար:

Շարաք մը ետք, Երկուշաբթի առաւօտ, Ռաուֆ պէյ համաչափ քայլերով դասարանէն ներս մտաւ: Բոլորս ռոֆի ելանք ու նստեցանք արտակարգ աղմուկով մը, որ շարունակուեցաւ մինչեւ որ ան ստիպուե- ցաւ աչքի տակէն ակնարկ մը նետել մեր ամէնուն վրայ:

Լռութիւն:

Սակայն դասարանէն ներս կռիւ կար: Եւ այդ կռիւն անտեսանելի սահմանները արդէն իսկ յստակօրէն գծուած էին: Ընթուստութիւնն ու ընդվզումը ալիք-ալիք կ'արձագանգէին սրտի զարկերուն համաչափ:

Ուսուցիչը մախ դասամատենանը սեղանին վրայ դրաւ, յետոյ ջղայ- նութեամբ ակնոցը հանեց ու իջ ետք մորէն, տեղը զետեղեց: Կարծես չէր համարձակեր գլուխը բարձրացնել: Գուցէ աչք աչքի դայէր:

Աշակերտութեան ցանկը բացաւ ու մատով խուզարկելէ ետք կան- չեց.

-Արսէ՛ն, ելի՛ր տեսնեմ... գրատախտակին առջեւ ելի՛ր:

Արսէնը բոլորիս աչք մը ընկէ ետք, ռոֆի ելաւ ու կմկմալով ու- րախ-գուարք սկսաւ գրատախտակին մօտենալ: Կարծես նուէր ստանալու կ'երթար:

Ուսուցիչը շարունակեց.

-Արսէ՛ն, տղաս... հետեւեալ մախադասութիւնը գրէ տեսնեմ. «Թուրքիան, թուրքերուն կը պատկանի», յետոյ՝ քերականական վերլու- ծում մը կատարէ, ընդգծելով յատուկ անունը եւ մախադասութեան բայը:

Արսէն մախադասութիւնը գրեց ու կաւիճը ձեռքը գրատախտակին առջեւ սկսաւ նօնիլ աչ ու ձախ, դանդաղ ու անհոգ: Խոր շփոթութեան մէջ էր խեղճ Արսէնը. չէր գիտեր գանազանի յատուկ անունը բայէն:

-Ճաննի՛կ,- բացազանչեց մեզմէ մէկը ետեւէն, սուր ձայնով մը: Բոլորս սկսանք քաֆուն ծիծաղիլ: Արսէն ի գուր կը փորձէր խնդուէր զսպել:

Ուսուցիչը բորբոքած տեղէն ցատեց.

-Արսէ՛ն... ծօ չե՞ս մը գիտեր, թէ այս մախադասութեան ո՞ր բա- ւը յատուկ անուն է:

-Ո՛չ, պարոն,- պատասխանեց Արսէն անմեղօրէն,- իրաւ չեմ գի- տեր...

–Մօ ամիս մըն է մոյն դասը կը հոլովենք եւ տակաւին ելեր ինծի չեմ գիտեր կ'ըսես... վայ: Հիմա եւ քեզի կ'ըսես, թէ ինչո՞ւ չես ուզեր գիտնալ, որովհետեւ թր՛քերէն է... անոր համար չես գիտեր, չէ՞ մը:

Ու ջղայնութեամբ ոտքի ելաւ եւ սկսաւ Արսէնին կողմը ճայել՝ հարուածելու:

–Պարոն... իրա՛ւ կ'ըսես,– պատասխանեց Արսէն կոփամարտիկի մը մտան երկու հայլ ետ ցատկով,– իմ դաճաս քերականութիւն բնաւ չ'առնիր:

–Բու դաճադ չ'առնիր, հա՛... հիմա այդ պարսպ դաճադ ձմերուկի պէս կը... պիտի... ջարդե՛մ, հիմա...:– ու վազվզուէ՞ մըն էր սկսաւ դասարանէն ներս: Մանրակազմ Արսէնը գրասեղաններուն մէջէն, իսկ ուսուցիչը՝ ետեւէն...

Ա՛յ չէինք կրնար մենք մեզ գտալ: Բոլորս բացայայտ քահ-Քահով մը սկսեր էինք խնդալ այս թատերգութեան վրայ, երբ յանկարծ Յարութը ոտքի ելաւ:

–Ճանըմ, դասարանէն ներս այս *օլիպպոզուիլներ* ա՛յ կը բաւէ,– պռռաց ան,– դասի ժամանակ է, հա՛, լռեցէ՛ք տեսնեմ:

Դասարանէն ներս վայրկեանական լռութիւն մը տիրեց: Լռութիւն մը անակնկալներով լեցուն:

Ռատոֆ պէ՛լ պահ մը շուարած-կանգնած մնաց իր տեղը: Շուարած էր, որովհետեւ այս համագործակցութեան յեղակարծ ոգին իր մէջ անորոշ տագնապ մը ստեղծած էր:

–Էֆէրի՛մ, տղաս,– ըսաւ ան երկմտութեամբ,– ինչտէ՛ ամենքի՛ն օրինակ առէ՛ք Յարութէն,– յետոյ՝ հասկնալով աւելցուց,– դէ յայտէ՛, հիմա տեղը մատէ տեսնեմ:

Յարութը տեղէն չշարժեցաւ: Միայնակա՛ն ու իշխանական կեցուածքով մը կը շարունակէր մնալ իր դիրքին մէջ:

–Ռատոֆ պէ՛լ, մատելեւ առաջ – եթէ հրաման ստէ, ձեզի հարցում մը ունիմ ուղղելիք:

Ուսուցիչը գլուխը կախ, քիթերը վեր ցցուած, անըմբռնելի մախագագումով մը Յարութը կը դիտէր: Խէ՛ր է:

–Ըսէ տեսնեմ՝ ի՞նչ է հարցումդ:

–Ռատոֆ պէ՛լ,– շարունակեց Յարութ չափազանց զսպուած համդարտութեամբ,– ձեզի համար հարցումիս պատասխանելը դժուար պիտի չըլլայ, որովհետեւ գիտէ՛ք, որ դուք պատմագէտ է՛ք, եւ ման կը դասաւանդէ՛ք Պոլսոյ համալսարանէն ներս:

Դասարանէն ներս լարուածութիւնը իր գագաթնակէտին հասած էր:

–Հը՛ր՛մ... ըսէ տեսնեմ... հարցումդ ի՞նչ է:

–Մեմք մկատած ենք, Ռատոֆ պէ՛լ, որ մեր բոլոր հայ մտաւորականներու, քանաստեղծներու, դիւանագէտներու եւ մոյնիսկ ճարտարագէտներու, որոնք կը ծառայէին թուրք խորհրդարանին, բոլորի՛ն ծնունդ-համ թուականները տարբեր են, սակայն մահուան թուականը մոյնն է: Բոլորը մահացեր են 1915ին: Արդեօք մեզի կրնա՞ք պարզաբանել, թէ ի՞նչ է գաղտնիքը այս պատմական երեւոյթին:

Հարցում անակնկալ, անկարելի ու անբացատրելի հարցում մըն էր: Ուրի՞նչ սորված էին այս լակտոնները իրենց ազգային անցեալը: Մա՛նա-
ւանդ՝ երբ խիստ հսկողութեան տակ էր եւ արեգիլուած միւսն դասաւան-
դութիւններ Պոլսոյ հայ վարժարաններէն ներս: Այս ի՞նչ չտեսնուած
սանձարձակութիւնն է...

Մարդուն դէմքի այլայլումը զգալի էր: Շառագունած, կասկարմիր
էր կտրած: Ձեռները ամուր մը կպեր էին սեղանի երկու ծայրերուն,
զան կտրած: Կորսնցուցած էր իր հպարտ ու տիրական նայուածքը: Գը-
լոյնը կախ՝ գետնին կը դիտէր՝ կարծես հոն բռներ կը փնտռէր արտա-
յայտուելու: Երկար ժամանակ այդպէս անձայն մնաց: Յետոյ՝ աչքերը
կատաղի նայուածքով մը վերցուց:

—Սիրելի գաւակներս,— ըսաւ ան կծու եւ հեզմախառն շփոթով մը,—
1915ին մենք անոնց բոլորը հաւաքեցինք ու դաշտապտոյտի մը տա-
րիմք...

—Եւ այդ դաշտապտոյտէն ետ չվերադարձան,— բնդաց Գիֆորին
ձայնը դասարանին ետեւէն: Ափերուն մէջ տախտակէ քանակ մը ճզմած,
արիւնը բռնեցրուն, պրկուած առիւծի նման՝ Գիֆոր պատրաստ էր ու-
սուցիչին վրայ յարձակելու:

Յանկարծ մէկ առ մէկ սկսանք բոլորս ոտքի ելլել, մեր վշտահար
աչքերը դարձնելով իր վրայ:

Երեսուներեք պահանջատէր երիտասարդներ իր դիմացը կանգնած՝
իրեն մէկտան կը կարդային: Ռաուֆ պէյ պահ մը շանթահար մնաց իր
անկիւնը: Մերկացած էր իր ծածկամտութեան մէջ: Կզակը դողաւար,
աչքերը դուրս ինկած, խելագարի նման հաւաքեց իր դասամտեանն ու
դասարանէն դուրս նետուեցաւ:

Պարոն Անդրեասեան մեզ անգամ մըն ալ իր քով չկանչեց:

Իր տնօրէնութեան վերջին տարին եղաւ:

Կեդրոնական վարժարանի տասներորդ դասարանին երեսուներեք
«փին»երէն երեսունը, այդ տարի, թրքերէնի դասերէն ձախողեցան ու
վերաբնութեան մնացին:

Տարի մը ետք, Ռաուֆ պէյ, Պոլսոյ համալսարանէն ներս դասի
մը ընթացքին, հասած-խկած տանձի նման ինկաւ-մնաց սեղանին վրայ:

Մեզմէ միայն Պամէրը ատամնարոյծ եղաւ:

Քսաներեք տարի ետք էր, երբ Յարութիւն անգամ միւս Յրանսա-
վայանս հանդիպեցայ: Գիմետան մը մէջ նստած՝ կարօտով անդիէն-աս-
դիէն կը խօսէինք: Յանկարծ իր կողմը դառնալով.

—Յարութ,— ըսի,— այն օրը, յաղթանակի օր էր, չէ՞ մը:


Պահ մը գիմիի գաւաթը ձեռքերուն մէջ դիտեց գիս, յետոյ մէկէն
աչքերը ջրոտեցան.

—Յաղթանակի օր էր, Պեպօ,— ըսաւ ան գլուխը վեր-վար շարժելով,—


իրա՛ւ յաղթանակի օր էր:

30 Նոյեմբեր 1994, Սիտնի

ԹՈՐՈՍ ԶԻՖԼԵԱՆ



ՄԱՍԿՈՒՆԵՐԻ ԶԳՈՒՅՑ
ՔԱՆՔԻ ՊԱՆԿԱՆ ԶՈՒՄ...



Հ.ՈՒՆՎԷՍ

ԳՐԱԿԱՆԱՅԻՆ ՓԵՏԱԿ

ԻՆՏԵՐՆԱԿ

ՏԵԿՆՈԼՈԳԻԱ

ԿՈՍՏԱՆ ԶՈՒՄ

ԽՐՈՒՄԻՆԻ

ԳՐԱԿԱՆ ՓՈՒԿՆԵՐ

ՑԱԿՈՒ ՓՈՒԿՆԵՐ

Թիւ 1

M E H Y A N, Revue semestrielle de Littérature et d'Art

1 Յունվար 1914

«Նախիչի» եւ «Բագին» ամսագիրներու էջերուն առանձին անդրադարձներով եւ Հայաստանի մտաւորականներէն ոմանց գրութիւններուն մէջ մասնակի հատուածներով ուշադրութեան ընծայուած գրական թեմ է 1914ի Յունուարին Պոլսոյ մէջ հրատարակուի սկսած «Մեհեան» ամսագիրը, որ ամպրոպի մը պէս պայթեցաւ գրականութեան երկ-նակամարն մէջ ու պատմութեան էջերուն անցաւ ու մնաց ստեղծագործական կիրքի մը մէկ խորհրդանիշը, մաքրագործ շունչի մը առհաստիչեան ու նորութեան պատկան մը հրահրող թով մը:

Գրեթէ նոյն տարիքը ոնեցող երիտասարդներ էին «Մեհեան»ը սկսած ու անոր է-ջերուն կարեւորագոյն բաժինները կենդանութեան շունչով օժտած գրողները, որոնց փո-թորկալի շարժումը, Մեծ պատերազմին հետեւանքով խափանուեցաւ թէն, բայց մեծ եղաւ անոր գործած ազդեցութիւնը, որ կը շարունակէ ուժի մէջ մնալ գրականութիւնը առանձին կրօնք մը դասանող անկաշտներուն համար...

Վերը եղած ակնարկներով ըսած եղանք, որ գրականութեան պատմութիւնը երբեք ապերախտ չգտնուեցաւ «Մեհեան»ին հանդէպ, բայց որքան ալ արդար եղած ըլլան կի-րարկուած կշիռները, ու վարակիչ՝ արձանագրուած գնահատականները, նշանաւոր հան-դէսը, մեր շատ մը արժէքներուն պէս, ձեռով մը մնաց վերացական ոլորտներուն մէջ՝ անհաստական գրադարաններուն թէ ազգային մատենադարաններուն մէջ անոր գրեթէ լիակատար չգոյութեան պատճառով:

Ռեդախութիւն է մեզի յայտնել, որ այսօր անհրկա դուրս բերուած է իր անգտանե-լիութեան փեճակէն եւ ի մտոյ պիտի մատուցուի գրասէր հասարակութեան:

Անթառամ արժէքներով օժտեալ մեր մատենաներուն վերհրատարակութիւնը յա-նձախաղէպ եղած է, կարելոր հանդէսներուն վերհրատարակութիւնը, սակայն, հազուա-դէպ երևոյթ: Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ ունինք Պոլսոյ «Լոյս»ին օրինակը, երկրորդը՝ «Մեհեան», երբ խիստ քաղձալի է մեր երիտասարդներուն ձեռքը տեսնել Իզ-միլի «Հայ գրականութիւն»ը, Պոլսոյ «Ազատամարտ»ին յանդիմանը, Փարիզի «Մե-թը», ուրիշներ, որոնք կ'արժէ պատմութեան փոշիներէն դուրս բերել ու խառնել կենդանի իրականութեան...

«Մեհեան»ին մէջ՝

Հայ հոգիին ընծայուած
պաշտամունքին,
Գրականութեան մէջ նոյն ուժին
որոշիչ դերեր սահմանող
հասարքին,
Մրաժման անկախութիւնը գերիվեր
համարող կամքին,
Հարապար ձեւերու
յայրենագործութեամբ աշխարհին
ներկայանալու յանձնառութեան,
Հայոց լեզուն կենսանորոգ
պարուսապներով օժտելու
նահանձախնդրութեան
Ու Հայաստանեայց գրականութիւնը
մէկ համարելու դասանանքին համար՝

Կիւիկիոյ Հայոց Կաթողիկոսութիւնը
ինք կը հովանատրէ
Մտր վերհրապարակութիւնը

ԻՐԵՆՅ ԿՐՐՕՏԵՐՈՒՆ ԿՐՐՕՏՈՎ...

Անցող ութսուն տարիներու մամլոյ մեր անդամներուն մէջ եղաւ մէկը, որ թէեւ ասուպի պէս անցաւ, բայց անյայտ անկիւններուն ծոցը անհետացող անորոշ ուրիշներուն պէս դժբախտ ճակատագիր մը չունեցաւ, ընդհակառակն, կիպիչ եղաւ իր անցքը նախ եւ ապա հետք ձգեց, դարձաւ ձեռագողական անուն մը,— «Մեհեան»ը:

Հինգ հոգի էին անոր բուրմերը, տեսաբան, քննադատ, արձակագիր, բանաստեղծ՝ Կոստան Զարեան, Յակոբ Բիւֆէճեան, Գեղամ Բարսեղեան, Դանիէլ Վարուժան, Ահարոն Տատուրեան, որոնք միաձոյլ կամբով մը իջան հրապարակ եւ, իրենց անձնատրած երբեմն պոչ-պոչ արժանիքներով՝ 1 Յունուար 1914ին ընդամենը 18 էջերու գումարով մը լոյս ընծայեցին իրենց յղացած փոթորկայոյզ ամսաթերթին առաջին համարը:

Համաշխարհային Առաջին պատերազմին հետեւանքով, ուրիշ բազում ուժերու կարգին, տապալը իջաւ նաեւ «Մեհեան»ի հիմերուն, եւ 1 Յուլիս 1914 լոյս տեսած 7րդ թիւէն ետք, այլեւս բնաւ լոյս չտեսաւ անիկա...

«Մեհեան»ը ունեցաւ իր կենսագիրները եւ եղան Ափիւռքի թէ Հայրենիքի մէջ անոր գաղափարական բովանդակութեան եւ գտած լայնտարած արձագանգներուն անդրադարձող մտաորակներ, եւ տարակոյս չկայ, որ ժամանակները պիտի շարունակեն թաւալիլ ի նպաստ անոր տարազած ճշմարտութիւններուն, ու գրականութեան աստուածներուն ուխտ ըրած սերունդները հիասքանչ երկիւղածութեամբ մը խունկ պիտի ծինեն յատկապէս այրող ծարաւներու եւ իրաւութեան լուրեր հաղորդած անոր սինակներուն առջեւ:

Հետաքրքրական է «Մեհեան»ի ծննդոցը:

«Վաղը,— կ'ըսէ Կոստան Զարեան երեւանի «Նորք» ամսագրի էջերուն լոյս ընծայած իր «Նաւաստմար» անուն գրութեան մէջ,— *հայերը պիտի ուրանան, որ ես ստեղծեցի Հայ մշակոյթի պատմութեան ամբիոնը* A.U.B.-ում, որ ինձանից առաջ այդ մասին երեւակայնի իսկ չէր կարելի, ինչպէս ուրացան իմ ստեղծած (իմ գաղափարներով եւ իմ գրամով) «Մեհեան»ս, որ եղաւ տանկահայ գրականութեան վերջին շարժումը...» (1994, թիւ 2, էջ 22):

Երկու «ուրացում»ներէն առաջինին, A.U.B.-ի մէջ Հայ մշակոյթի ամպիոն ստեղծելու վարեանական առաապելի մասին կը խօսուի այլուր:

Ինչ կը վերաբերի «Մեհեան»ին, չենք գիտեր ե՞րբ, ո՞ւր եւ ո՞վ ուրացած է անոր հիմնադիրը եղած ըլլալու Կոստան Զարեանի հանգամանքը: Ուեւէ մէկը չէ ուրացած ու չի կրնար ուրանալ այդ մէկը: Ընչո՞ք է նաեւ, որ հոչակաւոր ամսագիրը լոյս կը տեսնէր Զարեանի գրամով: Այս առընչութեամբ մենք ունինք անտիպ տեղեկութիւն մը, վոր իմացած ենք բանիւ բերանոյ, Օշականէն: Նշանաւոր ուսուցիչը կը պատմէր, որ նոր Գոլիս ժամանած Կոստան Զարեան, օր մը մայրաքաղաքի սրճարաններէն մէկուն մէջ կը հրաւիրէ իր ուշադրութիւնը գրաւած տաղանդաւոր երիտասարդներէն վերոյիշեալ չորսը եւ կը պարզէ ամսագիր մը լոյս ընծայելու իր ծրարէն վերոյիշեալ չորսը եւ կը պարզէ ամսագիր մը լոյս ընծայելու իր ծրարէն վերոյիշեալ չորսը եւ կը պարզէ ամսագիր մը լոյս ընծայելու իր ծրարէն վերոյիշեալ չորսը եւ կը պարզէ ամսագիր մը լոյս ընծայելու իր ծրարէն վերոյիշեալ չորսը:

Յակոբ Զիւֆէճեան, անդրադառնալով, որ մեր գրագէտները այնքան յիմար եղած են, որ իրենց գաւակներուն հացի դրամով թերթ հրատարակած, կը հարցնէ.

«Թերթ մը նիւթական լայն հնարաւորութիւն կ'ենթադրէ, իսկ ո՞վ պիտի ստանձնէ այդ բեռը:

Զիւֆէճեանի հետաքրքրութեան իբրեւ պատասխան՝ Կոստան Ջարեան գրպանէն կը հանէ քսակ մը ու ցուցական ձեւով սեղանին վրայ կը հնչեցնէ օսմանեան դեղին ոսկիները...

Այսպէս կը սկսի լոյս տեսնել «Մեհեան»ը, Կոստան Ջարեանի նախաձեռնութեամբ ու... դրամով, բայց բնաւ ճիշդ չէ ըսել նաեւ «իմ գաղափարներով»:

Մանօթ իրողութիւն է, որ 1914ին Կոստան Ջարեան հապի հեռաւոր աղերս մը ունէր հայ գրականութեան հետ: «Մեհեան»ի մէջ իր ստորագրած գրութիւններն անգամ ֆրանսերէնով կը ներկայացնէր խմբագրութեան, որուն երկու անդամները, Գեղամ Բարսեղեան եւ Յակոբ Զիւֆէճեան, Կոստան Ջարեանի օրօրոցի ու պատանութեան լեզուն շրջանցելով՝ արեւմտահայերէնի կը վերածէին պատնէք ու կը յանձնէին գրաշարին: Այս մէկը փաստի չի կարօտիս մէջտեղն են էջերը.

Վերը արձանագրուած տրտուեցքը պէտք է վերագրել այն իրողութեան, որ «Մեհեան»ին աւելի մեծ չափով անկեղծութիւն, աւելի յանդգնութիւն, կիրք, սուտութիւն համբաւներուն դէմ իր վայրոյթը ճակատային համարձակութեամբ մը պոռացող ու իրաւութեան տենդով պլեկոծ ուժը Յակոբ Զիւֆէճեանն էր, օրուան մամուլն ու մատները դատարկահունչ բառերով լեցնող կոկոպակիլ ոչնչութիւնները ոչնչացնելու ելած անհանգիստ խառնուածքը, որ նոյն ատեն եւ նոյն կատաղութեամբ կը մեծարէր իրաւները: Իր «Համապատկեր»ի ութերորդ հատորին մէջ ինք պիտի ըսէր. «1914ին մենք, մեհեանականներս կրկէս իջած էինք իբրեւ ազանդաւոր, իբրեւ կատաղի պաշտպանները, մուսուլմանները իբրաւ արուեստին, հայեցի, հարազատ արժէքներուն պահանջն ու տարփողը օրակարգ ու դրօշ ըրած մեր խանդին, երիտասարդ կիրքերուն» (էջ 482):

Երեւի օշականեան դժգոհութիւններով ու ծարաւներով խանդալատ յետնորդներու ընդգծումներուն ի լուր էր, որ Ջարեան անիրաւուած կը վզար ինքզինք եւ կը ձգնէր խօսք բանալ ամագիրին հիմնադիրի փառքը իբր թէ իրմէ խլող ուրացողներու ու ուրացման մասին:

Բոլոր պարագաներուն, հայ գրականութեան համար քափստաւոր պահ պէտք է համարել Կոստան Ջարեանի մեհեանական նախաձեռնութիւնը, քախտաւոր՝ ներկայութիւնը միւսներուն, որոնք մէկ կողմէ մաքրագործ շունչ մը բերին եւ, միւս կողմէ՝ հրամայական դարձուցին իրաւութեան հնչեղութիւնը.

*

**

Ստեղծագործութեան յատկացուած էջերուն մէջ՝ մեր հաշուումներով ութ անձեր բանաստեղծութիւն ստորագրած են «Մեհեան»ի էջերուն, երեք ուրիշներ՝ արձակ բանաստեղծութիւններ, իսկ հինգ հոգի՝ արձակ:

Բանաստեղծութիւններէն Վարուժանն ու Թէքէեանը նոյն հաճոյքով կը կարդացուին նաեւ այսօր, Կոստան Ջարեանը՝ հապի թէ, Ահարոնը՝

նոյնպէս, իսկ միւսները եւ միւսներուն հետ արձակ բանաստեղծութեանց բանուորները դժուար թէ կարենան դուրս գալ իրենց ժամանակէն Աւելի բախտաւոր կը թուին արձակագիրները.— Յակոբ Զիւֆէճեան, Գեղամ Բարսեղեան, Ռուբէն Զարդարեան, Յակոբ Տէլիմէնճեան եւ Գեղամ Տէր Կարապետեան:

Կարճ ժամանակի մը վրայ եւ սակաւաթիւ էջերով լոյս տեսած «Մեհ-եան» ժանրութեան կեդրոնը կը հանդիսանան տեսական ու բննադատական բաժինները, «Մեր հանգանակը», անկէ բխած քովնտի խորհրդածութիւնները, վերլուծումները, ահաբեկիչ «Գարթենք»ները, նոթերը, նիշերը, «պատում»ները:

«Մեր հանգանակը» ստորագրողները անգամ մը յիշատակուած հինգ անձերն էին, հինգն ալ երեսունի շուրջ դեգերող երիտասարդներ, մէկը դեռ նոր ոտք դրած գրականութեան սեմին, միւսը անուն մը դառնալու ճամբուն վրայ, միւս երկուքէն առաջինինը մարմնացեալ բծախնդրութիւն Մեծաքանչի գործածութեան մէջ, երկրորդը փոթորկայտյալ անուն մը բըն-նադատական ոլորտներուն ու խոնարհները ուշադրութեան ընծայող ուժ, իսկ հինգերորդը արդէն գագաթ մը արեւմտահայ բանաստեղծութեան Պատնասին վրայ:

Ո՛չ միայն ցեղային մեծագործութիւններու բովերուն մէջ նկարագիր կազմած ընձիւղներ էին անոնք, այլեւ ծանօթ էին համաշխարհային գլուխ-գործոցներուն եւ չէին կրնար հանդուրժել բառերուն թիչ մը շատ վստահող ու սալոնային բարբերը գրականութեան վերածելու հեշտանքը արդէն հաւատոյ հանգանակ դարձուցած գրիչները, «կին քերթողներու կարուանը» եւ անարին բաներու սպասարկող կնատ միւսները, կոչ ընելով իրենց երակներուն մէջ ստեղծագործ սաղմերու խլուտումը վզացող երիտասարդներուն չտարուիլ գրականութիւնը ժամանցի վերածած աճաբարութիւններէն, ժամավաճառութիւններէն, խոյանալ վեր, խորանալ վար, յայտնաբերել «դուն ուրեք» կտահուող հայ հոգիին անծանօթ շերտերը, դողերը, կենդանարար ճառագայթները:

Չենք գիտեր, եղա՞ծ է արդեօք հայ գրականութեան մէջ ուրիշ խումբ մը, որ միաժամանակ այսքան բարեմասնութիւններ անձնաւորած ըլլայ ու ձեռք ձեռքի տալով յաւակնի կենդանութեան շունչ փչել ինչ-ինչ պատճառներով իր օրերուն ընդարմանալ սկսող հոգիներուն: Յիշել պէտք է թերեւ Փարիզի «Մենք»ը ու լուռ մնալ վատուժ ուրիշներու անյիշատակ մոխրակոյտերուն դիմաց:

Անարծանները խարանդ մեհենականներուն այդ այրող հուրն էր ու կենսախայտ գեղեցկութիւններու այդ այրող պապակը, որ վարակիչ դարձաւ իսկոյն եւ երիտասարդութիւնը գրկաբաց ընդունեց «Մեհեան»ի մէն մի թիւը: Օշական կը պատմէր, որ յաջորդ համարը մինչեւ հրապարակ գար, նախորդը բառացիօրէն սպառսպուռ «բնաջնջուած» կ'ըլլար, ձեռք ձեռք անցնող բոլոր գեղեցկութիւններուն պէս: Այս ջերմ ընդունելութիւնն էր հաւանաբար պատճառը, որ հետագային մատի վրայ համրուող բախտաւորները միայն աոիթ ունեցած են տեսնելու նշանաւոր ամագիրին եօթը համարները:

Հետաքրքրական է անդադատնալ, որ մեհենականներուն հրապարակ իջած օրերուն բոլորովին յուսահատական վիճակ մը չէր մատնէր հայ գրա-

կանութիւնը, մեծարեցեան արձագանգները դեռ չէին լուծ, Վարուժանի հեթանոս երգերուն արու շեշտերը կը շարունակէին ալեկոծել մարդոց ջղաշին համակարգը, որն էր Թէքէեանի Յարութեան շունչին, Սիամանթոն կը գոռար տեղ մը ու կ'աղօթէր աչլուր, Տիկին Զապէլ Եսայեան կը գտնուէր իր տաղանդին լիութեանը մէջ, իրենց մօտ էր Բնտրան, քիչ մը հեռուէն կը հնչէր Պարթեւեանի ձայնը, կային ասոնք, ասոնց մերձաւոր ուժերը, Զարդարեանը, Զօհրապը, ուրիշներ, հակառակ սակայն այդ իրականութեան, անվուսպ էր նորութեան իրենց ծարաւը, անվուսպ էր մա'նաւանդ իրենց վայրոյթը այն միւսներուն դէմ, որոնք անհոգի բառերով կը լեցնէին մթնոլորտը: Ու հոս է արդէն իրենց բանաձեւած դժգոհութեանց բուն արժէքը, որ միաժամանակ բեղուն յանձնառութեան տակ կը դնէր վիրենք՝ — ստեղծել:

Ստեղծել ապրելու համար, ստեղծել սակայն իւրայատուկ ոճով, ազգային միջավայրին մէջ, հայ հոգիին ծածուկ շերտերը յայտնաբերելու բուն նախաձայնը լիութեամբ եւ տիեզերական համաճարագին մէջ նոր հնչեղանգներ աւելցնելու արարչական վստահութեամբ: Միայն ա'յդ գնով, միայն ա'յդ հոգիին վրայ, միայն հարապատ արեան մղումներով սկսած երկունքներէն միայն կարելի է սպասել առաքելական յայտնագործութիւններ, որով նաեւ ապահովել տուեալ ազգին տոկունութիւնը ազգերու թոհորոհին մէջ ու պատմութեան բառուղիներուն վրայ:

Կը նշանակէ՝

Մեհեանականները իրենց դժգոհութիւնը չէին պոռար միայն, այլ կ'երկնէին:

Չէին պահանջեր միայն, կը ստանձնէին նաեւ:

Չէին փոշիացներ լուկ, կ'աշտարակէին նաեւ:

Ըսել կ'ուզենք՝ արուեստական չէր իրենց ալեկոծումը, արդիւնք էր խոր ուզելու, մեծ ուզելու, շատ ուզելու խառնած բային թելադրանքներու, տէր էին ներուժ կարողութեանց, բաց ուղեղներ, խիպսիսելու արութեամբ օժտեալ բնաւորութիւններ, որոնք ասկէ-անկէ հաւաքուած տրտունջներուն փշրանքները դրամագլուխի վերածելով «տեղում չդուրեցին», այլ՝ հակառակ հետագայ տարիներու դժոխքներուն, յամենայնի արդարացուին իրենց յանձնառութիւնները: Վերապրող երկուքը վկայ են այդ փառքին, — Յ. Օշականը, Կ. Զարեանը:

Չիրացնել միայն օտարներուն ոսկին, այլ ստեղծել սեփականը:

Չբաւարարուիլ, այլ գումարել:

Չերկնչիլ, այլ խիպսիսել:

Տեղ չտալ խելօք համակերպութեան, այլ խենթանալ ու խենթացնել: Աւելորդ պսակներ չշռայլել, այլ դափնին ընծայել արժանաւորներուն միայն:

«Մեհեան»ը.

Որ պէտք է մեզի:

Հին օրերուն չափ

Հին օրերէն աւելի'...

Պ. Մ.

...ԵՐԿՈՒ ԽՕՄՔ «ՄԵՆԵԱՆ»Ի ՄԱՍԻՆ

Հնթերցողին տպատրուքին մը աւելի հաղորդելու համար, որոշունցաւ ուշադրութեան քանձնել վերապրած երկու մեհենականներուն կարծիքները՝ «Մեհեան»ին դարձնել շտրք տաալ տարի ետք ստորագրուած...

Երբ կը հիմնելինք այս հանդէսը, մեր գրականութիւնը՝ չեմ ըսեր սպառման, այլ ինքնակրկնումի նշաններ կը յայտնէր. վեց տարուան մամուլի ազատութիւն մը աճեցուցած էր մեր բառական զգայարանները եւ գրողները, շատոնց պարպուած իրենց երիտասարդի, ստեղծողի աւիշէն, տարած՝ բառերէն եւ քաղաքականութենէն, ասոնց չունէին ինքզինքնին նորոգելու: Ասկէ՛ անձածկելի ձանձրոյթ մը, ամէնէն առաջ գրողները իրենց դէմ եւ ընթերցողը՝ ամէնուն դէմ: «Մեհեան»ը այդ ձանձրոյթը փարատելու, քիչ մը նոր հոսանք, քիչ մը գաղափար, «պուտ մը խենթութիւն» ու շատ մը Արեւմուտք առաջադրած էր փոխադրել մեր գրականութեան մէջ: Հիմնովին նորեր չէին պայն իմբագրողները. ունէին աւանս մը իրենց նախորդներուն վրայ, ստեղծագործական ամէն մարդէ. եւ երբ կը պահանջէին հիներէն, գիտէին, թէ անոնց չկրցածն է, որ կը պահանջէին: Ժխտում, տապալում, նորերու ամբարձում, ընկալեալ էսթէթիկային հանդէպ ընդվզող կեցուածք, քիչ մը խոշոր բաւեր (որոնք անհրաժեշտ են ամէն հանգանակի),— ահա՛ բանի մը տարրեր, որոնք սպասանակները եղան շարժումին:

(«Մայրիներու շուքին տակ», էջ 94)

ՅԱՆՈՒ ՕՇԱԿԱՆ

* * *

Հայ բթամիտ մտաւորականները աժան եւ մատչելի ապրանք էին պահանջում: Գրել-կարդալ իմացողը ուզում էր ամէն ինչ հասկանալ: Ուտանաւորը շուայտ կին էր, որ հայ վաճառականը պէտք էր շօշափէր եւ վճառումի դէմ՝ վայելէր:

Ահա այդ անպատուաբեր շրջանին «Մեհեան»ը հերոսութիւն, գոռովութիւն, մենակութիւն էր քարոզում: «Մեհեան»ը քարոզում էր նաեւ խենթութիւն եւ ապատութիւն: Խենդութի՛ւն, ապատութի՛ւն — հայ ցուլերը կատաղեցին եւ քաղքեկները հռհռեցին:

Բնական է, երիտասարդական մեր ոգեւորութեան մէջ, մի քիչ արագ էինք վազում: Ետերը, հիմնական մեր գաղափարը խեղաթիւրում էին, չէին ըմբռնում ու չէին կարողանում ապատագրուել հին նախապաշարումներից: Ետերն էլ, դիրք եւ անուն շինած մարդիկ, վախում էին իրենց ապագայի համար:

(«Անցողիք», էջ 135)

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԻՆ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Տարբեր տարիներու ընթացքին, տարբեր էջերու վրայ ու տարբեր մարդերու եղած յայտարարութենէն կը հետեւի ա՛յն՝ որ Կոստան Զարեանի մնայուն մղձաւանջներէն մէկը եղած է «Մեհեան»ի գոյաւման փաստի ու նուաճած փառքին ամբողջութիւնը իրեն վերագրելու մարմաջը:

Քիչ առաջ իմացաք առ այդ բարձրացուցած իր տրտունջքը, նոյն մարմաջին երկրորդ տարբերակը պէտք է համարել «Գրական թերթ»ին (1991, թիւ 6) մէջ երեւցած տեսաբան եւրոի խաչատրեան-ճարտարապետ Արմէն Զարեան կրոյցը, ուր վերջինը ի միջի այլոց կ'ըսէ.

«Կոստան Զարեանը ինքն է հիմնել ու ղեկավարել «Մեհեան» հանդէսը: Նա դրել է հանդէսի հաւատոյ հանգանակը, իսկ միւսները ստորագրել են»:

Ուրեմն՝

– Հիմնել է,

– Ղեկավարել է,

– Գրել է,

– Ստորագրել են:

Հատ մեր ունեցած ծանօթութիւններուն, ճարտարապետ Զարեանի առաջին երեք հաստատումներէն միայն մէկը ճիշդ է, առաջինը. – Կոստան Զարեանի հիմնադիրի հանգամանքը:

Ինչ կը վերաբերի ղեկավարման հարցին, «Մեհեան»ի մէջ Կոստան Զարեան ղեկավարուող ուժ էր աւելի եւ ոչ թէ ղեկավարող.

«Հանգանակ»ը գրած ըլլալու յայտարարութիւնն ալ առասպելին մաս կը կազմէ:

Իսկ «չորրորդ կէտը» («ստորագրել են») պարզապէս կը վիրաւորէ յիշատակը «միասնեւրոն», որոնք գրական տարբեր մարդերու վրայ ու տարբեր չափերով 1914ին արդէն կը տիրապետէին հրատարակին ու բնաւ ճիշդ չէ կարծել կամ կարծել տալ, որ կրնային յանկարծօրէն բաժնել հայ գրականութեան գրեթէ անծանօթ նորընծայի մը տեսութիւնը.

Օշական կը պատմէր, որ հանդէսին ծրագիրը կազմելէ ետք, կ'առաջարկուի, որ յաջորդ նիստին իւրաքանչիւրը բերէ իր խտացեալ մտածումը, եւ կ'ըլլայ ճիշդ այդպէս, ու կը կազմուի համադրական «Հանգանակ»ը: Ուշադիր ընթերցողը առաջին ակնարկով կրնայ ճշդել, թէ հոն քանաձեւեւած մտածումներէն ու բաղձանքներէն ո՛ր մէկը Զարեանին կը պատկանի, ո՛րը՝ Վարուժանին, ո՛րը՝ Բիւֆէճեանին, եւ որո՞նք՝ Բարսեղեանին ու Ահարոնին:

Յիշեցնել պէտք է տակաւին, որ «Հանգանակ»ին մէջ արծարծուած միտքերուն մեծ մասը արդէն քննարկուած էր մեհենականներուն կողմէ, անոնց մեհենական կնքուելէն տարիներ առաջ, «Ազատամարտ» օրաթերթի յաւելուածին էջերուն, երբ Կոստան Զարեան երուպական քաղաքներուն մէջ կը դեգերէր եւ հազիւ հեռաւոր գաղափարներ ունէր մեր գրականութեան ներկայացուցած փայլուն կամ սմոյն վիճակներուն ու միջավայրին մասին:

Մեհենականներու «ջոջ» անուններէն ոեւէ մէկուն վաստակին առանձին բան մը չ'ապեցնէր հարկաւ «Մեհեան»ի հանգանակը, անկէ տասնապատիկ անգամ աւելի հանգանակային մտածումներ բիւրեղացուցած են անոնք հարիւրաւոր իրենց էջերուն: Ամէնքս գիտենք այդ ճշմարտութիւնը եւ արժան է մեզի, որ նոյնպէս գիտնանք «Մեհեան»ի եւ անոր տարբեր բաժիններուն գոյաւման ճշմարիտ ծննդոցը...



Կիրակի 14 Յունուար:
 Ջիւն, ցուրտ ու փոթորիկ... ու ես կ'ուղղուիմ դէպի Սուրբ Թադէի վանքը՝ ծննդավայրը հայու հաւատքին, Բեթղեհէնը հայ քրիստոնէութեան:

Առաւօտեան վաղ ժամուսն ուխտի եմ կ'ած դէպի աղբիւրը լոյսին, դէպի ակունքը հայ եկեղեցւոյ առաքելականութեան:

Ու կը մտածեմ՝

Քանի՛-ճանի՛ սպասարներ Հայաստանայց Առաքելական Սուրբ Սկզբեցւոյ ժամե՛ր ու ժամե՛ր ճալած են ուխտագնացութեան այս նախապարհին, ճիւղին մէջէն կամ կիզիչ արեւին տակ՝ հաւատքը իրենց հոգիին, ազօրէն իրենց շրթներուն:

Քանի՛-ճանի՛ հայորդիներ, մեծ ու փոքր, այր թէ կին, ծարուս թէ աղքատ, նոյն հաւատեալ ու տեսիլքով դարձած են ուխտատը՝ լոյսի ու յայտի այս նախապարհին վրայ:

Ինքնաշարժերու թափօրը պահ մը կանգ կ'առնէ: Կը գտնուինք Արտազ դաւառին մէջ, Տղմուտ գետի ափին՝ Աւարայրի դաշտին վրայ. հան՝ ուր մեր ժողովուրդը որոշեց «խնայեալ մահով» պատմութիւն կերտել, որպէսզի պատմութիւն չզատնայ: Կը լսեմ պատմութեան ընդերձերէն եկող ձայնը մեր հերոսներուն, մեր սուրբերուն ու նահատակներուն՝

«Նորահրաշ պատկաւոր...»:

«Վասն հաւատոյ, վասն հայրենեաց, յառա՛ջ...»:

Դարձեալ կը մտածեմ՝
 Պիտի ըլլա՞ր Աւարայր Հայոց պատմութեան մէջ, եթէ Քաղեոս Առաքեալ
 իր արիւնը չթափէր Հայաստանի հողին վրայ: Պիտի ըլլա՞ր Գրիգոր Լուսաւորիչ՝
 իր անմար կանթեղով: Մեւ...այ Մաշտոց՝ իր Ա.Բ.Գ.ով ու տակաւին պիտի
 ըլլային մեր բիւրաւոր սուրբերը՝ իրենց հոգեթով աղօթքներով ու մեր մա-
 հատակները՝ իրենց *Քիմացեալ մահով*, եթէ Բեթղեմիէն նառագայթող լոյսը
 չգար Հայաստան:

Միթէ Հայոց պատմութեան քոյր Աւարայրները, հին թէ նոր, չմոռու-
 ցան այն հաւատքին համար սրբազան, զոր զոյգ Առաքեալները Քրիստոսին՝
 Քաղեոս ու Բարթողիմէոս Հայաստան աշխարհ բերին առաջին դարու կիսուն-
 այն հաւատքին համար նուիրական, որ անբակտելիօրէն շարժուեցաւ հայ
 կեանքին հետ եւ հունարեան ու իմաստաւորեց պատմութիւնն հայոց:

Վերը՝ կապոյտ երկինք. վարը՝ ճիւղն ու ամայութիւն: Ինքնաշարժերու
 կարաւանը յամրաբայլ կը յառաջանայ՝ մտածումներու ու ապրումներու նոր
 օղակներ շրջայելով:

Կարդացած էի Քաղեի վանքի մասին. լսած էի այնտեղ կատարուող
 ուխտագնացութիւններուն մասին: Սակայն Քաղեմ ինծի համար միշտ ալ մը-
 նացած էր երագ, տեսիլք, «խորհուրդ խորի՛ն»: Կուզէի ըլլալ այդ խորհուր-
 դին մէջ. կուզէի ըմբռնել խորհուրդն այն անըմբռնելի, անհասանելի, ան-
 մեկնելի: Ին որքան կը մտնեայի սրբավայրին, այնքան ներաշխարհս կը յոր-
 դէր փոթորկումներով: Ուրախ էի անհուճօրէն, որ հակառակ ճիւղին ու բու-
 ճին, շրջած էի ուխտի գալ: Եւ ի՞նչ իմաստ ունի ուխտագնացութիւն մը երբ
 հոն չկայ հաւատքով զսպանակուած ներքին մղում, տեսիլքով մը առցուն գո-
 հողութիւն:

Ապրումներու ալիքներուն մէջ խորասուզուած էի, երբ յանկարծ
 ակամջներուս մէջ կը պայթի ձայն մը՝

-Վեհափա՛ն, հայեցե՛ք հո՛ն, Սուրբ Քաղեի վանքն է...
 Եւ ի՞նչ հրաշք...

Լեռներուն մէջէն ժայթօղ ճարե՛ր պատարագ:
 Քաղեի վա՛նք...

Սրկիմէին էջը երկիր ու երկրին քարձրացումը առ Աստուած:
 Քաղեի վա՛նք...

Հայ հոգիի ակունքներէն ճննենք աղօթք ու հայոց պատմութեան ըն-
 դերներէն քարձրացող հեզամրմուռ շարական...

Կը մտնեամ Քաղեի: Ամէն կողմ ամայութիւն, լռութիւն: Ներկան
 ի՞նքն է միայն հոն, լեռներո՛ւն մէջ, լեռներէն վե՛ր, լեռներէն անդի՛ն...

Կը համբուրեմ անոր ճարը աղօթածայն ու կ'երգեմ՝
«Ուրախ լիբ, սուրբ եկեղեցի...»:

Կը գիտեմ իչ անդին Առաքեալի ճգնարանն ու Չարչարանաց Բլուրը՝
 Սանդուխտ կոյսին վերակառուցեալ մատուռով: Կը մտնեամ ծերադիր եկե-
 ղեցոյ աջակողմեան խորանին, ուր ըստ աւանդութեան կը գտնուի գերեզմա-
 նը Սուրբ Քաղեոս Առաքեալին:

Ու ճարերը Քաղեի լեզու կ'առնեն եւ կ'երգեն հրզը հայոց դարաւոր
 բրնձառնէութեան, երզը հայոց մահատակութեան, հրզը հայոց անմահութեան:
 Խորաններէն, պատերէն, գմբէթներէն կը լսեմ աղօթք ու շարական, սաղմոս
 ու պատարագ՝

**«Ժողովուրդ աշակերտեալք առաջելոյն Թաղոսի՝ ելեալք
 ի լոյս ի խաւարէ-
 Որք ի ձեռն սրբոյն Թաղոսի ընկայալք զորդեգրութիւն
 Հօրն երկնաւորի-
 Որք զարդարեցալք երկնային լուսով Ժողովուրդք
 Հայաստանեայց...»:**

Հան չե՛մ այլեւս. Թաղէն զիս իրեն հետ տարած է Հայոց պատմութեան դարերը հի՛ն, դարերը լոյսի ու հաւատի:

Ու կը յիշեմ՝ Ասատույ Որդոյն վերջին պատգամը իր առաջնայնորդն՝ «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս», եւ այս պատգամին հաւատարմութեամբ Սուրբ Թաղէտս ու Սուրբ Բարթողիմէտս Առաքելայնորդն գալը Հայաստան:

Կը յիշեմ՝ թէ մեր պատմագիրներուն վկայութեանց համաձայն ինչպէս Սուրբ Թաղէտս Առաքելալ Եղիսիայ Արգար թագաւորին խնդրանքով կ'անցնի Հայաստան, առաջին դարու կէտերուն եւ կը լծուի Բրիտանիայի հաւատքի տարածման առաքելութեան: Հայոց թագաւորը Սանատրուկ եւ իր դուստրը Սանդուխտ կ'ընդունին Բրիտանիայէն. սակայն կարն ժամանակ յետոյ Սանատրուկ կ'ուրանայ մօր կրօնը. Սանդուխտ հաստատ կը մնայ իր Բրիտանիայէն հաւատքին վրայ. եւ թագաւորին հրամանով Արտազ գաւառին մէջ կը նահապետուի թաղէտս Առաքելալ ու Սանդուխտ կոյսը:

Կը յիշեմ՝ թէ պատմական յիշատակութեանց համաձայն Սուրբ Թաղէտս Առաքելալ նահապետութեան վայրին վրայ առաջին դարու կէտերուն կը շինուի միայն փոքր մատուռ մը. եւ գարնանալիտէն մինչեւ Ժ. դար մեր պատմութեան մէջ երբեք չի յիշատակուիր այս վանքին անունը: Նոյն դարու սկիզբը միայն Թովմա Արծաւնի պատմագիրը կը յիշէ գայն: Կը մտնեմ ու կը կարդամ Եկեղեցւոյ պատին վրայ մնացած արձանագրութիւն մը, թէ՛ ինչպէս 1319ին Եկեղեցին երկրաբաշարծի հետեւանքով կը կործանի եւ 1329ին Զաքարիա Եպիսկոպոս կը վերաշինէ գայն:

Կը յիշեմ նաեւ՝ ինչպէս Ատրպատականի թմբի Առաջնորդ Սիմեոն Արքեպիսկոպոսի մամրով, 19րդ դարուն սկիզբները Իրան կը փորձէ Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը Ս. Էջմիածնէն փոխադրել «մեր Էջմիածին»՝ Սուրբ Թաղէ, վերանորոգելով գայն այնպէս, որ դառնար նման Ս. Էջմիածնի Տաճարին: Բայց վրայ կը հասնի Ռուս-Պարսկական պատերազմը 1827ին: Ատրպատականը կը գրաւուի Ռուս բանակին կողմէ ու Սայմաստի, Ռումիոյ, Խոյի եւ Թարիզի հայերը կը գաղթեն դէպի Հայաստանի Այրարատեան նահանգը: Սուրբ Թաղէն կ'ամայանայ:

Կը յիշեմ դարձեալ՝ թէ ինչպէս 1890-1900 թուականներուն Սուրբ Թաղէն կը դառնայ հայ ազատագրական շարժումին գլխաւոր կեդրոններէն մին, ինչպէս նաեւ թրքական շարժերէն ճողոպրած հայերուն ապաստանը: 1918ին թրքական բանակները կը ներխուժեն Ատրպատական. շրջանի հայերը կ'ապաստանին Սուրբ Թաղէի վանքը ու երկու շաբաթ հերոսաբար կը դիմագրեն: Սակայն զինամթերքը կը սպառի, թուրքերը կը գրաւեն վանքը եւ կը ջարդեն հոն գտնուող հայերը:

Կը յիշեմ տակաւին՝ թէ Էանի-Քանի՛ արքեպիսկոպոսներ, Եպիսկոպոսներ ու վարդապետներ որպէս վանահայր Թաղէեան առաքելութեան վառ կը պահեն այս արքավայրին մէջ՝ գայն դարձնելով մեր իմն Բեթղեմիէ հայ կնանքէն ներս:

Քանի՜-ճանի՜ հայորդիներ թաղի երկնասպազ գմբեթներուն տակ, մեր պատմութեան մութ ու մոայլ պահերուն, Աստուծոյ հետ կը խօսին որպէս «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» ու կ'երգեն՝ «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, ա՛ռ իս լոյս ծագեա՛ծ», որպէսզի միշտ արծարծ մնայ լոյսը աստուածային, հաւատքը առաջնական:

* * *

Դարեր եկան ու դարեր գացին, սակայն թաղի վանքը միշտ մնաց որպէս պերճախօս վկայութիւն Քրիստոսի առաջնայ Սուրբ Թաղի առաջնութեան ու նահատակութեան Հայաստանի հողին վրայ:

Դարեր եկան ու դեռ դարեր պիտի գան. սակայն թաղի վանքը միշտ պիտի մնայ որպէս կենդանի յուշարար Հայց. եկեղեցւոյ անխախտ առաջնականութեան:

Ազգովին կը պատրաստուինք մշիւռ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականացման 1700ամեակը՝ 2001 թուականին: Սակայն իւրաքանչիւր հայ պէտք է գիտակցի, թէ քրիստոնէութիւնը 301 թուականին չէ որ մուտք գործած է Հայաստան: Ան առաջին երեք դարերուն ներկայ էր Հայաստանի մէջ՝ Սուրբ Թաղէն ու Սուրբ Բարթողիմէոս Առաջնայնորդի մարտգալստութեամբ: Այլ խօսեմով՝ առաջին դարուն իսկ Հայց. եկեղեցւոյ հիմը դրուած էր գոյգ Առաջնայնորդի արիւնով շարձախուած Հայաստանի հողին վրայ: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչով Հայց. եկեղեցին ստացաւ հաստատութեանական դրութիւն ու քրիստոնէութիւնը դարձաւ պետական կրօն:

Ահա թէ ինչու Հայց. եկեղեցւոյ *Հիմնադիրներն* են Սուրբ Թաղէն ու Սուրբ Բարթողիմէոս Առաջնայնորդի. անոնք նաեւ *առաջին լուսաւորիչներն* են Հայաստանի: Իսկ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ *կազմակերպիչն* է Հայց. եկեղեցւոյ ու *երկրորդ լուսաւորիչը* Հայաստան աշխարհի:

* * *

Մեկնելէ առաջ դարձեալ կը ճայիմ Սուրբ Թաղի վանքին, լեռներու լանջին ճարեղէն արօթ դարձած այս մեծաւոր սրբավայրին: Ու կ'ըսեմ ես ինծի՝

Ո՛չ, պէտք չէ՛ միմակ թողուլ թաղին, որովհետեւ առանց թաղին մե՛նք հե՛մ միմակ, մե՛նք հե՛մ ազճատ: Պատմութեան ու քննութեան դառնութիւնը մաշակած Սուրբ Թաղէն պէտք է վերաշինել ու վերականգնել, վերածաղկեցնել ու վերաթեւորել մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի կեանքին մէջ:

Դէպի 1700-ամեակ՝
Թաղի՛ ճամբով,
Թաղեան հաւատով ու տեսիլով:
Արդ՝ *«Եկաք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա՛ ծագեաց մեզ լոյս՝ ի Հայաստան աշխարհի»*:
Ահա ո՛խտը իւրաքանչիւր հայուն:

* * *

Կը վերագոռնամ թաղէն՝ թաղէն բերելով ինծի հետ...

Վ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՆՅԱՅՏ ԲԱՐԵԿԱՄԸ

«Բագին»ի մէջ առաջին անգամ երեւոյղ Վարդան Մատթէոսեան ծանօթ անուն է մտաւորական մեր շրջանակներուն մէջ եւ կը վայելէ խղճամիտ մտաւորականի մը արդար վարկը: Ան լատառեղեակ է թէ՛ Հայոց պատմութեան եւ թէ՛ մեր գոյգ գրականութեանց պատմութեան ծալքերուն ու մեր թերթերուն տուած գրութիւններուն քովն ի վեր՝ հայկական նիւթերով յաճախ հանդէս եկած է Պուէնոս-Այրէսի տեղական մամուլին մէջ, լատկապէս «Լա Փրէնսա» անուն նշանատր թերթին էջերուն:

Մեր ունեցած համոտ տեղեկութիւններուն համաձայն, Վարդան Մատթէոսեան սպաներէնի թարգմանած է Եղիշէ Զարենցէն հատընտիր ժողովածու մը եւ սպանախօս ընթերցողներ ներկայացուցած է ժամանակակից հայ բանաստեղծներէն առանձին նմուշներ:

Հետաքրքրական է Կոստան Զարեան-Անտիք Իսահակեան փոխարարութիւնները պարզաբանող Մատթէոսեանի հետազոյ էջերուն տրուած գրութիւնը, որ ինչպէս իրատար կը վկայէ ինք, բոլորովին անծանօթ նիւթ մըն է մեր գրականութեան համար:

Կը յուսանք «Բագին»ի մէջ յաճախ եւ նոյնպիսի հետաքրքրական գրութիւններ ներկայացնել Վարդան Մատթէոսեանէն, որ երեսունի շուրջ ղեզնդող նրիտասարդ մըն է եւ հենու-հետաւոր Պուէնոս-Այրէսի իր անկիւնին մէջ օրինակելի լրջութեամբ մը կը հետազօտէ մեր գոյգ պատմութիւնները:

Աւետիք Իսահակեանի կեանքն ու գործը, ամոր գրած կարեւոր ու անկարեւոր տողերը արեւելահայ-խորհրդահայ քանի մը սերունդ ընթերցողներու եւ գրագէտներու սնունդը կազմած են: Կարելի է ըսել, թէ Խորհրդային Հայաստանի մէջ ամէն տասնամեակ իր Իսահակեանը ունեցաւ: «Իսահակեանագիտակեան» հեղեղ մը գոյացած էր, որմէ սակայն բազմաթիւ «վտանգաւոր» էջեր դուրս մնացած են, իսկ ուրիշներ լոյս աշխարհ եկած՝ կտրատուած կամ ալիքափոխուած վիճակով:

Վերջին տարիներուն, երբ ազատութեան քանի մը սրբոց ու տարաւ գրական ակունքները խցածող բոլոր արգելիքները, Իսահակեանէն մոր էջեր ու ամոր կեանքէն անյայտ դրուագներ սկսան երեւալ գալ: Այդպէս, Կոստան Զարեանի անձնական արխիւին մէջ, համգուցեալ Արմէն Զարեանին մօտ, ա-

նակնկալ կերպով հանդիպեցանք Իսահակեանի ստորագրութիւնը կրող երկու նամակներու¹:

Մինչեւ այն ատեն, ո՛չ մէկ տուեալ մեզի ենթադրել կու տար նամակագրութեան մը եւ, մա՛նաւանդ, բարեկամական կապի մը գոյութիւնը: Այսուամենայնիւ, անոնք իրօք եղած էին, թէպէտ կարճ շրջանով մը: Աւելի՛ն. ինչպէս պիտի տեսնենք, Իսահակեանը երեւցած է Ջարեանի գործին մէջ:

Երկու նամակները Վեներիկ գրուած են, 1921ին: Անոնց ընթերցումը մեզի կը հաւաստիացնէ նախօրօք գոյութիւն ունեցած յարաբերութիւն մը:

1915ին Խալիլա ժամանելէ ետք, Ջարեան ընտանիքի հիմնական բնակավայրը, կարճ տեղաշարժերով համդերձ, Ֆլորանսը եղած է (1915-1921): Գրական թէ համրային գործունէութեան բերումով, Ջարեան ժամանակաւոր կեցութիւն ունեցած է այլ ժողովներու մէջ, մասնա՛ւ արտասահման: 1919ին Պոլիս եւ Կովկաս գտնուած է. իր հետեւերում կը հանդիպինք Նիսի մէջ ու մասնաւոր, ինչպէս կը նկատենք Իսահակեանի նամակներէն, ժընեւ: Ե՞րբ. հաւանաբար 1920ին:

Իսահակեան ժընեւ ապրած է Յունուար 1916էն մինչեւ Մարտ 1921: Ապա տեղափոխուած է Վեներիկ, ուրկէ Յունուար 1921ին կը գրէ Ջարեանին.

«Ես առայժմ լաւ եմ գգուում ինձ, քայքայ վախենում եմ շուտ ձանձրանամ. պարագայում եմ, ու երբեմն-երբեմն վաճճ գնում՝ գրէր ստանալու համար»:

Ժընեւի մէջ, Իսահակեան սերտ կապ ուներ «Ժողով»-ի խմբագրութեան հետ, ուրկէ օրը օրին տեղեկութիւններ կը ստանար հայկական անցողորմաբարու մասին: Լրատուական այս առատութեան դիմաց, բնական է, որ Վեներիկը, հակառակ Ա. Ղազարի եւ մամուլի անոր հաւաքածոներուն գոյութեան, անապատային վիճակ մը պարզեր իր առջեւ: Ահա թէ ինչո՛ւ ան կը մշէր.

«Ջգուում եմ, որ ժընեւը շա՛տ անշի լաւ էր ինձ աշտեղ ճորութիւնների տեսակետից. գրեթէ բան, լուր չեմ ստանում Հայաստանից կամ հայկական հարցի վերաբերեալ»:

Իսահակեանի վերապահութիւնը Վեներիկի նկատմամբ շուտով կը քացայտուի կտրուկ կերպով: 31 Մայիսին, կը գրէ Ջարեանին.

«... Ուզում եմ հեռանալ Վեներիկից եւ ինչ մօտ գալ. պատճառները մի-հանի հատ են — անհաճոյ միջավայր, ձանձրոյթ. գէշ կլիմայ՝ ձմեռը խոնավ, ամառը խեղդող. բնակարանի անյարմարութիւն. — մի խօսքով ինչ որ ինձ ասացիր ժընեւ, շա՛տ ճիշդ դուրս եկաւ. ցաւում եմ, զոչընում եմ, որ ինչ հետ չմեկնեցի ձիրենցէ»:

Ժընեւեան հանդիպումը, ամէն պարագայի, շատ կարճատև էր, ինչպէս կը տեսնուի նոյն նամակին մէկ այլ հատուածէն.

«... Այն մի էանի ժամերը, որ ժընեւ հետդ անցուցի, ինձ կարծել է տալիս, որ քո մէջ այս՝ օտարութեան անապատի մէջ՝ պիտի գտնեմ մտերիմ սրտակից (...):»:

1) Յաջորդական էջերուն մէջ հրատարակուող նամակներէն թէ տպագրութեան թերութեան բոլոր ցարձանները տրուած են յարգելով Իսահակեանի գրեւորած ու ոճը:

Իսահակեան իր կեցուածքը կը քացատրէ հետեւեալ կերպով.

«Նրիտասարդութեանս եղիլ եւ այստեղ եւ լաւ տպաւորած էի. հիմա հիասթափեցայ, երեխան տուի դպրոց՝ ցերեկօթիկ, քայց մտնէմ ծանօթանալով մեքոտի եւ մարդկանց հետ.— զգեցցի»:

Այստեղ կը պարզուի Իսահակեանի կեանքին բազում յարակարծիքներէն մէկը. իր որդիւն՝ Վիգէնը, Մուրատ-Ռաֆայելեան վարժարան մտած է 1921ին, քայց հակառակ հօր գագացած «զգուանք»ին, հոն շարունակած է իր ուսումը մինչեւ շրջանաւարտ դառնալը 1926ին, երբ մօրը հետ Փարիզ փոխադրուած է: Երկրորդ յարակարծիք. հայրը, հակառակ Վեներիկէն խոյս տալու իր բուռն ցանկութեան եւ կատարած բոլոր փորձերուն, տեղէն պիտի չյաջողէր շարժիլ մինչեւ մոյն տարին, երբ կը կատարէ դէպի Խորհրդային Հասարակական իր առաջին ուղեւորութիւնը:

Բանաստեղծը կը ձգտէր Ֆլորանս մեկնիլ կամ այլապէս Հռոմ: Ըստ երեւոյթիմ, Ջարեանն ալ տեղափոխուելու որոշ տրամադրութիւններ ցոյց տրուած էր, իսկ որ Իսահակեան կը գրէ.

«Ինչ ի՞նչ եւ մտադիր ըմբի, մի՞թէ ուզում ես հետնալ. լաւ մտածի՛ր. Պոլիս քան խորհուրդ չեմ տայ: Ո՞վ գիտէ, մի օր էլ սրիկայ անգլիացիք թողնեն ու փախնեն, ի՞նչ անել յետոյ»:

Ջարեան Իսահակեանի խորհուրդիմ մտիկ չըրաւ. ընտանեօք հանդերձ 1921ի վերջերը Պոլիս մեկնեցաւ, ուր ընդամէնը ութ ամիս ապրեցաւ: Օգոստոս 1922ին, երբ «սրիկայ անգլիացիք» քաղաքը պարպած էին արդէն եւ Քեմալական շարժումը անշնչելի կը դարձնէր մթնոլորտը, Ջարեան տեղափոխուեցաւ Հայաստան, ուր յաջորդ երկու տարիները ապրեցաւ որպէս Երեւանի համալսարանի բաղնախոսական գրականութեան դասախօս (1922-1924):

Այս մամբանութիւնները անհրաժեշտ են փոփոխութիւն մը կանխելու համար. 14 Մայիս 1922ին, Վիեննայի «Արեգ»ի խմբագիր ու «Սասնայ Մհեր»ի առաջին հրատարակութեան պատասխանատու Սիմոն Յակոբեանին ուղղուած ընդարձակ նամակի մը մէջ, Իսահակեան հետեւեալը կը գրէ, ակնարկելով գիրքի տարածումի ու վաճառքի աշխատանքներուն.

«Արանք եմ իմ խորհուրդներս, քայց դու արա, ինչպէս ուզում ես, ի՞նչ քանակով ուզում ես, դրկիր: Ժընեւ էլ որ դրկես, գէշ չի լիմի, իսկ Բերլին ընկերներ շա՛տ ունենէք, հենց Ջարեանը՝ կը տարածէ. շա՛տ հայեր կան հոն»²:

Նամակիմ հրատարակիչը՝ Մարտիրոս Միմասեան, ոչինչ գրած է այս *Ջարեան*ին իմբնութեան մասին, որ յայտնապէս կոստան Ջարեանը չէ. ինչպէս ըսինք, այդ թուականիմ ան Պոլիս կը գտնուէր: Եթէ եղածը տպագրական սխալ մը կամ սխալ ըմբերցում մը մկատուի, հնարաւոր է, որ Իսահակեան ակնարկած ըլլայ պատմաբան Ջակոբ Ջորեանին (1894-1942), ստալինեան հետագայ մաքրագործումներու զոհերէն, որ այդ տարիներուն Պերլին կ'ուսանէր մաթեմատիկայի Հայաստան ներգաղթելը 1925ին: Իսկ եթէ սխալ վերծանում չկայ, մեզի կը մնայ ընդունիլ, որ մոյնիմբն Իսահակեանը վրիպելով «Ջարեան»

2) Ա. Իսահակեան, Նամակներ Սիմոն Յակոբեանին, «Բագին», Սեպտեմբեր 1983, 56:



գրած է փոխանակ նագարեանի. հետեւաբար խօսքը կը վերաբերի Լիպարիտ Նաղարեանցիին, որ Իսահակեանի հետ «Հայագերման Ընկերութեան» դիւանի անդամ էր եւ Պերլին արած է մինչեւ 1920ական թուականներու կէտերը:

Առարկայական դժուարութիւններու կողքին, Իսահակեան մեկուսի կեանք մը կ'ապրէր. — «Այժմ եւս այստեղ գրեթէ մեռնակ եմ հոգով, ընկեր եւ ինձ հասկացող չունեմ (վարդապետները ճիգովի թմեր են) (...)» (31 Մայիս 1921): Գրեթէ համահունչ գաղափարներ կը յայտնէր նոյն տարուան Օգոստոսին, Ազոլոյէն Սիմոն Յակոբեանին գրած նամակով. «(...) Հոգեպէս մեռնակ եմ, անընկեր. միակ մօտիկ եւ սիրելի մարդը ինձ համար — Հայր Յովսէփն է. *ոռտա՛ւայ* է, սրամով շա՛տ բան ասած կը լինեմ: Միւսնե՞րը — եզրիտ, խորհրդամակ (...):»:

Ինչպէս կը տեսնուի Իսահակեանի եւ վեմետիկի Միսիթարեաններուն միջեւ յարաբերութիւնները բաւական գաղջ եղած են, որուն մասին բանաստեղծը բազմիցս ակնարկած է իր նամակներուն մէջ: Օրինակ, 31 Մայիս 1921ին Ջարեանին կը գրէ, թէ «(...) ուշ-ուշ եմ տեսնում դրանց, ու տեսնելիս էլ — խոյս եմ տալիս. մէկ-մէկ գնում եմ վանքը՝ գրքեր նայում. — այդքան, չարժէ դրանց մասին երկարել, լաւ եւ ճանաչել. եւ չէի ճանաչում»:

Ան մասնաւոր կերպով անդրադարձած է Ջարեանին վաղեմի ծամօթի մը՝ Հ. Սիմոն Երեմեանին, որուն մասին կ'ըսէ, թէ «Սիմ. Երեմեան կոչւած բանաստեղծը դեռ ոչ մի օր մօտս ոտք չի դրել (...): Ազոլոյէն 1921 Օգոստոսին գրած նամակով, Սիմոն Յակոբեանին հետեւեալ մանրամասնութիւնները կու տայ.

«Երեմեան Սիմոնը, որ[ին] հեռուից բարեկամ էի, գալուս օրումսից վատ դիրք բռնեց իմ դէմ. խուսափեց, խուսափեց, եիմա իրար չենք բարեւում. նա ուզում էր, որ եւս իրան հոչակէի մեծ բանաստեղծ, մեծ քննադատ. իսկ եւս — մի՞թէ ընդունակ եմ կեղծաւորելու եւ գաճաճներին գլուխ խոնարհելու»³:

Վերոյիշեալ նամակին մէջ, Իսահակեան կը գանգատի Ջարեանին.

«Հարցնում եւս թէ վանքի տպարանի հետ մի բան յաջողացրի՞ր. — ... նոյնիսկ փորձ չարի. հոտառութիւնս աւելի խելօք է... այդ շիզոֆրենները անվերջ գանգատում են, թէ աղքատ ենք, վնաս ունինք, եւ այլն եւ այլն»:

Սակայն, կ'երեւի, որ հետագային փորձ ըրած ու բան մը յաջողած է. 1922ի Յունուարին, «*Աշխատեալ ծաղիկներ*» գիրքին մասին Ս. Յակոբեանին կը հաղորդէ, թէ «վանքում (Ս. Ղազարի) մի բանաստեղծ. ժողովածու եմ հրատարակում, եին եւ նոր երգերի, մօտ 100 երես, պարտէով»⁴:

Ջարեանի պատասխանները մեր ձեռքը չեն անցած, բայց ըստ երեւոյթի, Ֆլորանս տեղափոխուելու մեծ խրախոյս չէ տուած Իսահակեանին, որ այսուհետեւ մինչեւ 1922ի վերջերը իր ճիգերը եւ յոյսերը Վիեննայի ուղղութեամբ կեդրոնացուցած է, դարձեալ՝ անօգուտ:

3) «Բագին», Մայիս 1983, 63:

4) *Անդ*:

5) *Նոյն տեղը*, 69:

Սակայն, մեզի կը թուի, որ յաջորդ ամիսներում, մինչև Զարեանի Պոլիս տեղափոխուիլը, երկու գրողներուն միջև ուրիշ շփումներ եղած ըլլալու են: Եւ կամ արձանագրուած են 1924 Սեպտեմբերին, երբ Զարեան Վենետիկ կը ժամանէ, Հայաստանէն մեկնելէ ետք: Անուղղակի փաստը կը գտնենք «Բանկօսպը եւ մամուլի սկզբները» վեպի այն հատուածին մէջ, ուր Հայաստանէն մեկնած Վահան Իրերեանը (Զարեանի alter ego-ն) Վենետիկ կը հասնի: Հոն ի միջի այլոց կը հանդիպի հին բարեկամի մը՝ Սերգօ Ալամդարեանին, որ Պերլինի խորհրդային ներկայացուցչութեան քարտը պաշտօնատարներէն է (առայժմ չենք կրցած ճշդիւ անոր ինքնութիւնը): Տեղի կ'ունենայ հետեւեալ խօսակցութիւնը.

«Էստեղ ա «Մուսամէդ Բէն Ալի»ի հեղինակը: Ասում է՝ ուզում է վերադառնալ հայրենիք, հինգ հարիւր տոյարի պէտք կայ: Ի՞նչ ես մտածում...

— Դէ, եթէ ուզում է թող վերադառնայ... Հա՞ իսկապէ՞ս ուզում է...

— Ի՞նչ կայ որ...

— Ոչինչ:

Ի՞նչ գարմաւալի բան, մտածեցի ես: Փոքրահասակ, հաստիկ, կոսած այս մարդը դեռ երէկ փրփուրը շրթերին ճառում էր Թորհրդային Հայաստանի դէմ, փառաբանում ցարիզը, հայեցում բոլշեւիկներին:

— Վաղո՞ւց է որ ուզում է...

— Մի տարի է նամակներ է գրում: Էլ յոգնեցի: Բանաստեղծ մարդ է, կը գնայ, կը տեսնի, մի լաւ բան կը գրի: Թէ չէ՝ ասում է այստեղ սպառել է, մուսան չի ներշնչում...

— Անշուշտ, թող գնա ներշնչուի՞:

«Մուսամէդ Բէն Ալի»ի (=«Արու Լալա Մահարի») հեղինակը, պարզ է, Իսահակեանն է: 1959ին Գահիրէ երատարակուած մամակներէն գիտեմք, որ 1922-30 թուականներում հոգեկան մեծ պայքար մը պրօբցաւ ան, Հայաստան երթալու կամ չերթալու կապակցութեամբ: Յայտնի է, ճոյնպէս, որ այս երկրորդ տրամաբան կապուած էր համայնավար վարչակարգի սեղմումներուն եւ արտասահմանի տնտեսական անորոշութեան կշռադատումին հետ: Գալով «Փառաբանում ցարիզը, հայեցում բոլշեւիկներին» հաստատումին, առաջին մասը անհիշող կը թուի՝ համաձայն տպագիր նիւթերուն, եւ խնդիրը չափէն աւելի կը պարզացնէ: Այս գրոյցը վաւերական հիմք ունենալու է. ան թոյլ կու տայ ենթադրել, որ Զարեան եւ Իսահակեան պէտք է ուրիշ հանդիպումներ կամ մամակագրական շփումներ ունեցած ըլլան, քանի որ մեր ձեռքը հղող երկու մամակներուն մէջ Իսահակեանի հակաբոլշեւիկեան արամադրութիւններուն մասին խօսք չկայ, եւ ծանօթ չենք այդ տարիներուն բանաստեղծին կողմէն երատարակուած որեւէ յօդուածի, որ այդ գաղափարները արտայայտուած ըլլան:

1930ին, Իսահակեան Հայաստանէն դարձին Փարիզ կը հաստատուէր, մինչ Զարեան Փարիզէն կը հեռանար Վենետիկ: Հանդիպեցա՞նք արդեօք: Իսա-

6) Կոստան Զարեան, «Բանկօսպը եւ մամուլի սկզբները», *Անթիլիաս*, 1987, 441:

հակեմ կարգա՞ց Ջարեանի «Բանկոսպը...»-ի տողերը:

Զեմք գիտեր: Գիտե՞մ սակայն, որ երեսուն տարի ետք՝ 1962-ին, Ջարեան եւ շայտստամ կը մեկնէր եւ Իսահակեանի մտամ — ամբողջատիրական կարգերու թիւ մէկ պայմանը անհատական կամքի ընդունմէ — Յուստացումի թուղթեր կը ստիպուէր ստորագրել...

Պուէնոս-Այրէս

*
* *

ԱՌՅՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻՆ

Կոստան Ջարեանի կեանքն ու գործը ուսումնասիրութեան գրեթէ անկողի դաշտ մըն է: Հայ թէ՛ օտար տարբեր գրողներու եւ մտաւորականներու հետ անոր կապերը՝ նոյնպէս: Այսպէս, Աւետիք Իսահակեանի եւ Կ. Ջարեանի փոխյարաբերութեան գոյութիւնը ցարդ յայտնի չէր գրականութեան պատմաբաններուն: Ջարեանի «Բանկոսպը եւ մամուլի ոսկորները» ծաւարուն ու անաւարտ վէպին մէջ, ուշադիր ընթերցողը կրնայ գտնել Իսահակեանի յիշատակումը, քողարկումը՝ «Միր Պահատուր Ալի» վիպերգի հեղինակի տարագրով:

Ստորեւ լոյս ընծայուող երկու նամակները թոյլ կու տան բանալ այդ անյայտ էջը: Աւետիքն կը լրացնեն Իսահակեանի վեներտիկեան շրջանի (1921-26) տուեալները, կը ճշդեն նաեւ Ջարեանի բնակավայրը 1921 թուականին՝ Փլորանս, ուրկէ պիտի անցնէր Կ. Պոլիս գրական-գեղարուեստական նոր շարժումի մը մասնակցելու ցանկութեամբ, որուն արգասիքը պիտի ըլլար «Բարձրավանք» հանդէսի կարճատեւ հրատարակութիւնը:

Մնաց որ, հակառակ վեներտիկ սպրեյու իր բացայայտ դժգոհութեան եւ տեղափոխուելու փորձերուն, Իսահակեան ջրանցքներու քաղաքը մնաց մինչեւ իր առաջին վերադարձը Հայաստան՝ 1926-1930:

Նամակները կը հրատարակենք նոյնութեամբ, պահպանելով հեղինակի գրելածերը, ուղղագրութիւնը եւ ոճը: Զեռագիրները կը գտնուին Կ. Ջարեանի արխիւին մէջ. զանոնք սիրայօժար կերպով 1992-ին մեր տրամադրութեան տակ դրած է գրողին զաւակը՝ հանգուցեալ ճարտարապետ Արմէն Ջարեանը:

Պուէնոս-Այրէս

ՎԱՐՊԱՆ ՄԱՏԹԻՍԵԱՆ

Ա.

6 Մայիսի [1921], Վենետիկ

Միրելի Զարեան,

Կարծում էի թէ դուք պիտի գրէիք ինձ Ձեր Ֆիրենցէ լինելու մասին². բայց նամակ չառայ մինչեւ օրս:

Ես առայժմ լաւ եմ զգում ինձ, բայց վախենում եմ շուտ ձանձրանամ. պարսպում եմ, ու երբեմն-երբեմն վանք³ գնում⁴ գրքեր ստանալու համար:

Դուք ինչ էք անում, ի՞նչ էք որոշում, ի՞նչ եղաւ եղբայրդ⁵, առողջութիւնը ինչպէ՞ս է:

Ձգում եմ, որ ժընեւը⁵ շա՛տ աւելի լաւ էր քան այստեղ նորութիւնների տեսակետից. գրեթէ բան, լուր չեմ ստանում Հայաստանից կամ Հայկական հարցի վերաբերեալ:

Դուք մի բան գիտէ՞ք: Բարեւներ եւ յարգանքներ Ձեր տիկնոջը ու Ձեզ իմ եւ նոյնպէս կնոջս կողմից:

Ձերդ՝ ԱՆԵՏԻԲ ՌՍԱՀԱԿԵԱՆ

Բ.

31 Մայիս [1921], Վենետիկ

Միրելի Զարեան,

Քարտդ վաղուց եմ ստացել, ուչ պատասխանեցի, որովհետեւ վարանք[ի] մէջ էի մի որոշմունք կայացնելու համար, որ թուով է թէ՛ հիմա վճռել եմ. ուղում եմ հեռանալ Վենետիկից եւ քեզ մօտ գալ. պատճառները մի-քանի հատ են. անհաճոյ միջավայր

1) Տարիքիւք՝ ըստ գրողմակնիքի:
2) Նամակը հասցեագրուած է Si[lg]n, Const Zarian, 27 S. Domenico, Villa Boeclin, Fresole [Fiesole], Firenze.
3) Վենետիկի Միքայելեաններու Ս. Ղազարի վանքը:
4) Համաժողովուրդի Երկրագործական Կ. Զարեանի կիսերայրը, Երզնէ:
5) Իստակեան ժընեւ ապրած է 1916 Յուճուարէն միջին. 1921 Մարտ:



ձանձրոյթ՝ գէշ կլիմայ՝ ձմեռը խոնաւ, ամառը խեղդող՝ բնակարանի անյարմարութիւնը։— մի խօսքով ինչ որ ինձ ասացիր ժընեւ, շատ ճիշդ դուրս եկաւ՝ ցատում եմ, զղջում եմ, որ քեզ հետ չըմեկնեցիք Ֆիրենցէ։ Երիտասարդութեանս ատեն եղել էի այստեղ եւ լաւ տպաւորուած էի⁶։ Հիմա հիասթափուեցայ, երեխան տուի զպրոց⁷՝ ցերեկօթիկ, բայց մօտէն ծանօթանալով մեթոտի եւ մարդկանց հետ— զգուեցի։

Այժմ ես այստեղ գրեթէ մենակ եմ հոգով, ընկեր եւ ինձ հասկացող չունեմ (վարդապետները ճիգութիւններ են) եւ զգում եմ, որ քեզ հետ լաւ կ'սպրեմ. այն մի քանի ժամերը, որ ժընեւ հետո անցուցի, ինձ կարծել է տալիս, որ քո մէջ այժմ օտարութեան անսպասի մէջ՝ պիտի գտնեմ մտերիմ, սրտակից մէկ լաւ ընկերը ունենալը մեծ բախտ է, եւ բաւական է, կ'ինս էլ նոյն զգացումները ունի քո հանդէս։

Հիմա ինձ իսկոյն գրիր, թէ այն բնակարանը, որ ասում էիր թէ 3-ձ սենեակ ունի, կահաւորուած, ու կարծեմ ամսական 160 Փրկ. կա՞յ նորէն, ու կարո՞ղ ենք գալ այդ յոյսով. բնարանը ապահով պիտի լինի՝ երեք անկողին, գոնէ մի գրասեղան, մի-երկու պահարան, խոհանոց անհրաժեշտ պարագաներով, ափսէ, եւնի եւ մանաւանդ օղային գազ, կերակուր եփելու գազ. կարծում եմ, որ ջուր եւ լոյս (եթեկտրակ[ան]) կունենայ տան մէջ. ի՞նչքան ժամանակի համար ապահով է տունը. գոնէ միջին մի տարի, որ յանկարծ փողոց չնետն մեզ։ Ահա այսքան գործնական հարցեր։

Պիտի գրես նոյնպէս, թէ ամառը ո՞ւր պիտի անցկացնես. հնարաւոր չէ՞ արդեօք այդտեղ անցնել, առանց գիւղ գնալու, աւելորդ ծախսեր չանենք. այստեղ անկարելի է ամառը մնալ։

Եթէ ասածը բնակարանը հիմա չկայ, կարո՞ղ ես մի 20 օրւայ մէջ առնուադն 2 կահաւորուած սենեակով ու մի խոհանոցով բնակարան գտնես, քո մօտերը գինը 150-200 Փրանկ։ Իսկ եթէ այդ միջոցում չես կարող, այն ժամանակ մենք այստեղ գիւղ գընանք, եւ միջին Սեպտեմբեր դու մեզ համար գլուխ դնելու տեղ գտնես։

Կարծեմ, ամէն բան ասացի, եթէ բնակարանը կայ, քո վիլլալին մէջ, ուրեմն կ'պատրաստուեմ եւ միջին ամառս վերջը կը գամ։

Երեխայի կրթութիւնը տանը պիտի հոգանք. այդ մասին միասին կը խորհենք՝ քո փոքրերի եւ իմի մասին մի բան անելու։

Գոնէ այս ձմեռ[ն] էլ անցկացնենք, գուցէ միւս տարին հայերիս գրութիւնը պարզի, ապա թէ ոչ ներկայումս անմտութիւն

6) Իստանբուլում Վեմսիկ այգեպաճ է 1901ին։

7) Վեմսիկի Միքայելեան Միսրակաճիւմ Մուրա-Ռաֆայելեան վարժարանը։

է ընկ(ն)ել այս ու այն կողմ. Կ. Պոլիս վտանգաւոր է, իսկ Բուլ-
ղարիս — չի ժպտում, եւ վերջապէս հետու է: Ճանապարհածախս
եւայլն:

Դու ի՞նչ ես մտադիր անել, մի՞թէ ուզում ես հեռանալ. լաւ
մտածի՛ր. Պոլիս բնաւ խորհուրդ չեմ տայ: Ո՞վ գիտէ մի օր էլ
սրիկայ անգլիացիք թողնեն ու փախնեն, ի՞նչ անել յետոյ:

Հարցնում ես թէ վանքի տպարանի հետ մի բան յաջողաց-
րի՞ր.— «...նոյնիակ փորձ չարի. հոտառութիւնս աւելի խելօք է...
այդ շիզփիթները անվերջ գանգատում են, թէ աղքատ ենք, վնաս
ուճիկնք, եւայլն եւայլն՞. Սիւմ. Երեմեան կոչւած բանաստեղծը՞, դեռ
ոչ մի օր մօտս ոտք չի դրել. ուշ-ուշ եմ տեսնում դրանց, ու
տեսնելիս էլ — խոյս եմ տալիս. մէկ-մէկ գնում եմ վանքը՝
գրքեր նայում.— այդքան չարժէ դրանց մասին երկարել. լաւ ես
ճանաչել՞, ես չէի ճանաչում:

Երկար եղաւ նամակս. այդ հոգան ու մտմտանքն էր պատ-
ճառը, որ օրէցօր յետաձգում էի նամակս, գնամ-չգնամ, գնամ-չը-
գնամ...»

Եթէ մօտը չեղաւ, ապա ուզում եմ Հոտմ գնալ, բայց յոյս
չունեմ բնաւ այնտեղ բնակարան գտնել, եւ չգիտեմ ո՞ւմ էլ գը-
րեմ, որ այդ հոգալը առանք. դու չունե՞ս մէկը, որ հակառակ դէպ-
քում, եթէ Ֆրորանս չեղաւ.— այնտեղ պատասպարւինք...»

Եթէ ո՛չ քո մօտ, ո՛չ Հոտմ,— ապա ուղղակի չգիտեմ ո՞ւր
երթամ. Վենետիկ(ից) կըտացայ աւելի սիրով գիւղ՝ դաշտե՛ր, ա-
զատ դաշտե՛ր, քան այստեղի հոտած կանաչները հոտած Հայր
Սուրբերով. իսկ ժընեւ դառնալ — երբէք, սիրտս խառնում է
ուրիշ բան էր մնացած լինէինք:

Սպասում եմ նամակիդ:

Յարգանքի բարեւներ տիկնոջդ, քեզ, երեխաներին իմ եւ
տիկնոջս կողմից: Մնամ

Ք.՝ ԱԻԵՏԻՔ ԽԱՀԱԿԵԱՆ

8) 1922ին, Իսահակեան Վեներիկի մէջ հրատարակած է «Աշխարհ Եւրոպայի» ժողովածուն:
Այդ մասին, Սիմոն Յակոբեանին ուղղուած անբռնակիր, բայց հաւանաբար 1922 Յունի-
ստանի գրուած նամակին մէջ կը գրէ.— «Վանքում (Ս. Ղազարի) մի բանաստեղծ.
ժողովածու եմ հրատարակում, հիմ եւ ճոր երգերի, մօտ 100 երես, պարտէսով»
(«Բարգիւն», Մայիս 1923, 89):

9) Հ. Սիմեոն Սրեմեան (1871-1938), Վեներիկի Միսիբարեան Միսրեանի անգամ,
բանաստեղծ ու գրադատ:

10) Կ. Զարեան 1911-12 թուականներում Ս. Ղազարի մէջ հայերէն ստեղծ է:

«ՄԻՐ ՊԱՀԱՏՈՒՐ ԱԼԻ»Ի ՀԵՏՔԵՐՈՎ...

Ինչպէս նկատեց ընթերցողը, Վարդան Մատթէոսեանի շօշափած Կոստան Զարեան-Աւետիք Իսահակեան փոխյարաբերութիւնը որոշ չափով անծանօթ ու բոլորովին անմշակ մնացած նիւթ է մեր գրականութեան համար: Հայ թէ օտար մշակութային ժառանգութիւններուն բացուելու եղանակով եւ, մա՛նաւանդ՝ ստեղծագործական հակումներով իրարու բոլորովին հակադիր դէմքեր եղած ըլլալու փաստով, դժուար թէ ոեւէ մարդ կարենար կռահել, որ Զարեան եւ Իսահակեան կրնային երբեւիցէ բարեկամական կապեր մշակած ըլլալ: Ենթակային համար բոլորովին անհնար պիտի թուէր այդ մէկը, եթէ ծանօթ ըլլար քսանական թուականներու կէսերուն Իսահակեանի անձին ու գործին ըրած Զարեանի բացասական ակնարկութիւններուն, որոնք խիստ կասկածելի է, որ նոր տուեալներու լոյսին տակ կը ձեւակերպուէին:

Ինչպէս կը յիշեն ընթերցողները, այդ ակնարկութիւններէն մէկը, «Մուհամմէտ Բէն Ալի» փոխանունին տակ, դեռ քանի մը տարի առաջ, ու պարագաներու հարկադրանքով, հեղ մը ուշադրութեան յանձնուեցաւ «Բազին»ի (1993, թիւ 34) մէջ եւ վաղուց մաս կը կազմէ Իսահակեանի յարափոփոխ կենսագրութեան վերաբերող թղթածըրարին:

Վարդան Մատթէոսեանի ուշադրութենէն չէ վրիպած Իսահակեանին ըրած Զարեանի «Մուհամմէտ Բէն Ալի» ակնարկութիւնը, բայց ստուգապէս մեր ուշադրութենէն վրիպած է խնդրոյ առարկայ դէմքերուն փոխյարաբերութեան մէջ գոյ միւս ակնարկութիւնը, վոր երիտասարդ մտաւորականը քողապերծած է կանխող էջերուն տրուած գրութեան մէջ, հետեւեալը.

«Զարեանի «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» ծաւալուն ու անաւարտ վէպին մէջ, ուշադիր ընթերցողը կրնայ գտնել Իսահակեանի յիշատակումը, քողարկուած «Միւր Պահատուր Ալի» վիպերգի հեղինակի տարագրով»:

«Միւր Պահատուր Ալի» վիպերգին իբրեւ աղբիւր յիշատակուած «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» անծանօթ գործ չէ մեզի, բայց հոն մեր աչքին չէր դառն «Միւր Պահատուր Ալի»-ն, կրկին բացինք «Բանկօօպը», բայց դարձեալ չկրցանք հանդիպիլ «Միւր Պահատուր Ալի»ին: Մե՞նք ուշադիր ըլլալ չենք գիտցած արդեօք, թէ «Միւր Պահատուր Ալի»-ն տարբեր աղբիւր մը ունի:

Վարդան Մատթէոսեան թուականով ու էջով յիշատակած է «Մուհամմէտ Բէն Ալի»-ն, «Կոստան Զարեան, «Բանկօօպը եւ մա-

մութի ոսկորները», Անթիլիաս, 1987, 441», բայց նույն ոճով չէ կենսագրած «Միր Պահատուր Ալի»ն:

Կը յուսանք, որ երիտասարդ մտաւորականը գոհացում կու տայ ճանչնալու մեր պապական ու կը փարատէ խնդրոյ առարկայ թիրիմացութիւնը:

Պիտի ուպէիք աւելցնել միայն, որ վարեանական ակնարկութիւններուն խողովակով երկու դէմքերուն փոխյարաբերութիւնները բացայայտելու համար կ'արժէ յիշել նոյնպէս «Անցորդը եւ իր ճամբան» ու անոր մէջ Իսահակեանին եղած վարեանական ակնարկութիւնները՝ ի դէմս Մհերին Հագցուած երկաթէ շապիկին ու ուղտերու դանդաղ կարաւանին:

Առաջինը.

«Մհերը գինուորի շապիկ է հագնում եւ թշնամի երկրներ արշաւում:

....

«Փախած, «նիւթականից պակաս» բանաստեղծները Մհերի վերայ կարմիր շապիկ են հագցնում» («Երկեր», Անթիլիաս, 1976, էջ 142, 143):

Երկրորդը, նոյն էջին վրայ.

«Արաբ բանաստեղծի մեծահնչուն անունը մտնում է խոզերին արգիլուած Նիցչէի պարտէզը՝ դպրոցական աշակերտի մակերեսային յռուտեսութիւն փրցնում եւ երկու կողէկնոց փրկիստփայութիւն:

«Անցնող ուղտերի այս դանդաղ կարաւանը հայ մտքի սափրիչների աչքի առջև լեռների նման շարժւում է եւ անապատը թղթի վրայ նկարուած կրկնեղանակի ձեւեր է առնում»:

Խառնուածքով ու ճաշակով տրամագծորէն իրարու հակառակ եղած ըլլալու իրողութեան հետ՝ նաեւ կայուն սկզբունքներէ հեռու մնացած դէմքեր էին Ջարեանն ու Իսահակեանը եւ նոյն պատճառով, երեւի, երկարատեւ չէին կրնար ըլլալ ու չէին մնացած իրենց փոխյարաբերութիւնները:

Կ. ԹԵՐԶԵԱՆ



ՅԱԿՈՒ ԶՕՐԵԱՆ

ՈՎՔԵՐ ԷԻՆ ԹԵՂԼԻՐԵԱՆԻ ԿՈՂՔԻՆ

Անկախ իրենց արժեքներէն, սկզբունքներէն ու մշակած կապերէն՝ Վարդան Մատթէոսեանի գրութեան մէջ երթեկող Զարեանն ու Իսահակեանը ըստ բառականին ծանօթ են «Բազին»-ի ընթերցողներուն: Զափով մթ ծանօթ է նոյնպէս հոն յիշատակուած Լիպարիա Նազարեանցը ու Նազարեանցի կողքին երեցող Սողոմոն Քեհիլիբեանը: Բոլորովին անծանօթ է միայն մէկը, Յազօրը, առաջանի անունով՝ Յակոբ Զօրեան, ազգային թէ մշակութային գետիններու վրայ գործած պատկառելի անուն մը, որուն մասին որոշ ծանօթութիւններ հազորդելու նախանձախնդրութեամբ, ստորեւ ուշադրութեան կը յանձնենք Երեանի «Ազատամարտ»-ի մէջ քանի մը տարի առաջ երեցած Կլարա Քերզեանի սրտառուչ գրութիւնը:

Ինձ, եւ, կարծում եմ, Հայաստանաբնակ իմ սերնդակիցներէջ շատերին է յուզել այս հարցը, մանաւանդ, որ երկար տարի ներ մենք զրկուած ենք եղել համապատասխան գրականութեանը ծանօթանալու, առաւել եւս, գործին տեղեակ մարդկանք հետ հանդիպելու հնարաւորութիւնից: Որքան շնորհակալ եմ Շահան Նաթալիին, որ Յօսկան թուականներէ կէսերին Հայաստան այցելելով, ժամանակ գտաւ գալ Ե-

րեւանի ռադիոյի արտասահմանի համար տրուող հաղորդումների գլխավոր խմբագրութիւն եւ պատմեց իր կեանքից: Մեր խնդրանքով պատմեց նաեւ թալիսթի սպանութեան հետ կապուած մանրամասնութիւններ:

Յիշում եմ, նա պատկառելի հասակում էր, բայց երբ նկարագրեց բեռլինեան անցքերը, աչքերը լցուեցին երիտասարդական աւելնով, ապրած տարիներն ասես ետ գնացին, մեզ եւս համակելով նոյն ոգով ու տրամադրութեամբ:

Սողոմոն Թեւիթեանի հետ եղել են Շահան Նաթալին, Յակոբ Զօրեանը, Հրաչ Փափազեանը, Վահան Զաքարեանը եւ Լիպարիտ Նազարեանցը:

Շահան Նաթալին յատկապէս շեշտեց Յակոբ Զօրեանին, որի մասին ասաց նաեւ, որ եկել է Երեւան, համալսարանում դասախօսել եւ Ստալինի զրհերից է: Ինձ բախտ միճակուեց զրուցել Յակոբ Զօրեանի ուսանողներից պրոֆեսոր Ռաֆայէլ Մովսիսեանի հետ, որը մասնաւորապէս նշեց.

«Յակոբ Զօրեանը պատմութեան ֆակուլտետի ամենասիրուած դասախօսներից էր: Նրա դասախօսութիւնները աչքի էին ընկնում իրենց գիտականութեամբ եւ հետաքրքրութեամբ: Նրա առաւելութիւնը նաեւ այն էր, որ առաջինը սկսեց երիտասարդներին ներգրաւել հայոց պատմութեան ուսումնասիրութեան մէջ: Նրա դասախօսութիւնները եւ մինչեւ օրս պահում եմ»:

Երախտապարտ եմ Մերի Քոչարին, որի պատմածը լոյս սրբուեց Յակոբ Զօրեանի կնոջ՝ Խաթերի կերպարի վրայ:

«Տիկին Զօրեանը, — ասաց նա, — ինձ համար միայն գերմաներէնի ուսուցչուհի չէր: Երբ յետադարձ հայեացք եմ ձգում այդ տարիներին, հասկանում եմ, թէ տիկին Զօրեանն ինչ մեծ աշխարհ բացեց ինձ համար»:

Պատմարան Կարօ Մելիք-Օհանջանեանի դստեր, բանասիրական գիտութիւնների թեկնածու Լուսիկ Մելիք-Օհանջանեանի միջոցով հնարաւոր եղաւ պարզել մի հետաքրքիր մանրամասն: «Հայրս, — ասաց նա, — որ նոյնպէս ձերբակալուած էր հետապալում, բազմիցս պատմել է ո՛չ միայն ինձ, այլեւ՝ բոլոր նրանց, ովքեր դալիս էին մեզ մօտ, հետաքրքրուած այդ պատմութեամբ: Այն արձանագրուած է նաեւ գինուորական տրիբունալի սղագրութեան մէջ 1940 թուականին՝ տասներորդ պրոֆեսորների դատավարութեան ժամանակ: Դատախազի այն հարցին, թէ Զօրեանը մասնակցե՞լ է թալիսթի սպանութեանը, նա ասել է. «Այո, դա այն գործն է, որով ես հպարտանում եմ: Եթէ նորից առիթ լինէր, ես դա կը կրկնէի»:

Յակոբ Զօրեանը բանտում մահանում է, կինը աքսորուած է երկու անգամ՝ 1937ին եւ 1949ին: Տասնեօթ տարի աքսորավայրերում անցկացնելուց յետոյ, այդուհանդերձ, ճակատապիտը նրա նըկատմամբ աւելի բարեգութ է գտնուում, նա տեսնում է իր զա-

ւակներին, ճիշտ է՝ կարճատեւ, բայց վայելում է նրանց հետ ապրելու երջանկութիւնը եւ ասում է. «Ամէն ինչ պատրաստ եմ ներելու, որովհետեւ երեխաներս ողջ են եւ լաւ մարդ են դարձել»:

Զօրեանների ընտանիքին կրկին անդրադառնալու առիթը «Գարուն» հանդէսում Արմին Վեզնէրի «Հիմա մատ գլխիդ վերեւ» գրքից հատուածների հրատարակումն էր, որտեղ հայ ժողովրդի մեծ բարեկամը պատմել է, թէ Զօրեան ամուսինները Երեւանում ինչ աղքատիկ կեանք են վարել եւ, ի հեճուկս դրան, ինչ խանդավառութեամբ են նուիրուել երիտասարդ սերնդին կրթելու գործին, ինչպէս են հպարտացել հայրենիքով:

Վեզնէրը եզրակացրել է.
«Ինչպիսի անձնագոհութիւն է հարկաւոր նման զրկանքների եւ հրաժարումների պայմաններում բնակութիւն հաստատելու համար այս քաղաքում, որն իր ուսուսական ժամանակներից անխնամ, կեղտոտ աներով յիշեցնում է յետերկրաշարժեան աւերակները: Այս ինչպիսի սքանչելի սէր է դեկավարում այս քաղաքներին, որոնք աշխարհի բոլոր ծայրերից այս երկիրը եկան, մի երկիր, որ երբեք անցեալում չէին տեսել»:

Արմին Վեզնէրը Զօրեան ամուսիններին ճանաչել է նախքան Հայաստան գալը, Թուրքիայից: Յատկապէս մտերմացել են Գերմանիայում ուսանելու տարիներին, եւ անուանի գրողը, երբ ձեռնարկել է վէպ գրել հայկական թեմայով, որը, աւս'դ, անաւարտ մընաց, իր հերոսուհու նախատիպը ընտրել է իսթեր Զօրեանին:

Յաջորդ ատուտ, դեռ հիրաւնցից դուրս չէի եկել, յայտնուեց Յաջորդ (Յակոբ Զօրեան), 27-28 տարեկան մի թխադէմ երիտասարդ, որ ուսանում էր Բեռլինի համալսարանում: Նրա դուրեկան դէմքին պարզուց մի լայն ժպիտ, երբ ծանօթացաւ հետս: Նա ասաց, թէ եկել է յայտնելու մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ, որ իմացել էր Հրափից (Հրաչ Փափագեան): Իբր թէ այս օրերս Էնվերը Մոսկուայից այս կողմերը պիտի գայ՝ Իթթիմատը վերականգնելու նպատակով: Բայց խնդրին շուրջ ինք եւ Թալեաթ մրցակցութեան մէջ են: Վերջինի կողմնակիցները ուզում են, որ վերականգնուած կուսակցութեան կենտրոնատեղին լինի Բեռլինը եւ կուսակցութիւնը արտասահմանեան հանգամանք ունենայ: Այն ինչ Էնվերը պնդում էր, որ կուսակցութեան կենտրոնը լինի Մոսկուայում: Ինքը՝ Հրափը կարծում է, որ այս տարակարծութեան պատճառը հետեւեալն է. Էնվերը շատ յաճախ գտնում է Մոսկուայում, Անդրկովկասում եւ ուզում է իր ազդեցութեան տակ պահել կուսակցութիւնը: Բացի այդ, ցանկանում է կարելի եղածին չափ մտ լինել Անատոլիան եւ քաժից ունենալ երկրի ներքին գոր-

Վեզնէրը կրկին Հայաստան է այցելում Երկրորդ Համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ, երբ արդէն չկային Յակոբն ու Էսթերը: Եւ հանդիպում է նրանց զաւակներին՝ Էռնայի եւ Զօրիկի հետ:

*
* *

Ահա ինձ այս տուեալներով յաջողուց վերահենդանացնել Զօրեան ամուսինների կերպարները, երբ յանկարծ ձեռքս անցաւ Տասնապետեանի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան պատմութեանը նուիրուած հատորը եւ Թեհլիրեանի «Վերլիշումներ»ը:

Եւ պատկերն ամբողջացաւ. Յակոբ Զօրեանը, որին անուանել են Յազօր՝ վերցնելով անուան եւ ազգանունն առաջին վանկերը (Կոնստանդնուպոլիսի նպատակով — Կ.Թ.) ո՛չ միայն ակտիւ մասնակցել է Թալեաթի սպանութեան ամբողջ գործողութեանը, այլեւ Բեռլինում է մնացել Թեհլիրեանի բանտարկութեան ժամանակ եւ հանդէս է եկել որպէս թարգմանիչ:

Թեհլիրեանը այսպէս է պատկերել բանտում իրենց հանդիպումը.

«Յազօրը այնքան տարուած էր իր պատմութիւններով, որ Չոն Գորդոնի (փաստաբանի — Կ.Թ.) ներս մտնելը չնկատեց:

Ճերի մէջ: Մինչդեռ Թալեաթի կողմնակիցները կանգնած են այն տեսակետի վրայ, որ իրենց միջամտութիւնը կարող է ազնուկ բարձրացնել Եւրոպայում եւ վնասել երկրում սկսուած ազգայնական շարժման զարգացման: Այդ առթիւ, իբր թէ մի քանի օր առաջ խորհրդակցութիւն է եղել թալեաթականների, եգիպտացի շէյխ Աբդիւ-Ազիզի, սիրիացի Յէքիւ Աւլանի եւ Հնդկաստանից մի քանի իւլամների մասնակցութեամբ: Թալեաթը՝ ինքը ներկայ չի եղել այդ խորհրդակցութեան: Հրապիր այս տեղեկութիւնները ստացել էր թուրք ուսանողներից, որոնց հետ մտերիմ էր: Ինքը՝ Հրապիր, ինչպէս պատմեցին, դժգոյ, անունով, անազարտ տաճկերէնով իսկական թուրքից չէր տարբերում: Բայց ընտիր հայ էր: Ունէր մտերիմներ թուրք ուսանողների եւ թուրքերի մէջ, զգալի ծառայութիւններ էր մատուցանում մեր դիւանագիտական ներկայացուցչին կարծես տեղեկութիւններով: Այս տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ, Յազօրը մեկնեց:

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ

— Խնդրեմ, ներեցէ՛ք,— ասաց վերջինը:
Պատմեցի անցեալիս, ներկայիս եւ գործին վերաբերեալ այն
ամէնը, ինչ հետաքրքրում էր նրան:

Նա կատարում էր ընդարձակ նոթագրութիւններ՝ մէջընդմէջ
լրացուցիչ հարցումներ անելով. այս ընդմիջումներին Յազորը
պատմում էր:

Նրանից խնդրեցի այլեւս բանտում չերեւալ ու ես դարձայ
բանտասենեակ:

Պէտք է խոստովանեմ, որ այս յօդուածը գրելու դրդապատ-
ճառներից մէկն էլ իմ զրոյցն էր արձակագիր Սպարտակ Ղարա-
բաղցեանի հետ, որը մտադիր է կինոսցենար գրել Սողոմոն Թե-
լիբեանի բելգրադեան տարիների մասին՝ պատմութիւնը հասցնելով
մինչեւ մեր ժամանակները Բելգրադում գործունէութիւն ծաւալած
հայ հայրենասէրները: Ղարաբաղցեանը գտնում է, պատահական
չէ, որ նրանք Սողոմոնի սիրագործութիւնը կրկնեցին Բելգրադում:
Այդ քաղաքում,— ասաց նա,— թեւածում է Թեւելիբեանի ոգին:

Սպարտակին խնդրեցի Սողոմոն Թեւելիբեանի մասին պատմե-
լիս ստուերում չթողնել նրա զինակիցներին: Եւ, առհասարակ, ժա-
մանակն է, որ հայրենիքում իմանան նրանց պայծառ անուները՝
Շահան Նաթալի, Հրաչ Փափազեան, Վահան Զաքիարեան, Լիպա-
րիտ Նազարեանց, Յակոբ Զօրեան... Եւ նրանց նախորդներին. ա-
կունքները գնում են մինչեւ Կարօ Մելիք-Օհանջանեանը: Առաջինը
նա է յայտնում, որ Բեռլինում տեսել է Թալեաթին:

Յակոբ Զօրեանի մասին դեռ պէտք է գրուի, մանաւանդ,
որ 94 թուականին լրանում է նրա ծննդեան 100ամեակը: Ետմահու
նա պէտք է գրուի իր արժանի տեղը որպէս հայրենասէր ու
գիտնական:

Ի դէպ, Զօրեանի արխիւից գաւակները ոչինչ չունեն, նրա
գրքերը, նամակները ոչնչացուել են, բայց, անշուշտ, մնացել են
պատասխաններ, որոնք պէտք է հաւաքել, ի մի բերել: Եւ, կարծում
եմ, ընթերցողները կ'արձագանգեն, կ'օժանդակեն Զօրեանի գիտա-
կան ժառանգութիւնը վերականգնելու գործին («Ազատամարտ»,
Դեկտեմբեր 1991, թիւ 42):

ԿԼԱՐԱ ԹԵՐԶԵԱՆ

ՓՐՈՖ. ՅԱԿՈՒԲ ԶՕՐԵԱՆ



Պատմաբան, գիտություններու տրբոր, փրոֆեսոր ու մանկավարժ Յակոբ Զօրեան ծնած է 4 Ապրիլ 1894ին, Թուրքիոյ Օրտու քաղաքը: 1912ին Պոլսոյ «Պէրպէրեան» վարժարանին մէջ մինակարգ ուսումը ստանալէ ետք, նոյն տարին կը սկսի ուսուցչական պաշտօն վարել իր ծննդավայրին մէջ:

1915ին, Հայկական ջարդերուն առնէն, Զօրեան կ'ապաստանի Պոլկարիս եւ մինչեւ 1919 կապրի ու կ'աշխատի Ծովլէ քաղաքին մէջ: Այնուհետեւ կ'անցնի Լօզան, ուր կ'ուսանի մէկ տարի, ապա կը հետնի Պերլինի համալսարանին:


1925ին Պերլինի համալսարանին մէջ կը ներկայացնէ տրբորայի իր ատարածաւոր եւ նոյն տարին Խորհրդային կառավարութեան կողմէ կը հրահրուի Երևանի պետական համալսարանը՝ իբրև հայ ժողովուրդի պատմութեան դասախօս:

Փրոֆեսոր Յակոբ Զօրեան վարած է մշակութային, կրթական ու վարչական կարևոր պաշտօններ ու հեղինակած է Միջնադարեան Հայաստանի պատմութեան վերաբերող շարք մը մեծարժէք յօդուածներ:

Նշանաւոր բազմաթիւ դէմքերու կարգին՝ 1937ին կը ձերբակալուի, կը նետուի բանտ ու կը մեռնի անյայտ անկիւն մը՝ 1942ին:

Ինչպէս պարզուեցաւ յետուայիներէն տարիներուն, Փրոֆ. Յակոբ Զօրեանի դէմ եղած մեղադրանքներն ալ ծայրէ ծայր լերխրածոյ էին, այն օրերուն մահացու դարձած ազգայնականութեան սուրբով:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



ԳՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍԵ ՓՈՐՁՈՎ

ԱՆԳԼԵՐԷՆ ՀԱՏՈՐՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անցնող տարուան Սփիւռֆի գրահրատարակչական հաշունփակը կատարելու մեր մէկ քաղճամէքը համեստ փորձի մը առաջնորդեց մեզ, պարզելով հետաքրքրական ու անսպասելի իրողութիւն մը: Արդարեւ, ուրախալի էր վերահասու ըլլալ, որ Պէյրութէն Թհերան, Պոլիս, Լոս Անճելըս եւ այլուր, հայերէն նորատիպ գիրքերու գումագեղ ամուսններու կողմէն՝ 1995ի ընթացքին լոյսին եկած էին նաեւ բաւական մեծ թիւով անգլերէն որակաւոր հատորներ ալ, ամբողջովին հայկական միւթեր շօշափող կամ հայութեան հետ աղերս ունեցող:

Մեր պատրաստած ցանկը պակասաւոր էր սակայն: Գիտակից էինք, թէ գրկուած կը մնանք արտաշխարհի հրատարակչական նորութիւններում հետ օր-աւոր ֆայլ պահելու կարելիութենէն, որ տեսակ մը "Mission impossible" է անշուշտ...

Բայտը ժպտեցաւ մեզի ու հանելի գուգադիպութեամբ մը ճի՛շդ այս հարցին է, որ եկաւ անդրադառնալ, վերջերս, Պոսթընի Հայագիտական Ուսմանց եւ Հետազոտութիւններու Ազգային Ընկերակցութիւնը (ծանօթ՝ NAASR անուամով, հիմնուած 1995ին), որում մէկ տեղեկագիրը կը պարզէր, թէ անցնող տարուան ընթացքին Միացեալ Նահանգներու եւ արտասահմանեան տարրեր երկիրներու կարեւոր հրատարակչատուներէն լոյսին եկած էին հայկական հարցեր շօշափող անգլերէն 75 հատորներ...: Պատկառելի թիւ մը, անկասկած, որ ֆարոգչական իմաստով Սփիւռֆի ստանճնած դերակատարութեան ամէնէն կարեւոր բնագաւառներէն մէկն է, որ յաճախ աննկատ կը մնայ անարդարօրէն:

digitised by A.R.A.R.@

Մեր ժողովուրդին պատմական անցեալը, մշակութային-ժաղափակրթական հարստութիւններն ու հոգեւոր արժէքները անգլիախօս ստուար հասարակութեան մը ծանօթացնելու անհրաժեշտ միջին մէջ՝ գրահրատարակչական նախաձեռնութիւնները տակաւին կը յամենամ պահել իրենց ներգործօն ազդեցութիւնը, հակառակ ձայն-պատկերասփիռնի ճնշիչ տիրապետութեան, արեւմտեան թէ արեւելեան կողմն աշխարհի, հաւասարապէս: Բարեբախտաբար, մտաւորական տարրն ու ընթերցանութեան վարժ փոքրամասնութիւն մը կը շարունակէ կառչած մնալ Գիրին (գիրք կամ թերթ), եւն զսնելով իր հետաքրքրութիւններուն գոհացում տուող իսկական ամպիոնը: Առաւելաբար սեղմ, քայց ընտրանի շրջանակի մըն է ուղղուած ուրեմն հայկական օտարալեզու հրատարակութեանց ներկայ խայտաբղէտ շարքը, որուն կարգ մը անունները կ'արձանագրենք ստորեւ, նախ՝ գաղափար մը տալու համար հետաքրքիր ընթերցողին, քայց միաժամանակ շեշտելու նման հրատարակութեանց բերելիք շօշափելի նպաստը՝ այլ ժողովուրդներու հետ ժաղափա-մշակութային «Կամուրջ»ներ հաստատելու եայլութեան մերօրեայ ջանքերուն:

*
* *

1995ի ընթացքին յայտն բերուած անգլերէն մտքատիպ հատորներու շարքին մէջ ուշագրաւ ներկայութիւն մը կը մատնեն յատկապէս պատմագրական գիրքերը, որոնց գլուխը կը հասնի ամերիկահայ հմուտ պատմաբան Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի "The Republic of Armenia" աշխատասիրութեան եզրափակիչ 3րդ եւ 4րդ հատորները, յոյս տեսած՝ Գալիֆորնիոյ համալսարանի հրատարակչատունէն: *«Լոնտոնէն Մեւր, Փետրուար-Օգոստոս, 1920»* ու *«Մահիկի եւ Մանգաղի միջեւ. բաժանում եւ խորհրդայնացում»* ենթախորագիրները կրող այս զոյգ հատորները կու գան փառաւորել Փրոֆ. Յովհաննիսեանի 30 տարուամ պրպտումները՝ Նրեւան բերելու Հայաստանի Ա. Հանրապետութեան գոյաւման եւ անկումի ամբողջական պատմութիւնը՝ հայկական, ամերիկեան, անգլիական, ֆրանսական եւ Խորհրդային անտոգիտ արխիւներու լայն օգտագործումով: Յիշեմք, որ պատմաբանին կոթողային այս աշխատասիրութեան առաջին 2 հատորները հրատարակուած էին Լոս Անճելըս, 1971-1979, որոնց վրայ հարկ է աւելցնել *«Հայաստան՝ Անկախութեան ճամբուն վրայ»* (1974) անգլերէն գործը եւս, որ դարձեալ կ'առընչուի միեւնոյն ժամանակաշրջանին ու տեսակ մը Տրդ յրացուցիչ հատորը կը նկատուի ներկայ ընդարձակ աշխատասիրութեան:

Հայկական Յնդասպանութեան նուիրուած ուսումնասիրութեանց շարքին՝ շուտով աչքի կը գարնէ ամերիկահայ անխոնջ պատմագէտ (նախկին պոլսահայ) Փրոֆ. Վահագն Տատրեանի նոր մէկ գործը՝ "The history of the Armenian Genocide: Ethnic conflict from the Balkans to Ana-

tolia to the Caucasus", 480 էջ, լոյս տեսած թէ Անգլիոյ Օֆոֆորտ հրատարակատունէն, թէ Փրովիտնս (ԱՄՆ):

Նոյն հեղինակին մէկ այլ աշխատասիրութիւնը, «*Հայկական Յեղասպանութեան վաւերագրութիւնը՝ գերմանական եւ աստրիական աղբիւրներու մէջ*» խորագրով (միջտ անգլերէն), արժանացած է առանձնատիպ վերահրատարակութեան մը, լոյս տեսնելէ ետք Ռաքըրս համալսարանի (Նիւ Ճըրզի, ԱՄՆ) ցեղասպանական հարցերու նուիրուած մատենագիտական հանդէսին մէջ: Փրոֆ. Տատրեան, որ Հայ Եղեռնին առընչուող անվիճելի փաստեր յայտնագործելու պիտոյեան մըն է, հաւասարապէս կը տիրապետէ օսմաներէնի, արդի թրքերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի եւ գերմաներէնի:

Ամերիկայի «*Արմինիըն Ռիվիու*» հանդէսը եւս (Պոսթըն, 1948էն ի վեր, Հ.Յ.Գ. հրատարակութիւն), իր մախաճեռնած «*Միացեալ Նահանգներու պաշտօնական վաւերագրութիւնը՝ Հայկ. Յեղասպանութեան մասին*» խորագրեալ շարքին Բ. եւ Գ. հատորներու հրատարակութեամբ, բերած է իր նպատը՝ Մեծ Ռեիլին մերժին ծալքերուն պարզաբանման ու գիտական վերլուծման թափ առնող նիզորուն: Ուսումնասիրութեանց այս շարքին առաջինը կը կրէր "The Lower Euphrates" («*Ստորին Եփրատը*») խորագիրը, մինչ 1995ին հրատարակուածները կը կոչուին "The Peripheris" («*Շրջապատերը*») եւ "The Central Lands" («*Կենդրոնական հողամասերը*): Շուտով, լոյսին կու գայ չորրորդ մը՝ "Non-Consular Reports": Խղճամիտ եւ գնահատելի մախաճեռնութիւն:

Եղեռնի առընչուող նորատիպ գիրքերու շարքին դեռ կարելի է յիշել Ֆրանսայէն հանրածանօթ պատմաբան Իվ Թեոնոնի «*Հայերը. ցեղասպանութեան մը պատմութիւն*» (1977) գործին անգլերէն թարգմանութիւնը, լոյս տեսած՝ ԱՄՆ, Ֆիլիպ Մարտընի "The crossing place. A Journey among the Armenians" յուշագրութիւնը (Նիւ Եորք) եւ Հալէպէմ՝ Տոքթ. Ռոպէր Ճէպլեանի հրատարակած «*Բռնագաղթի Հայ կարաւաններու երթուղիները 1915ին Սուրիոյ տարածքին*» խորագրեալ նկարներու եռալեզու ալպումը:

Նախադիտման շրջանին առընչուող գործ մը կը մնայ Ամերիկայէն Անդրանիկ Ձէլէպեանի «*Յեղափոխական դէմքեր*»ը, որուն անգլերէն թարգմանութիւնը կատարած է Տոքթ. Արա Աւագեան: Գիրքին մէջ ներկայացուած են Տամատեանի, Աղբիւր Սերոբի, Հրայր Դժոխքի, Գէորգ Զաւուշի եւ Նիկոլ Դումանի նման դասակայնացած հերոսներ: Հարկ է յիշել թերեւ, որ Անդրանիկ Ձէլէպեան հեղինակն է «*Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական շարժումը*» անուն հայերէն ստուարածաւալ հատորին:

Անցեալ տարի հրատարակուած եւ բիրտբերու առընչուող հետեւեալ 3 անգլերէն հատորներն ալ մասնակի անդրադարձումներ կը պարունակեն Հայկ. Հարցին մասին.

ա) "A people without a country: The kurds and Kurdistan" («*Անհայրենիք ժողովուրդ մը. քիւրտերը եւ քիւրտիստան*»), հեղինակ՝ Ժե-

նար Շալեան, քարգամնութիւն՝ Միջաշէլ Փալլիս, 259 էջ, Նիւ Եորք: ք) "The kurdis tragedy" (*«Քրտական ողբերգութիւնը»*), հեղինակ՝ Ժեռար Շալեան, Լոնտոն:

զ) "The kurds:A Nation denied" (*«Քիւրտերը. ուրացուած ազգ մը»*), հեղինակ՝ Տէյվիտ Մըք-Տօուրլ, լոյս տեսած՝ Լոնտոնի Փոփրամասնութեանց Իրաւունքներու Հրատարակչատունէն:

Հայաստանի ներկայից առընդունող գիրքերու ցանկէն յիշատակենք ֆրանսացի գրող Փիէռ Վերլուիզի *«Հայաստան տաջնապի մէջ. 1988ի երկրաշարժը»* հատորը, որում անգլերէն քարգամնութիւնը կատարած է Ամերիկայէն Լեոն Զորպանեան ու գայն լոյս ընծայած՝ Ուէյնի (ԱՄՆ) Նահանգային համալսարանի հրատարակչատունէն: Գիրքին յտաջարանը ստորագրած է Ժեռար Շալեան, մասնագէտ մը՝ Միջին-Արեւիեան հարցերու:

Երեսնէն Գրիգոր Աւագեանի *«Հայաստան եւ Հայեր աշխարհի մէջ»* գործին անգլերէն քարգամնութիւնը եւս կ'իյնայ նոյն այս շրջագօտիին մէջ, քանի որ վերլուծումի կ'ենթարկուի Հայաստանի պատմա-ֆաղափական յարաբերութիւնները դրացի երկիրներու հետ: Անդին, ձորն Մուրատեան (ԱՄՆ) հեղինակած 350 էջոց փոքր հանրագիտարանը՝ "Armenian info text" առձեռն տեղեկատու մըն է հայերու եւ Հայաստանի մասին՝ Նոյ Նահապետն մինչեւ ներկայ Հանրապետութիւն:

Հայ արուեստին նուիրուած անգլերէն գիրքերու մէջ եւս՝ ուշագրաւ են 4 գործեր: Նախ՝ Հայաստանի Ազգ. պատկերասրահի բազմա-վաստակ տնօրէն Մահէն Խաչատրեանի գեղատիպ նորագոյն գործը՝ "Armenian Artists of the 19th and 20th centuries", ուր ներկայացուած են Հայաստանէն թէ Սփիւտէն 26 հռչակաւոր գեղանկարիչներ, անոնց 192 գունատիպ գործերուն վերարտադրութեամբ: 250 էջոց այս պատկառելի հատորին մէջ տեղ գտած են, ի շարս այոց, Էտկար Մահին, Գառգու, Թիւթիւնեան, Ժանսէմ, Զաֆարեան, Սարեան, Միմաս Աւետիսեան: Գիրքին վաճառքէն գոյացած հասոյթը կը յատկացուի Հայաստանի Ազգ. Պատկերասրահին:

Ասոր կը յաջորդէ Կորտըն եւ Էլիզապէթ Օրըրի հեղինակած "Sarkis"ը, որ կենդանագիրն է արուեստագէտ-ուսուցիչ Սարգիս Սարգիսեանին, համբաւուած՝ յատկապէս Տիթոնիթի մէջ: Ուէյնի (ԱՄՆ) Նահանգային համալսարանի հրատարակչատունէն լոյս տեսած այս գիրքը կը պարունակէ Սարգիսեանէն գունաւոր 36 պատարներ ու 63 սև-սևումակ նկարագարդումներ:

Մասնագիտական գործ մըն է Տիգրան Քաշեանի (դասախօս՝ Գալիֆոնիոյ համալսարանին կից գեղարուեստից վարածարանը) մէկ ուսումնասիրութիւնը ամերիկեան նկարչութեան գերիապաշտական հակումներուն մասին ("Surrealism and the American Avantgarde, 1920-1950"), որում 6 գլուխներէն մէկը նուիրուած է Արշիլ Կորէիի (բուն անունով՝ Ոստանիկ Ատոյեան, 1904-1948): Գիրքը հրատարակուած է Նիւ Եորք:

Հուսկ ապա՝ Հայաստանի Մանկական պատկերասրահի հիմնադիր-տնօրեն Հեմրիկ Իգիթեանի "Gallery Noah's Ark"ը, 128 էջ, լռյս տեսած՝ Պէյրուք: Հոս տեղ գտած են ունեւոր վերարտադրութիւններ՝ Երեսանի Արդի արուեստի թանգարանի հաւաքածոներէն: Իր տեսակին մէջ եզակի թանգարան մը, հիմնուած նոյնիման Իգիթեանի կողմէ, 1972ին:

Ամսօրտամի մէջ (Հոլանտա) լռյս տեսած անգլերէն այլ հատոր մը՝ «Նորագոյն մերձեցումներ միջնադարու Հայերէն լեզուին եւ գրականութեան» խորագրով, հայեացքները կը կեդրոնացնէ լեզուաբանական հարցերու վրայ: Գիրքը, որ հաւաքածոյ մըն է ծանօթ հայագետներու կամ մտաւորականներու յօդուածներէն, երատարակուած է Լէյտրնի համալսարանին կողմէ, խմբագրութեամբ ժ. Ուէյթէնպէրկի:

Գրական բնոյթի գիրքերուն մէջ, աչքի կը զարնէ Յակոբ Կարապետցի (մ. 1994ին) պատմութեան մէջ ժողովածուն՝ "Return and Tiger" խորագրով (142 էջ), թարգմանութեամբ Թաթուլ Սոննց-Փափազեանի, լռյս տեսած Գեւորիս (Մէտէլուէց): Գանատաբնակ գրող եւ լրագրող Արա Պաքճեանի "From Plato to Sartre: Wisdom for Armenians" գիրքն ալ (Կլէյնտէյլ, 1995, 94 էջ) փիլիսոփայական խոկումներու շարադրանք մըն է, որ կը միտի բացատրել հայ կեանքի հակասական եւ բարդ երեւոյթները, ընթերցողը մղելով «փոխելու հաւաքական մեր հակատագրին ուղղութիւնը»: Գրական երկ մըն է նաեւ հայրենի բանաստեղծ Արտեմ Յարութեանի "Letter to Noah and other Poems"ը, լռյս տեսած՝ Վեհարթ հրատարակչականէն (ԱՄՆ):

Ամերիկահայ յայտնի լրագրող Պէն Պաղտիկեանի վերջին հատորը եւս (240 էջ), Պոքըն) մասնակիօրէն կ'առընչուի իր արմատներուն: Գիրքը, որ վերլուծումն է ամերիկեան լրագրութեան մուտք ու փայլում երեսներուն, կը կոչուի "Double vision: Reflections on my heritage, life and Profession": 50 տարուան լրագրական վաստակի տէր, Պաղտիկեան պատուակալ գասախօս է ներկայիս Գալիֆորնիոյ Պրոքի համալսարանը:

NAASRի հերթական հրատարակութիւններէն մէկն ալ կը վերաբերի Խարբերդի Հիւսէյնիկ գիւղին: "Hussenig: The Origin, history and destruction of an Armenian town" գիրքին հեղինակն է բնիկ խարբերդցի Մարտիրոս Տէրանեան, որուն հայագիր յուշագատումը խմբագրած ու անգլերէնի թարգմանած է իր գաւակը՝ Տոքթ. Մարթին Տէրանեան:

Ինքնակենսագրական բնոյթի վէպ մըն է նաեւ Սարգիս Տագետեանի "Innocence among Eagles"ը, որ հեղինակին երկրորդ երկն է եւ ուր կը պատմուի իր ընտանիքին փորձառութիւնը Ամերիկայի մէջ՝ Ցեղասպանութեան վաղորդայնիւն:

Ահա՛ հայանպաստ հրատարակութեանց ողջունելի շարք մը, մեծաւ մասամբ իրագործուած անհատական նախաձեռնութիւններով: Ափիւսի կազմակերպութիւններուն կը մնայ անոնց ցրումը Ամերիկայի, Գանատայի, Անգլիոյ կամ Աւստրալիոյ նման անգլիախօս երկիրներուն մէջ:

Հալէպ

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՑԵԱՆ

«ՀՈՂԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ» ԵՒ ԻՅԱԿԻՄՍԿԻ ԱՀՈՒՆՉ ՊԱՏԳԱՍԸ

Ընթացիկ տարում Փետրուարին, Մուրիոյ, Քուէթի, Տուպայի, ART արքանեակային կայանին եւ արաբական այլ երկիրներու փոքր պատուաններէն ցուցադրուելով՝ սուրիացի երիտասարդ բեմադրիչ Նաժուաթ Իսմա'իլ Անգուրի «Հողին եղբայրները» խորագրեալ պատկերասփիւռային ֆիլմաշարը (24 մաս) իր վրայ կեդրոնացուց արաբական մասնաւոր ֆիլմարուեստի շրջանակներուն լուսարձակները եւ դարձաւ «տարում մշակութային իրագործումը»:

Օսմանեան բռնադատութեան դէմ սուրիացի արար ժողովուրդին մղած գոյապայքարը պատկերող այս դիցազնավէպ-ֆիլմաշարին շուրջ ստորագրուեցան մօտ 500 գրութիւններ, որոնց մէկ կարելոր մասին վրայ հիմնուելով՝ համադրաբար կը ներկայացնենք նաեւ Հայկական Յեղափոխութեան (10րդ մաս) անդրադարձող այս ուշագրաւ իրագործումը:



Եօթնասունական թուականներու առաջին տարիներուն, արաբական եօթներորդ արուեստի հաշուին ուշագրաւ յաջողութիւններ արձանագրելէ ետք, նոր ու ինքնուրոյն իտաք արտասանելու առաջադրանքով հրապարակ իջած սուրիական շարժապատկերի խանդավառութեան ջերմաստիճանը տակաւ առ տակաւ նահանջեց: Արաբական աշխարհի եօթներորդ արուեստը եզրիպտական շարժապատկերին տիրապետութենէն ազատագրելու նպատակով կատարուած սուրիական, թուրքական, ալճերիական, լիբանանեան եւ այլ փորձերը շարունակուեցան, բայց մասնագէտ քննադատներու նախատեսած ու փառաբանած շարժապատկեր նոր սինեման» չկրցաւ ինքզինք հաստատել առնուազն իրեն իր ուրոյն դիմագիծը ունեցող արուեստի դպրոց կամ շարժում: Աւելի ճիշդ՝ իրենց բեմադրական

տաղանդը արաբական ու միջազգային փառատեսերու ընթացքին պարտադրած անունները՝ Օմար Ամիրալայ, Մուհամմէտ Մալաս, Քէյս Էլ-Չուպէյտի, Մարուս Պաղտատի, Պուրհան Ալաուիէ եւ այլք, դուրս եկան իրենց երկրի սահմաններէն, ոմանք մուտք գործեցին միջազգային ասպարէզ ու արժանացան ֆիլմարուեստի զանազան փառատեսերու եւ մինչեւ իսկ Քաննի նման համաշխարհային հանդիպումներու մրցանակներու եւ դափնեպսակներու, սակայն, զանազան արգելիչ պատճառներով, իրենց վրայ լուսարձակները կեդրոնացուցած այս բացառիկ իրագործումները չյաջողեցան հիմը դնել արաբական նոր շարժապատկերի դպրոցին: Պարզապէս, երբտասարդ բեմադրիչները արձանագրեցին անհատական յաղթանակներ եւ սպազայի հաշուին պարզուած նեոանկարները մտա-

ցին կհսով նուաճուած թիրախներ, իսկ ուրիշներու գնահատումով՝ իրարու արձագանգող բարձրորակ ստեղծումներ:

Վերջին տարիներուն, շարժապատկերի կայունածէն ներս նկատուած ըզզայի աշխուժութեան զուգահեռ՝ Հաստատաքաջ յառաջիկայացք արձանագրեց նաեւ սուրիական փոքր պատասառ, երբ շարժապատկերի եւ պատկերասփիւռի պետական Հաստատութիւնն ու սեփական մարդի արտադրիչ ընկերութիւնները արաբ Հանդիսատեսին հրամցուցին ընկերային լուսը Հարցեր արժանաւոր ֆիլմաշարեր: Սովորաբար լուսննէ եւ սպառած նիւթերէ խուսափող այս արտադրութիւնները բաց նակատով մրցեցան ձեռնարկական ծեւաքանակ ժապաւնէններուն հետ, զրաւեցին արաբական երկիրներու փոքր պատասառները եւ, եթէ ներքոյ արուեստի անուանի կարգ մը քննադատներու իսկ Հաստատումով արաբական շարժապատկերի անմրցակից կարծուած ռաւիլիային՝ «Եզրպատկան փոքր պատասառի ոտքերուն սակէն գորգը քաշեցին եւ բազմեցան անոր դահին»:

Նախանցեալ երկու-երեք թամատան ամիսներուն (խալաներու ԱՖԵ Զատիկը կանխող պահանջարկեան ամիսը, որուն ընթացքին կը ցուցադրուին Ֆիլմաբուստի նորագոյն արտադրութիւնները), սուրիական ֆիլմաշարերը մեծ ընդունելութեան արժանացան եւ գրաւեցին առաջին դիրքերը: «Ալ-Տալիբ», «Էրամսկեան օրեր», «Էնդիսմուր տմօրնի մը օրագրութիւնները», «Էլիմց ասուղամի ըմտամի մը», «Գիշատիցները» եւ «Բայ մարդու մը վախճանը» խորագրեալ ֆիլմաշարերը փնտուած անուններու վերածեցին այս գործերուն բեմադրիչները, դերասան-դերասանուհիներն ու արտադրիչ ընկերութիւնները: Մանաւանդ մեծ վարկ ու Համբաւ նուաճեցին վերանշալ գործերուն մէկ կարեւոր մասին արտադրութեան ետին կանգնած Ալ-Տամ ընկերութիւնն ու անոր գլխաւոր բեմադրիչներէն Հանդիսատեսող Նաթաթ Իսմաիլ Անզուր, որուն ստորագրութիւնը կրող «Վերբերը» եւ «Բայ մարդու մը վախճանը» ֆիլմաշարերը բաւական առատ միջան

Հոսեցուցին ու գնահատուեցան ըստ արժանուրի:

Փաստօրէն, ենթադրել արդէն ինքզինք պատրաստած էր եւ ահա, այս տարուան եղանակին, վերանշալ երկու ժապաւնէններու բեմադրիչին նորագոյն իրագործումը՝ օսմանեան բունակալութեան ահաւոր տարիները, ազատատենչ արաբ ժողովուրդին մղած ազատագրական պայքարը, սուրիական բանակին ծնունդն ու կողմաւորումը հրաշալիօրէն պատկերող «Էնդիսմ» եղալընը: Սակայն առումի մը պէս, արաբ անկախի հրամցնելով արաբական փոքր պատասառի առաջին ֆիլմաշար-դիցապատկերութիւնը՝ «Ալ-Տամ» ընկերութեան այս մեծածախա (չուրջ մէկ միլիոն տոլարի պիւտեճ) արտադրութիւնը մուտք գործեց Հարիւր Հազարաւոր Հանդիսականներու տուններէն ներս, խոր աշխուժում, տառապանք, տուայտանք, երազ ու ազգային Հպարտութիւն ներշնչեց օրեր շարունակ փոքր պատասառի դիմաց դամբած միլիոնաւոր անկախիներու, որովհետեւ այս խիզախ ֆիլմաշարը յաջողած էր ոչ միայն քանդել արաբական փոքր պատասառի արգիլուած նիւթերէն եթէ ոչ գլխաւորը (առնուազն գլխաւորներէն մէկը Հանդիսատեսող օսմանեան Հանգրուանի գերզգայուն պատենչը), այլեւ բարձրացած էր դիտողը մագնիսացնող նրբաճաշակ ստեղծագործութեան մը բարձր մակարդակին:

Այսպէս, ընտանիքի մը բազմաշերտ ողբերգութեան ընդմէջէն՝ սուրիացի շնորհալի արձակագիր Հասան Մ. Թուսէֆ իրմէ երկու տարուան աշխատանք խառն «Էնդիսմ» եղալընը կը յաջողէր վերածել կենդանի տիպարներով, անսպասելի վերիվալտումներով, ցնցիլ Հոգեվիճակներով, փշաքաղիլ տեսարաններով, վաւերագրական ճշմարտացիութեամբ, կռու ու թիւադրական բովանդակութեամբ, այլ մանաւանդ ազգային ու մարդկային իր նպատակասլաց պատգամով յատկանշուող ուժեղ դիպաշարի վաւերագրական Հազարաւոր փաստաթուղթերու ճշուրտ իրականութիւնը արուեստի թեւաւոր իրականութեան վերածելու Հեղինակին

ՆԱԺՏԱՅ ԻՍՄԱԿԻ ԱՆՁՈՒՐ

Պատկերասփիուային ֆիլմաշարերու եւ մեծ պատատի բեմադրիչ Նաժտայ Իսմայիլ Անգոր ծնած է 1954ին, Հալէպի Միտան (Նոր Գիւր) շրջանին մէջ, սուրիական շարժանկարի ինժեներներէն հանդիսացող իր հօր Իսմայիլ Անգորի յարկին տակ:

Ֆիլմաշխարհի համգեպ իր սերն ու դաստիարակութիւնը կը ստանայ իր հօրմէն, 1931ին սուրիական առաջին մունց լիամեքքած ժապաւնը («Դանասկոսի երկինքին տակ») պատրաստած Իսմայիլ Անգորմէն:

1973ին, երկրորդական ուսումը ստանալէ ետք, կը յաճախէ համալսարան՝ իբրև գիտաւսմանտնօրէն ուսանող: Մակայն, երրորդ տարին կը լըէ համալսարանը եւ կը մետուի ֆիլմաշխարհ: Լիբանանի եւ Զորդանանի մէջ ծանուցումներու բազմաթիւ ժապաւններ եւ փաստագրական ֆիլմեր պատրաստելէ ետք,



1988ին հրապարակ կ'իջեցնէ արարական առաջին փորձ-ընթաց, սարս «Պրոյն մը աւագանիուն վրայ» պատկերասփիուային ժապաւնը, որ հակասակ 42 երկիրներ մերկայացնող մրցակից գործերու՝ իրեն կ'ապահովէ Պաղտատի պատկերասփիուային առաջին միջազգային փառատօնին «Պրոնգեայ Արմաննի» մրցանակը: Այնուհետեւ, իբրև ինքզինք պարտադրած բեմադրիչ՝ Զորդանանի եւ Տուպայի մէջ կ'իրականացնէ շարք մը ֆիլմաշարեր, որոնցմէ կ'արժէ նշել «Արեան գիծը», «Աղանդներ», «Դարասպաններ առանց քանդի», «Գիշապիչները» անուն գործերն ու «Արեւելեան հեքիաթ մը» շարժապատկերի ժապաւնը:

«Ալ-Շամ» ընկերութեան երաւերով՝ արարական ու միջազգային բազմաթիւ փառատօններու դաստակագներուն կողմէ բարձր գնահատուած այս բեմադրիչը կը վերադառնայ Դամասկոս ու յաջորդաբար կը բեմադրէ «Զար մարդու մը վախճանը» եւ «Նոյնն երայրները» անուն ուշագրաւ ֆիլմաշարերը:

զրոյական հմտութիւնն ու հոգեվիճակային ողբերգական յանդուժները աւելի շեշտուած հնչեղութիւն մը ստացան, երբ իր ստեղծագործ երեւակայութեան յանձնուած բնագիրին դիմաց Նաժտայի Անգոր լայն բացաւ պատկերին հորիզոններն ու խորքերը, ճախրեց երեւակայութեան թեւերով եւ ոսպնեակին մէջ շրտացուած տեսարանը օժտեց խօսքին ուժականութեամբ ու գունային գրաւորութեամբ: Այսինքն՝ թատերակայութեամբ խոցելի արարական ֆիլմարուեստը զետեղեց իր ճիշդ հունին մէջ, սպաւորիչ ու ուժական պատկերներու արագընթաց հոսքով խուճեց անդիդներուն թէ՛ տեսողութեան, թէ՛ բանականութեան եւ թէ՛ զգացական աշխարհի ոլորտներէն ներս ու դանձը առաւ իր ամբողջական ազդեցութեան տակ, թօսուն ու յարա-

շարժ պատկերներու լեզուով հանդիսատեսը ներգրաւելու այս ոճին շնորհիւ, պատմութեան դասագիրքերու էջերուն մէկ-երկու երկչոտ պարբերութեամբ նկարագրուած ձեմալ փաշան, Մախսնի հերոսներուն նահատակման իրողութիւնը եւ նոյնիսկ թրքական բռնարարներն ու ցարաբան նկարագրութիւնները յաղոցեալ գառնալ յիշողութեան անխելի կերպար ու պատկեր, աչքերուն խորը զրոյմուած զգացողութիւն ու ցատու, նողկանք ու վերապրում, մէկ խօսքով՝ արաբ ժողովուրդի շտեղծական յիշողութիւնը, ինչպէս պիտի սիրէր ըսել նոյնինքն Հասան Մժուսէֆ:

Պատմաբանաբանական ու փաստագրական հարուստ երթահողին վրայ հիմնուած «Նոյնն երայրները» մեծածաւալ արկանախնդրութեան նախա-



Ճայլեզ Ապու Տան՝
Շենձալ փաշայի դերով



...եւ ցեղին կամքը մարմնաւորած
արաք զինուորը

ձեռներով, Հասան Մ. Շուսէֆ-Նաժտաֆ ի. Անգուր ներդաշնակ գոյգը կը ձգտէր վար առնել նենգ դիմակները ո՛չ միայն Օսմանեան կայսրութեան ծաւալապաշտ ու այլամերձ քաղաքականութեան, ո՛չ միայն լուսարձակը կեդրոնացնել փանթուրանականութեան ցորդը առաւելագոյն նալրայեղութիւններու հասցուցած Երիտասարդ Թուրքերու քաղաքական հրէշլային երազերին մութ ծայրերուն եւ սահմակեցուցիչ բարբարոսութեանց վրայ, այլեւ՝ 1915-1918 տարիներու դժոխային հանգրուանը ենթարկել քննական վերլուծութեան՝ դաւիթի ուղին անցնելու դասերուն ուսանելի լոյսերով պայծառացնելու համար, բայց մանաւանդ ժամանակակից հնչողութեամբ եւ ներկային թելադրանքով, որովհետեւ, ինչպէս վերջերս Հասան Մ. Շուսէֆ կ'ըսէր սուրիական պատկերասփիւռի փոքր պատասէն՝ «Երաք ծաղովորդը, իր համընդհանուր տարրութեամբ, միևնույն այսօր տակաւին կը կրէ անցնալին իր դեմ թիւրաւած դաւերուն ազդեցութիւններն ու հետքերը. հետեւարար, ամերթաժողովրդային թելադրանքով հարկ է լուրջ վերաբերի հմարակի մեր մօտիկ անցնալը եւ հասկնալ մեր պատմութիւնը՝ լուսագոյնս ըմբռնելու համար մերկայ ժամանակներու հաշտայն մեզի տուած անոր

դասերը»:
Պաղատարական այս խոր մտածողութիւնը, փաստերու անվիճելի վէճին վրայ խորհուրտած սարսափազդու տեսարանները, Թուրքին բարբարոս եւ արեւնարբու նկարագիրն ու հուսիւնը, բայց մանաւանդ նորահաս արաք սերունդներուն Թուրքը իր ամբողջական մերկութեամբ ու շնականութեամբ հանդիսադրող արտայայտականութիւնը չէր կրնար խաղաղ պահել իր արիւնոտ անցեալէն ու նոյնքան խոցելի ներկայէն յամառօրէն փախուստ տրուող Անգարայի այժմու վարիչները, որոնք իրենց «վիրաւորուած արժանապատուութեան» բողոքի ձայնը դարձեալ բարձրացուցին, այս անգամ փորձելով խոչընդոտել «Հոյն երայրները» դիւցազնավէպին ցուցադրումը... նոյնինքն զոհին պատառներէն, Լրատու գործակալութեանց Հաղորդումներուն համաձայն՝ Դամասկոսի արտաքին նախարարութենէն դիւանագիտական չոր պատասխան ստանալէ ետք, Թուրք պետութիւնը իր դիւանագիտական հետեւողական ապատեղեկատուութեան արդիւնքը մասամբ քաղած կարծեց, երբ Քուէյթի պետական պատկերասփիւռը Փրիմաշարին առաջին 13 մասերը ցուցադրելէ ետք, ընդհատեց իր սփռումը՝ արաքական ու յատկապէս



Ազատագրում օսմանեան լուծն ու ցնծութիւն ու տօնահանդէս

Քուէյթի մամուլի էջերուն առաջացնելով խոր ընդգոյժի եւ արդար բողոքի ծաւալուն ալիք մը:

Հեղինակուոր խմբագիրներն եւ անւանի գրողներ, մտաւորականներ ու արուեստագէտներ բազմաթիւ թղթածներով, խմբագրականներով ու կրթիչներով դատապարտեցին թրքական կուպիտ միջամտութիւնը Քուէյթի մամուլի ու քարոզչութեան եւ արտաքին նախարարութեան մօտ՝ պահանջելով սխալին սրբազրու մը:

Քուէյթի փնտռուած օրաթերթերէն հանդիսացող «Ալ-Սիսսա» թերթը Նշեց, թէ «ֆիլմաշարը պատմականօրէն պատահած ղեպքեր կը փոխանցէ, ո՛չ մէկը կըրնայ փոխել զանոնք, որովհետեւ պատմութիւնը կը մնայ, մոյմիսկ եթէ փորձենք զայն մտնայ»: Օրաթերթը, իր խօսքը փոխանցող խմբագրականով կատարուած միջամտութիւնը դատապարտելէ ետք, աւելցուց. «Եթէ կ'ուզենք անցնելն դասեր տալիս եւ լուսպէս իրացնել զանոնք, պէտք է դառնանք մեր պատմութեան ա՛յլ էջերուն, որոնք արեւմտ գըրուած են»:

Քուէյթի Թանօթ գրագիտուհի Լէյլա Օսման ըսաւ. «Եփիմաշարը կը ներկայացնէ իրական պատկերներ, որոնք ժողովուրդին պէտք է փոխանցուին: Օսմանեան կայսրութիւնը բռնատիրական

պետութիւն էր եւ այս յատկանիշը մինչեւ վերջ կցուած պիտի մնայ իր անուամ ու չի ջնջուիր իսլամական ըլլալով, երբ 400 տարիներ քրճագրուած պահեց արարական աշխարհը եւ (...) յետամնացութիւն սերմանեց ու մեր նկատմամբ որդեգրեց բարբարոսական բոլոր ձեւերը»:

Քուէյթի մտաւորականութեան դժգոհութեան այս ալիքը, յաջորդող օրերուն, նաեւ ժողովուրդին խափն մէջ սկսաւ դնել իր արձագանգները Քուէյթի ողջ մամուլը՝ «Փայաս», «Ալ-Ուարան», «Ալ-Սեպա'ը», «Ալ-Սիսսա» օրաթերթերը լայն տեղեր յատկացուցին ուսանողական եւ հրապարակագրական ա՛յն տեսակէտներուն, որոնք բողոք կը բարձրացնէին ֆիլմաշարը կասեցնելու որոշումին դէմ: «Ալ-Փայաս» օրաթերթը, իր փոխ խմբագրին ստորագրութեամբ, հատու շնորհով ընդգծեց, որ «պատմական ճշմարտութիւնները պէտք է վիճեցուին ճշգրտական սիրաբանութեանց պատճառով»: «Ալ Ուարան» օրաթերթը, իր կարգին, յատուկ անդրադարձով մը Նշեց, որ թերթին վրայ տեղացած են ժողովրդային բողոքագիրներ, որոնք կը դատապարտեն կասեցման որոշումը: Իսկ Նշեալ օրաթերթի աշխատակիցներէն Ֆուատ էլ Հաշէմ, «Ալ-Ուարան»-ի էջերով, դիտել տուաւ, թէ կասեցման որոշումը անուան է արտաքին գոր-

ծոց նախարարութեան կողմէ, նախարարութեան ուղղուած թուրք գնապանին բողոքին պատճառով: «Այլ-Անպա՛ր» երրորդ էջով հրատարակուած յօդուածով մը ընթերցողներուն ուշադրութեան յանձնեց, որ պատմական այն իրողութիւնները, որոնց անդրադարձած է ֆիլմաշարը, արժանազրուած են պատմութեան զիրքերուն մէջ... Եւ այդ ժամանակաշրջանին արարներուն պարտադրուած յետամտութիւնը ո՞նէ անձ չի կրնար ուրանալ, քրացի ամկէ, որ կ'ուզէ արեւը մարով պատմիչել:

Այսպէսով, թրքական «անտեղի եւ երկչուտ միջամտութիւնը», ինչպէս պետի ըսէր Նամուսթ Անզուր, տուաւ իր հետապնդած նպատակին հակառակ արդիւնքը: Եւրոպայի շարունակ արարական մամուլը լայնօրէն անդրադարձաւ հարցին, կատարեց արժեւորումն ու գնահատումը իր տեսակին մէջ եղակի այս ֆիլմաշարին եւ շեշտը դրաւ այս «վախճան միջամտութեան» ետին կանգնող ահաւոր պատմութեան քաղաքական բովանդակութեան վրայ:

Արարական միջազգային օրաթերթերու ընտանիքին կարկառուն ներկայացուցիչներէն՝ «Այլ-Անպա՛ր»-ի թողաբանական յօդուածներու էջին մէջ, լիբանանցի անուանի հրատարակագիր Սամիր Աթալլա ստորագրեց հարցին քաղաքական ծայրերը վերլուծող «Աուրիոյ եւ թուրքիոյ միջեւ պատմական ֆիլմաշար մը կայ... ո՛չ պատկերասփիւռային» խորագրեալ յօդուածը, շեշտելով, թէ «պատմական յարաբերութեան մէջ, որ իր սպիները թողուց Դամասկոսի, Պարտաւաի, Պլյուրոսի, Գահիրէի եւ Պահսիսի վրայ, ձեռնալ փաշան կը թերկայացնէ ո՛չ մէկ վիճարանութիւն վերցնող բնորոշ մտայ մը՝ իր տրամաբխ անհատականութեամբ, փոփոխական կեցուածքներով, սարսափելի բռնարարներով եւ իրեն կապուած դառն յուշերով»:

Հետեւաբար, հարցը զուտ գեղարուեստական կամ միայն անցեալի ժիրին մէջ ամփոփուող ինչոր մը չէ, այլեւ Սուրիոյ համար մնայուն հիմնահարց մը, որովհետեւ, ինչպէս կը հաստատէ Սամիր Աթալլա, Արեւմտեան թուրքիոյ կցուածն է վեր, «այդ համգրուանէն սկսեալ, Իսթանպուլը

փոխարինած Անգարայի եւ Դամասկոսի միջեւ քարի դրացնութեամ յարաբերութիւններ երբեւիցէ չեն մշակուած: Աուրիական էադաբական մշակոյթի մէջ, թուրքիան միայն արտաքին-գիւղական տակամ թիւք մը չէ: Ընդհակառակն, կամ պատմական, աշխարհագրական եւ մշակութային բազմաթիւ ազդակներ, որ զինք ամբողջութեամբ կը վերածեն թերթիմ հարցի մը»:

«Պատմութիւնը գեղագիտական գործողութեամ չ'ենթարկուիր», «Պատմութիւնը չի ջնջուիր», «Արար ժողովուրդը սուղ գին վճարած է օսմանեան բռնատիրութեամ, եւ այդ բոլորը անցնելի ու անմոռանալի են», «Հողին եղբայրները մեր պատմութիւնն է... եւ պատմութիւնը սիտի չ'կնդծնմք» եւ նման զգայացունց խորագրերներով արարական ու լիբանանեան մամուլի էջերուն լոյս տեսած յօդուածներէն քաղուած մէջբերումները կը փակենք վերջին նմոյշով մը՝ «Այլ-Անպա՛ր» տարածուն օրաթերթի էջերուն լոյս տեսած հանրածանօթ լրագրող Ապտէլ Ուահհապ Պատրիսանի «Հողիմ երայրները» խորագրեալ կարծիքայն բովանդակայն ակնարկով:

Նշելով, որ Հողիմ երայրներուն գրուածները ո՛չ միայն փաստացի ճշմարտութիւններ են, այլեւ՝ զուտ գեղագիտական ու գեղարուեստական ներկատառումներով մեղմացուած ու նորբացուած վաւերական իրողութիւններ, Ապտէլ Ուահհապ Պատրիսան կը գրէ՝

«Եկնուամենայնիւ, թուրքերը անգամ մը եւս կը հաստատեն, թէ որքա՛ն դիւրագրիտ ու զգայուն են եւ կը խուսափին խուսովանել իրենց պատմութիւնը, երբ հարցը կ'առնուի հայկական ու չրտական կոտորածներուն, որոնք մաս կը կազմեն այն «պատմութեամ», զոր այժմու թուրքերը կը մերժեն ընդունիլ»:

Ապա, շեշտելէ ետք, թէ նման պարագաներուն անոնց մէջ կ'արթննայ ո՛չ միայն Աթաթուրքի որդիները, այլեւ՝ «թուրքական ցեղին» ժառանգորդները ըլլալու «համաթուրանական հպարտութիւնը» եւ «գիտակցութիւնը», Պատրիսան կ'աւելցնէ, որ նման պարագաներու, «ըստ պահանջի» անոնք կը դառնան օսմանականներ կամ հակա-օսմանականներ եւ, երբ էադաբական անբաժնետու-

քիւնը կը պահածը՝ իրեմօ գիրեմօ անմեղ չեմ հոչակեր Յոյնիսկ արիւնարբու ձեւալ փաշայիմ գործած ճիւղներէն:

Պարզապէս... ըստ պահանջի եւ ըստ պահու թելադրանքին թըքորէն, ամէնուրեք եւ ամէն առիթով...

* *

Մուրիական 6 նահանգներու եւ Յորդանանի Փիթրա պատմական շրջանին մէջ (աւելի քան 200 նկարահանման վայր) ձեւ ու պատկեր ստացած «Հոգիմ եղբայրները» դիւցազնավէպին յաջողութիւնը պէտք է փնտռել մէկէ աւելի տուեալներու մէջ, Յիճ առաջին տոնալը վաւերական երկու արուեստագէտներու՝ շնորհալի արձակագիր Հասան Մ. Օուսէֆի եւ Նոյնքան բարձրանաչակ բեմադրիչ Նատաթի մամաի Անգուրի գործակցութիւնն է, երկրորդը՝ արուեստի մեծածաւալ գործի մը իրագործումը պայմանաւորող մեծազումար պիւտեճէն եւ բեմիմիջ հրաշարարութիւններուն ստեղծումը արտադրիչ ընկերութեան կողմէ, երրորդը՝ սուրիական պատկերասփուռի եւ թատրոնի վաստակաշատ ու երիտասարդ դերասաններու կարողութիւններուն ներդաշնակ միաշխուհի մեծապատաստ գործի մը մէջ, չորրորդը՝ արաբական փոքր պատասախն արգիլուած նիւթերէն մէկը հանդիսացող օսմանեան հանգրուանը վաւերագրական ճշմարտացիութեամբ, քաղաքացիական խիզախութեամբ եւ այսպիսի տարողութեամբ արեւարծիւու յանդգնութիւնը, հինգերորդը՝ հեղինակին ու բեմադրիչին նրբանաչակ աշխարհահայեացքը, վեցերորդը՝ Օուսէֆ-Անգուր գոյգին գեղագիտական գիւտերն ու լուծումները, եօթներորդը...

Կարծի է երկարել շարքը իր անսակին մէջ եզակի այս իրագործումը բացառիկ յաջողութեամբ պսակած տուեալներուն: Մէկ բան պէտք չէ մոռնալ սակայն, որ կենդանի վկայութիւն մը հանդիսացող այս գործին յաջողութեան ի խնդիր, արտադրիչ, հեղինակ, բեմադրիչ ու դերակատարներ ոչինչ խնայած են, տուած են իրենց առաւելագոյնը, ամբողջական խանդավառութեամբ, տառապանքով ու երա-

զով՝ լայնածաւալ պատասախն բարախուն տեսարաններով ակնդիրները ներգրաւելու եւ անոնց միջոցաւ արար ժողովուրդին ազգային շնորհակալ յիշողութիւնը ամուր հիմերու վրայ հաստատելու նախանձախնդրութեամբ:

Օսմանեան լուծին վերջին տարիները (1915-1918) ամենայն վաւերականութեամբ ներկայացնելու համար, փաստագրական հազարաւոր էջեր կուտակած Հասան Մ. Օուսէֆ իր բնագիրը հարստացուց անհատ հերոսներէն կացութիւն, հոգեմիտակ, բայց մանաւանդ հաւաքական հերոսին՝ արար մարտելող ժողովուրդին ամբողջական դիմագիրը, տառապանքներն ու երազները, սրբաբաններն ու ազգային նրագիրը թեյադրական պատկերի վերանորոգող արարներով ու մանրամասնութիւններով: Ընդգրկուած ժամանակաշրջանի գեղարուեստական վերլինիչներու վերլուծողութեամբ յաւելալ փայլը ու խորութիւն ստացաւ, երբ այդ տիպարներն ու կացութիւնները մարմնաւորելու կոչուած շնորհալի դերասանները՝ Այման Ապու Ջէյտան, Տալէզ Ապու Տան, Մուզան Նանթի Խոտին, Ջուհէլ Ապուէլ Գարիմ, Պասամ Լուսիֆի, Հանի էլ-Ռումանի, Ապուէլ Ռահման էլ-Ռաշի, Ժիհատ Ապու, Գրիգոր Բուլշեան եւ իրենց ընկերները լուսադրոյթ թարգմանեցին բեմադրիչ Նատաթի Անգուրի երեւակաւորութեան որոնումներէն ծնած փանթապիլ յաւերումները եւ քննարկը ստեղծին վարակիչ գրաւչութեամբ, ինքն ու բարախուն շունչով եւ շարժապատկերային հնչող ու բազմաձայն լեզուով:

Եւ արաբական ֆիլմարուեստին հաշուոյն ծնաւ պատկերային նոր գեղարուեստի մը, որ նոյնիսկ մահուան տղեղութիւնը երանգաւորեց հողին, արեան ու տեսիլքին գեղեցկութեամբ, արուեստի ստեղծագործ լեզուով ինչոպէս վերանոյնելու ծիսային տօնահանգէսի, եւ նոյն հողին ի խնդիր թափուած արեան մշտահունչ արձագանգներէն հնչեցուց ազատութեան, արդարութեան եւ յանձնարարական արժէքներու օրրան սուրիական հողի սրբախնդրական ճղբայրներու պատգամին տեսողական համաձայնագր:

ՀԱՍԱՆ Մ. ԵՌԻՍԷՅ

Պատմաօճազիր, քաղաքագիր, հրավարակազիր ու խմբագիր Հասան Մ. Երևանի ծնած է 1948ին, Լաքաքիոյ Տալիա գիւղաշրջանը:

Տակալին համալսարանական ուսանող պատմաօճազիրն էր և գրական ու այլաբանոյ յօդուածներով կ'աշխատակցի տրիսական ու արաբական մամուլին և կը վարէ խմբագրական պատասխանատու պաշտօններ:

1978ին, Սուրիոյ մշակոյթի մախարաբուրեան արձակի մատենաշարին լոյս կը տեսնէ իր պատմաօճազիրն առաջին ժողովածուն՝ «Չարաքաճ ենթասպան», որուն կը յաջորդեն «Ապրէլ Զահիար Ապրէլ Մամի յարութիւնը» և «Օրիորդ Սապիա» անուն հասարածները:

1987-1988 քաղաքաշրջաններուն, տիկնիկային քաղաքները կը ներկայացնէ իր «Կապույտ սիրտը» քաղաքախաղը, իսկ 1989-1990ին՝ «Վեց ընկերները»:

Գրական-մտաւորական իր աշխատանքներուն զուգահեռ՝ նաեւ կը ստորագրէ պատկերաստիկային ֆիլմաշարեր: Նախ կը պատրաստէ տրիսացի մեծահամբաւ վիպագիր Հաննա Միլնէի «Չաջ մարդու մը վախճանը» վէպին բեմագիրը (27 մաս), ապա՝ «Ջըզ մաթ» լիամերթած ժապատին բեմագրութիւնը:

Հասան Մ. Երևանի վերջին ստեղծումը կ'ըլլայ «Հողին եղբայրները» ֆիլմաշարին բեմագիրը:

Ներկայիս կը վարէ Դամասկոսի «Երշիկ» պետական պաշտօնաթերթին մշակութային գրասենեակի բաժնի վարիչի պատասխանատու պաշտօնը և միաժամանակ մաս կը կազմէ «Ալ-Շամ» ընկերութեան ընտանիքին ու Տուպայի մէջ լոյս տեսնող «PC Magazine» պարբերաթերթի արարներն հրատարակութեան խմբագրան կազմին:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ԽՕՍԷՐԸ

Պատմութեան մէջ կան բնացած ցաւեր ու կարօտներ, զորս տրաման կ'արթնցնէ: «Հողին եղբայրները» ֆիլմաշարը կը ճգտի իր հանդիսատեսներուն մէջ արթնցնենի արար մարդուն արած կարօտներն ու ցաւերը Առաջին Համաշխարհային Պատերազմին ընթացքին, այսինքն՝ ցաւերն ու կարօտները այն հանգրուանին, որուն ընդմէջէն արեւմտեան գաղութատիրութիւնը ցանց սերմերը այն բոլոր ողբերգութիւններուն, որոնց տառապանքը ապրեցաւ արար մարդը՝ Քամիերորդ դարուն: Նպատակը, ետս, անցեալին վրայ լալը կամ անոր մանրամասնութիւնները ներկայացնելը չէ, այլ անոր դիմագրաւումը՝ յայտնագործելու համար անոր օրէնքներն ու գաղտնիքները: Որովհետեւ ան՝ որ անցեալը կը մտնայ, կը գտաւարտուի զայն կրկնելու և անոր տառապանքները վերստին ապրելու: «Հողին եղբայրները» ֆիլմաշարին մէջ, փորձեցի իրարու հետ հաշտեցնել տրաման և պատմութիւնը, առանց որ մէկն ու մէկը գերակշռէ միւսին վրայ: Որպէսզի պատմութիւնը իր վաւերականութիւնը բարդէ տրամային և տրաման ալ իր հետաքրքրութիւնը զուարէ պատմութեան վրայ: Ինչպէս նաեւ յատուկ հոգածութիւն ցուցարեցի համդիսատեսին գեղարուեստական հանոյ՛ պատճառելու և տարիանագելու առնչութեամբ, նկատի ունենալով որ անոնք այն երկուքներն են, որոնք արուեստի գործը մարտոց սրտերուն կը փոխադրեն:

ՀԱՍԱՆ Մ. ԵՌԻՍԷՅ

«ՀՈՂԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ»ՈՒՆ ՂՕՂԱՆՁՆԵՐԸ

Քանի որ դարու առաջին ցեղասպանության դժոխային արարներուն օրը օրին արձագանգած եւ դարասկիզբի արարական մամուլը հիմարտաբան վկայարանի պատուանդանին բարձրացուցած Մուհամմէտ Ուսէի Կոստին Օսկաններու, Ֆայէզ էլ-Ղուսէյններու, Շուքրի Քնէյտէրներու, Հալէմ էլ-Աթթարներու, Ֆուատ Միտահիններու եւ լուսանուն այլ մտաւորականներու կենդանի վկայութիւններէն ետք, արար ժողովուրդի արժանաւոր բազում ներկայացուցիչներ շարունակ վերադարձան պատմութեան վերանայի հիշուած եւ լուսարձակի տակ առին Հայաստանի պատմական երեսները՝ Մուրիացի, իրանանցի, եգիպտացի, պաղեստինցի եւ այլ երկիրներու նմանը արար բազմատանակ լրագրողներ, պատմաբաններ, քաղաքական ու ընկերային գիտութեանց մէջ մասնագիտացած հեղինակաւոր դէմքեր եւ ետքան վաւերական քաղաքական գործիչներ ու գրողներ հանգամանորէն անդրադարձան քաղաքակիրթ աշխարհէն արդարութիւն պահանջող Մեծ Օղեռնի բազմանկող ըզվանդակութեան եւ ընդգծեցին անոր անդին եւ անմասնացի մարդկային արդար հարց մը ըլլալու հանգամանքը։ Յատուկ պատշաճի գրութիւններու սահմաններէն անդին անցնող խնդրոյ առաջնայ յարգանքներուն, ուսումնասիրութիւններուն եւ քաղաքական ելույթներուն տարողական մասնագիտութիւնը միայն պիտի բաւէ, որ ընկերացողք սեպակին դրուէ ստուար հատոր մը։ Պատկերը խօսուն է ըստ ամենայնի եւ լաւագոյնս կը վկայէ արար մշտաւորականութեան արդարատենէ հուսկեան եւ իրաւութեան մասին։

Մեծ Օղեռնի ՅՕամենակի մեր բազմաթիւ արդար նախաճաշակ մը փոխանցեց արար մտաւորականութեան խիղճին ներդրումներուն շուրջը նոյնը կրնաք ըսել արարական գրականութեան հարաւոր շրջանէ պահ մը թով թովի բերնէ մեր էջերուն հիւրընկալուած Յոթմէ էլ-Մուտարէտի, Ամէր էլ-Տըլլաքի, Մաարուֆ էլ-Ռասաֆիի եւ Իպրահիմ ար-Քալիլի «Արձաններու վաճառորդը», «Օրդա Սասունին», «Որրին մայրը» եւ «Ալ-Հուսս» անուն արձակ ու չափածոյ ստեղծագործութիւններն ու ուսումնական թուականներուն թարգմանաբար հրատարակած Լուէյ Ալատարի «Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ» թատերախաղը։ Իսկ եթէ ասոնց վրայ դումարենք «Արագիւններու գաղթը» գործածուին էջերուն ի մի խմբում ի պատմութեանն ու բանաստեղծութիւնները, բայց մասնաւոր այս հատրտիւրէն առաջ եւ ետք հրատարակուած նոյնաբնոյթ ծաւալուն հատորները, այն ատեն կրնանք անվարան հաստատել, որ ստեղծական էջերը եղբայրներուն «Հայկական գործերը եզակի երեսներ մը կը հարմեն եւ արժանի են լուրջ ուշադրութեան ու գնահատանքի»։

Թատուկ «Բագին»ի համար գրուած սուրիացի քննադատ Աւատ Չախրի «Արիւնը ճորմակ չէ՝ յոգուածը, արձակագիրներ իւրաքանչիւր այ-Քալիլի եւ Մամիթ Անթարիի «Գոմար կամ ճանապարհ դէպի Որֆա» եւ «Ծակորը ու անապարտի մարդը» անուն պատմութեանները, ինչպէս նաեւ իբրեւ նմոյշները արարական ու չափածոյ միւս ստեղծագործութիւնները Հայ ընկերացողքը կը դնեն բացառիկ երեսներ մը փաստին դիմաց։

Կարծիք թողուկ շահագրգռութեամբ կեդրոնական լուրջ էջերով թարգմանաբար տրուած այս բազմաթիւ ստեղծագործութիւններուն վրայ՝ գրական մասնագիտացողներու կողմէն համար հաւաքական գիտակարգ իրենց արձանագրելու մը զուգահեռ կազմելու համար հաւաքական գիտակարգ իրենց արձան մէջ լուր չխառնած մեր «Հողի եղբայրներուն» Ստորեւ կու տանք մեր պատրաստած թղթածրարին առաջին մասը։

Ա. ՖԱՆՐԻ
(Յատուկ շնորհագրություն)

ԱՐԻՒՆԵ ԶԵՐԱՆԿ ՉԷ՛

Կոտորած Հայր մեր արաբական գրականության պատուհաններին մեզի կը ներկայանայ իրրեւ ծովային մշտարծարծ, լայնօրէն ճառագայթող եւ թաքնաթաքուն բառերուն յօղերուն բացուող ծովային փարոս մը, որուն կենսափորձին մասին փոխն ի փոխ կ'արտայայտուին զանազան զեղարուեստական գրութիւններ, նախաձեռնելով գրութեանց շարականներուն կշռութիւններուն հիմամբ զարգացող հրապուրիչ պարին եւ ոսկի պարաններով ձգուելով դէպի արեւաթաթախ, ցաւատանջ ու կորուստներով ծանրաբեռն յիշողութիւն:

Ա՛յսպէս կը ներկայանայ Հայր՝ արաբական գրականութեան բազմաթիւ տրձակ գործերուն մէջ:

Կառուցը, որուն վրայ բարձրացաւ Հայու տիպարը մեր արաբական գրականութեան մէջ, յատկանշուեցաւ իր պատկերներուն ու տեսարաններուն բազմազանութեամբ: Նոյնպէս, բազմազան եղան Հայր պատկերող մեր դիտանկիւնները, եւ այս իրողութեան պատճառը այն էր, որ ծայր աստիճան շեշտուած անբաժանելիութեամբ ու ամրակոտորութեամբ այս տիպարը ինքզինք կատարելագործեց իր սպրած ողբերգութեան մէջ:

Կոտորածներու, տարագրութեան, սպանդի, պանդխտութեան տագնապը անբաժան եղաւ Հայուն պատկերէն, ընկերացաւ անոր ամէնուրեք՝ տեղափոխութեանց եւ տարագրութեանց ընթացքին, անոր Հետ աստիճանական զարգացում ապրեցաւ՝ հաստատելու անբռնազրօս եւ անճիգ յայտնագործումներ անոր ընթացքին մէջ, որ զինք առաջնորդեց դէպի գրականութեան ամպիոնը եւ ապահովեց իր առանցքայնացման եւ այդ մասին գրելու պայմանները:

Բազմաթիւ գրական գործեր անդրադարձան Հայու պատկերին եւ այդ պատկերը կերպարանք ստացաւ տարբեր գործերու մէջ, որոնցմէ՛ ոմանց մէջ՝ գրաւեց առանցքային եւ գլխաւոր կշիռ, իսկ ուրիշներու մէջ՝ եղաւ ո՛չ միայն անցողակի, այլեւ՝ անսպասելի: Այնուամենայնիւ, ան չկորսնցուց իր հաւասարակշռուած ներդաշնակութիւնը՝ դառնալու Հայկական այլին ցուցանիչը:

Կարօտի եւ արեան ներդաշնակումը յառաջացուց այն վաւերական գոյգը, որ իր զօրաւոր կնիքը դրաւ բազմաթիւ գրութիւններու վրայ: Կարօտը մասնակցեցաւ անձնաւորութեան Համադրումին եւ

զայն մղեց դէպի անսահման հորիզոններ, որոնք խիստ ցանկութիւններ կը կաթկթին՝ յար եւ նման հին արեան առաւօտներու ցօղերուն, եւ կը ներթափանցեն բառերու արձակ սփռուածքին մէջ՝ ինչպէս խորքը հայելիներուն, որոնք կը ցոյցնեն բոլոր մանրամասնութիւնները այն հայու տիպարին, որ անցեալը վերալիցելով տակաւ առ տակաւ կը բանայ դառնութեամբ տրոփող յուշը:

Պատկառանքի գիծերը կը թանձրանան այն բախտագուշակին պէս, զոր տեսարանին եւ աղէտին ահաւորութիւնը արթնցուց, եւ որուն վրայ վալորը, պատկերները եւ արթնութեան երազները խուժեցին այնպիսի տեսարաններ, որոնք անբաժանելի են իրմէ, Գիրքի, որեւէ գիրքի երկու կողքերուն միջեւ անկարելի է այս բոլորը ամփոփել եւ հասնիլ զտարին հայուն, որ բարձր կը բռնէ տարագրութեանց պաստառը՝ ամուր քաշուած արեան եւ պանդխտութեան օրերուն շղթաներով, որպէսզի չհեռանայ հեռութիւն դարձած անցեալէն եւ շատ չմօտենայ գայիքին...


Հայն է, կը յայտնուի ա՛յսպէս՝ պարզելով անյողթահարելի կարօտին մեղեդին, ուր կ'առաջնորդուին զգացումները, յուզումները, կարօտը, թախիծը, տազնապը՝ ի մի խմբուած գոյնզգոյն լոյսերու փունջի մը պէս, զիրար հրմշտկելով դէպի մէկ ուղղութիւն: Անիկա հիւսիսն է: Արեան եւ անմոռանալի շարչարանքներուն հիւսիսը, հիւսիսը յիշողութեան եւ կարաւաններուն, որ կը ցուցադրէ աչք ծակող ժապաւէն մը եւ կը ճնշէ ջիղերուն վրայ: Անիկա հիւսիսն է արեան եւ յիշուածներն:

Ամէն բան հայը ձգեց հո՛ն եւ ամէն բան հոնկէ՛ վերցուց: Կը սկսի Հայաստանով, որպէսզի իր վախճանը գտնէ Հայաստանի մէջ, իր աղաչական ձեռքերը լայնարաց պարզած դէպի անոր հեռաւոր երկինքը:

Տակաւ առ տակաւ պատկերը կ'ամբողջանայ եւ ներդաշնակ կերպարանք կը ստանայ մեր գրականութեան մէջ, եւ այն թախժաշուտ մեղեդին, որ հայկական այլէն միայն իր կարօտը կը պարզէ, կը դառնայ շողշողուն, պաթառ ու երփներանգ՝ ինչպէս ծիրանի դօտին, ձգուած՝ երազներու եւ պատկերներու հորիզոններուն:

Մեր գնահատումով՝ հայկական կոտորածները ցանկալի մայրն էին արձակ ստեղծագործութիւններու երեւակայութեան կամ անոնց համադրումին. յատկապէս այն տեսարաններն ու պատկերները, զորս մեզի պարզեց Յայէզ էլ-Ղուէյնը՝ «Ջարդնը Հայաստանի մէջ» անուն իր գիրքի էջերուն, ինչ որ եղաւ գլխաւոր դրոշմապատճառ ու ներշնչարան՝ զանոնք համադրելու, կրկնելու կամ անոնց մասին խորհրդածելու: Որովհետեւ արեան տեսարանները անմոռանալի պատկերներ են, որոնց հայուն յիշողութեան մէջ ձգած տեղը չեն կրնար գրաւել ո՛չ մէկ ուրիշ իրողութիւններ ու դէպքեր, ինչ ալ ըլլան անոնց կարեւորութիւնը՝ իբրեւ սարսափելի եւ ահուկ պատահած իրողութիւններ. որովհետեւ մահն ու սպանու-

ԱՍԱՆՑ ԳԱՆՏԻՐ



Քննադատ եւ պատմական ուսումնասիրութիւններու հեղինակ Ասատ Գալստի Ժնաթ է 1953ին, Տեր-Ջօրի մէջ:

Մենդակայրին մէջ իր երկրորդական ուսումը ստանալէ ետք, կամքէ անկախ պատճառներով կը նետուի կեանքի ասպարէզ: Ինքնաշխատութեամբ կը խորացնէ իր գրական-մշակութային գիտելիքները եւ կը դառնայ ասորիացի երիտասարդ բնագաղտներու սերունդի արժանատր ներկայացուցիչներէն մէկը:

1970ական թուականներէն սկսեալ, սուրիական ու արաբական մամուլի եւ գրական ամսագիրներու էջերուն կը ստորագրէ գրախօսական

թիւեր ալն ձեռքն էին, որ կ'երկարէր ամէն բանի, ձեռք մը՝ զոր չէր կրնար զսպել ո՛չ մէկ ուժ եւ զոր չէր կրնար արգելակել ո՛չ մէկ կապանք:

Անգուսպ արիւնը պարանոցներուն կը ստիպէր ծռիլ եւ մարմիններուն՝ գետնատարած յանձնուիլ: Ան տարբերութիւն չէր դնէր ծծկերին եւ ծերունիին միջեւ եւ իր բռնակալութեան համար ամէն բան արտօնուած էր:

Հետեւաբար, տեսարանները զիրար կը հրմշտկէին հայուն յիշողութեան մէջ, որպէսզի թախտն ու ցատուը վերածնն խելագարութեան հանող կացութեան մը, որ հայուն ներդաշնակ կեանքը կը դարձնէր խնթութեան ու տազնապալի հոգեվիճակի եւ արեան տեսարանները կը հաստատէր անոր տեսիլներուն մէջ՝ իրենց զանազան ձեւերով եւ մօտեցումներով, ինչ որ տեսանելի դարձաւ այդ տեսարանին բնորոշ գիծերը ամենայն նրբութեամբ ու ներդաշնակութեամբ զծած արձակ ստեղծագործութիւններուն մէջ:

Ինչ որ «Գոհար կամ ճանապարհ դէպի Ուրֆա»՝ կտորի դէպքերը յատկանշեց, Մենակեաց Արուշը հարուածած նոպային եղբերդը ցըցուն գիծերով գծելու արժանիքն էր. հոգեվիճակ մը՝ որ այս հերոսը մղեց իր գրաւը դնելու լքուած վայրերուն ամայութեան ծէսին վըրայ, բաժնուած՝ երկու մասի, աւելի ճիշդ՝ կէս խնթի եւ կէս սուրբի: Այս տիպարը, «որուն մասին ո՛չ ոք ոչինչ գիտէր, եկաւ գաղթականներուն հետ, յետոյ իրեն պէս տկարակազմերուն նման ճամբան ետ

1.-Տես Իպրահիմ ալ-Խալիլ, «Գոհար կամ ճանապարհ դէպի Ուրֆա» պատմուածքը, Ասատ Գալստիի «Նոճիին հատաչանքը» հատորը, 1955, Լաքաբիա, «Տար էլ-Հիտար» հրատարակչատուն, «Համագային»-ի Հալէպի ՀԵՄի մասնաճիւղի «Գրական եւ պատմական ուսումնասիրութիւններ» մատենաշար, թիւ 3, էջ 191-199:

ներ, ուսումնասիրություններ եւ գրական ու մշակութային այժմեական հարցեր քննարկող յօդուածներ:

1995ին, «Համագային» ի Հալեպի ՀԵՄի մասնաճիւղի «Գրական եւ պատմական ուսումնասիրութեանց մատենաշար» ի իբրեւ Գ. հաստոր՝ Լաքաքիւյ «Տար էլ-Հիւար» հրատարակչատունէն լոյս կը տեսնէ Ասա՛ տ Ճախրիի «Նոճիին հաշալանքը» 280 էջ հաշուող ուսումնասիրական հատորը:

Ներկայիս կ'ապրի Բագգա եւ կը պաշտօնավարէ «Եմիրատի աւագանի շահարկման հաստատութեան» մէջ:



մնալով՝ ապրեցաւ ջրաղացին մէջ: Ան բուրդէն պարաստիկներ կը թիւար, ո՛չ թէ թռչունները որսալու, այլ՝ զանոնք որսորդներէն զգուշացնելու համար: Մինչեւ որ մարդիկ զինք համարեցին թռչուններուն խնձօ պահակը, եւ թշնամի՞ն՝ որսորդական հրացաններուն: Ան շարունակ կը փորձէր գողնալ հրացանները եւ ջարդուիշուր ընել ժայռերուն վրայ, պոտալով բարձրադաղակ:

«—Արի՛ւն...արի՛ւն... ա՛լ կը բաւէ, ոճրագործնե՛ր»:
Արուշի մօտ, արիւնը եւ իր տեսարանները կը դառնան ճանապարհ մը, որ կ'երկարի դէպի սարսափազդու տեսարանները Համախմբող յիշողութիւն: Ի մի կը բերէ տեսարանները այն մարդոց, որոնք անցեալին իր շուրջն էին եւ իրեն թողուցին տրամը ոճրագործին ու զոհին, որոնցմէ ինք անկարելի է որ յաջողի բաժնուիլ: Մնացին իր յիշողութեան մէջ՝ պալարներու եւ բաց վէրքերու պէս, սպանութեան արգիլումը երաշխաւորելով լեզուով մը, որ դիտակցութենէն աւել խնթութեան մօտ է: Խնթութիւն մը՝ որ կը սկսի զոհը որսորդէն զգուշացնելով:
Ան պատմութիւնն է Արուշին, որ «Գոմար...» պատմածքին մէջ թողուց փայլք ու բոցարծարծում, երկարեցաւ իբր հողմվիճակ, մինչեւ որ ծնաւ իր խնթ իմաստութիւնը, որ արիւնը մօտեցուց ոճիրին եւ ոճիրը՝ արեան: Զուգակցում մը՝ որուն ընդմէջէն վիպանոցիկը ալ-Քալիլ յաջողեցաւ ձուլել նոր հորիզոններ՝ արեան ֆոսփային համար, ուրկէ չեն բացակայիր հմտութեան եւ փորձառութեան յատկանիշները, ուր արեան եւ ոճիրին կապակցումը իր ներդրային ընթացքին մէջ, մէկ կողմէ կ'իրականացնէ նուրբ ու ներդրանակ հասկացողութիւն մը եւ, միւս կողմէ՝ Արուշի մենութեան կու տայ

2.-նոյն, էջ 191:

իր ներդաշնակ դիրքն ու կշիռը՝ պարաստիկներ հիւսելու իր արարքին հետ, որուն միջոցաւ ան կ'ուզէ թուունները զգուշացնել անգութ որսորդներէն:

Արուշի միջոցաւ «Գոհար...»ը դարձաւ մեղեդի մը, որ զուգահեռ ընթացաւ սարսափին, որուն նակատագրուեցաւ հերոսը, սպանութեանց եւ արեան տեսարաններուն պատճառով, եւ եղաւ այս իրողութեան դիմաց կանգնած անզօր վկան: Ինչ կը վերաբերի «Ալ-Հուտս»ին, պէտք է ըսել, որ ան վիպագիրին բոլորովին տարբեր խօսքն է, ուր արեան տեսարանները կը վերածուին ցաւցնող ուղեւորութեան մը եւ շուարումի ակնթարթներու, ուր զոհը կ'երկարի ոճրագործին դիմաց եւ շարունակուող վիճակը փոխն ի փոխ կը մարմնաւորեն Սագոն եւ Արոն: «Եւ կը շօշափես Բայու դէմքդ եւ Բայու գլուխդ: Ամբողջ Արարատը բաւարար չէ ծարաւ սիրտդ զովացնելու եւ քեզի վերադարձնելու սիրտիդ խաղաղութեան կարկաչը: Բաւարար չեն բոլոր փշապակները այն գլուխներուն, որոնք մարդասպանը անպատեհներու եւ քաղաքներու մէջ իրենց մարմիններէն անջատեց ու բարձրացուց ցիցերու վրայ: Նոյնիսկ Հայաստանի բոլոր ծաղիկները բաւարար չեն այն Բաւարան գերեզմաններուն, որոնք ստեղծուեցան Ռաս Իւլ-Այնի, Մարկատէի, Սապխաղի, Թէլ Ապարտի, Հագիմիէի, Պիր Տաննաղի ու Թէլ Ապիատի մէջ եւ Եփրատի ու Պալիսի ափերուն:

«...Աստուած իմ, ինչո՞ւ այս բոլորը:

«...Սագո՞, այժմ կը սկսիս ողբայ:

«Սագո՞, Անին ու Տիգրանը կ'ողբես եւ աչքերդ ու զօրաւոր սիրտդ կը բաւեն ու կը տոկան: Հապա ի՞նչ պիտի ըլլաս, եթէ ուզես ամբողջ Հայաստանը ողբայ. աշխարհի բոլոր ծովերը պիտի չբաւեն քեզի եւ ոչ ալ յօշոտուած դիակներն ու բոպիկ ոտքերը:

«Ինչո՞ւ այս բոլորը, Աստուած: Դուն մե՞ր կողքին ես, թէ մարդասպաններուն?»:

Այսպէս ձեւաւորուեցաւ Սագոյին հայկական կերպարը «Ալ-Հուտս»ի մէջ: Ան միայն ողբերգական հեռաւորութիւններ ունեցող տիպար մը չեղաւ, այլեւ վիպագիրը աւ-Ռայիլ ուղեց, որ Սագոն դառնայ հայ ազգի բովանդակ դատը իր ուսերուն շարկած ներկայացուցիչը, ինչպէս նաեւ՝ վկան ազգի մը ողբերգութեան եւ բարձրադասակ մէկ արտայայտութիւնը հայ ժողովուրդի պանդխտութեան ու աշխարհով մէկ տարտղնումին:

Իսկ Սարուաղի տիպարը՝ «Լացողն ու խնդացողը» հատորին մէջ, կը սկսի ապրիլ ջղայնութեան նոպաներ եւ կը պոռչտայ ամէն անգամ, երբ կը լինէ մարդասպաններուն կողմէ իր սիրածին մորթուելու տեսարանը: «Յետոյ կը սկսի արտասուել՝ ամուր բռնած թուղթերուն ծրարը...: Այն ատեն ջղային շարժումէ մը կը սկսի Բեւալ, ա-

3.-Տես Խպրանիմ ալ-Նալիլի «Ալ-Հուտս», Ա. տպագրութիւն, 1987, Պէյրութ, «Տար էլ-Դանուր» հրատարակատուն, էջ 67:

ճակնկալ խենթություն մը կը ներգրատ զինք, իր բազուկներով ամբօրէն կ'օղակէ Շուքրիին վիզը, յետոյ՝ յատակօրէն դողդալով եւ սարսափաւար ու ընկճուած՝ կ'աղաղակէ.

«Ազատէ՛ զիս գազաններէն... զինք մորթեցին... կ'աղաղեմ՝ ազատէ զիս: Հիմա իմ կարգս եկաւ: Պաշտպանէ՛ զիս դամակէն»⁴:

Արեան պատմութիւնը այսպիսի հորվոյթ մը կ'ապրի այս հայկական տրամին (Սարուադ — «ի՛նչ է Ռաւտակութիւն») մէջ, որուն հայ հերոսութիւն, իր կարգին, կ'ենթարկուի ահաւոր նոպաներու, որոնք իր էութեան եւ ջիղերուն մէջ ծնունդ կու տան ուժգին ցնցումներու, զինք դարձնելով սպանութեան եւ դանակի տեսարանին զոհը: Այս արիւնոտ տեսարաններուն մէջ, մարդասպանին եւ անոր զոհին պատկերէն կը մնայ ուրիշներու արեամբ պայմանաւորուած ցաւալի յիշողութիւնը՝ իբրեւ անջնջի դաջուածք:

Նոյնպէս է նաեւ Յակոբը՝ Ապտէլ Ռահման Մունիֆի գործին մէջ, լեցուած՝ կարօտի արիւնով, որ իր երակներուն մէջ կը հոսի Հայ Յակոբը, շորուն մէջ կարծրութիւնը Ռաստատեցաւ՝ իր Ռայը, մայրը եւ ընտանիքի անդամներուն մեծ մասը այդ քարոյտում կորսնցնելէ ետք»⁵:

Սակայն, «Գիշերուան եւ յասմիկին թերթերը» վէպի էջերուն, Հաշէմ էլ-Աթթարի ուղեւորութիւնը կ'անէ այլ ընթացք՝ արեան տեսարանին ահաւորութիւնը պարզաբանելու աւրելութեամբ, երբ բերդին ունկերուն կը փսփսայ տեսարաններուն ու պատկերներուն գաղտնիքը, անապատներու, գիւղերու եւ քաղաքներու մէջ կատարուած յոգնեցուցիչ ուղեւորութենէ մը ետք ու կը ծանրանայ այդ տեսարաններուն վրայ, որոնց նմանը նախապէս չէր տեսած («Մայրի՛կ, մայրի՛կ, զանոնք թաղեցին Ռոն, Ռո՛ւ՝ անապատին մէջ մեծ փոս մը փորեցին, անոր մէջ շարտեցին, յետոյ վրան Ռոյ լեցուցին: Նետեցին Եփրատի եւ Տիգրիսի ջուրերուն մէջ... անոնց դիակները սեւ-սեւ ծփացին կապոյտ ջուրին վրայ... մանուկները պոռացին, թէ ջուր կ'ուզեն: Գիմատրեցին փամփուշտներով: «Անոթի ենք ըսին» եւ անոնց մարմինները փետեկտեցին դամակներով ու դաշոյններով...»⁶:

Այդպէս է նաեւ պարագան «Հիւսիսի Ռուլերը - 1917»ին, որ հայկական ջարդերէն կը կերակրէ ջերմ ու մտերիմ հոյակապ գործ մը, ուր նկարագրական շրջագիծն ու պատմողական ընթացքը անկարելի է, որ չվերածուէին վիճակը արտաքնացող այն տեսարանին, որ այլին՝ հայուն վրէժը լուծէ անոր թշնամիներէն: Տարօրէն հա-

4.-Տես Ֆիքրի Ապազ, «Լացող խնդացողը», Բ. տպագրութիւն, 1932, Չահիրէ, «Տար էլ-Հիլալ» հրատարակատուն, էջ 27-28:
5.-Տես Ապտէլ Ռահման Մունիֆի «Այի քաղաքները» եռագրութեան «Գորուտը» հատորը, Բ. հրատարակութիւն, 1986, Պէյրութ, «Արաբական ուսումնասիրութեանց հաստատութիւն», էջ 450:
6.-Տես Ֆէյսալ Խուրդոյ, «Գիշերուան եւ յասմիկին թերթերը», 1994, Արժնք, «Տար էլ-Նաֆիզա», «Համազգային»ի Հալէպի ՀԵՄի մասնաճիւղի հրատարակութիւն, էջ 183:

մամարդկային ազդեցութեանց տակ, Օմար Պանպուզը (Արջը), որուն գլխուն մէջ բազմաթիւ արկածախնդրութիւններ իրարու հետ կը մրցին, կը մարմնաւորէ հայուն վրէժը: Իրաքէն դէպի Հալէպ իր ուղեւորութեան ընթացքին, ջարդերու տեսարանները անակնկալի կը մատեն գինք («Օմար Պանպուզ իջաւ կառքէն եւ սկսաւ շրջագայիլ անոնց դիակներուն մէջ: Ան քթածակերը գոցած էր իր մատներով: Փարիտէն նաեւ իջաւ կառքէն, սակայն ան անմիջապէս ծոցնաւ եւ սկսաւ փռալիս: Բոլորը մորթում էին: Անճիտում էին տղամարդոց վիզերը եւ անճիտում էին նաեւ մանուկներուն պարանոցները»):⁷:

Տարբեր չէ նաեւ «Առազատները», Նեպիլ Սուլէյմանի «Արեւելի ծիրերը» քառաձևտոր վիպաշարին առաջին գիրքը: Հազմ հօրեղբոր վրայ տիրապետած յիշողութեան պատկերները իրարու կը յաջորդեն, որպէսզի քակեն ամուր կապուած անոր լեզուին հանգոցները եւ լեզուն անդադար ունեւ հայուհի Շեմմային կապուած անոր ցաւերն ու վիշտերը եւ ողբայ իրմէ չբաժնուող, ամէնուրեք իրեն ընկերացող ու շարունակ իրեն հետ խօսող Շեմման:

Նճում էլ-Սաուանի գլուխը իր յոգնաբեկ կուրծքին հանգչեցնելէ ետք, յիշողութեան մէջ նստած տեսարանին աւաւորութենէն՝ ան կը պոռայ զայրացած. «—Ինչպէ՞ս ուրիշ արարի մը կինը չմորթեցին: Ինձմէ զատ հարիրներ ամուսնացան անոնց հետ, ո՛չ թէ անոնց հետ սիրարանելու եւ զաւակներ ունենալու, այլ՝ զանոնք պաշտպանելու նպատակով: Ինչո՞ւ համար միայն Շեմման...»:⁸:

Իսկ շարքին երկրորդ հատորին՝ «Մեծ արջը»-ի մէջ, տեսարանը իր տարտղնուած կողմերը կը հաւաքէ բառերովը Ռադէպին, որ թուրքերու գործադրած բազում ջարդեր ու բարբարոսութիւններ տեսաւ թրքական բանակին մէջ ծառայած շրջանին, երբ անոնց կողքին կը կուռէր, կամ այն պահուն, երբ ըմբոստացաւ ու թուրքերուն թշնամի դարձաւ: Սակայն ան երբեք չկրցաւ մոռնալ ինչ որ իր աչքերը տեսան Ազրա՛հի մէջ, այսինքն՝ երբեւիցէ չազատազրուեցաւ այն ողբերգութիւններէն ու աղէտներէն, որոնք ի գործ դրուեցան անզօր ու դիմադրելու ուժ չունեցող հայերուն դէմ, եւ սկսաւ իր կոչերը դէպի երկինք արձակել. «Ինչպէ՞ս աչքերը փակեց այն յոյսով, որ Աստուած Ազրա՛հը կը կործանէ անոր բնակիչներուն վրայ. այդ մէկը հապերուն համար անելի արդար կ'ըլլար եւ անոնք, ինչպէս նաեւ ինք, մասամբ կը ստանային իրենց գործած արարքներուն անխուսափելի պատիժը»:⁹:

7.-Տես Նիհատ Սիրէս, «Հիւսիսի եռվերը - 1917», 1993, Հալէպ, CEC հրատարակչատուն, էջ 104:



8.-Տես Նեպիլ Սուլէյման, «Արեւելի ծիրերը» քառաձևտոր շարքի Ա. գիրքը՝ «Առազատները», Ա. տպագրութիւն, 1990, Լաքաքիս, «Տար էլ-Հիւսար» հրատարակչատուն, էջ 401:

9.-Նոյն, Բ. հատոր՝ «Մեծ արջը», էջ 157:

Նոյնն է պարագան արեան պատմութեան՝ Իլիաս Ֆարքուհի «Աւօ» պատմուածքին մէջ: Այս տիպարը նաեւ կը յիշէ պատմութիւնը իր ժողովուրդի սպանդին ու կոտորածներուն, ժապաւէն մը գէպքերու, որոնցմէ Աւետիսը (Աւօն) չի կրնար բաժնուիլ եւ կը մարմնաւորէ ողբերգութիւնը: Բայց ուրիշ լեզուով, իր լեզուով, համր Աւօյին լեզուով, երբ ան տրամը կը պատմէ տաք ու տարօրինակ կախարդական լեզուով մը՝ «մինչեւ մէջք քանդակուած կիներու կիսանդրիներով... առանց ծիծերու եւ ստիճներու... կը յառաջանաս եւ կօշիկիդ տակ քարի բեկորները կը յամտին մնալ: Կը ծոխ եւ տակաւին շատարտած նոր զանգուածի մը վրայ կը նկատես դուրս ու մուրճը»¹⁰:

Այսպէս, այս քանդակագործը (Աւօ-Աւետիսը)՝ ինքն իրեն համար, առանձինն, իր կերպարները կը ստեղծէ ամենայն լուսութեամբ, խոկալով, զուտ՝ քարին պէս, պրած դէմքով, Աւօն՝ որմէ դժբախտութեան պատերազմը իր խնձորը գողցաւ... եւ օսմանցիներուն պատերազմը՝ իր մեծ Քայրը եւ իր ցեղի կիներուն ստիճները»¹¹:

Տակաւ առ տակաւ, արնամթաթախ երեւումը, իր գաղտնի եւ պղտոր լեզուով՝ կը յայտարարէ պատմութիւնը ժողովուրդի մը, որ մահուան ու բնաջնջումին դիմադրեց նիհար մարմիններով եւ արնածոր, ճշմարիտ վէրքերով: Մեր այս հպանցիկ յօդուածին մէջ յիշատակուած արձակ գործերը, որոնք մեր արարական գրականութեան մէջ հայու տիպարին ձեւ ու կերպարանք ստին, հաւանաբար իրարու հետ կ'առընչուին արեան եւ անկէ բխած հոգեվիճակներու հասարակ յայտարարով: Մենք պարզապէս անդրադարձանք «հայկական գործեր»ու մէկ փոքր մասին եւ զանց ըրինք բազմաթիւ ուրիշներ, որովհետեւ անհրաժեշտ չէ, որ այս համառօտ գրութիւնը խօսի այդ բոլորին մասին:



 ԱՄԱՆ ՖԱԽՐԻ
 Բագա, 1996
 1997

10.-Տես Իլիաս Ֆարքուհի, «Աւօ...» պատմուածքը, «21 հարուած Մարգարէին» ժողովածու, 1982, Պէյրութ, «Արարական ուսումնասիրութեան հաստատութիւն», էջ 54-55:
 11.-Նոյն, էջ 55:



Խորհրդանկար՝ ՎԱՐԴԵՍ ՊԱՐՄՈՒՄԵԱՆԻ
digitised by A.R.A.R.@

Ի. ԱԼ-ԽԱԼԻԼ

ԳՈՂԱՐ ԿԱՄ
ՃԱՆԱԳՊԱՐԿ ԴԷՊԻ ՈՒՐՅԱ

Արուիլ չգիտցող զարթուցիչի մը ճշդապահությամբ եւ *Մուկզզէ-նից** հնչեղ ձայնին հետ, որ սահմանային ԹԵՂ Ապիատ գիւղի երկնակամարին վրայ կէտաւոր տարմահաւերու երամներ կը բարձրացնէ եւ կը տարածուի՝ խառնուելով թմբիի, երիցուկի, վայրի ծոթ-րիցի ու թարմ խոտի բոյրերուն, ամօթխածութեամբ ու սիրով թակելով պատուհանները, տախտակէ դուռներն ու ականջները եւ թափանցելով հողէ եւ աղիւսէ տուներէն ու ցանկապատերէն ներս, ուր կը գտնուին տաքուկ ու զգոյշ քունի մէջ ընկղմած ճնճողուկներուն ու ծիծեռնակներուն բոյները՝ ահա, ճիշդ այդ պահուն կ'արթննայ Նասերի դուստր Հասուլէն:

Թարթիչները կը թարթէ պահ մը ու հագիւ ընտելացած տարածուած թափանցիկ մութին՝ կ'ընկալէ գաղտնի վայրին շունչը, ապա՝ անցեալ դարձած իր կէս դարու սովորութեան համաձայն՝ կը կանգնի սլացիկ իր նիհար, երկար, բարեձեւ մարմինով ու քառանկիւն դէմքով, որուն վրայ գնչու կիներ ամենայն վարպետութեամբ բազմաթիւ կապոյտ դաջուածք-ներ գծած էին: Այս դաջուածքներուն մէկ մասը զարդի համար էր, իսկ մնացեալները՝ անձանօթ ու խորհրդաւոր նպատակներու համար, զորս միայն գնչուիները կը հասկնան եւ որոնց գաղտնիքը իրարու կը փսփսան իրողութենէն աւելի նախապաշարումներ թելադրող կցկտոր բառերով: Անոր կոր քիթը իրեն տուած էր յաւելեալ վեհանձնութիւն ու հպարտութիւն մը, զորս իր դաժան օրերը չէին կրցած ջախջախել, այլ, ընդհակառակն, աւելի եւս վսեմացուցած էին զինք:

—Ո՛վ Տէր... դո՛ւն եւ խաղաղութիւնը...

Կ'ըսէ շշուշալով, միատիկ բարեպաշտութեամբ մը եւ ճշմարիտ հաւատքով: Փորձառուի մը հմտութեամբ կը կտրէ անկողինէն դէպի սենեակին դուռը երկարող միջանցքը, խոր շունչ մը կը քաշէ հողին բոյրը եւ վայրին հսկող անձանօթ էակներու ծածուկ ձայները իր մէջ պարփակած գիշերային պաղ ու խոնա զեփիտէն, որ կը խառնուի արեան շրջագալութեան, որպէսզի պարգեւէ անոր շրջապատին նկատմամբ անկրկնելի մտերմութեան եւ հազուագիտ եզակիութեան այս զգացումը:

—Հասուլէ՛...

* Մուկզզէն. իսլամ հաւատացեալները մզկիթի միմարէին կատարէն աղօթքի հրապարակ կրօնաւոր:

ԻՊՐԱՆԻՄ ԱՆՆԱԽԻ

Ծնած է 1944ին, Սուրիոյ Բագգա քաղաքը: Նախնական եւ երկրորդական ուսումը ծընդդրւած է մէջ ստանալէ ետք, 1971ին յաջողութեամբ կ'աւարտէ Դամասկոսի Պետական Համալսարանի արաբական լեզուի եւ գրականութեան բաժանմունքը:



Իպրահիմ ալ-Խալիլ երիտասարդ տարիքին կը մտնէ գրական աշխարհ եւ իրարու ետեւ կը հրատարակէ «Որո՞նք Մա'տուն էլ-Յայէպի» (պատմութիւններ), «Պետեիհներու թաղը», «Քորեհները», «Ալ-Հուտ» (վէպ), «Շքախումբ՝ համակրանքի եւ կասկածանքի փըշրանքներէ» (քանաստեղծութիւններ) եւ «Գորշ գայլը» (ուսումնասիրութիւն):

Ի. ալ-Խալիլի «Քորեհները» վէպը վերածուած է շարժապատկերի ժապատնի՝ «Անճրեւի գիծին սիրահարները» խորագրով: Հեղինակին «Ալ-Հուտ» վէպն է, որ հանգամանօրէն կ'անդրադառնայ Մեծ Եղեռնին եւ տարագրեալ հայ ժողովուրդի ճակատագրին, իսկ «Գորշ գայլը» ուսումնասիրութիւնը կը ներկայացնէ ցեղասպան թուրքին գորշ պատկերը՝ համաշխարհային գրականութեան մէջ:

Ներկայիս կ'ապրի Բագգա եւ կը գրաւի ուսուցչութեամբ:

Իրեն այնպէս թուեցաւ, որ կը լսէ զինք կանչող անոր ջերմ, ինքնավստահ, խոր ձայնը: Այս գաղափարը անմիջապէս վանեց մտքէն՝ «Ծանուն ամենագոր եւ ամենագթած Աստուծոյ» ըսելով եւ սատանան անիծելով, սակայն անոր պատկերն ու ձայնը կը յամառէին յամենալ մտքին մէջ ու բառը կը գորանար.

—Հատի՛ւ...

Աղօթքի համար մզկիթ երթալու ժամն էր՝ իր սպիտակ հագուստով, ջինջ ծպիտով, նարնջագոյն քաւրամանէ համրիչը բռնած մատներով եւ ապաշով, գոր վայելչօրէն ուսին կը նետէր եւ հագար ու մէկ գիշերներու իշխաններէն մէկը կը թուէր:

Անոր ոգին էր, անկասկած, որ հիմա վայրին վրայ կը հսկէ ու կը դժկամէր բաժնուիլ այդտեղէն: Հապա՛ւ անոր բուրմունքաւտ շունչը, խրճողութիւն ձայնը, սիրած սուրճին բոյրը...: Կարելի՞ էր: Ծուտով մտքէն վանեց զինք տագնապեցնող այս մտածումը եւ յանձնուեցաւ պահին կախարդանքին:

Բակին մէջ, Նսաէրի դուտը Հատիւն դանդաղաքայլ կ'առաջանար: Տունը գիւղին վրայ կը հսկէր այն բլրան բարձունքէն, ուր կը գտնուէին հիւղակները, ցիրուցան եղած՝ Թուրքիան Այն Արուսէն իբրեւ սահմանագիծ բաժնող երկաթուղիին պատճառով, մինչ դատարկութեան մէջ կը խոյանային աղօտ լուսապակներով զարդարուած ելեկտրաձողերը: Անոնք նման էին առասպելական էակներու եւ խիճիի, նոճիի ու թթենիի գազաթներուն, որոնք կը հսկէն մզկիթի կտրածէ *մինարէին* եւ ջուրի ամբարտակին վրայ:

Աչքերը կը պտտցնէ, կը զննէ հետաւոր աստղերը, լուսինը, փայլուն երկինքին գոյնը, յետոյ կը շարունակէ յայտնաբերել տունը, սենեակները, ախտը, փայտերու կոյտերը, թոնիրը, տան ցանկապատը եւ խորհրդաւոր ոգիները:

—Մայրի՛կ:

Ջայնը, իր տղուն՝ Պատըրին ձայնը անակնկալի կը մատնէ զինք. սարաւիսահար ետ կը դառնայ եւ կշտամբանքով ու խանդաղատանքով կ'ըսէ.

—Պատը՛ր:

—Ի՞նչ ունիս, մայրի՛կ:

—Ե՛ս... ոչինչ, հոգի՛ս, ոչի՞նչ:

Կ'ըսէ՝ իր քաջութիւնը վերստին ձեռք ձգելէ եւ վախը փարատելէ ետք. Պատըր կը ժպտի, յետոյ աղօթելու համար կը շարունակէ դէպի մզկիթ իջնող ճամբան՝ իր երկար հասակով, սպիտակ զգեստով եւ վայելչօրէն ուսը նետուած ապալով: Մայրը կը շնջայ.

—Աստուած պահէ քեզ:

Ապա կը դառնայ եւ կը սկսի փնտռել աղօթքի ջրածիկը: Կեանքը կրկին ետաց երակներուն մէջ եւ անորոշ լոյսի նոր լոյս մը ծագեցաւ հոգւոյն խորը: Ժամանակի, մարդոց ու շրջապատի հանդէպ իր զգայնութիւնը կորսնցուց եւ աղօթքէն ետք նոյն տեղը մնաց անշարժ՝ ինչ որ կախարհաբէր տարուած: Այո, կարծես կախարհուած ըլլար եւ այս զգացումը, մերթ ընդ մերթ կը կրկնուէր, կը պատէր զինք ու ան կուրաքար կը յանձնուէր անոր: Կարծես հիփնոսացուցած ըլլային զինք: Եւ մտքին մէջ կը լուսարձակուէր.

«Տուն մը կար այնտեղ, բլրակի մը վրայ, հետաւոր քաղաքի մը մէջ:

Ընդարձակ տուն մը՝ անձրեւի կաթիլներով, արեւու շողերով, թուրինջի եւ քաղաքատի* բոլորով լուացուած կարմրագոյն կղմինտրէ շեղակի տանիքներով: Ընդարձակ ու դալարագեղ բակ մը ունէր եւ պատերն ի վեր կը մագլցէին յասմիկի, մեղրածաղիկի ու մշկավարդի արիշները: Ան ունէր երկար անցք մը, երկու մուտքեր եւ պատուհաններ, որոնցմէ ներս կը մտնէին թռչուններուն ճոռուղիներն ու լոյսերը:

Հոն կար նաեւ երջանիկ ընտանիք մը:

Կին մը, տղամարդ մը, երկու մանուկներ՝ մանչ մը եւ աղջնակ մը, որ կը քնանար թանկագին տախտակէ շինուած արքայավայել շքեղութեամբ օրօրոցի մը մէջ եւ, քունը կոպերուն թարթիչները շոյելէ առաջ, կ'ունկնդրէր գրաւիչ տաղ մը.

*Թուրի ծառին կապեմ օրան,
Թուրը ընկնի եււրուս բերան,
Պիւլպիւլ կանչէ ձէնիդ հէյրան:*

* Քաղաքատ. Նարինի ընտանիքին պատկանող հաստ կեղեւով պտուղ, որմէ անուշ կը պատրաստեն:

Կար ու չկար...

Ուրախ երգեր ու հարսանիքներ կային, մոմեր, եկեղեցույ դողանքներ ու դարաց դաս մը կար, որ կ'երգէր տարբեր լեզուով շարականներ, որոնցմէ կը բարձրանային խունկի եւ մարդոց տարածասփիւռ բոյրեր: Անոնց ալիքներուն ընդմէջէն կը յայտնուէին եկեղեցական հայրերու եւ վանականներու լուսափայլ դէմքեր, խաչքարեր, ոսկի ու արծաթ թելերով անդնագործուած թագաւորական տարագներ, ձէթ, մոմեր եւ նախատակ սուրբերու սրբապատկերեալ դէմքեր, որոնցմէ հաւատք, դպկութիւն եւ տառապանք կը յորդէին...

Ուրիշ լեզուով ձայն մը կը կանչէր բակին մէջ, վայելչագեղ մարդ մը կ'անցներ միջանցքէն, անոր մատներէն վեր կը խոյանային ոսկիին զրնգոցը, արտասովոր կարողութիւնը եւ բացառիկ փորձառութիւնը՝ մետաղը վերածելու այնպիսի՝ ձեւերու, որոնք կիները կը կախարդէին եւ նորահարսերը խելքէ կը հանէին...: Ոսկերի՛չն էր ան...

Կար... ու... չը...կաաա...»:

Եւ կը կորսուին պատկերներն ու մանրամասնութիւնները, կը քայքայուին ձեւերը եւ կը հային ջուրին մէջ լուծուող շաքարի կտորներու պէս, իրենց ետին ձգելով քաղցրութիւն ու փստսանք: Եւ դուրսէն կու գայ Պատըրի ձայնը.

—Ըմ Պատըր... սուրճը պաղեցաւ:

Ըմ Պատըր տեղէն կ'ելլէ ծանրաբեռն ու վեհաշուք լրջութեամբ, կարծես թէ ձայնը վերակենդանացուցած ըլլար իր երակները եւ Ռուսոյն դալուկ տերեւներուն՝ վերադարձուցած կանաչ թարմութիւնն ու արեւը:

—Ահա կու գամ:

Ուրախ ժպիտին եւ յարատեւ գրոյցներ ձեւառող աչքերուն դիմաց՝ լոյսը կրկին ծագեցաւ իր դէմքին, եւ երբ նորաբաց արշալոյսի շողերուն հետ նստեցաւ որթատունկին տակ, հիլի բոյրով օծուն սուրճի գաւաթը բարձրացնելով՝ ըսաւ.

—Պատըր:

Ումպ մը առաւ սեւ հեղուկէն, յետոյ շարունակեց՝ առանց որ անոր խօսելու կամ պատասխանելու առիթ տայ.

—Պէտք է ուրախանամ քեզմով:

—Ուրախացի՛ր, Ըմ Պատըր... ուրախացի՛ր...

Ըսաւ Պատըր կատակելով ու ժպտալով:

Ան շարունակեց.

—Քոյրերդ ամուսնացան եւ ես...

—Դուն օրհնութիւնն ես ու բարիքը:

Քիչ մը ըմպեց սուրճէն ու շարունակեց.

—Մէկդի ձգէ՛ աղուէսի այս խորամանկութիւնը եւ ըսէ ինձի՝ գիւղի աղջիկներէն ոեւէ մէկուն համդէպ սրտիդ մէջ սէր չկա՞յ:

—Կայ,— ըսաւ Պատըր սկիտի մը խանդավառութեամբ:

Ան անեցուց.

—Գեղեցի՞կ է:

- Լուսնի՛ կտոր:
- Արդեօք կը ճանչնա՞մ:
- Այո՛:
- Ո՛վ է, ըսէ՛, որ հանգատանամ:
- Դո՛ւն ես, ամենագեղեցիկ Ըմ Պատըր:
- Քեզի ըսի՛ թո՛ղ աղուէսի խորամանկութիւնդ եւ պատասխանէ ինձի:
- Պատասխանեցի:
- Հանգատացոր պատաւ մօրդ սիրտը, Պատըր:
- Այսօր քեզի ի՞նչ պատահած է, Ըմ Պատըր:
- Առանց երեխայի տունը անմարդաբնակ դրախտ է, Պատըր, գորշ է ու տխուր:
- Ողջ ըլլան աղջիկներուն՝ Մարիամի, Սառայի, Ամմունէի ու Մալիքէի զաւակները...
- Անոնք ուրիշներո՛ւ զաւակներն են, Պատըր:
- Նաեւ մե՛ր զաւակները:
- Դուն փախուտս կու տաս, Պատըր:
- Ո՛չ, ես փախուտս չեմ տար եւ երբ ժամանակը գայ՝ կ'ենթարկըւիմ հրամանհոյ:
- Իսկ ե՛րբ պիտի գայ ժամանակը:
- Այս հարցը քո՛ւ ձեռքդ է:
- Ի՞մ ձեռքս:
- Այո՛, Ըմ Պատըր:
- Ինչպէ՛ս:
- Հարցը շատ պարզ է: Դուն կ'որոշես ուխտի երթալ, իսկ ես՝ ամուսնանալ: Մէկով մէկ, Ըմ Պատըր:
- Ուխտի՞...

Խօսքը կրկնեց այնպիսի շեշտով մը, որ կարծես կ'ուզէր յիշել իր յիշողութենէն ջնջուած բան մը: Յետոյ՝ ժպտեցաւ:

*
* *

Նասերի դուստր Հատլէն բլրակին գագաթէն վար թաւալեցաւ: Խիճեր ու հողեր կը ցատկոտէին ոտքերուն տակ եւ երկրնք, թռչուններ, շուներ ու մարդիկ զինք կը շրջապատէին: Կարգ մը տնակներուն քովէն անցաւ թեթեւ փոթորիկ մը՝ միսէ, ջիղէ, արիւնէ եւ հանդարտութիւն չճանչցող հոգիներէ բաղկացած մրրիկ մը: Կանգ չառաւ: Բարեւեց թոնիրներու կախարդական բոցին դիմաց կանգնած կամ սաճերուն վրայ կընացած կիներուն ու երիտասարդութիւններուն, որոնք լաւաջ հաց կ'նսփէին: Ծուխը պատած էր զանոնք: Քրտինքը առատօրէն հոսեցաւ անոնց մարմինի ծակտիկներէն ու երակներէն եւ տժգունած դէմքերը շրադդումի եւ կուտատուկի վարդերու պէս շառագունեցան:

Հատլէն արթուն էր եւ զգոյշ՝ Այն Արուսի ձուկին պէս: Մարմինին իրաքանչիւր անդամը վերապահ էր: Կը տեսնէր, կը զգար, կը զննէր եւ

Ռեռուէն կը նախագար: Վիճակ մըն էր, զոր ան նախապէս երբեք չէր ապրած եւ, թիմա, չէր կրնար հասկնալ անոր դրդապատճառները. իր խօսած լեզուէն տարբեր լեզու մըն էր, անհասկնալի ու խորհրդաւոր, եւ անուններ էին, որոնք կը սառէին թիթեռնիկներու թետրուն պէս՝ գունաւոր, զուարթ ու խաբուսիկ: Ծարունակեց իր ուղին հառաչելով ու կորաքամակ՝ անտանցի բեռներու ծանրութեան տակ: Այս սիրտը մինչեւ ե՞րբ պիտի դիմանայ, Հատլէ՛, եւ այս աչքերը մինչեւ ե՞րբ պիտի տեսնեն լոյսը եւ զայն պահեն իրենց մէջ: Լեզուդ ե՞րբ պիտի հասկնայ այս խորհրդաւոր բառերը եւ սիրտդ մինչեւ ե՞րբ պիտի ուրանայ զանոնք:

Հատլէն շարունակեց իր ուղին: Դէպի աղբիւր մեկնող իր քայլերուն կ'ուղեկցէին լորերու, յոպոպներու եւ ճնճողուկներու երամներ: Ծոռուղիներն ու շունչերը անհունը կը լեցնէին եւ անցեալի ճեշտանքներուն արբեցողութիւնը կ'արթնցնէին:

—Ըմ Պատըր:

Անապասելի այս ձայնը անակնկալի մատնեց զինք:

—Հա՛:

Ետ դարձաւ սարսափած եւ կողքին նկատեց ծերունի Համտանը, որ կեանքի բեռներուն եւ օրերուն պատճառած դառնութիւններուն տակ կըքած ծեր ձիու մը պէս ջղային քայլերով կ'ընթանար:

—Բարե՛ւ, Ըմ Պատըր:

—Բարե՛ւ, Համտան ամմօ:

—Խէյր է, Ըմ Պատըր, խէյր է:

—Ոչի՛նչ, խէյր է:

—Քեզ մտացիր կը տեսնամ:

—Աշխա՛րհը:

—Աշխարհը շան աղջիկ է:

Ըսաւ եւ դէպի տուն մը ուղղուեցաւ: Հատլէն շարունակեց քայլել: Սեւեռաբիբ հպեացքը կախուած էր կանաչ բերդէ մը, որ կը շողար ոսկեծաղիկներով ու երիցուկներով եւ ուր կը բարձրանային մեռելներու տապանաքարերն ու շիրիմները՝ քարէ պարտէզի մը պէս: Անցաւ տապանաքարերուն միջեւ սահող նեղ ու օձապտոյտ արահետներէն, մինչեւ որ հասաւ իր նպատակին: Տապանաքարին դիմաց կեցաւ երկիւղածութեամբ, յարգանքով, աղօթեց, յետոյ ծնրադրեց եւ շարունակեց աղօթել խորհրդաւոր աղօթք մը, որ ծէսեր չունէր...

Չիմացաւ, թէ որքան ժամանակ անցաւ: Երբ ուշքի եկաւ, ափերովը դէմքը սրբեց եւ ուղղուեցաւ դէպի Հայր Աբրահամի ուխտատեղին: Վերակացուն զինք դիմաւորեց ջերմութեամբ, մա՛նասանդ երբ անոր կոշկոտ կապած ափին մէջ քիչ մը դրամ գետնդեց: Զիրար հակասող ապրումներ եւ օտարական ոգիներ կը շրջէին իր: Խաղաղութիւն, սէր եւ ապահովութիւն կը տիրէին չորսդին ու կը հոսէին առատօրէն՝ ջուրէ, ձուկերէ եւ անուշ բուրմունքներէ բաղկացած ջրվէժի մը պէս:

Մատները երկարեց բարեպաշտութեամբ ու երկիւղածութեամբ եւ խանդաղատանքով ու սրբութեամբ շօշափեց ուխտատեղիին քարերը: Ա-

պա մօտեցաւ ուխտատեղիին յառաջամասը թագադրող կանաչ կերպասին, յետոյ՝ սրբացեալ միտոնի թասին, որմէ հիւանդները օրհնութիւն կը ստանան: Մկրտութիւնն է, քարին, կանաչութեան, օրհնեալ ձէթին, միտոնին եւ թոնիի հացի նման այրած սրտերու բոցին մկրտութիւնը:

—Ո՛վ Տէր, ո՛վ միակ, դո՛ւն եւ միակը:

Աղօթեց, յետոյ ետ դարձաւ ու մուտքէն անցնելով դուրս եկաւ ուխտատեղիէն, մինչ սրտէն յորդառատ արցունքներ կը հոսէին:

*
* *

Հայր Աբրահամի ուխտատեղիին եւ լքուած ջրաղացին միջեւ... քանի մը քայլ կար միայն, զորս Նասերի դուստր Հատլէն կտրեց քանի մը վայրկեանէն եւ զինք դիմաորեցին ալիւրի, նեխածութեան ու անաւոր դատարկութեան հոտն ու խոնաւ մթութիւնը, որոնցմէ ներս աչքը ամենայն հեշտութեամբ կը թափանցէ: Ոչինչ կար հոն՝ բացի մամոտած կանաչագոյն ժայռերէն, հողէն, թռչուններու բոյներէն եւ իրիկնամուտին երկինքը լեցնող չղջիկներու թաքստոցներէն:

Այս լքուած վայրին միակ ու մշտագոյ բնակիչը Մենակեաց Արուշն էր, կէս-սուրբ եւ կէս-խենթ այն խորհրդաւոր հալ ծերուկը, որուն մասին ո՛չ ոք ոչինչ գիտէր, եկաւ զաղթականներուն հետ, յետոյ՝ իրեն պէս տկարակազմերուն նման ճամբան ետ մնալով՝ ապրեցաւ ջրաղացին մէջ: Ան բուրդէն պարսաւտիկներ կը հիւսէր ո՛չ թէ թռչունները որսալու, այլ՝ գանձը որսորդներէն զգուշացնելու համար: Մինչեւ որ մարդիկ զինք համարեցին թռչուններուն խենթ պահակը, եւ թշնամին՝ որսորդական հրացաններուն: Ան շարունակ կը փորձէր գողնալ հրացանները եւ ջարդուփշուր ընել ժայռերուն վրայ, պոռալով բարձրադաղակ:

—Արի՛ն... արի՛ն... ա՛յ կը բաւէ, ոճրագործներ՛:

Հատլէն նկատեց անկիւն մը կծկուած Մենակեաց Արուշը, որ ափերով ծունկերը զրկած՝ առաստաղը կը դիտէր աքլորի մը աչքերուն պայծառութեամբ: Յարգեց անոր լուծիւնը եւ ո՛չ բարեւեց, ոչ ալ խօսեցաւ: Մինչեւ Արուշի իր կողմը դառնալը վայրկեաններ անցան: Քրտինքը առատօրէն կը հոսէր անոր ճակատէն: Չորցած շրթուները կարմրեցան, երբ խեղդուկ ձայնը դժուարութեամբ ֆշշաց.

—Բարե՛ւ...

Անակնկալը անդամալուծեց զինք: Առաջին անգամն էր, որ Արուշը ի՛նք կը սկսէր խօսիլ՝ ողջունելով դիմացի մարդուն ներկայութիւնը: Յետոյ՝ տարուածի պէս շարունակեց.

—Ուրֆա՛... Ու...ր...ֆա՛:

Ակնթարթի մը համար լռեց... նախքան որ աւելցնէ.

—Իսկամ շէյխին սրտին մէջ խաչ ու Աւետարան կրճան ըլլալ... վանականին սքեմին տակ՝ Գուրան ու մահիկ...

Սակայն օսմանցի սակեարին սրտին մէջ դաշոյնէն ու եաթաղանէն
զատ ոչի՛նչ կայ:

Ու...ու...ր...ֆա՛ւ՛ա՛... Բո՛ւ... Բո՛ւն գնա... Հատլէ՛...:

Փակեց շորցած շրթունքները... ու ետ դա՛րձաւ: Հատլէն մնաց
կանգնած:

*
* *

Կար ու չկար...

Համեմ ու գիճի կար, երգի ձայներ կային... տուն մը եւ ընտանիք
մը կար, յետոյ մոմեր կային՝ տօճի, մկրտութեան եւ ուխտերու, սակեար-
ներ կային, արհուն ու ասպատակներ կային եւ բռնագաղթ կար:

Փռքիկ աղջիկ մը կար՝ ամայութեան մէջ կորսուած ու մոռցուած
անցորդներէն: Ո՛չ ոք կը հարցնէր անոր մասին, մինչեւ որ, օր մը, զայն
նկատեց մարդ մը, որ ալիւրի պարկով ծանրաբեռնուած էլը առջեւը ձը-
գած՝ մօտակայ գիւղէն տուն կը վերադառնար: Մարդը գրկեց փոքրիկը,
դրաւ ալիւրի տաք տոպրակին վրայ ու տարաւ տուն: Զայն խառնեց իր
զաւակներուն եւ բաղարջ հացը անոնք բաժնեցին իրարու հետ՝ թէ՛ անօ-
թութեան եւ թէ՛ ուրախութեան խնդրի տարիներուն ու ժամերուն: Մեծ-
ցաւ... սիրահարուեցաւ, ամուսնացաւ, բայց խորհրդաւոր ձայներ ու ոգի-
ներ յաճախ այցելեցին իրեն, եւ օր մը, երբ ֆրանսացիները եկան ու ան-
տէր մնացած հայ երեխաները սկսան հաւաքել, ինք պահուղտեցաւ ալիւրի
պարկին ետին, մինչեւ անոնց մեկնումը: Ան մարդը «հայրս» կը կոչէր,
կինը՝ «մայրս», իսկ երեխաներն ալ՝ «եղբայրներս»...

Իրիկուան՝ Նասէրի դուստր Հատլէն նստեցաւ...

Կը զննէր մայրամուտի շողերուն վերջին թափօրը: Առանձին էր:
Պատըր դուրս ելած էր կարգ մը գործերու համար: Աղօթեց, յետոյ երկըն-
ցաւ գետնին վրայ: Ականջին մէջ դեռ կը զնգային Մեծնակեաց Արուշի
բառերը.— Ուրֆա՛...

Եւ ինքզինք տեսաւ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ քնացած էակ մը կը
տեսնէ ինքզինք:

«Կը կտրէր-կ'անցնէր թրքական սահմանը եւ կը թափանցէր ներս,
կողքին՝ Պատըրը, որ պայուսակ մը շալկած՝ կը ժպտէր եւ ուրախ-ուրախ
կը գրուցէր ոտքի կանգնածներու հետ: Անոնք կը հարցնէին.

— Դէպի ո՞ր, Պատըր... ո՞ր կ'երթաք, Ըմ Պատըր...

Չէր հաւատար, թէ երբ պիտի աւարտին ընթացիկ ձեւակերպութիւն-
ները, որպէսզի ինքնաշարժը նստէր ու հետանար՝ ձեռքի շարժումներով
հրաժեշտ տալով բոլորին: Մանապարհը շա՛տ կ'երկարէր ու ճամբորդնե-
րուն շունչերը, զազրախօսութիւններն ու սիկարէթներուն ծուխը ինքնա-
շարժը կը լեցնէին: Ինք վարժուած չէր այս մթնոլորտին, սակայն, հսկա-
ռակ անոր, Նասէրի դուստր Հատլէն կը զգար, որ սիրտը կը թայրտայ
վայրի հառու մը պէս:

Խորհրդաւոր ձայները կրկին կը վերադառնային եւ ձայներուն հետ՝ եկեղեցիներու զանգերուն դողանջները, շարականներու մեղեդիները, մոմերուն լոյսերը, կը միտրածածկ ու շեղ տանիքով տունը եւ այն մարդը՝ որուն մատները կը զնգզնգային եւ ոսկիի պէս կը փայտիւնէին...

—Ուրֆա՛...—

Ձայնը կ'արձագանգէր. համեմ ու գինի, սխտորի խոտ ու ապուխտ, հորթուկի սիւս ու երգ մը՝ որուն խորհրդաւոր բառերը կ'ըսէին.

*Հիերա բանձր տեներա,
Կը փռէ ատլաս տեղերա,
Հէչ շըսեր Աստուած կայ վերա,
Աման էս աղէկ աղջինա,
Խլերեմ ծոցին մըջինա:*

—Ուրֆա՛...—

Սրբապատկեր ու թըլըսըմ, կարմիր պղպեղ ու չի քիւֆթէ, նոնա-ծաղիկ ու խաղողի ողկոյզներ, արիւն ու դաշոյններ, ասկեարներ ու եաթաղաններ, գազաններ ու թռչուններ, գայլեր ու գառնուկներ:

—Ուրֆա՛ա՛ա՛...—

Խորհրդաւոր, խորախորհուրդ լեզու մը: Ինքնաշարժը կանգ կ'առնէ: Կ'իջնէ Պատըրիկ հետ: Երկա՛ր բացակայութենէ մը ետք կարծէք կրկին իր տունը կը վերադառնար: Մտերմութեամբ ու երկիւղածութեամբ կը քայլէ փողոցներէն, ձեռքերն ու երեսը կը լուսայ Հայր Արքայապետի լճակին մէջ, յետոյ ետ կը դառնայ՝ փնտրելու անհետ կորած բաներ: Կը շարունակէ քայլերը: Պատըրիկ հետ կը բարձրանայ բլուր մը եւ կանգ կ'առնէ շեղակի տանիքներով, երկար անցքով ու ընդարձակ բակով տան մը առջեւ: Կը թակէ դուռը... որ կը բացուի ծանօթ դէմքի մը վրայ՝ իր վանականի տարագով ու խաչը ձեռքին...: Հատիւն կ'ուզէ աղաղակել՝ «Արո՛ւշ», բայց մարդը նշանով կը զգուշացնէ զինք եւ կը պահանջէ պահել լուսիւնը: Ապա ետ կը դառնայ: Կը հետեւի անոր եւ երբ միջանցքէն կ'անցնին՝ իրեն դիմաց դուռ մը կը բանայ ու կը խնդրէ Պատըրէն դուրսը մնայ: Հատիւն կը մտնէ ներս. սենեակը կը խեղդուի մոմերու մթութեան մէջ, յետոյ կը նշմարէ մարդ մը, որ երբ զինք կը տեսնէ՝ կը բարձրացնէ մատները, անոնցմէ կը զրնգան ոսկիին ձայները, ապա մեղմ ձայնով կը շշուշուի:

—Գոհա՛ր... Գոհա՛ր... փոքրի՛կս, ուշացար, շա՛տ ուշացար:

Ուշքը կը կորսնցնէ յոգնած մանուկի մը պէս... եւ խորախորհուրդ լեզուն այլեւս խորհրդաւոր լեզու մը ըլլալէ կը դադրի Գոհար Պատրոսեանի ականջին...

ԻՊՐԱՀԻՄ ԱԼ-ԽԱԼԻԿ
(Հալաբուց՝ Միհրան Մինասեան)

ՄԱՀՄՈՒՏ ԱՒ ՍԱՅԻՏ



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Դահիճին եաթաղանին նեղ բաց-
 ւածքէն կը լայտնուի գլուխը Դա-
 նիէլ Վարուժանի: Ան կ'ունկնորէ
 զնզնզոցը Սերաստիոյ կովերու
 բոժոժներուն, որոնք պաղեստինեան
 կանաչութենէ հիւսուած մանեակի
 մը պէս կը հանգչին բնութեան
 գորգին վրայ, եւ ցորեանի ոսկի
 հատիկներուն փայլքով լիացած
 «*խայրուռ*» բանաստեղծութիւնը կը
 տրոփէ «*Հացին երգը*»ի էջերուն,
 որպէսզի Քրիստոս պարէ Անատո-
 լիոյ Չանդըրիի անապատին մէջ՝
 իր խորհրդաւոր սուրբ հացը բաժնե-
 լով շարք մը այրուող թռչուններու
 եւ Արաքսին, Աքանչելի Տիկինը,
 արծաթեայ դրամներով կը սակարկէ
 դահիճին հետ, որպէսզի ազատ
 արձակէ Հայաստանի բանտարկը-
 ւած ձեռագիրը, մինչ նոյն ժամուն
 հայ-պաղեստինցի աշխատաւոր
 զանգուածները կը բարձրացնեն
 բողոքի դրօշը՝ ընդդէմ ծովահեն-
 ներու քաղաքակրթութեան:

ՄԻԱՄԱՆԹՕ

Երբ մթնշաղը կը քնանայ արևուն գիրկը եւ վարուժեան ժպիտը՝ սիրահարութեան շրթունքին, ճամբայ կ'ելլէ բանաստեղծական քառուստեղծական շքերթը, որ դիցազներգութիւնները (բառ եւ կեցուածք) տող առ տող դրոշմեց Հարցին ձայնակաւառակին վրայ. արիւնոտ քերթուածները՝ «Կարմիր լուրեր բարեկամէս», կը հանգչին «բոցավառ տաղանդ»ին կողքին, քարանձաւային քունէ մը ետք կը ճենճերին այրուցք մը եւ հիւանդութիւն մը, որուն վիրատրիշ ճշմարտութիւնը բացայայտելէ կ'անշուշտ անոնիսկ յունական թալիսմանները, որպէսզի գթասիրտ անձրեւները պարեն անոր պղնձեայ պատուհանին վրայ. կ'արթնցնէ զգացումը հայրենիքին եւ երաժշտութիւնը մանուկներուն, որոնք կը հեւան իրենց շփոթահար յուզումէն, մինչ պարմանները անոր հրեղէն տառերը կը նախշեն ջրախնայ մատներուն, որ կը պոռայ. «Յօտեցին ճիւղերը, որոնք խեղդեցին խոշափողը մանկութեան» եւ վառեցին կանթեղները, որոնք կը շարունակեն լուսաւորել հորիզոնը հայրենիքին, եւ յայնժամ կարծր քարը կը փափկանայ սիրոյ յուզումէն ու առուակը կը յորդի:



(1994, «Հայաստանի Գայսէն Պաղեստինի Լէյլային» գրքովէն)

ՄԱՀՄՈՒՏ ԱԼԻ ՍԱԵՏՏ



Խորհրդանշար՝ ՎԱՐԴԵՍ ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ
digitised by A.R.A.R.@

Ն. ՍԻՐԷՍ

ՀԻՒՄԻՍԻ ՀՈՎԵՐԸ - 1917

—Աւելի լաւ է, որ հետանաք մայր ճամբէն: Եկէ՛ք, մեր կողմը
անցէք, բլրակին ետին. հոս մենք ձեզ կը պաշտպանենք:

Օմարն ու Ֆերիտէն կառքին մէջ քնացած մնացին, մինչ Սելիմ
արթուն մնաց եւ, ըստ իր սովորութեան, սկսաւ շաղակրատել հրոսակ-
ներուն հետ: Անոնց պատմեց իր պատմութիւնը, սկիզբէն: Պատմեց,
բայց... ստեց: Ըստ, թէ պարանոյ կապուած էր, երբ իր կինն ու եր-
կու քոյրերը տարին, եւ թէ՛ իր կապանքները քակեցին Ուրֆա հասնելէ
ետը միայն: Յետոյ եռանդով անոնց պատմեց ա՛յն՝ ինչ որ կը զգուշա-
նար պատմել Օմարին, Տէր-Ջօրի խանին մէջ անոր կողմէ ծեծուելէ
ետը: Իր պատմութիւնը շարունակելու համար, իրեն համար արդարա-
ցում մը գտաւ, երբ ստեց ու անոնց այն միտքը ներշնչեց, թէ ինք
վախկոտ մը չէր, այլ պարզապէս վախցած էր, որ զինք կրկին կը
ծեծեն, ինչպէս որ նախապէս ըրած էր Օմար:

Անոնց ըստ, որ եօթը օր ճամբորդելէ ետք հասած էին քաղաք
մը, որ ունէր հսկայ պարիսպներ եւ չորս դուռներ, իսկ իրաքանչիւր
դուռ ունէր ոստիկանատուն մը՝ հսկողութեան եւ խուզարկումի համար:
Հսկայ բանտ մըն էր ան: Տիարպէքի քաղաքն էր:

Հոն, ոստիկանատուներէն մէկուն մէջ, տասնապետ մը ըստ ի-
րեն, թէ ինք Կարին արքայապետն է, եւ քանի որ Կարինը ռուսական
բանակին կողմէ գրաւուելու վտանգին ենթակայ է, հետեւաբար՝ զինք
Տիարպէքի պիտի պահէին: Բայց հարցը ա՛յս չէր: Հարցը իր ման-
կան հոգատարութեան հարցն էր: Ի՞նչ պիտի ընէր: Իր ամբողջ ըն-
տանիքէն միայն ան մնացած էր իրեն: Զինք եւ իր գաւակը Տիար-

ՄԻՆԱՏ ՍԻՐԷՍ



Մնած է 1950ին, Հայկազ
Գիտական պահպանարանի վկայականին տի-
բանալի ետէ, կը մեկնի Պուկարիա՝ հա-
մալսարանական բարձրագոյն կրթութիւն
ստանալու համար: 1976ին, իբրև վկայեալ
ճարտարապետ՝ կը վերադառնայ Հայկազ եւ
կը հիմնէ շինարարական իր գրասենեակը:
Գրել կը սկսի ութսունական թուականնե-
րուն, սուրիական եւ արաբական գրական
մամուլի էջերուն ստորագրելով պատմը-
ւածներ ու քննադատական յօդուածներ: Ա-
պա կ'անցնի մեծ արձակիւն եւ կը սկսի հրա-
տարակել վեպեր:

պէքորի բանաղ դրին: Մէկ-երկու օր ետք աղայեց բանտապետին,
որ զինք բանտէն հանէ, որովհետեւ ինք բանտարկեալ մը չէր, այլ՝
աքսորեալ մը. հետեւաբար՝ իրատունք ունէր խանի մը վարձուած մէկ
սենեակին մէջ ապրելու:

Երեխային պատճառով ընդառաջեցին խնդրանքին:

Սենեակ մը վարձեց: Քիչ մը դրամ ունէր: Աւելի ետք, երեխային
վիճակն ալ լաւացաւ ու դադրեցաւ պոռչտալէ եւ լալէ, որովհետեւ սկը-
սած էր կաթ խմել: Բայց իր ունեցած դրամը շատ շուտ սպառեցաւ:
Գործ փնտռեց: Տպարան մը գնաց — ինք ծանօթ էր նման գործերու,
բայց մերժեցին զինք աշխատեցնել, որովհետեւ կարծեցին, թէ հայ էր:
Երկա՛ր մտածեց — ի՞նչ ընել...: Փախչի՛լ, հասպա երեխա՛ն: Կրճա՛ր
փախչիլ զայն գրկած: Դժուար էր, իսկապէս դժուար հարց էր, եղ-
բայրներ:

Տիարպէքիրը՝ իր պարիսպներով, բերդին՝ կը նմանէր: Բայց ան
սե՛ւ բերդ մըն էր: Հոն ամէն ինչ սեւ էր եւ ոչ մէկ յոյս կը ներշնչէր:
Անոր պարիսպներն ու տուները շինուած էին սեւ քարերով, ճոյն այդ
քարերով սալարկուած էին նաեւ անոր փողոցները: Մահուան որջ մըն
էր ան: Սակայն նաեւ կը կոչէին «Արեան բերդ»: Ինչո՞ւ: Ինչպէ՞ս
թէ ինչու: Չէ՞ք լսած, թէ ինչ կը կատարուէր Տիարպէքիրի մէջ:


Քաղաքը կ'ետար անդադար բազմացող բազմութեան: Աքսոր-
ւածներուն եւ տարագրուածներուն կողքին՝ կային նաեւ մեծ թիով
գաղթականներ: Պարիսպով պատուած փոքրիկ քաղաք մըն էր, որ
հիմա մրջիւններու նման խճողուած էր մարդոցմով: Ուտելիքը ապա-
հովուած էր, բայց ապահովութիւնը՝ ոչ: Մարդու մը արժեզինը պար-

* Նկատի ունի Հայկազի Նշանաւոր պատմական բերդը:

1988ին լոյս կը տեսնէ Ն. Սիրեւի «Հիւսիսի հովիտը» (հաստր Ա., «Պղտակ շուկան») ամսուս վեպը, ապա՝ «Քաղցկեղը», «Գիւղացիական կատակերգութիւն», «Հիւսիսի հովիտը-1917» (հաստր Բ.) խորագիրը կրող վեպերը:

Ն. Սիրեւ նաեւ կը ծառայէ պատերազմի աշխարհին: Իր ստորագրութիւնը կը կրեն «Իման էլ-Հարիր» («Մետաքսի խանը» - 17 շարժ) եւ «Քաղաքին կեդրոնը» (16 շարժ) պատկերասփիտի գոյգ ֆիլմաշարերը:

Ներկայիս կ'ապրի Հալէպ:



ղուտ մըն էր, այն ալ՝ սղութեան օրերուն: Ու ահա համաճարակ մը եկաւ եւ հարիրաւորներ ալեց ու տարաւ: Ըսին՝ թէ բժաւոր ախտն է:

Ջերմ, կարմիր փշտիկներ ու յետոյ... մահ: Երեւան ալ քերմախտէ վարակուեցաւ: Ջերմութիւնը բարձրացաւ, աչքերը դուրս ցցուեցան, յետոյ սկսաւ դողդոջալ. կարծէք ձմրան կիսուն ըլլար: Ամբողջ գիշերը պառ ջուր արսկեց անոր գլխուն. կարծեց թէ մահը անխուսափելի էր. բայց մանուկը, փա՛ռք Աստուծոյ, փրկուեցաւ: Աճոր ունեցածը բժաւոր ախտ չէր, այլ՝ պարզ ախտ մը, բայց Սելիմ ասով խորապէս համոզուեցաւ, որ զաւակը պիտի ապրէր ու կրկին սկսաւ մտածել փախուստի մասին: Ջայն պիտի դներ ուսերուն եւ անապատները պիտի կտրէր հետիոտն: Ահա, այսպէս որոշեց: Հետեւաբար, սկսաւ իրարու ետեւէ փախուստի ծրագիրներ մշակել:

Այդ միջոցին նաեւ գիտակցեցաւ ուրիշ երեսոյթի մը՝ հայերը: Գլխու մազերը ճերմկցնող ահաւոր բան է, եղբայրներ, մանաւանդ որ մարդիկ հոն կը կանկածէին, թէ ինք հայ էր: Վախցաւ զակին վրայ: Ա՛լ իր մասին չէր մտածեր: Իրեն համար իր կեանքը կարելոր չէր: Կը մտածէր զակի՛ն մասին: Մարդիկ հայերը կը մորթէին ոչխարներու պէս: Ականջին հասաւ, թէ թորքերը Պիթիսի մէջ հայերը կը հաւաքէին յարդանոցներու մէջ, դուռները կը փակէին յարդով, կրակի կու տային եւ այդպէսով անոնք կը մեռնէին շնչափեղծ ըլլալով եւ այրուելով: Իսկ Մուշի մէջ հայերը կը սպաննէին կա՛մ Բրաքանազարկ ընելով եւ կամ ալ՝ դանակի հարուածներով, իսկ Սեբաստիոյ մէջ, կառավարութիւնը յատուկ օրակարծով մտափաճառներ վարձած էր, այո՛, մտափաճառներ՝ հայերը մորթելու համար: Ոստիկանները հայերը տաւր-տաւր կը շարէին ու մէկ առ մէկ կը դրկէին մտափաճառներուն, որոնք ոչխարներու պէս զանոնք կը մորթէին: Կը լսէք զիս, տղա՛ք: Ձեր այս եղբայրը լսեց ու տեսաւ այս բոլորը: Աստուծոյ անէ՛ծքը կար

վրաս: Աստուած գիտէ միայն, թէ ինչպէս եղաւ, որ չխելագարեցայ: Զօրագունդեր կային, որոնք կը կոչուէին «կամաւորական», այսինքն՝ կամաւորներ...: Ա՛յլ երեսակայեցէք:

Այս «հրեշտակ»ները հայերը կը կապէին իրարու՝ տղամարդ ու կին, եւ զանոնք բարձր տեղէ մը վար կը գետնէին: Այսպիսի դէպքեր Տիարպէքիի մէջ եւս տեղի ունեցան:

—Այն խանը, ուր եւ կ'ապրէի, գաղթականներու հաւաքավայր դարձաւ. մարդեր, կիներ, մանուկներ, անօթութիւն, հիւանդութիւն, աղքատութիւն ու սարսափ: Ամէն առաւօտ տասնեակ կարքեր կու գային, գաղթականները մէջը կը լեցնէին ու կը տանէին քաղաքէն դուրս: Ես կը կարծէի, թէ ուրիշ տեղ, կամ ուրիշ քաղաք մը կը տանէին զիրենք, թերեւս վրաններու տակ կամ նման բաներու մէջ բնակեցնելու համար: Ամէն բան ապահովութիւն կը ներշնչէր. կառապանները, պահակները, խաներու մարդիկն ու բնակիչները. բոլոր դէմքերը միայն զթաւրտութիւն ու վստահութիւն կը ներշնչէին: Յետոյ միայն հասկցանք, թէ ինչ կար այդ փոխարդարութիւններուն ետին: Զիրենք քաղաքէն դուրս կը հանէին ու կը կրակէին անոնց վրայ: Խումբով կը մորթէին, հո՛ն, սուլթան Մուրատի պալատին ու Տիգրիս գետին միջեւ: Աստուած իմ, տղա՛ք, Տէ՛ր Աստուած: Կը հիւանդանամ, երբ այս դէպքերը կը սկսիմ յիշել:

Եւ պատահեցաւ ա՛յն ինչ որ Սելիմ կը վախճար անկէ:

Ոստիկան մը խան եկաւ եւ մէկ-երկու օրուան համար սենեակ մը վարձեց: Ան անհծեալ նպուածքով զինք կը դիտէր: Անգամ մը կեցուց Սելիմը եւ հարցուց.

—Ո՞վ ես դուն:

—Ես Սելիմն եմ, քաղաքական արտոնեւանդ: Պէշրութէն եմ:

—Դուն հայ կ'երեւիս: Դաշնակցութի՛ւն կուսակցութենէն ես, թէ՛ Հնչակեան:

Սելիմ տեղն ու տեղը քարացաւ: Այս ի՞նչ փորձանք էր: Երդում ըրաւ Աստուծոյ, մարգարէին ու Մարիամ կոչսին անունով, որ ինք հայ չէր: Ոստիկանը ունելի մը հանեց, մօտեցուց Սելիմի բերնին եւ ըսաւ, որ եթէ չխոստովանէր՝ ակոսները պիտի փշրէր ու եղունգները պիտի քաշէր: Յետոյ՝ պահանջեց, որ իր առնանդամը ցոյց տայ (այս քանիներորդ անգամն էր, տղա՛ք, որ այս մէկը ընելու ստիպուեցայ). երբ ոստիկանը տեսաւ, որ թլփատուած չէր, կատարելապէս համոզուեցաւ, որ Սելիմ մորթուելու արժանի հայ մըն է: Անոր հրամայեց, որ իր առջեւէն քալելով դուրս գայ խանէն: Միասնաբար քալեցին ճամբաներէն: Սելիմ յանկարծ ոստիկանատունը տեսաւ, ա՛յն ոստիկանատունը, ուր ամէն օր կ'երթար իր ներկայութիւնը փաստելու: Ոստիկանատունը ճիշտ դէմն էր: Վազեց ու մտաւ ներս: Ոստիկանը հետեւեցաւ իրեն: Հոն համոզեցին ոստիկանը, թէ հակառակ անոր, որ մարդը թլփատուած չէր, բայց եւ այնպէս ան հայ աչ չէր:

Նման դէպքեր քանի մը անգամ պատահեցան իրեն հետ, որոնց հետեւանքով համոզուեցաւ, որ անմիջապէս պէտք է փախչի:

—Օր մը, արեւածագին, գրկեցի զաակս, շաղկեցի իրերս ու դուռնէ մը դուրս ելայ: Մարդ չնկատեց զիս: Քաղեցի, քալեցի ու քալեցի: Այս եւս երկար պատմութիւն է: Վերջապէս, արեւը ծագեցաւ: Քիչ ետք տէրս ու կինը պիտի արթննան: Այո՛, տէրս: Ինքն էր, որ զիս մորթուելէ ազատեց: Ըսի ձեզի, եղբայրներ, որ Տիարալէքիդէն փախուստ տուած էի: Քրտական բազմաթիւ գիղերէ անցայ: Հոն զիս կը կերկարէին: Ես նոյնիսկ դաճեկան մը չունէի: Մինչեւ իսկ, երբ քանի մը հովիւներ փորձեցին հագուստներս կողոպտել, զիս փրկեցին միայն ռուսական ռազմաճակատ մեկնող քանի մը քիւրտ կամաւորներ: Պակկարա ցեղախումբի արարներէն մէկուն օգնութեամբ կտրեցի Խապուր գետը եւ հասայ գետի ափին Թապան կոչուած վրանաբնակ վայրը: Մարդ մը եկաւ եւ հարցուց ինծի, թէ ով եմ ես: Ըսի, թէ քրիստոնէայ արար մըն եմ, Պէյրութէն աւելցուցի նաեւ, թէ երեւիս իմս էր եւ թէ՛ անօթութենէ ու յոգնութենէ կը մեռնէիք: Ձիս առաջնորդեցին իրենց մեծատղին մօտ, որ հանրածանօթ Մասլաթ փաշան էր, բարեսիրտ ու ազնուական մարդ մը: Ունէր քանի մը հալ կիներ: Իր վրանատեղին փախստականներուն ապաստանարանը եղած էր:

Իրեն պատմեցի ամբողջ պատմութիւնս: Մարդը յուզումէն կու լար: Անմիջապէս ինծի առաջարկեց ամուսնանալ իր *աշիրէթի* առջիկներէն մէկուն հետ ու ինծի համար մազէ վրան մը լարել, պայմանաւ որ իսլամութիւնը ընդունէի: Անշուշտ ընդունեցի: Ի՞նչ է ձեր կարծիքը, եղբայրներ: Լաւ: Ուրեմն, հիմա ես իսլամ եմ, բայց ինչպէս առածը կ'ըսէ. «Երբ Սառան իսլամացաւ, ան ո՛չ իսլամներուն թիւը աւելցուց եւ ոչ ալ քրիստոնէաներուն թիւը պակսեցուց»: Ես իսլամացայ Մասլաթ փաշայի ձեռամբ: Ինծի համար այրի կին մը զատեցին եւ առանց դրամօժիտի հետը ամուսնացուցին: Երբ զիս անոր մօտ մտցուցին, ինքզինքս գտայ սեւամորթ ու գէր քառասունեայ կնոջ մը առջեւ: Աստուած իմ... անա քեզի գեղեցիկ փորձանք մը...

Բայց ան լաւ դաստիարակ մըն էր: Այժմ կը զբաղի զակիս հոգատարութեամբ:

Թէ ինչպէս հասայ հո՞ս: Լաւ, կամաց-կամաց, եղբայրներ: Մասլաթ փաշան ինձմէ խնդրեց, որ ընկերանամ քանի մը գաղթական հայերու, որոնք փախուստ տուած էին թուրքերու եպիստոլաներէն: Պէտք է անոնց ընկերանայի մինչեւ անապատի ուխտներէն մէկը, որ քանի մը քարեկամ աշիրէթներ կայք հաստատած էին: Պէտք է զանոնք պաշտպանէի նաեւ ոստիկաններու բռնութիւններէն: Եւ մայր ճանապարհով մինչ կը քալէիք դէպի Տէր-Ջօր, հանդիպեցանք երեւի ձիաւոր ոստիկաններու: Իրենց իմացուցի, թէ ես Մասլաթ փաշայի փեսան եմ եւ ըսի, թէ ան պատուիրած էր, որ ասոնցմէ ոչ մէկուն

վնաս հասնէր: Այս պոռնիկի զառակները իրենց գութները շարժեցին, լետոյ, առանց աղաչանքներու ականջ տալու, քաշեցին իրենց դաշտները, յարձակեցան այդ խեղճ հայերուն վրայ եւ սկսան սպաննել ու մորթել զանոնք:

Անոնց մէջ կը գտնուէր նաեւ տասնհինգամեայ շիկաճեր պարմանուհի մը: Ջիւնք վերջաւորութեան թողած էին: Մինչ այդ, ե՛ս ալ, աղջիկն ալ մարած էինք:

Մէկ ժամ անց, երբ արթնցայ, տեսայ, որ մէկ առ մէկ կը բռնաբարէին զայն: Երբ իրենց գործը աւարտեցին, անոնցմէ մէկը սկըսաւ դաշտնով հարուածել աղջիկը: Ես կու լայի ու կը ճչայի: Ջիւնք պարանով մը կապեցին եւ քաշեցին իրենց հետ: Տէր-Ջօր տանող ճանապարհի քառուղիին վրայ կեցան եւ ինչ-որ մէկը սպասեցին: Բայց ան չեկաւ, այլ եկաւ տէրս՝ իր կառքով: Իրմէ ես պահանջեցին, որ առնանդամը ցոյց տայ (ի՞նչ ստոր մարդիկ են), բայց տէրս ըստպանեց զիրենք. երեքն ալ սպաննեց ակնթարթի մը մէջ: Իսկապէս հերոս մըն էր, որ առանձինն սպաննեց երեք զինուած ռատիկաններ: Դուք նախապէս նման դէպքի մը ականատես եղա՞ծ էք:

Հրոսակները բացազանչեցին.

—Ո՛չ, ո՛չ...

—Այո՛, այո՛...

—Ասիկա հոյակապ արարք մըն է:

—Եան լակոտներ, արժանի են այդ մէկուն:

—Աստուծոյ անէ՛ծքը իջնէ իրենց մօր արգանդներուն:

—Ե՛ս ալ լաւ դաս մը պիտի տամ իրենց:

Եւ իրենց չափազանց խանդավառութենէն՝ հրացաններէն մէկէն փամփոշտ մը արձակուեցաւ, որ մեծ աղմուկ յառաջացուց եւ բոլորը արթնցան անոր ձայնէն:

Հալէպ, 1985-1987

ՆԻՀԱՏ ՍԻՐԷՍ
(Հայացուց՝ Միհրան Մինասեան)

Մ. ՍՈՒԼԷՏՄԱՆ

ԱՐԵՎԵ ԾԱՅՏԱՂԲԻՒՐՆԵՐԸ

**Այս բանաստեղծությունը կը ձօնեմ
թուրք բռնակալներու ձեռամբ մորթուած
ճայ մտատրականներու յիշատակին**

Ես չտեսայ, թէ ի՞նչ անք գործեցին
ձեռքերը բռնակալներուն, բայց Արաքսն ու Եփրատը
տեսան գիշերը ողբին եւ ջարդերուն,
տեսան գիշերը նաեւ, երբ փարոսներ մարեցին,
երբ որ արիւնը բուրեան գարնան սրտէն լորդեցաւ,
մոնչելով հեղեղի պէս Չանդըրըի վերեւ՝
գիշերն ինչպէս սարսափազրու...

Ես չտեսայ, թէ ի՞նչ անք գործեցին
ձեռքերը բռնակալներուն, բայց իմ ունկս իմացաւ
ինչ որ Արաքսը բարբառեց Եփրատ գետի ակաճներուն.
ըսաւ, եւ կեանքն էր մեռեալ.
—Այստեղ ահա ապրեցաւ ժողովուրդն այն,
որ աշխարհին խաղաղութի՛ւն միայն տենչաց,
գիշեր-ցերեկ երազեց, որ արեւը ծագի միշտ
եւ խաւարը դառնայ դիակ ու անցեալ,
բայց վիշապը Երլտըզի՝ սիրահարուած բնաջնջման չար ուժին,
ստացաւ սատար եւ աջակցութիւն Պերլինի կայսրէն
եւ տուաւ երդում-
արեւը փոխանցելու գերեզմաններու խորագոյն փոսին,
բնաջնջելու աստղերը բոլոր եւ արշալոյսն անարատ,
անհիծելու գարունը,
խեղդելու ծաղիկները,
տարածելու սառնամանիքը,

պատտանելու կուրծքերը,
 թունատրեղու բոլոր ուտելիքները,
 որ վերջ գտնեն նրկրի վրայ դրօշները խաղաղության:
 Յետոյ թույցուց սանձերը օձերուն ու կարիճներուն,
 որոնք իրենց փոսերէն դուրս խոյացան
 կախարդուած ժանիքներով սրածայր՝
 որ մայրամուտին յարձակին կանաչ մարգերուն վրայ
 եւ շարտեն «ուղեւորներ»ը բոլոր
 ճամբաներու կիսուն...

* * *

Ուղեւորներուն մէջ կային կին ու մանուկ, ծեր ու պարման,
 թունակալութեան կրակն էր այրած ոտքերը անոնց՝
 տօթին ու սովին բոցերով դաժան.
 եւ խոժեցին չորս ծագերէն վոճմակները գիշերուան,
 ահուարաւափի մատնեցին հօտերը,
 խեղդեցին բեղմնատրեղերը,
 խայթեցին ծծկերները,
 ծածկեցին լոյսը ջիւջ,
 բայց արիւնը չհոսեցաւ զուր ու անտեղ,
 պոռթկաց ուժգին
 եւ պոռթկաց բորբ՝
 Սեւակին ու Վարուժանին զոյգ սրտերէն,
 եւ կոտորեց Կոմիտասի սրտին մէջ, օ՛, լարերը ջինջութեան,
 անկարելի դարձնելով, որ մոնչիւնը ցատումիս
 դառնայ լուսէ ճառագայթեալ ցայտադրիւր
 եւ տեղայ, հանգչի սուրերուն վրայ պիղծ ու մեղաւոր
 եւ մոնչէ՛, մոնչէ՛...

Զօհրապը գոռաց.

—Թողէ՛ք զիս այստեղ,

ժողովուրդիս տառապանքին, աղէտին հետ.

եւ իմ ուղիս փոխողը չեմ,

անբարոյութեամբ սիրտս զենեցէք...

* * *

Եւ պարմաններու դայար տարիքէն
 թունատրեղերը գողցան վարդերը անոնց այտերուն՝
 անխաբան որ դահիճը յափշտակէ բոլորը շուշաններուն,

նախքան որ հրապարակներուն սեւ դրօշներ տարածուին,
բայց ըմբոստացաւ վեհանձնութիւնը անոնց սրտերուն՝
կնքելու հաստատ ուխտը պայքարի՝ արեւա՛ն մէջ անգամ,
որ կեանքը հոսի անոնց կուրծքերէն՝ եռացող, կարմիր
բոցերու մման եւ բարձունքներէն տեղայ ուղղաձիգ՝
իր թիրախին ուղղուող նետի պէս անսխալ
եւ հաստատուի՝ ինչպէս նախածքն սեւեռարիք,
մահուան շուար կապիճին մէջ...

Կանչե՛ց Արաքսը Եփրատի ունկին,
կանչեց արթո՛ւն եւ հիացան անոնք ի տես
աղբիւրներուն առատաձեռն,
ցայտաղբիւրներուն կենարար պարին
եւ անոնցմով երակները պարարտացան ու չչորցան:
Ահաւասիկ, իմ աջ ափիս, կայսրին մթին լերդ արիւնէն
ծաղկեցան բիր, շարք-շարք վարդեր Արագածի գագաթներուն,
Սեֆէրեանը ճեղքեց սիրտը այդ սկեռ խաչօրին
եւ այդ սխալօք փշրուեցաւ...
Այսպէս ժպտուն յորդեցան ցայտաղբիւրները արեան,
աղեղուեցան բարձունքներու երկնամերձ եւ հասունցաւ
աստղը պայծառ՝ արեւի մը պէս շողշողուն,
Արագածի ճի՛շդ կեդրոնը
եւ կեդրո՛նը անապատին,
ուղիները լուսատրեց,
խաւարները տաղեց-այրեց,
գաղտնիքները քողազերծեց,
որ մարդիկ միշտ երջանկանան:

Ի՛նչ հրաշք է սա՛ լուսաստղն Արագածի...
քանի՛ աչքեր, ահաւասիկ, այստեղ կ'այրին քու կարօտով,
աչքեր մարդոց, գիշերուան մէջ, որոնք քեզի լոկ կը ձգտին
եւ բիր աչքեր՝ ոստերուն մէջ մեր մայրիկն,
որոնք քեզի կու տան ողջոյն,
կու տան ողջոյն...



Խորհրդանկար՝ ՇԱՐԹԻ

digitised by A.R.A.R.@

Ֆ. ԽՈՒՐԳՈՇ

ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՒ ՅԱՍՄԻԿԻՆ ԹԵՐԹԵՐԸ

—Ճեմալ փաշան կը կարծէ, որ ռուսերը պիտի գրաւեն Փոքր Ասիան եւ հայերը պիտի օգնեն անոնց,— ըսաւ Հաշէմ էֆենտին:

—Բայց Ռուսիոյ սահմանամերձ կարգ մը քաղաքներու մէջ, հայերը արդէն իրողապէս ըմբոստացան թուրքերու դէմ,— պատասխանեց Ապտ էլ-Ղաֆուր:

Հաշէմ էֆենտին ումայ մը խմեց իր սուրճի բաժակէն եւ ըսաւ.

—Ասիկա իրենց իրաւունքն է, երկրագունդի բոլոր ժողովուրդներուն պէս՝ անոնք ալ կ'ուզեն ունենալ իրենց հայրենիքը, եւ Օսմանեան պետութիւնը պէտք է անկախութիւն տայ հայերուն ու իր լուծին տակ գտնուող միւս ժողովուրդներուն:

Ապտ էլ-Ղաֆուր նստաւ Հաշէմ էֆենտինին դիմաց եւ անակընկալօրէն ըսաւ. «Միւս ժողովուրդներ՝ ըսելով որո՞ւ կ'ակնարկես»: «Մեզի՞»... այս եղաւ պատասխանը Հաշէմ էֆենտինին, որ շարունակեց. «Եկուր վերջ տանք այս գոյցին եւ ոտքի ելլենք, որպէսզի մեր աչքերով դիտենք տեղահանութեան դատապարտուած հայերուն կարաւանները. եւ տակաւին կառչած կը մնամ գիրքը յօրինելու գաղափարին: Գաղթականներու նոր կարասան մը հասաւ եւ զանոնք բնակեցուցին Սեպիլի շրջանը, պարիսպներէն դուրս. այս շաբթուան ընթացքին, հաւանաբար զիրենք ճամբու դնեն դէպի Տէր-Ջօր»:

Երբ Հաշէմ էֆենտին վերադարձաւ Ապտ էլ-Ղաֆուրի տունը, գրպանէն ծոցատետրը հանեց եւ արձանագրեց.

«Թուրքերը սկսան հայերը տեղահան ընել իրենց հայրենիքէն եւ անոնք խումբ առ խումբ Հալէպ հասան: Իւրաքանչիւր խումբ կը հաշուէր տասը հազար գաղթական...: Ծամբու դժուարութիւնները ազդած էին անոնց, բայց մա՛նաւանդ աղքատներուն վրայ, որոնք

երկար ուղեւորութիւնը կտրած էին Ռետիոսն, երկու ամիս շարունակ, բոսպիլ եւ մերկ: Գետինը եղած էր իրենց անկողինը, իսկ աստղերը՝ ծածկոցը: անօթութեան եւ ցուրտի ճիրաններէն ճողոպրած էին միայն յաղթանդամներն ու քախտաւորները, որոնք Հալէպ հասան անհոգի ուրուականներու պէս եւ իջան խաներու, փողոցներու եւ թաղերու մէջ, մինչեւ որ քաղաքը լեցուցին եւ փողոցները իրենցմով խճողուցանան»:

Հաշէմ Էֆենտիի արձանագրութիւնը հոս կանգ առաւ:

Իրականութիւնը այն էր, որ կառավարութիւնը մեծապէս կը գրթար գաղթականներուն, կը ձգէր որ անոնք քանի մը օր հանգչին, անունները կ'արձանագրէր, իւրաքանչիւրին օրական հաց մը կու տար, յետոյ զանոնք կը ճամբէր դէպի Համա, Տեր-Ջօր կամ Ռագ-գա: Հետագային, անոնց կեդրոնացման հաւաքավայրը Ծատտատէն եղաւ, Սուրիական անապատին մէջ, մօտիկ Իրաքի սահմանին:

Մարոն հասաւ առաջին կարասաններուն հետ, Սեպիլի շրջանին մէջ իրենց համար պատրաստուած քեմպին մէկ անկիւնը գրասեց եւ երբ գիտցաւ, որ թուրքերու եւ չեթէներու փամփուշտները ա՛լ չկան, ձեռքը դրաւ գլխուն ու յոգնութենէն մտաւ խոր քուն, զոր մերթ ընդ մերթ խոկոցը կ'ընդհատէր: Մարոն քնացաւ մինչեւ յաջորդ գիշեր, երբ տեսաւ, որ երիտասարդ մը քեմպի կը մտնէր եւ գաղթականներուն բազմաթիւ հարցումներ կու տար: Մօտեցաւ ու ըսաւ անոր, թէ ինք Մարօ կը կոչուի, թէ՛ կորսնցուց իր ընտանիքի բոլոր անդամները եւ չի գիտեր, թէ իր աղջիկը՝ Մանուշը եւ իր ամուսինը՝ Մկրտիչը ո՛ր կը գտնուին: Ապա, կիրթ ու անթերի թրքերէնով մը անլեցուց-«Մենք ու՞ք հազար էինք եւ թիմա միայն չորս հարիւր հոգի ենք: կրնաս պատկերացնել, թէ ի՛նչ աղէտ մեզ հարուածեց»: Ան ճաեւ ըսաւ Հաշէմ Էֆենտիին, որ ոչ ոքէ կը վախճայ, որովհետեւ անելի ահաւոր դժբախտութիւն մը չի կրնար գիրենք հարուածել:

Հաշէմ Էֆենտիին հասկցուց իրեն, որ ինք պետութեան մէկ ներկայացուցիչը չէ, թէ՛ ինք պարզապէս լրագրող մըն է, որ ճշմարտութիւնները կը հաւաքէ: Չհասկցաւ: Կոնակը դարձուց եւ աչքերը դարձեալ զոցեց:

...Մեքենէն մեծ քաղաք մը չէր: անիկա ցեխէ եւ յարդէ պատրաստուած քանի մը գմբէթաւոր տուններու համախմբում մըն էր, որուն կեդրոնը կը գտնուէին սակաւաթիւ խանութներ, իսկ շուրջը՝ ցեխէ գմբէթներով բնորոշուող բազմաթիւ գիւղեր, որոնց պետեւի բնակիչները ամէն պազարին Մեքենէ կու գան՝ կենդանիներու աղք, ոչխար եւ կաթնեղէն արտադրութիւններ ծախելու: Ապա, անոնք իրենց կարիքները կը գնեն եւ դէպի իրենց գիւղերը կ'ուղղուին:

Գիւղերու շուրջ եւ Եփրատի երկայնքին տարածուեցան բազմաթիւ պետեւի ցեղախումբեր, որոնք իրենց վրանները սովոր էին լարել Եփրատի ափունքներուն: Անոնց մէջ ամէնէն կարեւորը ալ-Ռալտա ցեղախումբն էր, որմէ եւ ճիւղաւորուած էր ալ-Նասէր

աշխարհը, որուն անդամները Հինգշաբթի օր պազար եկան եւ հոնկէ գնեցին կամ իրենց հետ տարին այդ օր գիւղին հրապարակը բերած մեծաթիւ հայ մանուկներ:

Մարոյենց կարաւանը Հալէպ երկար չմնաց: Հինգերորդ օրը, երբ քոսութեան վարակիչ ախտը արդէն սկսած էր տարածուիլ գաղթականներուն մէջ, մունեստիկը ազդարարեց մեկնումի պատրաստուիլ: Կարաւանը ճամբայ ելաւ դժկամ ու ծանրաքայլ, իր մէջ բանտարկելէ ետք իր յոգնութիւնը, եւ սկսաւ իր անաւարտ ուղևորութիւնը:

Մեսքենէի շուկային մէջ, մունեստիկը սկսաւ վաճառել մանուկները, — աղջիկ գաղթականը՝ քսան դահեկանի, իսկ այրիներն ու տարիքոտները՝ հինգ դահեկանի: Պետեիները ապահովեցին իրենց կարիքները եւ գթալով աղջիկներուն՝ գնեցին զանոնք, փրկելու համար չարչարայից ուղևորութենէն եւ սովէն: Վճարեցին պահանջուած գինը, յետոյ դաջեցին անոնց ձեռքերն ու դէմքերը եւ բոլորն ալ կոչեցին Մարիամ... իսկ ինչ որ մնաց կարաւանէն եւ անոնք՝ որոնք վաճառուելու բախտին չարժանացան, բոլորն ալ տարին Մեսքենէի մօտ հաստատուած նոր հասարակայր մը, ուր եւ տառապեցան գլխացաւէ ու հարբուիւէ, երեք օր շարունակ: Յետոյ՝ ջերմութեան նըշանները մէկ-երկու օր սաստկացան, անոնց լեզուներն ու շրթները սեղան, սկսան կակազել, ապա՝ լոցին մէկ-երկու գիշեր, որմէ ետք հաւաքական մահը տարածուեցաւ անոնց միջեւ:

Ամէն օր շուրջ հարիւր եւ քսան հոգի կը փոխադրէին քեմիլէն դուրս եւ կը թաղէին հասարական գերեզմանափոսերու մէջ: «Թիֆուսի գոհերը» կոչեցին զանոնք: Մարոն մնաց կանգնած՝ հայնացքը կեդրոնացուցած սախտակ, երկար մօրուքով տղամարդուն վրայ: Տղամարդն ալ նայեցաւ իրեն եւ, ո՛չ ոք գիտէ, թէ ի՞նչ գզացումներ ցնցեցին զայն, երբ Մարոյէն խնդրեց հետեիլ իրեն: Ան Մարոն գընեց հինգ դահեկանի եւ իրեն հետ տարաւ Մեսքենէի հարաւը գտնուող իր գիւղը, որ կը բաղկանար տասը գմբէթաւոր տուներէ եւ մեծ իջեանէ մը: Հոն կային շատ ոչխարներ, եւ Մարոն իբրեւ հովի ծառայեց Համատան էլ-Նասերիին մօտ ու փրկուեցաւ թիֆուսէ մահանալու սպառնալիքէն, որ հայոց համայնքումները հետապնդեց ամենուրեք, ուր որ ոտք դրին: Եւ ան՝ որ փրկուեցաւ թուրք գիւնտորներէն ու չեթներէն, հիւծեցաւ սովէն ու ծարաւէն: Եւ ան՝ որ փրկուեցաւ մարդասպաններէն, հիւանդութիւնը բռնեց անոր կոկորդէն: Ահա թէ ինչո՞ւ տասը հազար գաղթականներով սկսած կարաւանը Մեսքենէի կամ Տեր-Ջօրի մէջ վերջ կը գտնէր երկու հազար եւ հինգ հարիւր գաղթականով:

Հաշեմ էֆենտին արձանագրեց այս նոթերը, մինչ Ապտ էլ-Ղաֆուրը կը շարունակէր խօսիլ քաղաքը հարուածած սղութեան մասին: Ներածուած ասպրանքներուն գիները տասնապատկուած էին, իսկ շաքարին, սուրճին, երկաթի տեսակներուն, անագին, կերպասե-

ՅԵՅՍԱԼ ԽՈՒՐՈՇ



Ծնած է 1952ին, Հալեպ:

Նախնական և երկրորդական ուսումը ծր-
նրնդավայրին մէջ ստանալէ ետք, 1974ին
կ'աւարտէ Հալեպի Պետական Համալսարանի
արարական լեզուի և գրականութեան բաժան-
մունքը, իսկ 1983ին, դարձեալ նոյն համալսա-
րանէն, կը ստանայ սեմական հին լեզուներու
մագիստրոսի վկայական:

Քսան տարեկանէն սկսեալ պատմութեան,
ֆննդատական, լրագրական յօդուածներ ու
գրական ուսումնասիրութիւններ կը ստորագրէ
սուրիական և արաբական մամուլին մէջ:

Պատմութի և վիպագրութեան վեց մրցա-
նակներու արժանացած Յէյսալ Խուրոշ

ղէններուն, մանածոներուն, դեղերուն, նաւթին և ոգելից ըմպելիներ-
ուն գիները կրակ կտորած էին:

Առանց գլուխը իր տետրակէն բարձրացնելու՝ Հաշէմ Էֆենտիին
պատասխանեց.


—Պատերազմ է և պատերազմ կը նշանակէ, որ ճամբաները
պիտի փակուին ու այս ապրանքներուն ներածումը կանգ պիտի առ-
նէ: Յետոյ՝ այս ապրանքները արտադրող երկիրներուն մեծ մասը
պատերազմի մէջ է Օսմանեան պետութեան հետ. ասոր վրայ գու-
մարէ այն իրողութիւնը, որ Ալեքսանտրէթի Ասահանգիստը փակ է
և ի վիճակի չէ նման ապրանքներ ընդունելու:

—Սակայն տրամաբանակա՞ն է, որ վաճառականը իր ապրան-
քին քառասնապատիկը շահի. Հալեպի վաճառականները այս ապ-
րանքները գնեցին պատերազմէն առաջ, անոնք իրենց ամբարներուն
մէջ էին, իսկ հիմա կը պահեն զանոնք՝ աւելի մեծ շահ ապահովելու
յոյսով...— գրեթէ այսպէս ըսաւ Ապտ էլ-Ղաֆուրը, սուրճը լեցնելով
բաժակներուն մէջ: Ապա, խօսքը Հաշէմ Էֆենտիին ուղղելով՝ ը-
սաւ:— Մէկդի թող ձեռքերուդ մէջ գտնուող այդ ձմերուկը և եկուր
քիչ մը գրուցենք... դուն աւելի գէշ ևս նոյնիսկ թուրք զինուորներէն,
որոնց հետ կարելի չէ գրուցել: Քեզի հետ խօսելու միջոց չկայ, շա-
րունակ ինքզինքդ կը շրջապատես գիրքերով ու թերթերով և այս
փոքրիկ տետրակով, ուրկէ գլուխդ վերցուցած չունիս...: Հաշէմ Է-
ֆենտի... խմէ՛ սուրճդ, ի՞նչ է, կ'ուզես որ ձեռքե՞րդ պագնեն, որ-
պէսզի խմես:

—Կը մտածեմ Ռոֆա երթալ,— ըսաւ Հաշէմ Էֆենտի և շարու-
նակեց:— Եթէ օր մը զիս կորսնցնես՝ գուր տեղը մի փնտտեր, Ռոֆա
ճամբորդած կ'ըլլամ, կամ ալ՝ որեւէ ուրիշ տեղ:

ցարդ հատորով հրատարակած է «*Լուրերը*» պատմուածքներու ժողովածուն եւ երեք վեպեր՝ «*Փոքրիկ փաշային համառօտ կենսագրութիւնը*», «*Ձէլթուն խան*» եւ «*Ֆիշերւան եւ յասմիկին թերթերը*» անուն վեպերը: Արարական գրականութեան մէջ, «*Ֆիշերուան եւ յասմիկին թերթերը*» այն առաջին վեպն է, որ ամբողջութեամբ նըւիրուած է հայ ժողովուրդի Մեծ եղբունին, տարագրութեան եւ հայկական գաղութի կազմաւորման:

Ներկայիս կ'ապրի Հայէայ եւ կը գրադի ուսուցչութեամբ ու լրագրութեամբ՝ իրրեւ ազատ թղթակից:



—Կարելորը այն է, որ ուրիշ տեղը բանտը կամ գնդակահարութիւնը չըլլայ,— պատասխանեց Ապտ էլ-Ղաֆուր:

Հաշէմ էֆենտին ոտքի ելաւ, ծխամորճը լեցուց եւ ըսաւ.

—Միայն օտար արտադրութիւնները չեն, որոնց գիները ահաւոր համեմատութեամբ մագլցում արձանագրեցին, հացահատիկի գիներն ալ կրակ կտրեցան: Երէկ վաճառական մը ըսաւ ինձի, որ Անտիոքի մէջ ցորենին *ուաթը* ծախուած է տասներկու դահեկանի՝ փոխան երեքի...

Ապտ էլ-Ղաֆուր քայեց պատուհանին ուղղութեամբ: Պահ մը դիտեց փողոցը եւ շարունակեց խօսիլ. «Զինուորական իշխանութիւնները արդէն ձեռք դրած են խաներու մէջ ամբարուած բերքերուն վրայ եւ արգիլած են անոնց տէրերուն ծախել զանոնք. յետոյ մի մոռնար, որ գիւղերէն քաղաք հացահատիկի փոխադրութիւնը կանգ առած է եւ գիներն ալ կրակ դարձած են...»:

—Միայն աղքատներն են, որ կ'ապրին այս կրակէն եւ ներէ՛, եթէ ըսես քեզի, թէ անոնցմէ շատեր արդէն սկսան մորալ, գողնալ կամ անօթութենէ մեռնիլ:—Այս ըսաւ Հաշէմ էֆենտին թուղթերը հաւաքելով: Ապա, աստիճանին վրայ ոտքը սահեցաւ, փոքրիկ տետրակը ծոցագրպանը զետեղեց եւ երբ Ապտ էլ-Ղաֆուրը «ո՛ր կ'երթաս» հարցուց իրեն, «չեմ գիտեր» պատասխանեց:

...Հաշէմ էֆենտին այցելեց նոր ժամանած գաղթականներու նոր հաւաքավայրերը՝ Գասթալ Հարամիի, Միտանի եւ Արքուպի մէջ: Նստաւ անոնցմէ շատերուն հետ եւ տեղահան եղածներուն մասին իր նոթերը արձանագրեց, թէ՛ ինչպէ՛ս դուրս եկան, ճամբու ընթացքին ի՞նչ դժուարութիւններու հանդիպեցան, քանի՞ հոգի էին, ի՞նչ եղաւ իրենց թիւը երբ հոս հասան, ո՞ր թուականին սկսաւ իրենց տեղա-

հանումը, ե՞րբ հոս հասան, Կիլիկիայէ՞ն եկան, Անատոլուէ՞ն, թէ Միջագետքի երկրէն...

Այսպէսով, ան հաւաքեց բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք մարդկութեան զգացումները կը ցնցեն, ինչպէս բնութագրեց ինք...: Ան հաւաքած էր սահմոկեցուցիչ բազմաթիւ լուրեր. անկարելի էր հաւատալ, որ մարդիկ նման արարքներ կրնան գործել: Կին մը ըսաւ իրեն, որ չեթէները իր աղջիկը խլեցին իր ձեռքէն եւ բռնաբարեցին իր աչքերուն առջեւ: Տակաւին ութ տարեկան չէր եղած, եւ որովհետեւ սկիզբը դիմադրած էր, լերան գագաթէն զայն ձոր նետած էին:

Պատաւ մը ըսաւ, թէ զինք դուրս հանած են իր տունէն՝ իր ամուսնոյն հետ, առանց որ բան մը կարենայ առնել, շարտած տան սեմին եւ իրենց ունեցուածքներն ալ աճուրդով ծախած են:

Ուրիշ մը ըսաւ, թէ սպայ մը, իր թիկնապահին միջոցաւ՝ ընտրած էր ամէնէն գեղեցիկ աղջիկները եւ զանոնք իր պալատը տարած, որպէսզի միանան իր հարեմին...

Հաշէմ էֆենտին նման բազմաթիւ գրոյցներ լսեց, սակայն երբեք չհաւատաց, որ Սվազէն տեղահանուած կարաւանէ մը, որ կը քաղկեդոն տասնութ հազար գաղթականէ, միայն երեք հարիւր եւ յիսուն անձ Հալէպ հասած են: Ան ուղղակի շանթահար եղաւ, երբ անկին մը կծկուած տեսաւ ասի մեծութեամբ մարդկային խլեակներ՝ բոլորն ալ կմախքներու վերածուած, որոնցմէ ո՛չ ոք կրցաւ խօսիլ: Մեծ դժուարութեամբ ըսին իրեն, թէ՛ Կարինէն կու գան, երբ ճամբու դրուեցան՝ իրենց թիւը տասնինը հազար էր, իսկ հոս հասան միայն տասնմէկ հոգի: Այն ատեն՝ ան վշտաբեկ հետաքսաւ անոնցմէ, սրճարան մը գնաց, ծոցատետրը հանեց եւ սկսաւ արձանագրել տակաւին յիշողութեան կառչած տեղեկութիւնները:

Սրճարանին մէջ, մարդիկ կը գրուցէին նաճիտի մորեխին մասին, որ անակնկալօրէն այս ափերը հասած էր: Անոր բանակները Հիճազի ծայրամասերէն տարածուած էին Անատոլու, Դամասկոս, Պաղեստին, Հալէպ եւ Ատանա: Աւելի՛ն. նոյնիսկ մէկը լսած էր, որ մորեխները հասած են մինչեւ Իզմիր: «Այսպէսով, հալ ժողովուրդին հետ հարցերը իրենց լրումին հասան», ըսաւ Հաշէմ էֆենտին:

Այլ-Պահարմիէ մզկիթին առջեւ, շէյխ Ռաճապը ըսաւ. «Բան չմնաց: Աստուա՛ծ վկայ, կարգ մը մշակներ եկան եւ խնդրեցին ինձմէ, որ մորեխի աղօթքը ընեմ, որովհետեւ իրենց շրջանները ամայացած էին եւ մորեխը փճացուացած էր խաղողի, թուզի, ձիթապտուղի, պտուղի, բամպակի, շուշմայի, եգիպտացորենի, դեղին դրոմի, ձմերուկի բոլոր բերքը եւ ահաւոր վնաս հասցուցած ծառերուն. անոնք սկսած են նախ տերեւները ուտել, յետոյ՝ ճիւղերուն կճեպները, որուն հետեանքով պտուղները ինկած են, ճիւղերը՝ չորցած ու փայտի վերածուած...: Ասկէ կ'օգտուէր միայն թրքական բանակը, որովհետեւ առատ փայտ ունեցաւ: Հիմա մարդիկ պոչ կը թոնեն՝ անոնց փայտ ծախելու համար...»: Յետոյ, հաճ Մուսան, որ աղթի վա-

ճառակա՞ն էր եւ որուն առեւտուրը պատերազմի թուկուսին հետ կանգ առած էր, աւելցուց. «Աստուած վկայ, այս աչքերովս, զորս որդը պիտի ուտէ, ես իմ այս աչքերովս տեսայ, որ շուկային մէջ մարդ մը իր երկու մանչերը ծախու հաճած էր, որովհետեւ, ինչպէս կ'ըսէր, զանոնք եւ իր կինը կերակրելու ուտելիք չունէր...»

—Այս մորեխը կը գործակցի թուրքերուն հետ,— ըսաւ հացահատիկի վաճառական Մուսա'ն էլ—Քեպիրը,— կարծես Աստուած զայն դրկեց մարդիկը պատժելու համար, եւ պատերազմը, մորեխն ու թուրքերը միացան եւ սկսան աւեր ու մահ սփռել: Եւ տարօրինակը այն է, որ այս մորեխները մեր սիրելի երկրի մարախներէն կը տարբերին իրենց բազմացման եւ անման եղանակով. անոնք հաւկիթներ կ'ածեն թէ՛ խոպան եւ թէ հերկուած հողին մէջ, երկու ամիսը անգամ մը եւ կը բազմանան տարօրինակ ձևով, առանց ազդուելու ո՛չ ձմրան ցուրտէն եւ ոչ ալ ամրան տօթէն:

—Ի տարբերութիւն մեր երկրի մարախներուն՝ ասոնք յարգելի են, որովհետեւ մեր ազնուաշուքերը խոպան հողին չեն նստիր եւ տարին միայն մէկ անգամ կ'ածեն,— հեզանքով ըսաւ Հաշեմ էֆենտին:

—Տեղեկութիւններուդ վրայ աւելցուր, որ մեր մարախները լեռի բոյսերը չեն ուտեր, մինչդէռ Նաճատի մորեխները կը լափեն իրենց դիմաց հանդիպած ամէն բոյս...: Այս պատուհասը Աստուծոյ երկնային առաջին հարուածն է, պատերազմը ոչ մէկ կապ ունի,— դիտել տուաւ Մահմուտ էլ—Գահաուաթին:

—Մարդի՛կ, մենք ճշմարիտ ուղիէն շեղածներ ենք եւ ասիկա Աստուծոյ տնօրինած մէկ քննութիւնն է, պէտք է աղաչենք առ Աստուած, որպէսզի մեր ազգը փրկէ այս անհար աղէտէն: Ես երեք օր ծոմ պիտի բռնեմ, որպէսզի Աստուած վանէ մեզմէ այս ողբերգութիւնը,— աւելցուց շէյխ Ռաճապը:

...Եւ մինչ անոնք դեռ կը մնային այս կացութեան մէջ, կուսակային անուճով մունետիկ մը ծանուցեց, թէ հայէպցիք պէտք է դուրս գան քաղաքէն՝ կախարդական ջուրը դիմաւորելու: Եւ իրաւամբ, մարդիկ դուրս ելան եւ Պապիլի գիւղը հաւաքուեցան, ուրկէ վերադարձան աջ ու ձախ տարածուած մարախներու պէս: Ոստիկանապետին օգնականը ջուրի սրուակը բռնած էր բարձր, իր երկու ձեռքերով: Կուսակալը Իսֆահանի երկիր յրկած էր պարսիկ մը, որպէսզի բերէ հրաշագործ ջուրը...»

Մարդիկ ուրախութեան բացազանչութիւններով հետեւեցան հրաշագործ ջուրի թափօրին, որ տակաւ առ տակաւ աւելի մեծցաւ: Քաղաք մտան առանց երդիքի մը տակէն անցնել եւ շտապեցին դէպի էլ—Խասրատիէ հրապարակը: Յետոյ եկաւ կուսակալը եւ ջուրը սրսկեց քաղաքին վրայ, սակայն, յաջորդ օրերուն, մարախները աւելի բազմացան: Զուրին իրապատկութեան շոգիացումը մարդիկ վերագրեցին այն իրողութեան, որ զայն բերողը գտարին բարեպաշտ

մը չէր եղած, որովհետեւ... անոր բարիքէն զոկած էր Քիլան գեր-
դաստանի բոլոր տունները...: Բազմութիւնը ուղղութեամբ դէպի պար-
տէզներ ու դաշտեր: Մարդիկ մարախները լեցուցին թութի կողովնե-
րու եւ փսիսթներու մէջ ու զանոնք սպաննելէ ետք թաղեցին:

Ապտ էլ-Ղաֆուր վերադարձա՛ կարգ մը աւօրեայ գնումներով
բեռնարք: Հաշէմ էֆենտին մօրուքը կ'ածիլէր պատին վրայ ամ-
րացուած հայելիի մը դիմաց: «Գիտե՛ս այսօր ինչ եղաւ», ըսաւ Ա-
պրտ էլ-Ղաֆուր: Հաշէմ էֆենտին պատասխանեց, թէ տեղեակ չէ:
Այն ատեն՝ Ապտ էլ-Ղաֆուր բացատրեց, թէ բանակը ինչպէս պա-
շարած էր քաղաքին շուկաները եւ զանոնք պարպած հոն վաճառ-
ւող ապրանքներէն: «Պատերազմական ծախսեր» անուան տակ նոր
տուրք մը հաստատուած է, որմէ դժգոհ՝ վաճառականները, իրենց
խանութները փակելէ ետք, իջած են Մեծ Մզկիթ եւ գործադուլ յայ-
տարարած: Սակայն բանակը կոտրած է կղպանքները եւ ապրանք-
ները գրաւած:

—Բայց ի՞նչ պատերազմական ծախսեր, երբ Պասրայի մէջ,
Բարձրագոյն պետութիւնը պարտութեամբ անգլիական բանակներէն,
որոնք, արաբներու օժանդակութեամբ, թրքական բանակները դէպի
Պաղտատ կը հալածեն...,— ըսաւ՝ անձեռոցով կզակը սրբելով: Ապա,
շարունակելով ստելցուց,— որ ինք Ռոֆա պիտի մեկնի, որպէսզի հոն
հանդիպի թրքական բանակի պարտուած բեկորներուն:

—Իրա՛ւ որոշած եւ Ռոֆա ճամբորդել. հոն ի՞նչ կ'ուզես ը-
նել,— հարցուց Ապտ էլ-Ղաֆուր:

Հաշէմ էֆենտին պատասխանեց, թէ հարցերը կ'ուզէ տեսնել
իրենց իսկութեան մէջ, իսկ իր հասարած միտքը կ'ամբողջանայ մի-
այն այն պարագային, երբ ինք գտնուի անցուդարձերուն ճիշդ սրտին
վրայ:

*

* *

Մանու՛շ, ո՛վ Մանուշ...: Ուշադրութիւն չըրաւ կանչին: Հայ-
եացքներով կը սաւառներ հետուներ, դէպի ժայռերուն վրայ բռնած
ստուերներուն ծայրերը... եւ դէպի թռչուններ, որոնք իրենց կարասա-
նին կ'ընկերակցէին...: Աչքերուն երբեմնի կանաչ փայլքը մեռած էր
եւ մեռած էր վաղուց իր ինքնավստահ ու շէնշող ոգին, որմէ հիմա
կը մնային միայն երկու ոտքեր, որոնք կ'ընթանային անհարթ եւ ա-
նապահով ճամբաներով...:

Տեսաւ ամէն բան: Իրաքանչիւր քարի ետին՝ տեսաւ մահը դա-
րանակալ: Տեսաւ ոռած դիակներ՝ լեռնային ճամբաներու վրայ եւ
տեսաւ դիակներ, զորս գիշատիչ թռչունները տարտղնած էին ձորե-
րու մէջ: Տեսաւ աղջնակներ, որոնք կ'առեւանգուէին՝ ապագային

կողակիցներ դառնալու համար եւ տեսա մանուկներ, զորս կը հաւաքէին, կը տանէին ձորեր եւ անոնց վրայ փամփուշտներ կ'արձակէին, մինչ անոնց կանչերն ու ողբը կը շարունակուէին մնալ ունկերուն մէջ...: Տեսա մերկամարմին կիներ՝ Յունիսի կիզիչ արեւուն տակ, որոնց սպիտակ մարմինները կը շարունակէին գծագրուած մընալ ժայռերուն վրայ, զորս իր տաքութեամբ արեւը կը տաղէր...: Տեսա դանակները, որոնք փորերը կը ճեղքէին՝ ոսկի գտնելու յոյսով: Այս բոլորը տեսա, մինչեւ որ կորսնցուց կանաչութիւնը իր աչքերուն... եւ շարունակեց ընթանալ սայթաքելով՝ ճամբուն խորտորտորտութենէն ու Յունիսի արեւէն...: Գիշեր ատեն էր... երբ զինուոր մը քարշ տուա իր մազէն եւ զինք տարա մեծ ժայռի մը մէկ ծայրը: Ոչինչ ըրաւ: Չպրոսաց, չհիմարեց, ապուշ կտրած էր... ընդառաջեց եւ հետեւեցաւ անոր՝ անհոգի դիակի մը պէս, եւ երբ Սիրանոյշը այդ տեսարանը տեսա՝ կորիւնը կորսնցուցած էգ առիծի մը նման նետուցաւ անոր վրայ եւ սկսաւ հարուածել, խածնել, հայհոյել: Զգեց Մանուշը եւ փորձեց ինքզինք ազատել Սիրանոյշի ձեռքերէն: Փորձեց ձեռքը տանել դաշոյնին, սակայն Սիրանոյշ անկի ուժեղ դուրս եկաւ, զինուորը մէկդի շարտեց, պատեանէն քաշեց զինուորական դաշոյնը եւ, զայն օդը քարձրացնելէ ետք, սկսաւ քանի մը հարուած իջեցնել զինուորին փորին եւ կուրծքին: Կարաւանը կանգ առած էր եւ բոլորին հայեացքը կեդրոնացած էր Սիրանոյշի վրայ: Անոնք ուղղակի շշմած էին, թէ ինչպէ՞ս Սիրանոյշը կրնայ այսքան ուժ իր մէջ ամփոփել: Ան շարունակեց հարուածել զինուորին կուրծքը, մինչեւ որ մարմինը խաղաղեցաւ, յետոյ ոտքի եկաւ, դաշոյնը ձեռքին: Ո՛չ ոք իրեն մօտեցաւ, ո՛չ ոք փորձեց հարուած մը իջեցնել: Հայեացքը սեւեռեց միւս զինուորներուն, յետոյ՝ չառուշին: Ո՛չ ոք իրենց մօտեցաւ, այն ատեն դաշոյնը նետեց դիակին վրայ, գրկեց Մանուշի ուէն, զայն տարաւ հո՛ն՝ ուր նստած էր, փաթթուեցան իրարու եւ սկսան արտասուել...: Ո՛չ ոք կրցաւ ենթադրել, թէ ինչո՞ւ հաշիւ չպահանջեցին Մանուշէն...: Երբ կարաւանը հասաւ Այնթապ, հայ գաղթականներու ներկայութեան, ձեռնակապեր անցուցին Սիրանոյշի ձեռքերուն եւ քաղաքին հրապարակը տարին: Ապա աչքերը կապեցին, պարանոց իջեցուցին կոկորդին շուրջ եւ կախեցին: Ամբողջ ցերեկը դիակը մնաց կախուած օդին մէջ, քայց Մանուշ շատ չտխրեցաւ, որովհետեւ չէր գիտեր, թէ ինչ պատահեցաւ: Միայն առկախ մարմին մը տեսա եւ ո՛չ ոքի հարցուց անոր մասին, որովհետեւ այդ մէկը զինք չէր շահագորգուէր... ամէն բան հաւասարած էր իր աչքին...: Գիշերն ու ցերեկը, լեռներն ու ձորերը, կիներն ու տղամարդիկը, ամէն բան հաւասարած էր, կենանքը դարձած էր միահորիզոն, միպարզոյն, գուճառ, ուր այլեւս ո՛չ մէկ կանաչութիւն կար. դարձած էր մերկ ու սեկենդան եւ կ'երկարէր հեռու հեռուներ, ուր աստղերը կը բարձրանային ձեռնածալ...: Դատարկ աշխարհ մը, ուր ինք կ'ընթանար սասանձինն, դէպի անվախճան անորոշութիւն: Կուսանաճանք սասանձինն

Մը զինք կը կանչէր եւ ինք կը քալէր անոր ուղղութեամբ, աղօտ հողի մը վրայ. հետաւոր ծովա մը կու գար երկինքէն եւ կը լեցնէր ճամբուն երկու կողմերը, մինչ ինք կը շարունակէր ընթացաւ, նայուածքը կեդրոնացուցած հետուի լուսաւոր կէտին: Ո՛չ մէկ ձայն կը լսուէր, միայն դատարկութիւնն էր, որ զինք իրեն կը քաշէր՝ «Մանո՛ւշ, Մանո՛ւշ, երկո՛ւր»: Եւ ան կը մեկնէր իրեն ձայն տուող այդ հետաւոր աշխարհը: Կը նշմարէր բազմաթիւ պատկերներ, որոնք կու գային նոյնիսկ հորիզոնին վերջաւորութենէն. Մկրտիչը սիրալիր կը ժպտէր իրեն, Մարոն կը բացագանչէր իր երկու աչքով, որոնց միջեւ արցունքի պզտիկ կաթիլ մը կը ցոլար, նոյնիսկ Անի՛ն, Անի՛ն, զոր երկար ատենէ ի վեր չէր տեսած, դուրս կու գար նկարին կեդրոնէն եւ զինք կը կանչէր...: Բոլորը ձայն կու տային իրեն, իրենց փոքրիկ տունը, զոր հաւաքեց իր քնքուշ ձեռքերով, ծաղիկները՝ զորս ի՛նք ջրեց, դրան աստիճանները, թաղը, պատերը, ճամբուն քարերը, ամէն բան կը կանչէր «Մանո՛ւշ, եկո՛ւր, Մանո՛ւշ» եւ, իր երջանկութեամբ զինւած՝ Մանուշ կը նետուէր արկածախնդրութեան գիրկը ու կը մեկնէր դէպի վախճանը ճամբուն, ուր կը գտնուէր զուարթութեանց եւ ուրախութիւններու աշխարհ մը գեղեցիկ, ուր կը լսուէին թմբուկի հետաւոր ձայներ ու երազներէ կազմուած երաժշտութիւն մը, որ կու գար եւ «Մանո՛ւշ, Մանո՛ւշ» կշռոյթով զինք իրեն կը քաշէր: Փոքրիկ հրեշտակներ կը բռնէին ձեռքերէն եւ զինք կը տանէին այն վարդազոյն ու թափանցիկ հետուն, որ իր ջինջութեամբ իմաստութեան գետերը կը պատէին: Ան միայն կը տեսնէր իրեն նուիրուած այս հեզահամրոյր աշխարհը, որ արարուած էր երազկոտ երաժշտութեամբ, վարդի թերթերով եւ մանուկ հրեշտակներով, որոնք իրեն հետ կը խաղային, անոնց դէմքերը կը սրբէր, մինչ զուարթունքները իր վրայ վարդազոյր կը սրսկէին, յասմիկներ կը ցանկն գլխուն եւ մազերը կը լեցուէին սիրոյ ազնիւ ցօղերով: Այլեւս զինք շրջապատող այդ սպանդն ու մահը չէր տեսներ, ինք կերտած էր իր աշխարհը եւ ամէն բան ձգած այդ մարդոց: Ընկերացած էր փոքրիկ հրեշտակներուն, ընդատաջելով մեղմ ու անափ ալիքի հրաւերին, դէպի հորիզոնին հարաները, որոնք անդադար զինք կը կանչէին եւ ինք իր քայլերը կ'արագացնէր: Բայց այս ճամբան վերջ պիտի չգտնէ՞: Հոն կան ծառեր՝ իր աչքին գոյնով, եւ տունը, զոր ձգեց ինք, իր մտերմութեամբ տակաւին զինք կը կանչէր: Եւ ինք դիմած էր արկածախնդրութեան ու սկսած արագ-արագ քալել, որպէսզի հասնի իր սիրած բոլոր բաներուն, ահա թէ ինչու ան ոճիրը, ստերը, մահը, բռնաբարութիւնը եւ այրումը ձը- գած էր այդ մարդոց:

Յասմիկին բոյրը կանչեց զինք եւ գինովցուց: Հիմա յասմիկի թուփերը կը ցնցէր, ծաղիկները կը հաւաքէր, ափ մը յասմիկ կը սահեցնէր կործքերուն միջեւ, երկրորդ ափ մը կը տեղաւորէր ստինքներուն տակ եւ մնացեալը կ'անցընէր մանեակի դերձանին վրայ, կը քնանար մանեակին հետ, ափերուն մէջ, զայն կը գետեղէր կզակին

տակը, կը վերանար, իր աշխարհը կը լեցուէր յասմիկի բոյրով եւ երանախառն ու երազկոտ կը հետեւէր անոր...: Օ՛ր, այդ երազային հրճուանքը, Մանուշ... Փոքրիկ ծախս մը քաղեց եւ շարունակեց իր ուղեւորութիւնը՝ հետեւելով յասմիկէ կազմուած մեծ սկաւառակին:

Գիշերը կոյր էր եւ ան քնացաւ երկար: Երբ աչքերը բացաւ, տեսաւ որ Մանուշը իր մահիճը կ'օրօրէր: Ուրախութենէն գրկեց զայն եւ առաւ-տարաւ իր ետեւէն, սպիտակ ձիու մը վրայ, թոան աշխարհ մը հետադարձ, ուր ամէն բան յասմիկներէ կազմուած էր, տերեւները յասմիկ էին, տուները յասմիկներէ կառուցուած էին, ջուրերը, արեւը, լուսինը, լեռները, գետերը, բոյր'րն այլ յասմիկներէ արարուած էին, եւ Մանուշ ինքզինք նետեց յասմիկներուն մէջ:

Թաւալեցաւ յասմիկներուն վրայ, լեցուց արեւը եւ ցանց դէմքին վրայ:

Ո՛ր Տէր, օրհնէ՛ արարածներդ եւ տնօրինէ այնպէս, որ անոնք լողան յասմիկի շողերուն մէջ: Այս ճամբան սկսաւ ոտքերէն կաթկը-թող արիւնով: Թող ըլլայ այդպէս: Վերջաւորութեան մեք պիտի հասնինք այդ աշխարհը գեղեցիկ, ահաւասիկ, արդէն սկսանք հասնիլ, մի՞թէ այս մէկը յասմիկին բոյրը չէ:

...Մանուշ անձնատուր եղաւ իր աշխարհի արկածախաղնորութեան: Իր ռունգերը ողողած բոյրը կանչեց զինք... գրաւեց իր ողջ էութիւնը եւ ապրեցաւ իր մարմինին մէն մի բջիջին մէջ...: Ահաւասիկ երկինքը կ'անձրեւէ յասմիկներ, Մանուշ ձեռքերը կ'երկարէ, կը հաւաքէ, ու կը հաւաքէ, որպէսզի գանձը գետեղէ կործանելուն միջեւ եւ մեծ մանեակ մը հիստէ՛ զայն նուիրելու համար ծովու բոյրին...: Հեռուէն՝ քարձրերէն, լեռան վրայ լին մը տեսաւ, ցանկաց ձեռքը երկարել, ար մը ջուր առնել, խմել, լետոյ դէմքը սրբել ջուրով եւ անկէ վանել մորթին կպած չորութիւնը...: Եթէ կարենար ինքզինք կը նետէր անոր մէջ եւ կը խաղար ջուրի կաթիլներով...: Ան հոգին կը վերադարձնէ մարդուն եւ կեանքը կը վերակենդանացնէ:

ՃԷՏԱԼ ԽՈՒՐԴՈԾ

Ա. ՄԱԼԱՄ ՀԱՂՈՒՄ

ԱՇՈՒՆՆԵՐ

ԼՈՒՍԻՆԸ

Ան չի գիտեր,
որ որեւէ լուսին իր արծաթը չի կախեր իր վրայ, եւ կանթեղ
վիզերն իր կ'երկարէ, որպէսզի դիտէ,
չի մտերմանար.
ան չի գիտեր,
որ ծէսերը, մահիկներու պէս,
սովորութիւնն են իրենց սպիտակ աստղիկներուն.
ան չի գիտեր,
որ արեւ մը, զոր կ'արթնցնէ զնզնզոցը համբոյրներուն,
փոշիներն իր պիտի քաշէ իրմէ,
հիմա կը շրջէ նուազումը իր գորգորանքին, չի կառչիր կտոր
մը երկինքի, կը հաւաքէ լուսապսակներն իր, կը լեցնէ լիսալուսնի
քսակին մէջ, զայն կը վստահի իր հօրեղբոր աղջիկներուն—աստղե-
րուն,
եւ կը դառնայ տեսանելի՝
հին յարուցեալի մը պէս:

ՄԱՅԹԸ

Եւ երէկ,
կը յօրանջէր իր դրացի պարտէզին ոտքերուն քով եւ կը
պատմէր.
«Անցեալին՝ թոյունները կը քալէին իր վրայ եւ սիրահարները
իր մէջ կը դալլալէին».
չըսաւ,
թէ պիտի հրաժարի իր ստուերէն
եւ այս բոլոր պեպէնները իր վրայ պիտի նետէ,
եւ թէ՛ նոճի մը, կը խոնարհի, կատակելով կը չարչարէ զինք,
յետոյ կը բարձրանայ,

չի գնահատեր, որ իր կեանքը հաւասար է այս կաղամախիի
 հասակին,
 եւ տերեւը խենթի պէս կը ծափահարէ իրեն, ապա՝ քորտի
 նման՝ կը փորձէ վազել իր զաւակներուն ուղղութեամբ, շէնքերուն
 տակ,
 եւ զինք կը կոխկոտէ
 փողոցը՝
 իր վրայ յենած:

ԱՐԻՒՆԸ

Ես, լրբութիւնն եմ նոնածաղիկին,
 ես,
 զիս գլխահանեց համեստութեան հրճուանքը կակաչներուն,
 եւ թերթերն իր գունաւորեց,
 ես,
 ձիւնն եմ գամերուն՝ Յիսուսի մարմնին մէջ,
 ես,
 խոժեց վրաս եւ պարզեատրեց զիս կորութիւններով ու փառ-
 քով. լեռները. Գալիլան. Արարատը. Ատլասը եւ հասակները սիրե-
 լիներու.
 ես,
 քաղերս կրակ եմ եւ նահանջս բոց է,
 եւ լուսաւոր մոլորակներն եմ էօին արեան շրջագայութեան
 մէջ,
 ես,
 ներկուածս գոյնով, որ իմս չէ, չեմ մրցիր որեւէ գետի հետ՝ իր
 հունին համար եւ ոչ ալ կաթին հետ՝ ստինքի մը մէջ,
 ես,
 երբ երկրագունդը, ողջ երկրագունդը ձեւ ստացաւ, կոպտո-
 րէն, չեղայ սուլոցը պղինձին, որ կը հաւաքէ փունջեր գանկերէն եւ
 արմաւէն, եւ չեղայ արգելքը, որ իր թոռնիկին յենած հայ ծերունին
 կը բաժնէ հողին մատանիէն,
 եւ ոչ ալ մանուկ մը, պաղեստինեան շրթունքներով, իր մօր
 զգեստէն.
 ես, չեմ թելը գանկերու համրիչին, ոչ ալ գորգ մը, որպէսզի
 գոծկանները վրայէս անցնին,
 ես,
 պղտորս ծխածանին կամարներուն մէջ եւ ինքզինք մատնողը
 մանկամարդերու այտերուն,

ես,
 ևս,
 յնտոյ՝ երկու տիեզեքներէ ետք, զիս կը խանձեն ծուխը եւ
 անձրեւը թօշնած. ազատութիւնն էի խնձորին, որ դալկութիւնն իր
 մոռնայ. գինին եւ տէրն էի իմաստին. ո՛չ մէկ պտոյտ ինձի կը
 անտէր փշրանքները պարին եւ ո՛չ մէկ գինետուն կ'ողջունէր զիս.

ես,
 կը ծանրաբեռնեմ երազներն իմ գաղտնի՝
 մօտիկը շերամներու
 պարտէզներուն:

ԱՇՈՒՆԸ

Հմայուած իր Սեպտեմբերով,
 հովը կ'առաջնորդէ խոյի պէս,
 կը հակի եւ չի հակիր,
 չի մոլորեցներ, փառքն ու աղէտը իր ձեռքին մէջ են, եւ եր-
 կըրպագուններ, կը բացայայտէ մերկութիւնը կանաչին, կը պոկէ աչ-
 քը պատուհաններուն, կ'այցելէ մինչեւ փրկութիւն, չի տարածուիր,
 երբ ծայրերն իր կը փոշ սառնամանիքին,
 վիճակուած է իրեն բանալ հեշտանքը արիւնն,
 արարել զանոնք,
 պարի մղել ամպրոպը, պատուել շքանշանները կայծակնե-
 րուն, ծագերը կորսնցնել իրենց վայրերէն եւ դառնալ գալիքը ա-
 նոնց,
 յնտոյ՝ գլուխը թաղել փոշոտած կօշիկին մէջ՝ արեան եւ անձ-
 րեւի բեկորներ,
 եթէ դառնայ մենամարտող հեղեղ մը աշնան ամիսներէն, որ
 չեն պատասխաներ այս սաստիկ ցուրտ մարդուն ներկայութեան:

ԱՊՏԷԼ ՍԱԼԱՄ ՀԱԼԼՈՒՄ

«ՍՓԻՒՔԱՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

– հաաքածոյ – հատոր Բ.
Սեդա Մաղիկեան–Տէմիրճեան,
Ռոյըլ Օք, Միշիկըն, 1994, 779 էջ

«ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ»

– պատմութիւն հայոց –
արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝
Արփիար Գարամանլեան
«Հայոցի» մատենաշար, թիւ 4, Պէյրութ, 1995, 232 էջ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ»

– պատմութիւն հայոց –
Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց
Յասմիկ Նաճարեան
«Հայոցի» մատենաշար, Պէյրութ, 1995, 252 էջ

«ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ»

– պատմութիւն հայոց –
Կորիւն
Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց
Արփիար Գարամանլեան
«Հայոցի» մատենաշար, Պէյրութ, 1996, 34 էջ

«ՄԵՀԵԱՆ»

Հանդէս գրականութեան եւ արուեստի
Տճօրէն–խմբագրապետ
Կոստան Զարեան
Խմբագիրներ
Գեղամ Բարսեղեան–Յակոբ Քիֆեճեան
Վերահրատարակութիւն. Ամբողջական հաաքածոյ,
Հրատարակչատուն «Կիլիկիա», Հալէպ, 1995, 112 էջ

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ 10.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեզիմ 40.000 Լ.Ո.

ՍՈՒՐԻՍ

Հատավաճառ 200 Ս.Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեզիմ 40 Ամերիկեան տոլար

بأكيه
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارين كارنيك قرانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANCIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամ
ՍԱՐԳՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban